



« Ն Ո Ր Ա Վ Ա Ն Ք »
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱԴԱՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ԵՎ ԲԱՔՈՒՆ
(1850-ական թթ. - 1920թ.)

*Նվիրվում է Հայաստանի Հանրապետության
անկախության 15-ամյակին*

Երևան – 2006

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Դ 123

*Գիտական խմբագիրներ՝
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն
ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ
ՀՀ Ազգային արխիվի տնօրեն*

Դադայան Խ.Զ.

Դ 123 Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920թ.). - Եր.:
«Նորավանք» ԳԿՀ, 2006. - 241 էջ:

Այս գիրքը ամենատաղանդաշատ ու ստեղծարար համայնքներից մեկի՝ Բաքվահայության պատմությունն է: Փաստված է հայոց վիթխարի ներդրումը նավթարդյունաբերությունում, առևտրատնտեսական գործունեության այլ ոլորտներում, Բաքվի կայացման գործում:

Ներկայացված է 1918թ. թուրքերի և ադրբեջանցիների կողմից Բաքվում իրականացված հայոց ցեղասպանության ողջ զարհուրանքը, առաջադրված են դրանից բխող ֆինանսանյութական փոխհատուցման իրավական հիմքերը: Վեր են հանվել և նորովի վերլուծվել հայ-ադրբեջանական, հայ-թուրքական փոխհարաբերությունների, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի պատմական արմատները:

Նախատեսված է պատմաբանների, հասարակական-քաղաքական խնդիրներով զբաղվողների, ընթերցողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-961-6-2

© «Նորավանք» ԳԿՀ, 2006

© Խ.Դադայան, 2006

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Մեծ դժվարությամբ ստեղծված այս գիրքն ունի նախապատմություն: Դեռևս 2001թ. դեկտեմբերին «Ազգ» օրաթերթը տպագրեց իմ «Բաքվի հայկական նավթը» ծավալուն հրապարակումը, որտեղ փաստական ու վիճակագրական տվյալների հիման վրա ապացուցել էի, որ նավթարդյունաբերությունը՝ որպես արդյունաբերական ճյուղ, հիմնել ու զարգացրել են հայերը, ցույց էի տվել հայ նավթարդյունաբերողների վիթխարի դերակատարությունը Բաքվի, նույնն է թե՛ Ռուսական կայսրության և համաշխարհային նավթարդյունաբերությունում: 2002թ. ապրիլին այդ հրապարակումը ռուսերեն թարգմանությամբ լույս տեսավ «Голос Армении» լրագրում, որից հետո այն անսպասելիորեն արժանացավ գնահատանքի՝ մրցանակի:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ օրավուր ահագնացող թուրք-ադրբեջանական հոխորտանքները, խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու սպառնալիքները ստիպեցին ընդլայնել ուսումնասիրության շրջանակները, և 2004թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը տպագրեց «Հայերը և Բաքուն» հրապարակումը՝ աշխատության լրագրային, համառոտ տարբերակը:

Այս գիրքն ունի մի շարք առանձնահատկություններ ու շերտեր: Այստեղ անգամ փորձ է արվել հայ-ադրբեջանաթուրքական հարաբերությունների համալիրը դիտարկել Բաքվում հայերի հետ կատարվածի տեսանկյունից: Պատմել ճշմարտությունը այն համայնքի մասին, որը հիմնեց նավթարդյունաբերությունը, արտադրական բազմաթիվ ճյուղեր, զարգացրեց առևտուրը, մշակույթը, կրթությունը, առողջապահությունը, Բաքուն դարձրեց քաղաք, ստեղծեց, արարեց, կառուցեց և որպես վարձք... ստացավ բնաջնջում: 1918թ. սեպտեմբեր-նոյեմբերին՝ ընդամենը երկու ամսվա ընթացքում, թուրքերն ու ադրբեջանցիները Բաքվում կոտորեցին շուրջ 30 հազար անմեղ հայի: Դա ցեղասպանություն էր՝ ազգային պատկանելության հատկանիշի հիման վրա գործված, նախապես ծրագրված և իրականացված զանգվածային ոճրագործություն, որն ինչքան էլ թաքցված, կոծկված, լռության մատնված լինի՝ միննույն է,

վաղեմության ժամկետ չունի: Թուրքիան ստեղծեց Ադրբեջանի Հանրապետությունը, թուրքերն իրենց խայտառակ պարապմունքը՝ հայասպանությունը, սովորեցրին կրտսեր ցեղակիցներին, 1915-ի եղեռնը 1918-ին կրկնեցին Բաքվում, Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգներում: Ընթերցողը կկարդա Բաքվահայոց ցեղասպանության սահմոկեցուցիչ տեսարանների մասին և կխորհի, թե որտեղից են ծլարձակում հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների արմատները:

Բաքվի ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ առկա է լրջագույն կովան. 1918թ. վերջին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչները նյութական վնասի չափը պարզելու նպատակով ստեղծել են Վերստուգիչ հանձնաժողով և Թուրքիային պարտապան ճանաչել մի փոխհատուցման, որի ֆինանսական համարժեքն այսօրվա հաշվարկով կազմում է ահռելի գումար:

Այս գիրքն ունի մի առանձնահատկություն ևս՝ ինքնաճանաչողական բնույթ ունի, և ես այն գրել եմ հատուկ ազգակիցներիս համար: Անցյալ դարի 50-ական թվականների աշխարհավարման ձգտող ուժերից մեկն այսպիսի հրահանգ էր տալիս. *«Ժողովուրդն առանց պատմության նույնն է, ինչ երեխան առանց ծնողների: Նա ամեն ինչ պետք է սկսի սկզբից, և այդ խմորից կարելի է ուզած բանը թխել: Այդ երեխային կարելի է ներարկել սեփական աշխարհորնկալումը, սեփական մտածելակերպը: Զրկե՛ք նրանց անցյալից, ազգային ոգուց: Բացահայտորեն մի՛ քանդե՛ք նրանց պատմական հուշարձանները, բայց և մի՛ վերանորոգե՛ք, թողե՛ք, որ ժամանակը քանդի դրանք:*

Այդպես կարելի է ամբողջ ժողովուրդներ դիմագրկել: Սկզբում դրանք զրկվում են պատմությունից և ավանդույթներից, ապա մենք ձևավորում ենք մեր ցանկացածով, մեզ ձեռնտու կերպով»:

Եթե մենք չենք ուզում դիմագրկվել, տարրալուծվել, ուզում ենք պահպանել մեր ինքնատիպ տեսակը, այո՛, պիտի հիմնվենք մեր պատմության և ավանդույթների վրա ու կարողանանք դասեր քաղել, ինչը հաջողությամբ կատարել ենք դարեր շարունակ: Սա գիրք-նախագուշացում է, որով ազգակիցներիս կոչ եմ անում խորհել ազգի ու հայրենիքի ճակատագրի, նրանց հանդեպ յուրաքանչյուրիս պատասխանատվական վերաբերմունքի մասին: Որովհետև ժամանակակից աշխարհում ոչ մի բոպե չի դադարում երկրների կողմից այլ երկրների «խաղաղ» նվա-

ճումը՝ գրեթե միաժամանակ սկսվում են տնտեսական էքսպանսիա և տեղեկատվական պատերազմ, որոնց նպատակն է ստեղծել խմոր՝ ուզած բանը թխելու համար: Կլարոդանա՞նք դիմագրավել այդ մարտահրավերին. ոչ մի բոպե չեմ կասկածում, դրա բանալին մեր ձեռքում է, դա մեր միասնությունն է:

Այս գրքի վրա աշխատելիս խորագույն ավստսանք եմ ապրել մի բանի առնչությամբ՝ ցանկացած հետազոտողի համար սպանիչ են «հասու չեն» բառերը, և ինձ հասու չեն եղել բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, որոնք կլրացնեին աշխատության պակասությունները: Այդ վկայագրերը գտնվում են Անկարայում ու Բաքվում, Թբիլիսիում ու Բեռլինում, Մոսկվայում ու Սանկտ Պետերբուրգում, Փարիզում ու Լոնդոնում...

*Հեղինակ
Հունիս, 2006թ.*

ՎԱՍՆ ԲԱՔՎԻ ՆԱՎԹԻ

Ի սկզբանե ասենք, որ մենք ամեննին նպատակ չունենք պարզելու ադրբեջանական ժողովրդի ծագման պատմությունը: Փաստենք միայն, որ մինչև 1918թ. «ադրբեջանցի» հասկացություն չի եղել, բոլորը նրանց կոչել են թաթարներ կամ մուսուլմաններ: Ռուս կովկասագետ Ն.Ջեյդլիցը 1870թ. գրել է. *«Բաքվի նահանգի թաթարները ծագում են զանազան թուրքական ցեղերից, որոնք այս երկրամաս են տեղափոխվել սելջուկների, մոնղոլների, Սև ու Սպիտակ ոչխարավորների, թուրքմենների և սեֆյանների ասպատակությունների ու երկրամասին տիրելու օրոք: Այդ տարբեր ցեղերը, միախառնվելով երկրամասի նախկին բնակիչների հետ ինչպես Արևելյան Անդրկովկասում, այնպես էլ Պարսկաստանի հյուսիսային մասում, կազմավորեցին թյուրք լեզու թուրքերենի (օսմանյան թուրքերի), կումիկերենի, նոդայերենի և ջաղաթայերենի միջինը: ...Ատրպատականի թաթարների նոր ժողովրդի կազմի մեջ մտան մարդկային տոհմի զանազան ցեղախմբերի ներկայացուցիչները»*:

1907թ. նույնանման միտք է կրկնվում «Կավկասյան կալենդար» տարեգրքում. *«Բաքվում, ինչպես նաև առհասարակ Բաքվի նահանգում, ամենից շատն ատրպատականական թաթարներն են: Նրանք պատկանում են մոնղոլական ռասային և թյուրքական սերնդին, խոսում են պարսից լեզվի ազդեցությանը ենթարկված բարբառով: Աջակցություն ստանալով պարսից շահերի կողմից՝ նրանք նախորդ հարյուրամյակում Ատրպատականից տեղափոխվեցին Անդրկովկասի հարավարևելյան մաս և ծովամերձ շրջան՝ Բաքվից մինչև Դերբենտ»*:

¹ Список населенных мест Российской Империи по Кавказскому краю. Бакинская губерния, Тифлис, 1870г., стр. 85, 87. Ռուս. թարգ. հեղ.:

² Кавказский календарь на 1908 год, Тифлис, 1907г., стр. 71. Ռուս. թարգ. հեղ.:

Այս մեջբերումներից հետո, Ռուսաստանի ու Ղրիմի թաթարներին չվիրավորելու և ընթերցողին շփոթմունքի մեջ չզցելու համար, այսուհետև կօգտագործենք «ադրբեջանցի» եզրը:

Իսկ ինչպե՞ս են ստուգաբանվում Ադրբեջան և Բաքու բառերը: Ադրբեջան պարսկերեն նշանակում է. ազեր՝ կրակ և բայջան՝ երկիր, այսինքն՝ կրակի երկիր: Մեր լեզվով մինչև XXդ. 20-ական թթ. Բաքու բառաձևի փոխարեն գործածվել է Բագու ձևը, և դա, ըստ մեզ, ծագում էր բազին բառից, այսինքն՝ նորից առնչություն ունեւր կրակի հետ:

Ո՞րն էր այս ամենի պատճառը: Ք.Ճ.ա. VI դարում այստեղ գոյություն ունեւր կրակի պաշտամունք: Կրակապաշտների տաճարները գոյատևեցին մինչև 624թ., երբ վրաց Իրակլի թագավորը, Մուղանի տափաստաններով պարսից դեմ արշավանքի գնալիս, ավերեց դրանք, որոնք 12 տարի անց Պարսկաստանը նվաճած արաբները վերականգնեցին:^{*}

Արաբ պատմիչ Իստահրին վկայում է, որ VIIIդ. տեղացիները, փայտ չունենալով, օգտագործում էին նավթով ներծծված հող¹:

Նավթահորերից մեկում հայտնաբերվել է արաբերեն արձանագրաքար, ըստ որի՝ այդ հորը 1594թ. հայտնաբերել էր Մուհամեդ-Նուրի որդի Ալլահյարը և օգտագործման տվել սեյիդներին²:

1723թ. Ռուսաստանը Պարսկաստանից նվաճեց Բաքվի խանությունը: Պյոտր I կայսրը Բաքուն գրաված գեներալ Մատյուշկինին գրեց. «Մպիտակ նավթից հազար փութ* կամ որքան հնարավոր է ուղարկել և վարպետ գտնել»³:

Նավթի մասին կա ևս մեկ, չգիտես ինչու անուշադրության մատնված, բայց վերին աստիճանի հետաքրքրական հիշատակություն: Անանիա Շիրակացին (VIIդ.) իր հռչակավոր «Աշխարհացոյցում» նշում է Մեծ Հայքի օգտակար հանածոները և բնական հարստությունները. դրանք էին՝ երկաթը, ածուխը, նավթը, սալա-

¹ Обзор Бакинской нефтяной промышленности за два года национализации 1920-1922 (6. м. и г.), стр. 11.

² Сборник сведений о Кавказе, т. II, Тифлис, 1872г., стр. 23.

³ Обзор Бакинской ..., стр. 11.

կը, ձիղկը, գառիկը, քարախունկը, «ակն բյուրեղը», աղերը, «ջերմուկքը»: Աղբյուրի հեղինակները գրում են. «Մրանք բոլորը, բացառությամբ սալակի և ձիղկի, լավ հայտնի են և նրանցից շատերը լայն տարածում ունեն Հայկական լեռնաշխարհում: Սալակը և ձիղկը մեզ համար դեռևս մնում են անծանոթ: Սակայն կարելի է ենթադրել, որ դրանք երկուսն էլ բնական նավթամթերքներից պատկանող նյութեր են, որովհետև «Աշխարհացոյցում» դրանք երկուսն էլ հիշատակված են նավթի հետ միասին»:

Մեծն իմաստունը ի՞նչ էր նկատի ունեցել, Մեծ Հայքի ո՞ր մասում գիտեր նավթի առկայության մասին: Աշխարհի շատ լեզուներում այսօր գործածվում է նավթ բառը. արդյո՞ք այն չի ծագել հայերենից: Ահա հարցեր, որոնց պատասխանները ապագա ուսումնասիրողները պետք է տան:

XVIII դ. Ռուսաստանն սկսեց զավթողական քաղաքականություն իրականացնել Կովկասում և Անդրկովկասում: 1801թ. նվաճվեց Վրաստանը, իսկ 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի դաշնագրով Պարսկաստանից Ռուսաստանին անցան Ղարաբաղի, Բաքվի, Շեքիի (Նուխի), Շիրվանի (Շամախ), Դերբենտի, Ղուբայի և Թալիշի խանությունները (Գյանջայի խանությունը ռուսական տիրապետության ներքո էր անցել 1804-ից):

Ռուսաստանի կողմից Անդրկովկասի նվաճումը (1829թ.՝ նաև Երևանի խանությունը) ոչ միայն վիթխարի ռազմաքաղաքական իրողություն էր, այլև տնտեսական բուռն զարգացման լայն հնարավորություններ էր ընձեռում: Երկրամասում ստեղծվեցին միանգամայն նոր տնտեսական փոխհարաբերություններ, ինչը լավագույնս բնորոշել է Դավիթ Անանունը*՝ գրելով. «Այդ ժամանակ երկրի առևտրաարդյունաբերական զարգացումը գտնվում էր նախնական աստիճանի վրա: Առևտուրը հիմնականում մի նպատակ ուներ՝ բավարարել տեղական բնակչության համեստ պահանջները: Առևտրի առջև լայն ասպարեզ չկար. յուրաքանչյուր

¹ Ռ.Աբրահամյան, Բ.Թումանյան, Թ.Հակոբյան, Ս.Մելիք-Բախչյան, *Անանիա Շիրակացի*, Ե., 1958թ., էջ 112:

խանություն մի ինքնամփոփ մաքսային միավոր էր, որ խոչընդոտներ էր հարուցում առևտրի զարգացման համար: Էլ չենք ասում երկրի հեղհեղուկ վիճակը:

Դրությունը փոխվեց, երբ երկրին տիրացան ռուսները: Նախ փլվեցին բոլոր խանական միջնորմները, որոնք դժվարացնում էին ամեն մի փոխանակություն: Ապա Անդրկովկասը անմիջական հարաբերությունների մեջ մտավ մի ընդարձակ և համեմատաբար բարձր կուլտուրա ունեցող երկրի հետ, ինչպիսին էր Ռուսաստանը: Երկրորդ, Անդրկովկասում հաստատվեց մի սովոր տարր՝ ռուս պաշտոնեությունը և գորքը, որը, որպես սպառող, նոր պահանջներ առաջադրեց երկրի առևտրին: Եվ այդ տարրը նման չէր նախկին պաշտոնեությանը. նա ոչ միայն բաժին էր ստանում երկրի արտադրած բարիքներից, այլև վճարում էր ստացած բաժնի արժեքը: Ռուսները խոշոր քանակությամբ դրամ մտցրեցին Անդրկովկաս: Մշտական պատերազմները խոշոր ծախքերի դուռ էին բացում: Բնակչությունն, այսպիսով, հնարավորություն ուներ դրամի վերածել իր մթերքները և արհեստի արդյունքները: Իսկ դա նշան էր, որ հին կայացած իրավիճակը տեղի էր տալիս, երկրի բնատնտեսության հիմքերը խախտվում են և սկիզբ է առնում ապրանքներ արտադրող, ապրանքներով փոխհարաբերություն ստեղծող հասարակարգը:

Ռուսական տիրապետությունն Անդրկովկասի տնտեսական կյանքի համար ունեցավ հեղաշրջող նշանակություն¹:

Ռուսական տարրը՝ չինովնիկությունը և զինուժը, տնտեսվարող սուբյեկտ չէր, բայց այն նվաճող էր, իշխանություն, որը պետք է տնտեսական գործունեություն իրականացներ: Ո՞ւմ միջոցով և ինչպե՞ս. Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդների՝ հայերի, վրացիների և թաթարների (իմա՝ ադրբեջանցիների) միջոցով: Վերջիններս իրենց նիստուկացով, քոչվորությամբ, մտածելակերպով պարզապես իսպառ գուրկ էին տնտեսական որևէ

¹Դ.Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հտ. Ա, Թիֆլիս, 1916թ., էջ 190-191:

գործունեություն ծավալելու ունակությունից: Վրացիների ավելի քան 80 տոկոսը գյուղաբնակ էր և նույնպես որևէ փորձառություն չունեի: Հայերը, նրանք էին, որ իրենց մեջ պահպանել էին առևտրատնտեսական գործունեության 23 դարի ավանդույթներ և հայտնվելով ընդհանուր պետության կազմում, քաղաքական, իրավական, տնտեսական միևնույն ասպարեզում՝ անմիջապես ստանձնեցին առաջատարի դեր:

Ռուսական իշխանության տնտեսվարման հիմնական ձևը կապալառությունն էր, և հենց հայերը դարձան կապալառուներ՝ ոտք դնելով արևելահայության նախնական կապիտալի ձևավորման փուլ: Գյուլիստանի դաշնագրից անմիջապես հետո ռուսական իշխանությունը սկսեցին ուշադրություն դարձրեց Բաքվի նավթին: 1813-1825թթ. նավթը և աղը կապալառության էին հանձնվում՝ գանձարանին բերելով տարեկան 130 հազար ռուբլու եկամուտ (77%-ը՝ նավթից, 23%-ը՝ աղից): Հարկ է նշել, որ այդ ժամանակ նավթը արդյունաբերական ոչ մի նշանակություն չունեի, օգտագործվում էր լուսավորության, կաշիները, անիվները յուղելու համար և անասուններին մաշկային հիվանդություններից բուժելու նպատակով: Նավթի վերամշակման առաջին փորձը կատարվեց 1823-ին. Վլադիմիրի նահանգից Դուբինին եղբայրները՝ կոմսուհի Պանինայի ճորտերը, Մոզդոկում արտադրություն հիմնեցին՝ «սև նավթը սպիտակի վերածելու համար»: Ստացված «ֆոտոգենը»՝ կերոսինը, սկսեցին ուղարկել Մոսկվա ու Նիժնի Նովգորոդ, սակայն դա ոչ մի ուշադրության չարժանացավ¹:

1825թ. կառավարությունն սկսեց ինքը տնօրինել նավթահանքերը, բայց չկարողացավ, իսկ եկամուտը նվազեց՝ հասնելով 76 հազ. ռուբլու: Հաջորդ տարի պետությունը հրաժարվեց իր մենաշնորհից և նավթադաշտերը վարձակալության տվեց ադրբեջանցիներին: 1826-1832թթ. տեղացիներից ստացված եկամուտն այնքան ողորմելի էր, որ կառավարությունը կրկին իր ձեռքն առավ նավթարդյունահանումը, սակայն՝ կրկին անհաջող, նավ-

¹ Обзор Бакинской ..., стр. 9.

թահորերի և աղահանքերի տարեկան եկամուտը միջին հաշվով կազմում էր 100 հազ. ռ., և սա պետությանն ստիպեց 1850-ից լիովին հրաժարվել արդյունահանումից և անցնել կապալատվության: 1850-1854թթ. խոշորագույն կապալատուներ դարձան թիֆլիսաբնակ վաճառականներ Կուկուջանյանը, Բաբանասյանը և զեներալ Տեր-Ղուկասյանը՝ տարեկան 110 հազ. ռ. վարձավճարով, 1854-1863թթ. Տեր-Ղուկասյանը՝ 117 հազ. ռուբլով, 1863-1867թթ. Հովհ. Միրզոյանը՝ 162 հազարով և 1867-1873թթ. նույն Միրզոյանը՝ 136 հազ. ռուբլով¹:

Հայ դրամատերերի այս քայլն առանձնակի ուշադրության է արժանի: Բանն այն է, որ ըստ պաշտոնական տվյալների, 1846թ. Ռուսաստանի հետ Անդրկովկասի ամբողջ առևտուրը գտնվում էր հայերի ձեռքում և կազմում էր 5.534.600 ռուբլի²: 1850-ից սկսած Բաքվի նավթադաշտերի կապալատությունը վկայում էր, որ զանազան կապալներով հարստացած հայոց առևտրական կապիտալի ներկայացուցիչները, որոնելով ներդրման նոր ոլորտներ և դրսևորելով շրջահայացություն, վերակողմնորոշվեցին և անցում կատարեցին դեռևս սաղմնային վիճակում գտնվող նավթարդյունաբերություն, որը հենց իրենք պիտի զարգացնեին: Չարգացնեին և անուղակի պատճառ դառնային հայոց ապագա ողբերգության...

Շարունակենք դիտարկել այդ ընթացքը:

Նավթը ստանում էին հորերից. դրանք 25-30 մ խորությամբ ձագարաձև փոսեր էին, որոնք սկսում էին խորացնել: Նավթը ջրի հետ դուրս էր գալիս, բայց լինելով ավելի թեթև՝ նստում էր երեսին: Այն հավաքում էին, լցնում տիկերի մեջ ու եզալույծ սայլերով, էջերով կամ ուղտերով փոխադրում: Քիչ չէին դեպքերը, երբ գազի հետ միախառնված նավթը դուրս էր ժայթքում շատրվանի տեսքով՝ միանգամից հարստացնելով տիրոջը (1877թ. այդպիսի մի շատրվան խփեց Հովհ. Միրզոյանին պատկանող նավթահորից, և

¹ Ст. Гулишамбаров, Очерк развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района (Сборник сведений о Кавказе, т.VII, Тифлис, 1880г., стр. 333).

² Բ. Անանուն, Ռուսահայերի ..., էջ 193:

ապշեցուցիչն այն է, որ դա տևեց ամբողջ 7 տարի):

Ստացվող, այսպես կոչված, հում նավթը շատ նեղ կիրառում ուներ, անհրաժեշտ էր այն վերամշակել, և դրա առաջին փորձը կատարեց ռուսական առևտրական կապիտալի ներկայացուցիչ, մանուֆակտուրիստ Կոկորևը*, որը 1857թ. Սուրախանում* հիմնեց զտարան և 1863թ. ստացավ «սպիտակ լուսավորող նյութ»՝ կերոսին: Նրա օրինակին անմիջապես հետևեցին հայերը. 1862-ին կերոսինի գործարան հիմնեց Ա.Վերմիշյանը, 1863-ին՝ Ջ.Մելիքյանը, 1865-ին՝ Թաթոսյանը, 1869-ին՝ Տեր-Հակոբյանը, Շարաբանդյանը, 1870-ին՝ Քալանթարյանը, 1871-ին՝ Դիլդարյանը, Թառայանը¹: Սրանով փաստորեն հիմք դրվեց բուն նավթարդյունաբերությանը:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում Բաքուն: 1851թ. ականատես Կ.Սպասկի-Ավտոմոնովը գրում էր. «Բաքուն կազմված է չափազանց նեղ ու ծուռմոտիկ փողոցներից, որոնցով հազիվ կարելի է ոտքով կամ հեծյալ անցնել: Հրապարակները փոքր են ու տձև, շուկայի փողոցն էլ է նեղ, կրպակներն անդուր են: Բերդում ու շրջակայքում կա 1992 տուն, 505 կրպակ, 29 փողոց, 3 հրապարակ ու 2 կամուրջ: Ոչ մի գործարան չկա, առևտրական հաստատություններ գոյություն չունեն: Բոլոր տեղական վաճառականները 294-ն են, որոնցից 75-ը՝ նավատերեր, 67-ը զբաղվում են ֆարիկային ու մանուֆակտուրային, 291-ը՝ այլ ապրանքների առևտրով, այլքաղաքային առևտրականներ են 28-ը, պարսկահպատակ՝ 2-ը»²:

Կասպյան մարզի ահա այս գավառական քաղաքը, որ VI դ. հիմնել էր պարսից Նուշիրվան շահը, 1859թ. նոյեմբերի 6-ին դարձավ նոր ձևավորված Բաքվի նահանգի վարչական կենտրոնը:

Նավթարդյունաբերությունն սկսեց զարգանալ՝ ծնելով և ավիշ հաղորդելով բաքվահայության ապագա գերեզմանափորին:

Չնայած կապալատվությունը կայսրությանը զգալի օգուտ

¹ Сборник сведений ..., стр. 80. Ե. Թոփչեան, Լոյս պատկերագրող օրացոյց հանդես 1904թ., Թիֆլիս, 1903թ., էջ 195:

² Кавказский календарь на 1852 год, Тифлис, 1851 г., стр. 304., 306: Ռուս. թարգ. հեղ.:

բերեց (բավական է ասել, որ եթե 1863թ. արտադրվեց 340 հազար, ապա 1872-ին՝ 1.535.981 փուլթ նավթ)¹, սակայն այդ համակարգը էական թերություն ուներ. դա նրա ժամանակավոր, ժամկետային բնույթն էր: Ըստ սահմանված կարգի, նավթատարածքը վարձակալության էր տրվում քառամյա ժամկետով, և դրա տերը, բնականաբար, շահագրգռված չէր խոշոր ներդրումներ կատարելու, նոր հորատանցքեր փորելու, երկրաբանական-հետախուզական որոնումներ կատարելու հարցում, որովհետև ժամկետը լրանալուց հետո մեկ ուրիշը կարող էր ավելի բարձր գին վճարել և տեր դառնալ: Դա ակնհայտորեն կասեցնում էր նավթարդյունաբերության զարգացումը, այնինչ կայսրությունը տնտեսական առաջընթաց էր ապրում, կարիք էր զգում ավելի շատ նավթի ու նավթամթերքների, և ռուսական շուկայում իշխող դիրքը պատկանում էր ամերիկյան նավթին: Ահա այս պայմաններում կառավարությունը դիմեց արմատական, հեղափոխական, տնտեսագիտորեն խելացի հաշվարկված քայլի՝ որոշեց նավթադաշտերը վաճառել որպես մասնավոր սեփականություն: Սա անչափ կարևոր իրադարձություն էր, որը հետագայում վիթխարի նշանակություն ունեցավ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական և թե՛ ազգամիջյան հարաբերությունների տեսակետից:

1872թ. նոյեմբերին կառավարությունը աճուրդի դրեց 460 դեպյատին* ընդհանուր տարածքով 68 նավթաբեր տեղամաս՝ սահմանելով 552.240 ռ. մեկնարկային գին: Աճուրդի արդյունքներն ապշեցուցիչ էին՝ պետական գանձարանը մեկնարկային գնի դիմաց ստացավ 2.980.307 ռուբլի: Սեփականատեր դարձան 12 ռուսներ, որոնք մուծեցին 1.485.860 ռուբլի (1.333.328 ռ. 60 դեպյատինի դիմաց վճարեցին Կոկորևը և Գուբոնինը), 11 հայ անհատներ (Հովհ.Միրզոյան, Գ.Լիանոսյան, Բեժանյան, Օնիկյան, Վերմիշյան, Ծուրինյան, Լալայան, Ղարաբեկյան, Տեր-Հակոբյան, Բ. և Պ.Սարգսյան եղբայրներ) և մեկ հայկական ընկերություն՝ «Սոուշաստնիկի» անվամբ (հիմնադիրներ՝ Բոգդան Դոլուխանյան, Մի-

¹ Ст. Гулишамбаров, Очерк развития..., стр. 335.

նաս Կաճկաճյան, Ս.Կվիտկո), որոնք վճարեցին 1.459.182 ռ., իսկ միայն Հովհ.Միրզոյանը՝ 1 մլն 220 հազար՝ 40 դեսյատինի համար¹:

Ո՞վ էր Հովհաննես Մինասի Միրզոյանը (*Иван Минаевич Мирзоев*): Այս թիֆլիսցին հայոց առևտրական կապիտալի տիպական ներկայացուցիչ էր, որն առհասարակ Կովկասում առաջինը նկատեց նավթարդյունաբերության հեռանկարայնությունը, դարձավ առաջին պրոֆեսիոնալ նավթարդյունաբերողը և Բաքվի նավթաբիզնեսի «հայրերից» մեկը: Նա ի սկզբանե զբաղվում էր հայ վաճառականության դարավոր ավանդույթներ ունեցող գործունեությամբ՝ հում մետաքսի առևտրով: 1853թ. ուներ չթի կրպակ: Այսպես Նուխի քաղաքում հիմնեց մետաքսի գործարան և մեծ կապիտալ վաստակեց: 1855-ին վճարելով ամենաբարձր գին՝ տարեկան 312 հազ. ռ., մինչև 1863թ. վարձակալեց Կասպից ծով թափվող Քոն գետաբերանում գտնվող Սադիանի ձկնավայրը, որտեղ աշխատում էր 2500 մարդ: Բաքվից բացի, նա 1867-ից վարձակալեց նաև Դերբենտի քաղաքային վարչության տարածքի, Ղայթաղ-Թաբասարայի նավթատարածքները: 1865-1885թթ. տարեկան 13.250 ռուբլով վարձակալեց Գրոզնիում հայտնաբերված ընդամենը երկու նավթաղբյուրները, արդյունահանումը հասցրեց 66.500 փթի, հիմնեց կերոսինի ստացման գործարան, ուր հիմնականում հայեր էին աշխատում: Բացի այդ, 1878-1886թթ. տարեկան 7.850 ռուբլով վարձակալել և շահագործում էր Ելիզավետպոլի նահանգի Չադլուի պաղլեղի գործարանը²:

Բաքվի նավթարդյունաբերությունում Հովհ.Միրզոյանի գործունեությունը հիմնականում կարելի է բնութագրել առաջին բառով: Նա առաջինն էր, որ 1868թ. Սուրախանում հիմնեց կերոսինի երկու գործարան և ստացավ 260 հազ. ռուբլու 160 հազ. փութ կերոսին (նավթի 1 միավորից ստացվում էր 30% կերոսին) ու եղավ առաջինը, ով արտահանեց կերոսինը: Դա առասպելական քանակ էր. բավական է ասել, որ այդ տարի Բաքվի մյուս 21 գտա-

¹Նշվ. աշխ., էջ. 343-344:

² Кавказский календарь на 1878 год, Тифлис, 1877г., стр. 210.

րանները միասին արտադրեցին ընդամենը 64 հազ. ռուբլու 60 հազ. փութ կերոսին: Հովհ.Միրզոյանը 1867թ. արդյունահանեց 665 հազ. փութ նավթ, 1868-ին՝ 716 հազ., 1872-ին՝ 1 մլն 365 հազ. փութ, իսկ 1871թ. Բալախանում հիմնեց առաջին արդյունաբերական հորատանցքը, 1872-ին՝ երկրորդը¹: Դրանից հետո էր, որ նավթարդյունաբերողներն անցան հորատանցքային արդյունահանման, և 1879թ. այլևս ոչ մի նավթահոր չմնաց:

Հովհ.Միրզոյանի մահից (1885թ.) հետո նրա այրի Դարյան, որդիները՝ մոսկովյան ժամանակավոր 1-ին գիլդիայի վաճառականներ, ազնվականներ Գրիգորը, Մելքոնը և դուստրը՝ իշխանուհի Մարիա Արդուրյան-Երկայնաբագուկը, 1886թ. 2,1 մլն ռուբլի հիմնադիր կապիտալով ստեղծեցին «Միրզոյան եղբայրներ և ընկ.» նավթարդյունաբերական և առևտրական ընկերությունը: Լինելով Թիֆլիսի արիստոկրատ վերնախավի ներկայացուցիչներ՝ Միրզոյանները խելամտություն ունեցան իրենց ֆիրմայի գործերը հանձնել նավթային գործի պրոֆեսիոնալներին: Ընկերության վարչության խորհրդի նախագահն էր Բ.Ղորղանյանը, տնօրեններ՝ Դ.Խարազյանը, Մ.Դուլիսանյանը, Հովհ.Գարսոյանը, Տ.Էնֆիաջյանը, որոնց շնորհիվ «Միրզոյան եղբայրներ և ընկ.» ֆիրման դարձավ ամենակայուն և արդյունավետ նավթարդյունաբերական ձեռնարկություններից մեկը՝ միջին հաշվով տարեկան արդյունահանելով շուրջ 15 մլն փութ նավթ²:

Ֆիրմային էին պատկանում նավթադաշտեր Բալախանում ու Սաբունչիում, գործարանային շինություններ՝ Սուրախանում, նավթամուղ՝ Բալախանում, կերոսինի ու քսայուղերի գործարան՝ Բաքվում, բացի այդ՝ զանազան արհեստանոցներ ու քիմիական լաբորատորիա, նավամատույց՝ Կասպից ծովի ափին, 4 առագաստանավ («Մոսկվա», «Արսենի», «Պրուսիա», «Սան-Դադաշ»), արտադրական տարածքներ՝ Բաթումում, նավթամթերքների պահեստարաններ՝ Մոսկվայում, Ցարիցինում և Նիժնի Նովգորոդում³:

¹ Ст. Гулишамбаров, Очерк развития..., стр. 345.

² Ежегодник Баку и его район -1912, Баку, 1912г., стр. 140.

³ Устав нефтепромышленного и торгового товарищества "Братьев Мирзоевых и К0", Тифлис, 1901г.

«Միրզոյան եղբայրներ և ընկ.» ֆիրման մնաց լավագույն հայապատկան ձեռնարկություններից մեկը ընդհուպ մինչև 1918թ. ողբերգությունը:

Այժմ նորից անդրադառնանք 1872թ. և հարցնենք՝ աճուրդին մասնակցեցի՞նք, արդյոք, ադրբեջանցիներ: Այո, երկու հոգի: Մեկը՝ Սելիմխանովը, 1 ռ. մեկնարկային արժեքով մեկ տեղամասի համար վճարեց 3000 ռ.¹ և ոչ մի դերակատարություն չունեցավ նավթարդյունաբերությունում: Իսկ մյուսը Հաջի Ջեյնալ Արդին Թադիկն էր, որին հարկ է ավելի մանրամասնորեն անդրադառնալ: Ամբողջ նախահեղափոխական շրջանում եղել է երեք համեմատաբար խոշոր ադրբեջանցի նավթարդյունաբերող (մյուս երկուսն էին Մուսա Նադիրը և Շամսի Ասադուլանը), սակայն Թադիկը միակն էր, որ հայերից սովորելով, հայերի նմանողությամբ իր կապիտալի մի մասը ծառայեցրեց ազգակիցներին՝ դարձավ մի շարք մահմեդական ուսումնական հաստատությունների հոգաբարձու և կառուցեց Բաքվի թատրոնի շենքը:

Թադիկի՝ բիզնես մտնելը զավեշտ էր: Նա արհեստավոր էր՝ պատշար, և անհայտ պատճառներով ընկերակցեց Բադդասար և Պողոս Սարգսյան եղբայրներին, երեքով վճարեցին 14.961 ռ. ու դարձան 20 տեղամասերի համատերեր²: 1882թ. նրանք մասնակցեցին Մոսկվայում կայացած Համառուսական արդյունաբերագեղարվեստական ցուցահանդեսին և արտադրած կերոսինի համար արժանացան բրոնզե մեդալի³: Դրանից հետո Սարգսյան եղբայրները նավթաբիզնեսում գրեթե չեն հիշատակվում, հայտնի է միայն, որ Պ.Սարգսյանը Բաքվի քաղաքային դումայի անդամ էր և Բաքվի հայկական արական երկդասյա դպրոցի հոգաբարձական խորհրդի անդամ: Նրա կինը՝ Եղիսաբեթը, հայ մամուլի պատմության լավագույն պարբերականներից մեկի՝ «Մշակի» գաղափարների թունդ համակիրն էր և իրենց պատկանող շոգենավը

¹ Ст. Гулишамбаров, Очерк развития..., стр. 343.

² Նույն տեղում:

³ Всероссийская промышленно-художественная выставка 1882г. в Москве. Список экспонатов, удостоенных похвальных грамот, М., 1882г., стр. 205.

կոչել էր պարբերականի հիմնադիր-խմբագրի անունով՝ «Գրիգոր Արծրունի»: Ճակատագրի հեգնանքով բոլշևիկներն այդ նավը բռնազավթեցին և 1921թ. հանձնեցին «Ազրնեթ» պետական նավթարդյունաբերական ընկերությանը¹:

Թադիևի բիզնեսն ունեցավ զվարճախառն ավարտ, բայց այդ մասին՝ քիչ հետո:

Եվ այսպես, 1873թ. հունվարի 1-ից Բաքվի նավթարդյունաբերությունում հայտնվեցին առաջին սեփականատերերը, որոնք կարող էին ըստ հայեցողության տնօրինել իրենց նավթը, տեղամասերը վաճառել, վարձակալության տալ, զանազան գործարքներ կատարել, հիմնել բաժնետիրական ընկերություններ և այլն: Այս մասնավորեցումը սկիզբ դրեց ոչ միայն «նավթային տենդի», այլև ֆինանսական խոշոր ներդրումների, բնակչության թվի կտրուկ աճի, քաղաքի բուռն զարգացման:

Եթե 1813-1873թթ. նավթարդյունաբերության ծագման, սաղմնավորման փուլն էր, ապա 1873-1899թթ. հսկայաքայլ առաջընթացի շրջանն էր, որը նախանշեց պատմական օրինաչափության վերածվող աշխարհաքաղաքական շահերի և ազգամիջյան փոխհարաբերությունների զարգացումներ: Չարգացումներ, որոնք թափ էին առնում արդյունահանված, վերամշակված և արտահանված նավթի յուրաքանչյուր փթի հետ:

Եթե 1850թ. արդյունահանվել էր 260 հազ. փութ, 1863-ին՝ 340 հազ., ապա 1872-ին՝ 1.535.981², իսկ 1896-ին՝ 386 մլն³: Եթե 1862թ. Բաքուն ուներ 13.392 բնակիչ, 1873-ին՝ 15.604⁴, ապա 1886-ին քաղաքում բնակվում էր 37.530 մուսուլման, 24.490 հայ, 21.390 ռուս, 1897-ին՝ 46.255 մուսուլման, 19.099 հայ, 38.965 ռուս⁵:

Մասնավորեցումն ստեղծեց այնպիսի մի իրավիճակ, որը

¹ Обзор Бакинской..., стр. 185.

² Ст. Гулишамбаров, Очерк развития..., стр. 334-335.

³ Обзор Бакинской нефтяной промышленности за 1896г., Баку, 1897г., стр. 21.

⁴ Кавказский календарь на 1874 год, Тифлис, 1873г., стр. 171.

⁵ Բ.Իշխանեան, Վիճակագրական ուսումնասիրութիւն անդրկովկասեան ժողովուրդների, Բաքու, 1919թ., էջ 183:

տնտեսական ազատություններ էր տրամադրում ու երաշխավորում կապիտալի ներդրումից ստացվող կայուն, բարձր եկամուտներ: Դա պատճառ դարձավ, որ ամբողջ Անդրկովկասից և Ռուսաստանից նավթարդյունաբերություն մուտք գործեն ոչ միայն ֆինանսական ներդրումներ, այլև Բաքվում բնակություն հաստատեն ամենատարբեր ազգությունների ներկայացուցիչներ, ինչի հետևանքով քաղաքը դարձավ բազմազգ:

Նավթարդյունաբերության այս հեռանկարը նկատեցին ժամանակի ռուսական կապիտալի խոշորագույն ներկայացուցիչները և հատկապես ռուսահպատակ շվեդներ Նոբել եղբայրները*, որոնք Ռուսաստանում ստեղծել էին ավելի քան 30 արդյունաբերական ձեռնարկություն: 1875թ. նրանք Բաքվում ձեռք բերեցին կերոսինի մի փոքրիկ գործարան, նավթադաշտեր ու եվրոպացու հիմնարարությամբ չորս տարի նախապատրաստական աշխատանքներ ծավալեցին: 1879-ից սկսած «Նոբել եղբայրներ» ֆիրման հիմնեց նավթի արդյունահանման, վերամշակման, արտահանման վիթխարի արդիական մի համակարգ՝ բազմաթիվ օժանդակ ենթակառուցյուններով, որն իր տնտեսական ցուցանիշներով Բաքվի նավթարդյունաբերությունում առաջնային տեղ գրավեց... մինչև ասպարեզ իջավ Ստեփան Լիանոսյանը:

1877թ. ռուսական կառավարությունը ձեռնարկեց մի նոր արմատական, տնտեսապես տրամաբանված քայլ՝ նավթարդյունաբերությունում վերացրեց ակցիզային հարկը, ինչի հետևանքով նավթի գինը նվազեց շուրջ երեք անգամ, և 1883թ. ամերիկյան նավթը լիովին դուրս մղվեց ռուսական շուկայից: Աշխարհը «բաժանվեց» երկու նավթարտադրող երկրների՝ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի (իմա՝ Բաքվի) միջև:

Ինչպես իրավացիորեն նշվում է աղբյուրներից մեկում. *«Ռուսական արդյունաբերության ճյուղերից և ոչ մեկը այդքան էական դեր չէր խաղում համաշխարհային կապիտալիստական տնտեսությունում, որքան նավթայինը. ընդհուպ մինչև XXդ. սկիզբ Բաքվի շրջանը համաշխարհային նավթարդյունահանման*

երկու գլխավոր կենտրոններից մեկն էր (ԱՄՆ նավթային շրջանների հետ մեկտեղ)»¹: Այս բաժանումն ապագայում ունենալու էր լրջագույն ռազմաքաղաքական և տնտեսական հետևանքներ:

1885թ. նավթարդյունաբերություն ոտք դրեց Եվրոպայի խոշորագույն բանկային ֆիրմաներից մեկը՝ Փարիզի «Ռոտշիլդ եղբայրներ» բանկային տունը, որն զբաղվում էր Ֆրանսիայում Ռուսական կայսրության պետական փոխառությունները զետեղելով: Ալֆոնս և Էդմոնդ Ռոտշիլդները իրենց հզոր կապիտալով ձեռք բերեցին բազմաթիվ նավթատարածքներ, Բաթումում կառուցեցին վերամշակման գործարաններ, պահեստներ և դարձան արտահանման առաջատար: Իսկ նրանց «Կասպից-սևծովյան ընկերությունն»^{*} իր տնտեսական ցուցանիշներով կայուն կերպով զբաղեցրեց երկրորդ տեղը:

Այժմ խոսենք նավթարդյունաբերական աստիճանակարգում չորրորդ տեղն զբաղեցնող «Կասպից ընկերակցություն» ֆիրմայի և դարաբաղցիներ Պոդոս, Արշակ, Հակոբ, Աբրահամ Հովսեփի Ղուկասյանների մասին: Ճակատագրի հեզնանքով՝ այս չորս եղբայրների կամ ծննդյան, կամ մահվան թվականներն են հայտնի, այնինչ Ղուկասյանները մեր ժողովրդին անհունորեն նվիրված մարդիկ էին: Հակոբին կանդրադատնանք առանձին, որովհետև միայն նա էր, որ առնչություն չունեի նավթաբիզնեսի հետ, բայց հենց նա էր, որ ափիբերան կրեց Բաքվահայության ողբերգությունը...

1878թ. շուշեցիներ Սամվել Բաղիրյանը^{*} և Հարություն (Արտեմ) Մաղաթյանը միանալով Բրունո դե Բուրի հետ՝ հիմնում են «Կասպից ընկերակցություն» նավթարդյունաբերական և առևտրական ֆիրման: Նույն 1878թ. Ղարաբաղից Բաքու է գալիս դպրոցավարտ 20-ամյա Պոդոս Ղուկասյանը, արագ ծանոթանում նավթաբիզնեսին, բնաձիր աչքաբացությամբ ընկալում նավթարդյունաբերության հեռանկարները և 27 հազ. ռուբլով նախ ձեռք է բերում Ս.Բաղիրյանի մասնաբաժինը, ապա՝ Հ.Մաղաթյանինը և

¹Монополистический капитал в нефтяной промышленности России (1883-1914). Документы и материалы, М.-Л., 1961г., стр. 8-9. Ռուս. թարգ. հեղ.:

ինքն է ընկերակցում Բ. դե Բուրին: Նրանց բիզնեսն այնքան է ծաղկում, զարգանում, որ 9 տարի անց առաջնակարգ դիրք է գրավում նավթարդյունաբերությունում և 1886թ. վերածվում բաժնետիրական ընկերության՝ 2 մլն ռ. հիմնադիր կապիտալով¹: Այդ ընթացքում դպրոցն ավարտելուց հետո Բաքու են գալիս Պողոսի եղբայրները՝ Արշակը, Հակոբը և Աբրահամը: 1888-ին Բ. դե Բուրի մահից հետո եղբայրները, ինչպես նաև նրանց ազգական Հովհ. Տեր-Մարկոսյանը դառնում են «Կասպից ընկերակցության» լիակատար սեփականատերեր:

1884թ. հունվարի 24-ին տեղի ունեցավ նշանակալի իրադարձություն՝ ստեղծվեց «Բաքվի նավթարդյունաբերողների համագումարներ» (ԲՆՀ)* մարմինը, որն առհասարակ Ռուսաստանի ճյուղային, կորպորատիվ կազմակերպությունների առաջնեկն էր: 1890թ. ԲՆՀ խորհրդի նախագահ ընտրվեց Պ.Ղուկասյանը, իսկ 1896-ին պաշտոնը «զիջեց» Արշակին, որը մեծագույն պրոֆեսիոնալիզմով ու հմտությամբ այդ կազմակերպությունը ղեկավարեց մինչև վերջ՝ 1918թ.:

Պ.Ղուկասյանը 1897թ. Ս.Յակովլևի հետ 1 մլն ռ. հիմնադիր կապիտալով հիմնեց «Կասպից խողովամուղը»: Բաքվի Ստարո-Պոլիցեյսկայա փողոցում գտնվող նրա ֆիրման առաջիններից մեկը սկսեց նավթարդյունաբերության համար վաճառել տարատեսակ արտասահմանյան սարքավորումներ, խողովակներ, երկաթեղեն, շարժիչներ, էլեկտրակայաններ: Նա նշանակվեց Մակոպի «Կոլխիդա» նավթարդյունաբերական և առևտրային ընկերության տնօրեններից մեկը և, ըստ էության, առաջին հայն էր, որ XIXդ. վերջին - XXդ. սկզբին դարձավ համառուսաստանյան չափանիշների արդյունաբերող: Երբ 1906թ. կազմավորվեց Ռուսաստանի Պետական խորհուրդը՝ 12 տեղ հատկացվեց երկրի արդյունաբերական և առևտրային վերնախավին. Պ.Ղուկասյանի հեղինակությունն ու անուրանալի ներդրումն այնքան մեծ էին, որ նա

¹ Ա.Սարուխան, Աղեքսանդր Մանթաշեանց մեծ վաճառականն ու բարեգործը: Հիշողություններ իր մահուան 20-ամեակի առթիւ, Վիեննա, 1931թ., էջ 41-44:

ընտրվեց այդ բարձրագույն մարմնի անդամ ու տեղափոխվեց մայրաքաղաք:

Աբրահամ Ղուկասյանը համալսարանական կրթություն ստացավ Գերմանիայում, ու երբ Պ.Ղուկասյանն ու Ալ.Մանթաշյանը 1902թ. Անգլիայում հիմնեցին *Homelight Oil Co* ֆիրման՝ փիլիսոփայության դոկտորը հաստատվեց Լոնդոնում՝ որպես մշտական ներկայացուցիչ:

Ամփոփելով Բաքվի նավթարդյունաբերության կայացման 1873-1899թթ. շրջանի վերաբերյալ մեր խոսքը՝ նշենք մեկ փաստ. 1889թ. Բաքվում գրանցված էր 69 նավթարդյունաբերական ֆիրմա, որից 12-ը (այդ թվում 9 հայկական և մեկ ադրբեջանական) արդյունահանում չէին ունեցել: Մնացած 58 ընկերությունները միասին վերցրած արտադրել էին 192.247.663 փուֆ նավթ: Այդ ընկերություններից հայկական էին 34-ը, որոնք արդյունահանել էին 93.891.585 փուֆ: Ադրբեջանական էին ընդամենը 3-ը, որոնք ստացել էին 14.472.370 փուֆ, և այդ քանակից 13.981.105 փուֆը՝ միայն Թաղիևը¹: Կարծում ենք, մեկնաբանություններն ավելորդ են:

Այժմ ժամանակն է անդրադառնալու մեծ հային, մի մարդու, առանց որի անհնար է պատկերացում կազմել թե՛ Բաքվի, թե՛ համաշխարհային նավթարդյունաբերության մասին: Մի մարդու, առանց որի հնարավոր չէ գաղափար ունենալ հայի էության, ձեռներեցության և աշխատասիրության մասին: Առանց որի հայ ժողովրդի պատմությունն առհասարակ թերի է:

Խոսքը *Ալեքսանդր Հովհաննեսի Մանթաշյանցի* (1842-1911) մասին է:

Հայոց «նավթարքայի» մերձավոր գործակիցներից մեկը՝ Առաքել Մարուխանը, որ 1921թ. կարողացավ փախչել բոլշևիկյան Բաքվից, հայտնվեց Վիեննայի Միախարյանների մոտ, զբաղվեց հայագիտությամբ և ստեղծեց մի շարք արժեքավոր աշխատու-

¹Սա սեփական հաշվարկ է: Օգտվել ենք *Сборник статистических сведений о русской и американской нефтяной промышленности*, Баку, 1890г. աղբյուրից, որի 1-5 էջերում տպագրված աղյուսակի հիման վրա կատարել ենք թվաբանական պարզ գործողություն:

թյուններ, 1931թ. լույս ընծայեց մի գիրք, որով արտահայտեց իր անսահման սերն ու հարգանքը: Ըստ մեզ, Ա.Սարուխանը գիրքը գրել է վախը սրտում, դիտավորյալ թույլ է տվել որոշ անճշտություններ, շատ բաների մասին խոսել է մշուշոտ ակնարկներով, քանզի հուշագրության գործող անձանցից շատերը ողջ էին և հանդիսանում էին համաշխարհային նավթաբիզնեսի ազդեցիկ դեմքեր: Բայց դա ազնիվ, անկեղծ և ճշմարտացի գիրք էր:

Ա.Սարուխանն իր հուշագրությունն սկսում է այսպիսի տողերով. «Ես գրում եմ Մանթաշյանց (g-ով), որովհետև հանգուցյալն իր անունը հայերեն ստորագրում էր Մանթաշեանց: Ռուսերեն՝ ըստ իշխող սովորության՝ Манташев, նույնը և օտար լեզուներով՝ Mantacheff: Սկզբում օգտագործել է նաև Mantachoff, օ-ով, այս պատճառով էլ նրա հին՝ Մանչեստրի ծանոթները մինչև վերջ նրա անունը գրում և արտասանում էին Մենթեշով՝ անգլերեն հնչմամբ»: Մենք անթույլատրելի ենք համարում այն, որ այսօր գրեթե բոլորը հայերեն օգտագործում են Մանթաշով ձևը (թերևս, անտեղյակությունից), այդ իսկ պատճառով հավատարիմ մնալով հենց ազգանվան տիրոջը՝ մենք ստորև կգործածենք Մանթաշյանց-ը:

Մենք քանիցս գրել ենք, որ հայոց բազմադարյա բիզնեսի գագաթներից մեկի՝ Ալ. Մանթաշյանցի կյանքն ու գործն արժանի են լուրջ, ծանրակշիռ, մանրակրկիտ մենագրության, սակայն նրան ըմբռնել անհնար է առանց Բաքվի նավթի: Այդ իսկ պատճառով, ելնելով մեր գրքի բնույթից ու շրջանակներից, կլուսաբանենք միայն նավթարդյունաբերությունում նրա դերակատարությունը:

1889թ. սկզբին շուշեցի Միքայել Արամյանցը, որն իր հայրենակից դարաբաղցիներ Ա.Ծատուրյանի, Գ.Առափեյանի և Գ.Թումայանի հետ հանդիսանում էր «Ա.Ծատուրյան և այլք» (*А.Цатуров и другие*) նավթարդյունաբերական ընկերության համասեփակա-նատեր, ժամանեց Թիֆլիս և Կովկասի ամենաառաջնակարգ Առևտրային բանկի խորհրդի փոխնախագահ (1890-ից՝ ցլյանս նախագահ), ամենախոշոր բաժնետեր Ալ.Մանթաշյանցից վարկ

¹ Ա.Սարուխան, Ադեքսանդր Մանթաշեանց..., էջ 5:

խնդրեց՝ վագոն-ցիստերններ ձեռք բերելու նպատակով: Այդ խնդրանքը պատահական չէր. Արամյանցն ու Մանթաշյանցը միմյանց ճանաչում էին պատանեկան տարիներից, երբ Թավրիզում զբաղվում էին մանուֆակտուրայի առևտրով. առաջինը վաճառական Թառումյանի օգնականն էր, երկրորդը՝ իր հոր¹:

Ալ.Մանթաշյանցը, որ վաղուց էր նկատել նավթի հեռանկարայնությունը, Մ.Արամյանցին առաջարկեց իր սեփական գումարը (50 հազ. ռ.), բայց պայմանով, որ դառնա նրանց ֆիրմայի փայատեր: Այդպես էլ վարվեցին, և Ալ.Մանթաշյանցը մուտք գործեց Բաքվի նավթարդյունաբերություն՝ «Ա.Յ.Մանթաշյանց առևտրային տուն» ֆիրմայի ցուցանակի ներքո:

Արդեն նույն թվականի նոյեմբերի 27-ին նավթարդյունաբերողների V համագումարի անունից նա մի զեկուցագիր² ներկայացրեց ֆինանսների նախարարության տուրքերի հավաքման դեպարտամենտին, ուր տնտեսագիտական լրջագույն վերլուծություն էր կատարել՝ համեմատելով ռուսական և ամերիկյան նավթարդյունաբերությունները և առաջարկել մի շարք միջոցառումներ, որոնց իրականացման շնորհիվ Բաքվի նավթը կարող էր տիրապետող դառնալ համաշխարհային շուկայում: Այդ նույն զեկուցագրում նա մասնավորապես նշում էր. *«Անձամբ ես զբաղվում եմ տարեկան ավելի քան 2 մլն փութ կերտսին Անգլիա արտահանելով և տիրում եմ երկու հեղուկատար ծովային շոգենավերի, որոնք երթնեկում են Բաթումի ու Լոնդոնի միջև և ուղարկվում են Ամերիկա»:*

Այս զեկուցագիրը յուրատեսակ «այցեքարտ» էր. Բաքվի նավթարդյունաբերություն ուտք դրեց մի մեծ անհատականություն, որն իր շուրջը համախմբեց բոլոր մանր ու մեծ հայ նավթարդյունաբերողներին, դարձավ նրանց առաջնորդը, գործընկերը, օգնականն ու պատվարը և ձևավորեց այնպիսի մի հասկացություն, որը մենք անվանում ենք «հայկական նավթ»: Ասպարեզ իջավ մի

¹ Ավելի մանրամասն տես մեր «10 կապիտալիստ» գիրքը, էջ 53-59:

² Монополистический капитал..., стр. 130-134.

նոր դերակատար, որն ի չիք պիտի դարձներ Նոբելների և Ռոտշիլդների բոլոր փորձերը՝ մենաստիքության ենթարկելու նավթարդյունաբերությունը, ընդ որում՝ դա պիտի աներ բացառապես տնտեսական մրցակցության ճանապարհով: Եկավ նա, առանց որի կարծիքը հաշվի առնելու հնարավոր չէր որևէ խնդիր լուծել:

1889թ. սեպտեմբերի տվյալներով, Ռոտշիլդների «Կասպից-սևծովյան ընկերությունը» Բաթումից արտահանման մենատերն էր: Պայմանագրային հիմունքներով այն 2280 ցիստերններով (ցիստերնների ընդհանուր թիվն էր 4195) 50 նավթարդյունաբերական ֆիրմաներից կերոսին էր ստանում և իրացնում արտասահմանյան շուկաներում¹: Ալ.Մանթաշյանցը Բաթումում կառուցեց մետաղյա տակառների պատրաստման գործարան և միայն 1898թ. 3,2 մլն փութ կերոսինի այդպիսի տակառ արտահանեց²: Հավելենք նաև, որ 1896թ. Բաթումից արդեն նավթ և նավթամթերքներ էր արտահանում 13 ֆիրմա, որոնցից 4-ը հայապատկան էին (Օովիանյան եղբայրների, Խաչատրյանցի, Շահբազյանի), իսկ Ալ.Մանթաշյանցը զիջում էր միայն Ռոտշիլդներին ու Նոբելներին³:

1892թ. նոյեմբեր-մարտ ամիսներին Դոնի Ռոստովում կայացան բանակցություններ, որոնց մասնակցում էին կերոսին արտադրող յոթ խոշորագույն ընկերություններ՝ «Նոբել եղբայրները», Պ.Ղուկասյանի «Կասպից ընկերակցությունը», «Ս.Ս.Շիբան և ընկ.», ինչպես նաև դրանից մեկ տարի առաջ ստեղծված «Բաքվի ստանդարտ» միավորման անդամները՝ Մանթաշյանցը, Գ.Լիանոսյանը, Բուդաղյանը և... Թաղիկը: Այս ֆիրմաները միասին վերցրած տարեկան արտադրում էին շուրջ 44 մլն փութ կերոսին, որից 17 մլն-ը՝ «Նոբել եղբայրները»: Բանակցությունների նպատակը հետևյալն էր՝ ստեղծել «Բաքվի կերոսինի գործարանատերերի միություն», որի փաստացի տերը կդառնար «Նոբել եղբայրները»: Գիտակցելով, որ կերոսինի արտահանման մենաշնորհը

¹Նշվ. աշխ., էջ 673:

²Նշվ. աշխ., էջ 232:

³Обзор ... за 1896г., стр. 178.

կանցնի միմյանց հետ ձեռք ձեռքի գործող Նոբելներին ու Ռոտշիլդներին՝ Ալ.Մանթաշյանցը հրաժարվեց մտնել այդ միության մեջ: Ավելին, նա մյուս հայ գործարարների հետ ստեղծեց ինքնուրույն միավորում, որի մասնակիցները 1893թ. նոյեմբերի 27-ին կայացրին առանձին համաձայնություն և կնքեցին «Բաքվի կերոսինի գործարանատերերի միության 2-րդ խմբի պայմանագիր»: Դա լուրջ հակահարված էր Նոբելների և Ռոտշիլդների մենատիրական ձգտումներին, ահա թե ինչու 1894թ. փետրվարին 1-ին և 2-րդ խմբերի միջև ձեռք բերվեց համաձայնություն՝ արտաքին շուկաներում համատեղ գործողությունների շուրջ, այն պայմանով, որ յուրաքանչյուր խումբ կունենար էական ինքնուրույնություն: Միաժամանակ համաձայնագիր ստորագրվեց Ալ.Մանթաշյանցի հայկական խմբավորման և «Բաքվի կերոսինի գործարանատերերի միության» միջև, որով արտասահմանյան շուկաները բաժանվում էին ռուսական արտահանողների միջև: Այսինքն, ակնհայտ է, որ Ալ.Մանթաշյանցի շնորհիվ հայ գործարանատերերը հնարավորություն ստացան անարգել դուրս գալ համաշխարհային շուկա: Եվ միայն դրանից հետո, 1895թ. մարտի 2-ին Է.Նոբելը «Ստանդարտ օյլի»¹ ներկայացուցիչ Ու.Լիբին նախնական պայմանավորվածություն ձեռք բերեցին՝ համաշխարհային նավթային շուկան բաժանելու մասին: Դրա համաձայն, ԱՄՆ-ին բաժին էր ընկնելու նավթամթերքների մատակարարման 75%-ը, Ռուսաստանին՝ 25%-ը¹:

Այս ամենի մեջ չենք կարող աչքաթող անել մի կարևորագույն դիտարկում. էներգետիկական պաշարը, դիցուք՝ նավթը և նավթամթերքները, դեռևս միջազգային քաղաքականության, ներազդման գործիք չէին, քանզի պայմանավորվածություններ էին ձեռք բերում ոչ թե երկրները, այլ ֆիրմաները: Եվ այդ ասպարեզում վիթխարի էր հայ նավթարդյունաբերողների դերակատարությունը: Եթե միայն նրանք իմանային...

Ալ.Մանթաշյանցի շոնդալից մուտքը նավթարդյունաբերու-

¹ Монополистический капитал..., стр. 177, 679.

թյուն պայմանավորված էր մի քանի հիմնական գործոններով. նախ, լինելով Կովկասի խոշորագույն ֆինանսական հաստատության՝ Թիֆլիսի Առևտրային բանկի վարչության նախագահ՝ նա տիրում էր դրամական զգալի միջոցների, իսկ նավթարդյունաբերությունը շարունակ պահանջում էր նորանոր ներդրումներ: Երկրորդ, գտնվելով մշտական կապի ու շփումների մեջ Եվրոպայի հետ (ի մասնավորի, Մանչեստրում ու Փարիզում)՝ Ալ.Մանթաշյանը գործնականորեն էր տիրապետում բիզնեսի կառավարման արդիական մեթոդներին ու մեխանիզմներին: Երրորդը նրա զուտ մարդկային բարձր հատկանիշներն էին, որոնք արտահայտվում էին խոր ազգասիրությամբ, այլազգիների և անգամ մրցակիցների հանդեպ բարի, ջերմ, հանդուրժողական վերաբերմունքով:

Ալ.Մանթաշյանցի բիզնեսը թելադրում էր նոր զարգացում, և նա ձեռնամուխ եղավ արմատական քայլի. խոշոր գումարներ վճարելով իր գործընկերներին՝ Գ.Առափելյանին, Գ.Թումայանին և Ա.Ծատուրյանին, նա դարձավ ֆիրմայի սեփականատերը: Թողեց միայն Մ.Արամյանցին, և դա Ալ.Մանթաշյանց-մարդուն բնութագրող հետաքրքիր դրվագ է:

Մ.Արամյանցը չէր ցանկանում նավթարդյունաբերությունից դուրս գալ և ասում է.

- Մի՛ անիր այդ բանը, Ալեքսանդր: Մի մոռացիր, որ իմ շնորհիվ Բաքու եկար:

Մանթաշյանցը մի պահ մտածում է և վրացահայի իր բարբառով պատասխանում.

- Դրուստ իս ասում, Միքել ջան...

Պայմանավորվում են հետևյալ կերպ. Ալ.Մանթաշյանցին պատկանելու էր ապագա կազմակերպության 75% բաժնեմասը, Մ.Արամյանցին՝ 25%-ը, ընդ որում՝ վերջինս չէր միջամտելու բիզնեսին, շահույթ չէր ստանալու արտասահմանի հետ կապված գործարքներից: Դա Մ.Արամյանցին հնարավորություն էր տալիս խորամուխ չլինել նավթաբիզնեսի բարդագույն վայրիվերումների մեջ, ապրել ապահով և անհոգ կյանքով. դա էր պատճառը, որ

հետագայում նա վաճառեց Բաքվի իր շքեղ առանձնատունը, 10 մլն ռուբլի գումարով տեղափոխվեց Թիֆլիս և դարձավ քաղաքի ամենանշանավոր բարերարներից մեկը: Ճակատագրի հեգնա-նքով նա մասնակցեց մտերիմ ընկերոջ՝ Ալ.Մանթաշյանցի հուղարկավորությանը, իսկ ինքը 1922թ. բոլշևիկյան Վրաստանի մայրաքաղաքում, զրկված ամբողջ ունեցվածքից և ապրելու տարրական պայմաններից, վախճանվեց լիակատար թշվառության մեջ*...

Եվ այսպես, 1899թ. հունիսի 11-ին հաստատվեց «Ա.Ն. Մանթաշյանց և ընկ.» (*Нефтепромышленное и торговое общество «А.И.Манташев и К^о»*) ֆիրմայի կանոնադրությունը¹, համաձայն որի հիմնադիրներն էին Թիֆլիսի 1-ին գիլդիայի վաճառական Ալ.Մանթաշյանցը, Բաքվի 1-ին գիլդիայի վաճառական Մ.Արամյանցը, իսկ հիմնադիր կապիտալը կազմում էր 22 մլն ռ. (88.000 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 250 ռ. արժողությամբ): Ըստ կանոնադրության 22-րդ կետի, ընկերությունը ղեկավարում էր 5 տնօրեններից բաղկացած խորհուրդը, որոնց ընտրում էր բաժնետերերի ընդհանուր ժողովը:

Կանոնադրությանը նախորդել էր (1899թ. հունվարի 12) Ալ.Մանթաշյանցի և Մ.Արամյանցի ստորագրությամբ մի վերին աստիճանի ուշագրավ բացատրագիր², որով հիմնադիրները ներկայացնում էին ֆիրմայի ունեցվածքն ու հիմնավորում ընկերության ստեղծման անհրաժեշտությունը: Համաձայն այդ փաստաթղթի, ֆիրման ուներ 173 դեսյատին նավթաբեր տարածքներ Բալխանում, Սաբունչիում, Ռոմանում, Ջաբրաթում, Բիբի-Հեյբաթում և Ապշերոնյան թերակղզու այլ վայրերում: Ընդ որում, այդ հողատարածքներից 147,7 դեսյատինն ընկերության սեփականությունն էր, իսկ մնացածը վարձակալված էր:

Ֆիրմային էին պատկանում նաև Սև քաղաքում՝ կերոսինի

¹ Устав нефтепромышленного и торгового общества «А.И. Манташев и К^о», Тифлис, СПб, 1899г.

² Монополистический капитал..., стр. 231-233.

գործարան՝ նավթի և մագուլթի պահեստարաններով, Սպիտակ քաղաքում՝ քսայուղերի ստացման գործարան, որն ուներ 100 սաժեն* երկարությամբ նավամատույց և մղիչ կայանք, Ջաբրաթում՝ հատուկ մեխանիկական արհեստանոց և 50 վերստ* երկարությամբ նավթամուղ, Բաթումում՝ մետաղյա ու փայտե տակառների պատրաստման գործարան, ինչպես նաև կերոսինի ու քսայուղերի պահեստարաններ և մղիչ կայանք: Նավթարտահանման կայան կար նաև Օդեսայում՝ 100 վագոն-ցիստերներով, որոնք երթնեկում էին Ռուսաստանի հարավարևմտյան երկաթգծերով: Ի վերջո, ընկերությունը գրասենյակներ, գործակալություններ և պահեստարաններ ուներ Ջմյուռնիայում, Մալոնիկում, Կոստանդնուպոլսում, Ալեքսանդրիայում, Կահիրեում, Պորտ Սալիդում, Դամիեթում, Մարսելում, Լոնդոնում, Բոմբեյում ու Շանհայում:

Նավթի արդյունահանումը արտահայտվում էր հետևյալ թվերով. 1895-ին՝ 30 մլն փութ, 1896-ին՝ 31.5 մլն, 1897-ին՝ 48 մլն, 1898-ին՝ 52 մլն: Բացատրագրի հեղինակները նշում էին, որ արդյունահանումը կատարվել է իրենց տնօրինության տակ եղած նավթաբեր տարածքների 1/5 մասի (36 1/3 դես.) ընդամենը 70 հորատանցքներից: Ահա թե ինչու խնդրում էին թույլ տալ հիմնել բաժնետիրական ընկերություն (այսինքն, ֆինանսական միջոցներ ներգրավել)՝ հիմնադիր կապիտալը սահմանելով 22 մլն ռուբլի: Այս վերջին ցուցանիշով «Ա.Հ.Մանթաշյանց և ընկ.» ֆիրման 10 տարի շարունակ (1899-1909) հանդիսացավ ամենախոշորը ռուսական նավթարդյունաբերությունում:

Այդպես ասպարեզ իջավ մի արդյունաբերական հսկա, որն իր տնտեսական ցուցանիշներով երրորդն էր, բայց եթե հաշվի առնենք, որ «Ա.Հ.Մանթաշյանց և ընկ.» ֆիրման մշտապես ձեռք ձեռքի տված համագործակցում էր մյուս հայկական ձեռնարկությունների հետ, ապա պարզորոշ է դառնում, որ «հայկական նավթը» ակնհայտորեն իշխող դիրք էր գրավում և վճռական ձայն ուներ:

Բաքվի նավթարդյունաբերությունում սկսվեց մի նոր բարդագույն շրջան, որը նախանշելու էր աշխարհաքաղաքական

աներևակայելի զարգացումներ, կանխորոշելու էր Անդրկովկասի ապագան, ներագդելու էր արևելահայության ճակատագրի վրա:

Այդ շրջանն ուներ երեք բնորոշ առանձնահատկություն. ա) բուն նավթարդյունաբերության բուռն զարգացում՝ պայմանավորված օտարերկրյա և «ոչ տեղական» ռուսական բանկային կապիտալի ներխուժմամբ, բ) բանվորահեղափոխական շարժում, գ) Առաջին համաշխարհային պատերազմ, դ) ազգամիջյան ընդհարում: Սույն գլխում մենք կանդրադառնանք առաջինին, քանզի արտահանված յուրաքանչյուր նոր փթի հետ նավթարդյունաբերությունը վերածվում էր Քրոնտսի, որը կուլ էր տալու իր զավակներին:

Ինչպես վերևում նշել ենք՝ աշխարհը «բաժանված» էր երկու նավթային գերտերությունների՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև: Ընդ որում, վերջինս Բաքվից բացի այլ նավթավայր չունեւր և XXդ. սկզբին նավթարդյունաբերությունից ստանում էր տարեկան 100 մլն ռ. եկամուտ: Սակայն վառելիքաէներգետիկական պահանջարկի մեծացումը՝ պայմանավորված թե՛ քաղաքացիական և թե՛ ռազմական գործոններով, եվրոպական պետություններին՝ Անգլիային, Ֆրանսիային, Գերմանիային, ստիպեց սևեռուն ուշադրություն դարձնել Բաքվին: Ամենաեռանդունը անգլիացիներն էին:

Անգլիական կապիտալը Բաքվի նավթարդյունաբերություն մուտք գործեց 1890-ական թվականների վերջերին, երբ համաշխարհային շուկայում բարձրացան նավթի ու նավթամթերքների, հատկապես՝ կերոսինի, գները: Կովկասի նավթադրյուններին տիրելու նպատակով 1897-1901թթ. Լոնդոնի Սիթիում ստեղծվեց 10 ընկերություն՝ 53 մլն ռ. հիմնական կապիտալով: Դրանցից վեցը հիմնել էր մի խումբ, որը ղեկավարում էր Անգլիական բանկի տնօրեններից մեկը՝ Է.Գուբարդը, և որի կազմի մեջ մտնում էին Հ.Գլադստոնը, Դ.Քիթսոնը, Չ.Մուրը, Ու.Ջոնսոնը, Ք. և Ու.Վերներները: Մտաբերո՞ւմ էք վերերում հիշատակված ադրբեջանցի Թադիկին. 1897թ. վերջին անգլիացիները նրան առաջարկեցին վաճառել բիզնեսը: Թադիկը Բիբի-Նեյբաթի իր նավթադաշտերի, կերոսինի-քսայուղի և ածխաթթվի գործարանների, նավթամուղի,

նավթատար նավատորմիդի, երկաթուղային ցիստերնների լրակազմի, Ռուսաստանի տարբեր քաղաքներում գտնվող կերոսինի ու մագուրի պահեստարանների դիմաց պահանջեց 5 մլն ռ., չնայած այդ ամենի վրա ծախսել էր 200 հազ. ռ. և վաղուց արդեն մի քանի անգամ ավելի շահույթ ստացել: Անգլիացիները համաձայնվեցին, սակայն պայմանով, որ միանվագ կվճարեն 500 հազ. ռ., իսկ մնացած գումարը՝ մաս-մաս, մի քանի տարվա ընթացքում: Գործարքը կայացավ, ինչի արդյունքում ստեղծվեց «Ռուսական նավթի ու հեղուկ վառելիքի արդյունահանման ընկերությունը» (կրճատ՝ «Օլեում»)՝ 1,2 մլն ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով, և Թադինն ակտիվ բիզնեսից դուրս մնաց: Սակայն զավեշտն այն էր, որ հորատանցքներից մեկը «խելագարվեց» և սկսեց օրական 15 տոննա նավթ արտաժայթքել. անգլիացիները մնացած 4,5 մլն ռուբլին ադրբեջանցուն վճարեցին հենց այդ նավթի վաճառքի գումարներից...¹

Է.Գուբարդի խումբը 1898թ. 7 մլն ռուբլով գնեց Գ.Առափելյանի, Բուդաղյան եղբայրների և Ադամյան եղբայրների ֆիրմաները («*Г.Арафелов и К°*», «*Братья И.К. и М.К. Будаговы*», «*Братья Я.А.Адамовы*») և ստեղծեց «Ռուսական նավթի Բաքվի ընկերությունը»՝ 1,5 մլն ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով: Ապա 2,3 մլն ռուբլով ձեռք բերեց Ա.Ծատուրյանի* և Բ. դե Բուրի ձեռնարկությունները, որոնց հենքի վրա 1899թ. ստեղծեց «Եվրոպական նավթային ընկերությունը»՝ 1,1 մլն ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով: Այդ նույն խումբը միաժամանակ հիմնեց նաև «Միավորված ռուսական նավթային ընկերությունը»՝ 200 հազար ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով, «Բաքվի (Զաքրաթի) կերոսինային ընկերությունը»՝ 50 հազար ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով և «Քալանթարյանի* (Բաքվի) նավթային ընկերությունը» («*Калантаровская (Бакинская) нефтяная К°*»)՝ 50 հազար ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով:

Անգլիացի կապիտալիստների մեկ այլ խումբ գործում էր

¹ Ա.Սարուխան, Ադրբայջանի Մանթաշեանց..., էջ 30:

կերոսինի արտահանման անգլիական «*Lane and Macandrew*» խոշոր ֆիրմայի տնօրեն-կառավարիչ Ֆ.Լեյնի գլխավորությամբ: 1898թ. փետրվարին այդ խումբը հոլանդական երկու բանկերից վերագնեց «Ս.Մ.Շիբան և ընկ.»* ֆիրմայի ստուգիչ փաթեթը և Լոնդոնում հիմնեց «Շիբանի սահմանափակ պատասխանատվությամբ նավթային ընկերությունը»՝ 750 հազար ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով: Այսպիսով՝ անգլիացիները միայն 1898-1901թթ. Բաքվի նավթարդյունաբերությունում ներդրեցին 4,1 մլն ֆունտ ստերլինգ:

Ֆրանսիայի շահերն անուղղակիորեն ներկայացնում էր Ռոտշիլդների ընկերությունը: Եվ նույնիսկ բելգիական կապիտալը մուտք էր գործել ռուսական նավթարդյունաբերություն՝ վերահսկելով Գրոզնու «Ա.Հ.Հախվերդյան* և ընկ.» ֆիրման:

Այս ամենը վկայում էր մեկ բանի մասին՝ օտարերկրյա կապիտալի մուտքը, մի կողմից, արդյունավետ տնտեսավարման, միջազգային համագործակցության լայն հնարավորություններ էր բացում, մյուս կողմից՝ Բաքվի նավթը վերածում էր աշխարհաքաղաքական մեծ քաղաքականության գործիքի:

Ֆինանսական միջոցների ներհոսքը սրընթաց զարգացման հենք հանդիսացավ, և 1901թ. արտադրվեց ռեկորդային նավթ՝ ավելի քան 706 մլն փուլ: Ինչպես նշում է աղբյուրը. «1901թ., երբ Ռուսաստանի նավթարդյունաբերությունը հասավ իր զարգացման գագաթնակետին, Նորելի, Ռոտշիլդի և Մանթաշևի ձեռքում կենտրոնացավ Բաքվի շրջանի ամբողջ արդյունահանման ավելի քան քառորդ մասը և այդտեղ արտադրվող կերոսինի շուրջ 40%-ը: Էլ ավելի մեծ էր երեք ֆիրմաների տեսակարար կշիռը արտահանման մեջ. նրանց էր պատկանում Ռուսաստանի ներսում իրացվող բոլոր նավթամթերքների մոտ կեսը (այդ թվում ավելի քան մեկ երրորդը՝ միայն Նորելին) և Բաթումից արտասահման առաքման շուրջ 70%-ը»¹:

Հենց այս «եռամիասնությունն» էլ փորձեց և՛ համագործակ-

¹ Монополистический капитал..., стр. 11. Ռուս. թարգ. հեղ.:

ցելով, և՛ առանձին-առանձին հանդես գալ միջազգային շուկայում: Բայց Ալ.Մանթաշյանը չէր մոռանում ազգակիցներին: Բացի այն, որ 1902թ. Պ.Ղուկասյանի հետ Լոնդոնում հիմնել էր «Հովաթյո օյլ» ֆիրման, նույն թվականի նոյեմբերի 22-ին նա նույն Պ.Ղուկասյանի, Նոբելների, Ռոտշիլդների և «Տոկամա-օլեում» ընկերության հետ համատեղ Գերմանիայում ստեղծեց *Deutsche-Russische Naphta Import Gasellschaft* ֆիրման:

Սակայն Բաքվի նավթարդյունաբերության համար վրա հասան դժվար ժամանակներ, որոնք պայմանավորված էին համաշխարհային նավթաշուկայում գների չկարգավորվող տատանումներով և բուն Բաքվում բանվորների գործադուլային շարժմամբ, ինչն աստիճանաբար հանգեցրեց ճգնաժամի: 1902թ. 136 ձեռնարկություններ արդյունահանեցին 636.528.852 փուլթ նավթ, իսկ առաջատար 24 ֆիրմաներ՝ 521 մլն փուլթ: Այս 24-ից 13-ը հայկական էին և արտադրել էին 203 մլն փուլթ կամ ընդհանուր քանակի 39%-ը¹, որից 51.946.779 փուլթը՝ Ալ.Մանթաշյանը:

1903թ., երբ Բաքվում սկսվեցին բանվորների գործադուլները, արդյունահանումը նվազեց և հասավ 597 մլն փթի²:

1904թ. արտադրությունը որոշ չափով ավելացավ. 143 ֆիրմաներ ստացան 614.810.930 փուլթ նավթ, որից 134-ի բաժինը հավասար էր 279.467 հազարի, իսկ 9 ֆիրմայինը՝ 335.345 հազարի: Այս վերջիններից չորսի բաժնեմասը կազմում էր ամբողջ արդյունահանման ծավալի 34.5%-ը. դրանք էին՝ «Նոբել եղբայրները (74.892 հազար), Ռոտշիլդների «Կասպից-սևծովյան ընկ.» (53.351 հազար), «Ա.Ղ.Մանթաշյանց և ընկ.» (49.256 հազար) և Ղուկասյան եղբայրների «Կասպից ընկերակցությունը» (34.487 հազար)³:

Դրանից հետո արդյունահանումը կայուն կերպով նվազեց և Ռուսաստանի տնտեսական վերելքի տարում՝ 1913թ., կազմեց ընդամենը 560 մլն փուլթ: Արդյունքը եղավ այն, որ համաշխար-

¹ Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հտ. Բ, Էջմիածին, 1922թ., էջ 59:

² Обзор Бакинской нефтяной промышленности за 1913г., т. I, Баку, 1914г., стр. 114.

³ Обзор Бакинской нефтяной промышленности за 1904г., т. I, Баку, 1905г., стр. 82.

հային նավթարդյունաբերությունում Ռուսաստանը զիջեց առաջատարի իր դիրքերը. եթե 1901թ. նրա տեսակարար կշիռը 51,6% էր, ապա 1913թ. այն կազմեց 18,1%: Եվ, ընդհակառակն, ավելացավ ԱՄՆ-ի տեսակարար կշիռը՝ 1901թ. 39,8%-ից 1913-ին հասնելով 62,2%-ի¹:

Բաքվի նավթարդյունաբերությունում որակական, սկզբունքային նոր փուլ սկսվեց... երկու անձանց մահվամբ. 1906թ. վախճանվեց մոսկովյան 1-ին գիլդիայի վաճառական, հնագույն ֆիրմաներից մեկի՝ «Ռուսական նավթարդյունաբերական ընկերության» (*РУХО*) սեփականատեր Գևորգ Ստեփանի Լիանոսյանը, իսկ 1911-ին՝ Ալեքսանդր Մանթաշյանցը: Նրանց փոխարեն եկան որդիները՝ Լևոն Մանթաշյանցը* և Ստեփան Լիանոսյանը (*Степан Георгиевич Лианозов, 1872-1951*): Այս վերջինիս վիճակված էր *գերազանցել բոլորին*, դառնալ համաշխարհային նավթարդյունաբերության «արքա», որին վերապահված էր նաև խոր ողբերգություն և ցավալի, ոչնչով չարդարացված անէացում: Սոռացություն, որից ստորև կփորձենք դուրս բերել...

Ամեն ինչ սկսվեց 1872թ., երբ նավթադաշտերը աճուրդի հանվեցին. ծագումով պարսկաստանցի, Աստրախանի 1-ին գիլդիայի վաճառական Ստեփան Մարտինի Լիանոսյանը 1310ռ. մեկնարկային գնի դիմաց վճարեց 26.220ռ. գումար և դարձավ 6 նավթահորով թիվ 7 տեղամասի տերը, որը ենթադրաբար ուներ ընդամենը 4599 փութ արտադրողականություն: Այս քայլը ոչ այնքան նավթարդյունաբերության ապագայի ըմբռնում էր, որքան ֆինանսական պարզ ներդրում՝ հող էր գնել, սեփական հողատարածք էր ձեռք բերել, որի արդյունքում ստեղծվեց «*РУХО*» շքեղ անվամբ ֆիրման: Բայց Ս.Մ.Լիանոսյանն ուներ հետաքրքրությունների ավելի լայն շրջանակ. մեկ տարի անց՝ 1873-ին, նա շահական կառավարությունից ստացավ կոնցեսիա, որը Կասպից ծով թափվող պարսկական գետերի գետաբերաններում ձկան որսի մենաշնորհ էր տալիս: Պայմանագիրը կնքվել էր 5 տարի

¹ Монополистический капитал ..., стр. 19.

ժամանակով, բայց բազմիցս նորոգվեց: Ձկնորսարանները բաժանվում էին հինգ ինքնուրույն շրջանների՝ Աստարայի, Էնգելիի, Սեֆիդդուղի, Մաշադիսերի և Աստրաբադի, որոնցից յուրաքանչյուրը մասնագիտանում էր որոշակի ձկնատեսակի արտադրության մեջ:

Ս.Լիանոսյանի մահից հետո բիզնեսն ստանձնեց որդին՝ Գևորգը, որը դիմեց ցարական կառավարությանը՝ խնդրելով վարձակալության տալ Կասպից ծովի առափնյա ջրերը (Թուրքմենչայի պայմանագրով՝ Կասպից ծովը պատկանում էր Ռուսաստանին): 1900թ. մարտի 22-ին Գ.Լիանոսյանի և Ռուսաստանի հողագործության ու պետական ունեցվածքի նախարարության միջև կնքվեց պայմանագիր՝ 25 տարի ժամկետով: (Ստորագրող կողմերից ոչ մեկի մտքով չէր անցնում, որ 1917-ից հետո այդ պայմանագիրը կխզվի...):

Այսպիսով, Գ.Լիանոսյանը դարձավ ամբողջ Կասպից ծովի առափնյա գետաբերաններում ձուկ և ձկնամթերք արտադրող ամենախոշոր ձեռնարկատերը: Եթե XIXդ. 90-ական թթ. ձկնորսարանների համախառն արտադրանքը միջին հաշվով տարեկան կազմում էր 600 հազ. ու., ապա դարավերջից մինչև 1906թ. ընկած ժամանակահատվածում այն հասնում էր 900 հազ. ու., իսկ 1907-1915թթ.՝ 2,25 մլն ռուբլու: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Մարտին, Ստեփան, Լևոն Լիանոսյան եղբայրների ձկնորսարանները ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություններ էին՝ հազեցված տեխնիկայի վերջին խոսքով: Դրանք ունեին էլեկտրակայաններ, սառնարաններ, հեռախոսակապ, մեխանիկական և այլ արհեստանոցներ, ինչպես նաև 20 լողամիջոցից բաղկացած մի նավատորմ, այդ թվում երկու խոշոր շոգենավ, որոնցից մեկը կոչվում էր «Պիրոգով», իսկ մյուսը կրում էր սեփականատերերի պապի անունը՝ «Մարտին»: Ձկնորսարաններում աշխատում էր 5900 մարդ, պատերազմի նախօրյակին կապիտալ ներդրումները կազմում էին շուրջ 3 մլն 380 հազ. ֆրանկ, իսկ 1916-ին՝ 9 մլն ռուբլի: Այսպիսով, Լիանոսյանների

ձկնորսարանները Պարսկաստանի ամենախոշոր արդյունաբերական ձկնորսությունն էին մինչև 1909թ., երբ ստեղծվեց «Անգլո-պարսկական նավթային ընկերությունը»¹:

Այսքանը ձկան մասին, հիմա անդրադառնանք նավթին: Գ.Լիանոսյանի օրոք «*PYHO*»-ն միջին կարգի ֆիրմա էր: Ս.Լիանոսյանը հոր մահից հետո ձուկը «թողեց» եղբայրներին, իսկ ինքը գլխովին ընկղմվեց նավթի մեջ, ինչի հետևանքով մի նոր դարաշրջան սկսվեց համաշխարհային նավթարդյունաբերությունում:

Այստեղ խիստ կարևոր է մի դիտարկում. հայ նավթարդյունաբերողների առաջին սերունդը (և առհասարակ վաճառականությունը) ուներ բիզնեսավարման վարքային մի առանձնահատկություն, ինչին մենք անվանում ենք նահապետականություն և ինչն ուներ իր տրամաբանական բացատրությունը: *Ամեն ինչ վաստակված էր սեփական քրտինքով*, և այդ սեփականության պահպանումը թելադրում էր, որ յուրաքանչյուրի բիզնեսում ընդգրկվեին վստահելի անձինք՝ զավակները, մերձավոր ազգականները, հայրենակիցները (շուշեցիներ, շամախեցիներ, թիֆլիսեցիներ և այլն) կամ ազգականները: Այսինքն, բիզնեսը ազգային էր՝ բառիս բուն իմաստով: Այդպիսիք էին տասնյակ ֆիրմաներ՝ Միրզոյան եղբայրներինը, Ադամյան եղբայրներինը, «Ամուրը», «Անահիտը», «Արամազդը», «Վանանդը», «Որոտանը», Ղուկասյան եղբայրներինը, Թումանյանց եղբայրներինը, Կրասիլնիկյան եղբայրներինը և այլն, և այլն, որոնց չենք թվարկում զուտ տեղի ինայողության պատճառով: Անգամ մեծն Մանթաշյանցը, որը հրաշալի հասկանում էր նավթարդյունաբերությունում ֆինանսական նորանոր միջոցների անընդհատ ներդրման անհրաժեշտությունը, Կովկասի բանկային «արքան» էր, պետերբուրգյան երկու խոշոր բանկերի վարչության անդամ, միևնույն է՝ իր բիզնեսի կառավարման մեջ օտարների չէր թողնում. 1909թ. նրա

¹ Ավելի մանրամասն տե՛ս И.Фарманов, Записки о фирме “Наследники Г.С.Лианозова”, Астрахань, 1914г., Ս.Ստեփանյան, Հայ առևտրական բուրժուազիան Իրանի սնտեսական կյանքում (XIXդ. վերջ - XXդ. սկիզբ), Ե., 1992թ., էջ 110-121:

ընկերության վարչության մեջ էին որդի Լևոնը, ազգականներ Դավիթ Խարազյանը, Գևորգ Շահումյանը, վերևում հիշատակված Առաքել Սարուխանը և Ս.Չերքեզովը, որի եղբայրն այդ ժամանակ իր հարազատ քաղաքի՝ Թիֆլիսի քաղաքագլուխն էր: Ըստ էության, ստեղծվել էին «փակ բիզնես-տարածքներ», ինչը ծնում էր այլազգիների (առաջին հերթին՝ ռուսների և ադրբեջանցիների) խանդն ու ակնհայտ դժգոհությունը, մյուս կողմից արգելակում էր բուն բիզնեսի զարգացումը:

Ս.Լիանոսյանն առաջինն էր, որ կոտրեց այս մտածելակերպային կարծրատիպը, առաջինն էր, որ իր գործունեությամբ ազգակիցներին սովորեցրեց, թե բիզնեսի ազգային բնույթը փակուղային է, ազգային պետք է լինի բիզնեսի արդյունքը՝ կապիտալը:

1907թ. նա 2 մլն ռ. հիմնադիր կապիտալով Պետերբուրգում ստեղծեց «Գ.Ս.Լիանոսյանի որդիներ» (*«Г.М.Лианозова сыновья»*) բաժնետիրական ընկերությունը, որի տնօրեն-կառավարիչն ինքն էր, իսկ վարչության մեջ ներգրավեց Պ.Լեժնովսկուն և կայսրության խոշորագույն ձեռնարկատերերից մեկին՝ Պետերբուրգի «Պուտիլովյան գործարան» մեքենաշինական, կաթսայաշինական և պողպատածուլական բաժնետիրական ընկերության սեփականատեր Ա.Պուտիլովին:

Բացի նավթաբեր հողատարածքներից, ընկերությունն ուներ հետևյալ ձեռնարկությունները. Բաքվում՝ Սպիտակ քաղաքում, կերոսինի, քայուղերի գործարաններ, կերոսինի և մագուլի կայաններ, նավթալից նավամատույց՝ Կասպից ծովի ափին, 10 վերստ երկարությամբ նավթամուղ, նավթակայան և պահեստարաններ՝ Բաթումում¹: Ներգրավելով ռուսական խոշոր կապիտալի ներկայացուցիչներին՝ Ս.Լիանոսյանն արագորեն հաջողության հասավ. 1907թ. արտադրեց 240, 7 հազ. փութ նավթ, 1908-ին՝ 1.168 հազ., 1909-ին՝ 2.173 հազ., 1910-ին՝ 2.133 հազ. փութ: Բայց սա դեռ սկիզբն էր:

«Նավթախաղի» մեջ պետք է ոտք դնեք ևս մեկը, որի անմի-

¹ Русские биржевые ценности 1914-15г., Пгр., 1915г., стр. 282.

ջական համագործակցությամբ և աջակցությամբ Ս.Լիանոսյանը պետք է նվաճեր համաշխարհային շուկան: Այդ մարդը Լևոն Մանթաշյանն էր: Նա, ով մտածելակերպային նույն սկզբունքներն ուներ, ինչ Ս.Լիանոսյանը:

Ես ենթադրում եմ, որ այդ երկուսի միջև կայացել էր զուտ հայկական-տղամարդկային պայմանավորվածություն, որին նրանք հավատարիմ մնացին մինչև վերջ:

1912թ. համաշխարհային նավթարդյունաբերությունը Ս.Լիանոսյանի շնորհիվ (իսկ գուցե՛ն՝ պատճառով) թևակոխեց զարգացման որակական միանգամայն նոր դարաշրջան. այդ թվականի հուլիսի 28-ին նա 2,5 մլն ֆունտ ստերլինգ հիմնադիր կապիտալով Լոնդոնում ստեղծեց «Ռուսական գլխավոր նավթային կորպորացիան» (*Russian General Oil Corporation*, կրճատ՝ «Օյլ»): Ահա այդ կորպորացիայի կազմը. «Ռուս-Ասիական բանկի» վարչության նախագահ Ա.Պուտիլով (նախագահ), «Գ.Ս.Լիանոսյանի որդիներ» և «Ա.Շ.Մանթաշյանց և ընկ.» ֆիրմաների վարչության նախագահ Ս.Լիանոսյան (տնօրեն-կառավարիչ), «Կասպից ընկերակցության» վարչության նախագահ Պ.Ղուկասյան, Պետերբուրգի Միջազգային առևտրային բանկի տնօրեն Ա.Վիշնեգրադսկի և այդ բանկի Փարիզի մասնաճյուղի տնօրեն Ի.Ռադին, Պետերբուրգի Մասնավոր առևտրային բանկի վարչության նախագահ Ա.Դավիդով և այդ նույն բանկի վարչության անդամ վիկոնտ դե-Բրետել, Միբիդյան առևտրային բանկի վարչության նախագահ Մ.Սոլովեյչիկ, Պետերբուրգի Հաշվառու և վարկային բանկի վարչության նախագահ Յա.Ուսին, Արտաքին առևտրային բանկի վարչության նախագահ Ա.Ռաֆալովիչ, Ռուսական առևտրաարդյունաբերական բանկի տնօրեն-կառավարիչ Ի.Կոն, «Ռուս-Ասիական բանկի» Լոնդոնի մասնաճյուղի տնօրեն սրբ Նիչբոլդ, «Նևտ» ընկերության վարչության նախագահ Ն.Գլազբերգ, Անգլիայի պառլամենտի անդամ վիկոնտ Կարրիկ¹:

«Օյլի» այս կազմը որոշ խորհրդածությունների առիթ է

¹ В.Зив, Иностранные капиталы в русской нефтяной промышленности, Пгр., 1916г., стр. 53.

տալիս: Նախ, այստեղ ընդգրկված էին Բաքվի նավթարդյունաբերության առաջնակարգ երեք հայկական ու մեկ ռուսական ֆիրմաները, ռուսական բանկային կապիտալի վերնախավը, անգլիական հասարակության սերուցքի ներկայացուցիչներ, բայց բացակայում էին Նոբելներն ու Ռոտշիլդները:

Ինչպես նշում է անվանի տնտեսագետ Վ. Զիվը. «Այդ տրեստը լիակատար հեղաշրջում կատարեց ռուսական նավթարդյունաբերությունում»¹:

Ո՞րն էր այդ հեղաշրջման էությունը, տնտեսական բնույթը:

Ամեն հանճարեղ գաղափար պարզ է, բայց իրականացնելն է դժվար: Դա հաջողվեց Ս.Լիանոսյանին:

Նավթարդյունաբերությունը մշտական ֆինանսական ներհոսքի կարիք ունի, իսկ բանկային կապիտալը ձգտում է շահավետ ներդրումներ կատարել: Ս.Լիանոսյանը ռուսական խոշոր բանկային կապիտալը բերեց Բաքվի նավթարդյունաբերություն, ինչը ձեռնտու էր երկուստեք: Ֆիրմաներն ստանում էին ֆինանսներ, ավելացնում արտադրողականությունը, մեծացնում հիմնադիր կապիտալը (օրինակ, «Միրզոյան եղբայրներին» 2,1 մլն ռուբլուց 1915թ. հասավ 3,21 միլիոնի, «Կասպից ընկերակցությանը»՝ 1,5 միլիոնից 10 միլիոնի և այլն) և լինելով բաժնետիրական ընկերություններ՝ թողարկում նոր բաժնետոմսեր, որոնց զգալի մասին տիրում էին բանկերը, իսկ ավելի ստույգ՝ «Օյլ»:

Իսկ «Օյլ» ասելով, իհարկե, պետք է հասկանալ Ս.Լիանոսյանին՝ գաղափարակրին և գաղափարն իրականացնողին, կորպորացիայի մտքին և շարժիչ ուժին: Բնականաբար, մենք այս ամենը պարզունակ շարադրանքով ենք ներկայացնում, որպեսզի ընթերցող լայն շրջանակները մոտավոր պատկերացում կազմեն: Իրականում նավթաբիզնեսը, անշուշտ, շատ ավելի բարդ երևույթ է (բոլոր բիզնեսներից ամենաբարդը), որի առանձնահատկություններից մի քանիսի մասին կուզենայինք ստորև խոսել:

Բաժնետոմսերի որոշակի քանակի տիրելը (բնականաբար,

¹Նշվ. աշխ., էջ 44:

որքան շատ՝ այնքան լավ, բայց դա կարգավորվում էր ներքին համաձայնություններով) նշանակում էր դառնալ այս կամ այն ընկերության վարչության անդամ և վճռական ձայնի իրավունքով մասնակցել դրա կառավարմանը: Դա հանգեցնում էր մի երևույթի, որը տնտեսագիտության մեջ կոչվում է խոշորների կողմից փոքրերի «կլանում»: «Օյլը» «կլանեց» «Միբոյան եղբայրներ և ընկ.», «Հ.Ս.Մելիքյան և ընկ.», «Շիխովո» (Ա.Ծատուրյան, Գ.Ծովիանյան, Կ. և Դ.Բիխովսկիներ, Լ.Լեյտես), «Ե.Գ.Փիթոյան և ընկ.», «Կրասիլնիկյան եղբայրներ», «Արամազդ» և այլ ֆիրմաներ: Ս.Լիանոսյանը հանդիսանում էր 15, «Նևո» ընկերության նախագահ Տ.Բելոգերսկին՝ 18, Պ.Ղուկասյանը՝ 6 ֆիրմաների վարչությունների անդամ:

«Օյլի» գործունեության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ հնարավորություն էր տալիս նավթի ու նավթամթերքների *վաճառքը* թե՛ Ռուսաստանում, թե՛ արտասահմանում իրականացնել համատեղ ուժերով, կենտրոնացված կերպով: Մենք վերևում նշեցինք, որ Բաքվի նավթարդյունաբերության արտադրական ծավալները շարունակական անկում էին ապրում, սակայն դա ոչ մի նշանակություն չունեցրեց, նավթաբիզնեսը վարքագծային այլ գործոններով էր առաջնորդվում. միջազգային շուկայում «Օյլի» եռանդուն գործելակերպի շնորհիվ՝ կորպորացիայի անդամ ֆիրմաներն ավելի մեծ շահույթ էին ստանում (միայն «Գ.Ս.Լիանոսյանի որդիներ» ընկերությունը 1913թ. իր բաժնետերերին վճարեց 18% շահույթ), առանց ավելացնելու արտադրողականությունը:

Ս.Լիանոսյանի անձնական ներդրումը նաև այն էր, որ նա կարողացավ անել մի բան, ինչ իրենից առաջ ոչ ոքի չէր հաջողվել՝ Բաքվի նավթարդյունաբերությունը հրապուրիչ դարձրեց օտարերկրացիների համար և սկիզբ դրեց արտասահմանյան կապիտալի վիթխարի ներդրումների: 1912թ. նա Անգլիայում հիմնեց *British Lianosoff Wite Oil Company*, Ֆրանսիայում՝ *La Lianosoff Française* ընկերությունը, իսկ 1913թ. գերմանացի կապիտալիստների հետ 1

մին մարկ հիմնական կապիտալով Համբուրգում ստեղծեց *Deutsche Lianozoff Mineralöl Import Act. Ges* ֆիրման, որի նպատակն էր Գերմանիա ներկրել ռուսական (իմա՝ Բաքվի) նավթն ու նավթամթերքները, դրանք վերամշակել և վաճառել: Այս ամենն իրականացնելու համար Ս.Լ.Իանոսյանը ներգրավեց եվրոպական խոշոր ֆինանսական հաստատություններին՝ «Օ.Ա.Ռոզենբերգ և ընկ.» (Փարիզ), «Լ.Դրեյֆուս և ընկ.» (Փարիզ), Բ.Մարգուլիեսի (Բրյուսել) բանկերը: Այսինքն, նավթաբիզնեսի հիման վրա նա միացրեց ռուսական ու եվրոպական ֆինանսական կապիտալը: Արդյունքը եղավ այն, որ 1915թ., երբ աշխարհում մոլեգնում էր պատերազմը և Օսմանյան Թուրքիայում անխնա բնաջնջվում էր հայ ժողովուրդը, միջազգային 16 խոշորագույն ֆինանսական սինդիկատներից 10-ը ռուսական նավթարդյունաբերությունում ունեին հսկայական գումարի՝ 363,56 մլն ռուբլու բաժնետոմսեր¹:

Անհրաժեշտ է մի փոքրիկ իրողության վրա ևս ուշադրություն դարձնել: «Օյլի» արտադրատնտեսական հենքը «Ա.Չ.Մանթաշյանց և ընկ.» ֆիրման էր, կորպորացիայի ստեղծման երաշխիքը ա՛յդ ընկերությունն էր: Ալ.Մանթաշյանցի մահից հետո, հենց 1912թ. հուլիսին, նրա որդիները դաշն կնքեցին՝ իրենց բաժնետոմսերի մեծ մասը վաճառեցին պետերբուրգյան բանկերին, վարչության նստավայրը Բաքվից տեղափոխեցին մայրաքաղաք, որից հետո ծնվեց «Օյլը»²: Հավանաբար, Լևոն Մանթաշյանցը համաձայնության եկավ Հովհաննեսի, Հովսեփի ու Գևորգի հետ, նրանց լիառատ ու վերջնական վճարումներ կատարեց, որից հետո երեք եղբայրներն այլևս չեն հիշատակվում նավթաբիզնեսում:

Ինչո՞ւ էինք մենք վերնում ենթադրում, թե Լ.Մանթաշյանցի և Ս.Լ.Իանոսյանի միջև մի ինչ-որ մշտատև համաձայնություն կար: «Գ.Ս.Լ.Իանոսյանի որդիներ» ընկերության հիմնադիր կապիտալը 2 մլն ռուբլուց 1915թ. հասել էր 30 մլն ռուբլու. հունիսի 24-ի դրությամբ գլխավոր բաժնետերերն էին Ս.Լ.Իանոսյանը,

¹Նշվ. աշխ., էջ 3:

²Монополистический капитал ..., док. N 243.

Ա. Պուտիլովը, Տ. Բելոգերսկին, Հովհ. Շադինյանը և Լ. Մանթաշյանը: Ընդ որում, վերջինս Ս. Լիանոսյանից կրկնակի ավելի բաժնետոմս ուներ՝ 22.770 հատ, իսկ Ս. Լիանոսյանը «Ա.Յ. Մանթաշյանց և ընկ.» ֆիրմայի ամենախոշոր բաժնետերն էր (4150 հատ): Ավելացնենք նաև, որ «Օյլի» բաժնետոմսերը նույն թվականին վաճառվում էին Փարիզի, Լոնդոնի, Ամստերդամի, Բրյուսելի և, անշուշտ, Պետերբուրգի սակարաններում:

«Օյլի» ստեղծմամբ համաշխարհային նավթարդյունաբերությունը վերաձևվեց, բևեռացվեց, հանգեցրեց համարժեք պատասխան գործողությունների և հող նախապատրաստեց Նորին Մեծություն Քաղաքականության մուտքին: Իսկ դա ենթադրում էր խաղի նոր կանոններ և նոր խաղացողներ: Դրանցից մեկն էր «Ռոյալ Դատչ Շելլը» և նրա «լիանոսյանը»՝ Հենրի Դետերդինգը:

Ժամանակակից աշխարհի ամենախոշոր նավթարտադրող երկրներից մեկի՝ Ինդոնեզիայի* ճավա, Մումատրա, Բորնեո կղզիներում նավթարդյունաբերությունը սկիզբ առավ 1887 թվականից: Ստեղծվեցին մի շարք հոլանդական նավթային ընկերություններ, որոնց շարքում էր 1890թ. հիմնված «Նիդերլանդական Հնդկաստանում նավթարդյունահանման թագավորական ընկերությունը» (հետագայում՝ «Ռոյալ Դատչ ընկ.», *Royal Dutch Co*): Սա աչքի էր ընկնում բուռն գործունեությամբ. 1897թ. ունենալով 5 մլն ֆլորին հիմնական կապիտալ՝ բաժնետերերին վճարեց 55% շահույթ: 1896թ. «Ռոյալ Դատչի» առևտրային տնօրենն էր Հենրի Դետերդինգը, որը 1901-ին դարձավ ընկերության վարչության նախագահ և լիակատար տեր: 1907թ. նա ընկերությունը միացրեց զորեղ «Շելլ տրանսպորտային և առևտրային ընկերության» հետ (*Shell Transport and Trading Co*), ստեղծեց «Ռոյալ Դատչ Շելլ» ֆիրման, աշխարհի նավթարդյունաբերական մենատիրություններից մեկը, որի բաժնետոմսերի 60%-ն իրեն էր պատկանում: Երբ 1911թ. անգլիական նավատորմն անցավ նավթային վառելիքի, Հ. Դետերդինգը հասկացավ, որ կարող է աշխարհի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը դառնալ և հայտարարեց. «*Բանակը,*

նավատորմը, աշխարհի ամբողջ ոսկին ու բոլոր ժողովուրդներն անգոր են նավթի տերերի դիմաց: Ո՞ւմ են պետք ավտոմոբիլներն ու մոտոցիկլետները, նավերը, տանկերն ու ինքնաթիռներն առանց այդ թանկարժեք սև հեղուկի»: Նա սկսեց հարձակողական քաղաքականություն վարել՝ ձեռք բերել նորանոր նավթադաշտեր, ինչպես նաև Եվրոպայի, Սսիայի, Աֆրիկայի և Ամերիկայի զանազան ընկերությունների բաժնետոմսեր: Բավական է ասել, որ Հ. Դետերդինգը գնեց Օկլահոմա և Կալիֆորնիա նահանգների նավթատարածքները և 1915թ. վերահսկում էր ԱՄՆ նավթարդյունաբերության իններորդական մասը:

Հ.Դետերդինգի առաջին «գոհերից» մեկը դարձավ նաև ռուսական նավթարդյունաբերությունը: 1912թ. «Ռոյալ Դատչ Շելլը» գնեց Ռոտշիլդների «Կասպից-սևծովյան ընկ.» բաժնետոմսերի 90%-ը (շուրջ 10 մլն ռ.), ինչպես նաև նրանց «Մագուրը» (հիմնական կապիտալը՝ 12 մլն ռ.): Բացի այդ, զգալի քանակով ձեռք բերեց Բաքվի ու Գրոզնու մի շարք այլ ձեռնարկությունների բաժնեփաթեթներ: Արդյունքը եղավ այն, որ 1915թ. Դետերդինգին էր պատկանում ռուսական նավթարդյունահանման շուրջ 15%-ը:

Աշխարհը «բաժանվեց» երեք նավթային հսկաների միջև՝ Ռոկֆելերի «Ստանդարտ օյլի», Դետերդինգի «Ռոյալ Դատչ Շելլի» և Լիանոյանի «Օյլի» միջև: Սկսվեց դաժան մրցակցություն և սրվեց պայքարը նավթաշուկաների համար:

Սակայն կար ևս մեկ գերտերություն՝ Գերմանիան, որը չէր կարող հաշտվել այսպիսի իրադրության հետ, հայտնվել խաղից դուրս վիճակում, և աչքը տնկեց Օսմանյան կայսրության նորահայտ նավթատարածքների վրա: Այն տարածքների, որոնց հայտնաբերման ու շահագործման խնդրում առաջնային դերը պատկանում էր Գալուստ Գյուլբենկյանին...

1912-ից աշխարհը սկսեց նախապատրաստվել պատերազմի, որի հիմնական դրդապատճառներից մեկը նավթն էր: Շուտով նավթի ու մահվան հոտերը կմիախառնվեին:

Բայց վերադառնանք Բաքու: Պատերազմի երախը նավթ էր

պահանջում, և 1915թ. արտադրվեց 571,4 մլն փուլթ: «Օյլի» կազմի մեջ մտնող 17 ֆիրմաների բաժինն էր 114,4 մլն փուլթ (այդ թվում «Ա.Ն. Մանթաշյանց և ընկ.»՝ 15,2, «Կասպից ընկերակցությանը»՝ 14,6, «Գ.Ս. Լիանոսյանի որդիներինը»՝ 12,8 «Միրզոյան եղբայրներիինը»՝ 8,1, «Հ.Ս.Տեր-Հակոբյանինը»՝ 6, «Արամազդինը»՝ 4,9, «Ե.Գ. Փիթոյանինը»՝ 2,7, «Սյունիքինը»՝ 0,8 մլն):

«Ռոյալ Դատչ Շելլի» խմբի մեջ մտնող 8 ֆիրմաների բաժինը կազմեց 91,8 մլն փուլթ: Իսկ «Նոբել եղբայրների» խմբի 5 ֆիրմաներինը՝ 79,7 մլն: Բացի այդ, 11 ֆիրմաներ, որոնց մեծ մասը հայկական էին և չէին մտնում վերոհիշյալ խմբերի մեջ, արտադրեցին 113,3 մլն փուլթ:

Կարող է հարց ծագել՝ հապա այս ցանկում չկայի՞ն ադրբեջանցիներ: Կային. Ասադուլանի ֆիրման արդյունահանել էր 6,6 մլն փուլթ, Նադիևինը՝ 4,1 մլն¹: Դրանից երկու տարի անց՝ 1913թ., Բաքվում գրանցված էր 187 ֆիրմա: 65-ը հայկական էին, որոնցից 62-ը (3-ի վերաբերյալ տվյալներ չկան) արդյունահանել էին 136.895.025 փուլթ: Ադրբեջանական էին 39 ֆիրմա, որոնք ստացել էին ընդամենը 24.011.094 փուլթ²: Համեմատությունը, հետևաբար և Բաքվի նավթարդյունաբերությունում ադրբեջանցիների ներդրման գնահատականը թողնում ենք ընթերցողին:

Աչքաթող չենք կարող անել նաև հայոց գործունեության՝ նավթարդյունաբերության հետ առնչվող ևս մի ոլորտ՝ Կասպից ծովի նավագնացությունը: Այն մտայնությունն է տիրում, թե, իբր, մենք՝ հայերս, ծովային ժողովուրդ չենք: Բաքվի օրինակով այժմ կհերքենք այդ մոլորությունը: Որովհետև նավթի ու նավթամթերքի ծովային բեռնափոխադրումը լուրջ բիզնես էր, իսկ հայի համար չի կարող որևէ բան հետաքրքրություն ներկայացնել և նա իր մտքի ու տաղանդի շնորհիվ դրան չտիրապետի:

¹Նշվ. աշխ., էջ 656:

²Սա սեփական հաշվարկ է: Հիմք ենք ընդունել *Весь Кавказ, Баку, 1914г.* վերին աստիճանի հավաստի եւ ամբողջական աղբյուրը (կազմող և հրատարակիչ՝ Մ.Շապուվիչ): Այդ տեղեկատուի 92-124 էջերում զետեղված ցանկից հատ-հատ առանձնացրել ենք հայկական և ադրբեջանական ֆիրմաներն ու կատարել թվաբանական պարզ գործողություն:

1889թ. Կասպից ծովով փոխադրում էր իրականացնում 1 մլն 330 հազ. փութ ընդհանուր բեռնատարողությամբ 34 շոգենավ: Դրանցից 7-ը պատկանում էին հայերին (Ավետյանի «Վասպուրական» և «Էվելինա», Կոլմանյանց եղբայրների ու Բունիաթյանի «Սպասատել», Փարսադանյանի «Գրիգորյան», Թումայանի «Սերյոժա», «Արշակ» և «Կոնստանտին»), որոնց բեռնատարողությունը կազմում էր 249.524 փութ (18,7%):

Երեք ադրբեջանցիներ ունեին 6 նավ՝ 192.271 փութ բեռնատարողությամբ (14,4%):

Նույն թվականին կային հատուկ շոգենավեր, որոնք միայն կերոսին էին տեղափոխում. դրանք 20-ն էին՝ 750 հազ. փութ ընդհանուր բեռնատարողությամբ: Այդ նավերից 5-ը պատկանում էին հայերին («Հայկական շոգենավային ընկերության» «Արմենյակ», Առափելյանի «Ռաֆաիլ», Թումայանի «Ադմիրալ», «Լազար», «Կոնստանտին») և ունեին 156.821 փութ (20,4%) բեռնատարողություն¹:

Ադրբեջանցիները նման նավեր չունեին:

1893թ. «Ե.Գ. Փիթոյան» նավթարդյունաբերական և առևտրային ընկերության սեփականատեր, թիֆլիսաբնակ Եսայի Փիթոյանի «Մասիս» շոգենավային ընկերությանն էին պատկանում «Վան», «Մուշ», «Անի», «Սևան», «Մասիս», «Զանգի», իսկ Թումայան եղբայրների շոգենավային ընկերությանը՝ «Մուխասիս» և «Թուման» նավերը²:

1912թ. Բաքվում կար 66 նավատեր անհատ և ընկերություն, որոնցից 14-ը հայեր էին և ունեին 24 նավ: Դրանք էին. Հակոբ և Հովհաննես Ավետյանները («Մենաստան»), Հ.Ադամյանը («Վահան»), «Հայկական շոգենավային ընկերությունը» («Աշոտ Երկաթ», «Ամասիա»), Բունիաթյան եղբայրները («Բենարդակի», «Բունիաթ», «Նիկոլայ»), «Վոլգա» ընկերությունը («Արծիվ Վասպուրականի»), «Ապրանքային պահեստների արևելյան ընկերությունը» («Սևան», «Վան»), Ավետիս Ղուկասյանը («Թամարա»),

¹ Сборник статистических ..., стр. 48, 50.

² «Արօր»-ի օրացոյց 1894թ., Բաքու, 1893թ., էջ 30:

Մ.Ղուկասյանը («Աննա»), «Անդրկասսյան առևտրաարդյունաբերական ընկերությունը» («Վասպուրական»), Եղիսաբեթ Սարգսյանը («Գրիգոր Արծրունի»), «Սարուխան-Քոչի բաժնետիրական ընկերությունը» («Սարուխան», «Սերյոժա»), «Հ.Մ.Տեր-Հակոբյան» ֆիրման, («Գաղիի-Հուսեյնով»), Տեր-Ստեփանյանը և Կոլմանյանցը («Արշալույս»), Խ.Թումայանը («Տատյանա») և «Գ.Մ.Լիանոզյանի որդիներ» ընկերությունը («Ռաբոտնիկ», «Մարտին», «Պիրոգով», «Օտվաժնիյ», «Միֆիդրուտ»):

Կուզենայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի տարօրինակ իրողության վրա. մի շարք ադրբեջանցիներ իրենց նավերը կոչել էին հայկական անվանումներով: Օրինակ, Աշուրբեկովի և Ջաֆարովի նավը կոչվում էր «Ավետիք», Բաբաշևինը՝ «Մասիս», Կուլինինը՝ «Արշակ» և «Խրիստոֆոր», Մամեդովինը՝ «Արարատ»: Ավելին, Ռոտշիլդների «Մագուր» ֆիրմային պատկանող նավը կրում էր «Արամայիս», իսկ «Ռուս» («Русь») ֆիրմայինը՝ «Արմենիա» անվանումը: Դժվար է այս իրողությունը բացատրել, կարելի է միայն ենթադրել, որ դա կամ հայերի հանդեպ հարգանքի դրսևորում էր, կամ հայերը պարզապես համատերեր էին:

Կասպից ծովում ամենախոշոր նավագնացային ընկերությունն, անշուշտ, ռուսական «Կավկազ ի Մերկուրին» էր: Ուշագրավ է, որ նրան պատկանող բազմաթիվ նավերի թվում կային այսպիսի անվանում ունեցողներ՝ «Արմյանին», «Անի», «Փամբակ», «Ջանգ», «Մուշ», «Արագ», «Գրիգորյան»: Արդյո՞ք սա հարգանքի նշան չէր Մ.Սանասարյանի հիշատակի հանդեպ¹:

Խոսելով հայկական նավերի մասին՝ մենք ամենևին նպատակ չունենք գերազնահատելու հայերի դերը կամ ավելորդ դասնեպսակներ ձեռք գցելու: Մենք միայն օբյեկտիվ պատկերն ենք ներկայացնում: Ինչ վերաբերում է նավթափոխադրող նավերին, ապա անառարկելի առաջնությունը պատկանում էր «Նոբել եղբայրներ» ֆիրմային, իսկ Կասպից ծովի լավագույն լողամիջոցը նրանց «Կ. Խագելին» շոգենավն էր:

¹ Ежегодник Баку..., стр. 253.

Հնարավորինս մանրակրկիտ կերպով ներկայացնելով Բաքվի նավթարդյունաբերության ծնունդն ու ընթացքը, բերելով բազմաթիվ փաստեր, վիճակագրական տվյալներ, տնտեսական ցուցանիշներ՝ մենք նպատակ ունեինք ոչ միայն ի ցույց դնելու հայոց վիթխարի ներդրումը, այլև ապացուցողականորեն պնդելու՝ *նավթարդյունաբերությունը հիմնել և զարգացրել են հայերը, ռուսները, շվեդները, անգլիացիները, մյուս ազգերի ներկայացուցիչները, միայն թե ոչ ադրբեջանցիները*: Նրանք ունեին ազգական այլ առաքելություն՝ ֆիզիկապես բնաջնջել հայերին, վռնդել մյուսներին և տեր կանգնել ուրիշի ստեղծածին:

ՎԱՍՆ ԱՅՆ ԱՄԵՆԻ, ԻՆՉՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ ՆԱՎԹԻ ՀԵՏ

Ընթերցողն, անշուշտ, հասկանում է, որ սա գուտ պայմանական ենթավերնագիր է. Բաքվում ամեն ինչ և ամեն ոք այս կամ այն կերպ առնչվում էր նավթի հետ: Պարզապես այս գլխում մենք ցանկանում ենք ի դերն հանել «նավթածառից» ծլած-ծլարձակած ճյուղերը, մերձնավթյա ոլորտները և դրանցում հայոց դերակատարությունը:

Նավթարդյունաբերությունը, բացի բուն արդյունահանումից, ուներ սպասարկման, օժանդակ ենթակառուցվածքների լայն ցանց, առանց որի չէր կարող գոյատևել: Արդյունահանման հետզհետե աճող դժվարությունները դրդում էին ներդնել ճարտարագիտական, տեխնիկական մտքի նոր ձեռքբերումներ, և նավթարդյունաբերությունում առաջատար դիրքերը չզիջելու համար հայերը, բնականաբար, պարտավոր էին հետ չմնալ: Արդեն 1899թ. Պ. և Ջ.Հակոբյան եղբայրները Պ.Կրոխինի հետ 1,6 մլն ռ. հիմնադիր կապիտալով ստեղծեցին նավթարդյունաբերական և մեխանիկական գործարանների մատակարարման «Վուլկան» բաժնետիրական ընկերությունը: Նույն թվականին սկսեց գործել Հովհ.Ադամյանի, Բ.Շխյանցի և Կ.Դունդերի «Ապշերոնի էլեկտրական ընկերությունը»: Մեկ տարի անց Բաքվի լավագույն ճարտարագետներից մեկը՝ ապագայում Թիֆլիսի քաղաքագլուխ և Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի եղբայր Կոնստանտինը, Հ.Տեր-Միքայելյանի և Լ.Գինգբուրգի ընկերակցությամբ հիմնեց Բաքվի մեքենաշինական, նավթարդյունաբերական և առևտրային ընկերությունը: Նույն Կ. Խատիսյանը,

իր շուրջ համախմբելով լավագույն հայ ճարտարագետներին՝ Մ.Ալիբեկյանին, Մ.Տեր-Գրիգորյանցին, Մ.Կարապետյանին, Տ.Բուդաղյանին, Բ.Յուզբաշյանին, Մ.Հունանյանին, ինչպես նաև երեք ռուսների, ստեղծեց Կայսերական ռուսական տեխնիկական ընկերության Բաքվի բաժանմունքը: Այս կազմից վրացահայ Միքայել Ալիբեկյանը, որ ոչ մի բառ հայերեն չգիտեր, մեկնեց Անգլիա, ուսումնասիրեց իրեն հետաքրքրող գործը և վերադառնալով՝ հիմնեց պողպատե ճոպանների արտադրության լավագույն, արդիական գործարանը: Իսկ Միքայել Հունանյանը Մ.Ալիբեկյանի, Մ.Կարապետյանի, «Արամագո» նավթարդյունաբերական ընկերության վարչության նախագահ Ա.Վաչյանցի և չորս գործընկերների հետ հիմնեց շոգեկաթսաների վերահսկողության Բաքվի բաժանմունքը:

Սակայն կայսրության նավթային գործի լավագույն գիտակր ժամանակի ականավոր տնտեսագետներից մեկը՝ Ստեփան Ղուլիշամբարյանն էր (*Гулишамбаров*): Այդ մարդը Ռուսաստանի ֆինանսների նախարարության առևտրի և մանուֆակտուրայի դեպարտամենտի հատուկ հանձնարարությունների գծով պաշտոնյա էր, Ս.Վիտտեի մերձավոր աշխատակիցը: 1901թ. Ս.Ղուլիշամբարյանը գործուղվել էր Անգլիա և ԱՄՆ, ուսումնասիրել նավթարդյունաբերության դրվածքը, գործունեության սկզբունքներն ու առանձնահատկությունները, ինչի արդյունքում ռուսական նավթարդյունաբերությունն ստացավ անհրաժեշտ տեղեկատվություն, գիտատեսական հենք և կարողացավ միանգամայն ինքնուրույն զարգանալ: Գործում ծնված այդ հայ մարդը հեղինակ էր 62 լրջագույն տնտեսագիտական-վերլուծական աշխատությունների, որոնց շնորհիվ ռուսական կառավարությունը կարողանում էր ղեկավարել իր տնտեսությունը:

Այսինքն, մենք ցանկանում ենք ասվածով փաստել մի կարևոր իրողություն՝ *հայերը ոչ միայն զբաղվում էին տնտեսական գործունեությամբ, այլև հենց իրենք էին ստեղծում այն գիտական հիմքը, որը նպաստում էր նրանց առաջընթացին:*

Այժմ դիտարկենք իրավիճակը: 1911թ.¹ հորատանցմամբ, հորատանցային հաստոցների, գործիքների, խողովակների և այլնի արտադրությամբ Բաքվում զբաղվում էր 41 մեխանիկական գործարան և ընկերություն, որոնցից 19-ը հայկական էին (մի քանիսը՝ խառը սեփականատիրական): Հանքավայրերը ծովի ջրով մատակարարելու երեք ձեռնարկություն կար և երեքն էլ հայապատկան էին (Պ. Ղուկասյանի «Կասպից խողովակաշարը», Ք. Շահգեղանյանի «Բիբի-Նեյբաթի ջրատարը» և «Արամազդիներ»): Բոլոր նավթադաշտերում կար 194 ամենազանազան մեխանիկական արհեստանոց, որից 95-ի սեփականատերերը հայեր էին: 9 էլեկտրակայաններից 3-ը նույնպես պատկանում էին հայերին:

Սակայն կար տնտեսական գործունեության, քաղաքի կենսապահովման մեկ ոլորտ ևս, որտեղ դարերի ընթացքում կուտակված ազգային հզոր ավանդույթների շնորհիվ հայերն անզերագանցելի էին: Դա առևտուրն էր: Առևտրատնտեսական գործունեությամբ զբաղվում էին գրեթե մյուս բոլոր հայերը, ովքեր այս կամ այն կերպ չէին առնչվում նավթարդյունաբերության հետ:

Բաքվի աշխարհագրական դիրքը լայն հեռանկարներ էր բացում հայ վաճառականների առջև, որոնք ընդարձակ գործունեություն ծավալեցին թե՛ բուն քաղաքում, թե՛ Կասպից ծովով ռուսական Աստրախանի, պարսկական նավահանգիստների, Թուրքեստանի երկրամասի հետ: Դեռևս 1883թ. Բաքվում կար ընդամենը 6 առևտրային տուն, որոնցից մեկը պատկանում էր վրացու, իսկ հինգը հայկական էին (Զիթախյան և Էմինյան, Փրիդոնյան և Շահնազարյան, Ծովիանյան, «Բեկխանյան և ընկ.»), «Ղազումյան և ընկ.»²:

1900-ական թթ. մանուֆակտուրայի առևտրի անառարկելի

¹ 1911թ. վերաբերող բոլոր տվյալները վերցված են Ежегодник Баку и его район - 1912, изд. М.Шапсовича, Баку, 1912г. աղբյուրից, որտեղ, բնականաբար, ազգային պատկանելության գործոնը հաշվի չի առնվել: Ուստի մենք ստիպված ենք եղել մեկ առ մեկ կարդալ ազգանունները (հաճախ՝ ռուսական օվ-ով վերջացող), դրանք համադրել այլ աղբյուրների հետ և պարզել այս կամ այն մարդու հայ լինելը:

² Кавказский календарь на 1884 год, Тифлис, 1883г., стр. 199.

առաջատարը «Անդրկասպյան առևտրաարդյունաբերական ընկերությունն» էր (նախագահ Ս. Տեր-Օհանյան, վարչության անդամներ Ս.Սարուխանյան, Ջ.Տեր-Իսրայելյան, Հ.Թումանյանց, Հ.Շխյանց):

1904թ. Բաքվում և նահանգում միասին վերցրած (ի դեպ, Բաքվի նահանգում հայերը չնչին թվաքանակ էին կազմում) հայերին էր պատկանում բոլոր առևտրական ձեռնարկությունների 25%-ը, աղբբեջանցիներին՝ 59%-ը, այլազգիներին և ֆիրմաներին՝ 16%-ը: Հայ անհատ վաճառականների տարեկան շրջանառությունը կազմում էր 25%, աղբբեջանցիներինը՝ 25%, այլազգիներինը և ֆիրմաներինը՝ 50%¹: Սակայն եթե նկատի ունենանք, որ ֆիրմաների մեջ զգալի թիվ էին կազմում հայկականները, ապա ակնհայտ է, որ Բաքվի առևտրի մեծ մասը նույնպես գտնվում էր հայոց ձեռքում:

Հետագայում իրադրությունը փոխվեց է՛լ ավելի հոգուտ հայերի: Այսպես, 1911թ. գաստրոնոմիական 13 խանութներից հայերին էին պատկանում 8-ը, մանուֆակտուրայի 88 խանութներից՝ 43-ը, կոշկի 24 խանութներից՝ 20-ը, պատրաստի հագուստի 31 խանութներից՝ 22-ը, ծխախոտի 15 խանութներից՝ 13-ը, բամբակի ու բրդի 15 խանութներից՝ 7-ը²:

Ապացուցողական տեսակետից մերկապարանց չլինելու համար հարկ ենք համարում մեջբերել նաև 1915թ. տվյալները³, քանզի դրանք առավել ամբողջական ու մանրակրկիտ են: Ահա թե ինչպիսի պատկեր է ստացվել (փակագծերում նշված է խանութների ընդհանուր տարեկան շրջանառության գումարի չափը). բակալեային 1371 խանութներից (1 մլն 300 հազ. ռ.) հայապատ-

¹Դ. Անանուն, Ռուսահայերի..., հտ. Բ, էջ 65:

²Ежегодник Баку... стр. 215-245. Սեփական հաշվարկ:

³Սա սեփական հաշվարկ է: Օգտվել ենք Кавказский календарь на 1917 год, Тифлис, 1916г. աղբյուրից, որն ունի «Торгово-промышленные предприятия гор. Баку и его района (Извлечено из окладных книг Бакинской казенной палаты за 1915 операционный год)» հավելվածը: Ստիպված ենք եղել մեկ անգամ ևս մեկ կարդալ հազարավոր անուն-ազգանուններ՝ պարզելու համար հայոց տեսակարար կշիռը:

կան էին 311-ը, 10 պարենայինից (572 հազ. ռ.)՝ 8-ը, երշիկեղենի 12 խանութներից (193 հազ. ռ.)՝ 6-ը, հրուշակեղենի 39 խանութներից (680 հազ. ռ.)՝ 18-ը, մանուֆակտուրայի 128 խանութներից (15 մլն 57 հազ. ռ.)՝ 34-ը, հանքային ջրերի 8 խանութներից (111 հազ. ռ.)՝ 4-ը, կոշիկի 33 խանութներից (1 մլն 147 հազ. ռ.)՝ 27-ը, պատրաստի հագուստի 73 խանութներից (1 մլն 704 հազ. ռ.)՝ 47-ը, երկաթե ապրանքների 37 խանութից (2 մլն 95 հազ. ռ.)՝ 20-ը, շինանյութերի 14 խանութից (2 մլն 879 հազ. ռ.)՝ 6-ը, ծխախոտի 7 խանութներից (520 հազ. ռ.)՝ բոլորը:

Տարեկան դրամաշրջանառության գումարների չափերը, բնականաբար, հավասարապես բաժանված չէին. ասենք, եթե շինանյութերի 14 խանութի շրջանառությունը կազմում էր 2 մլն 879 հազ. ռ., ապա հո չի կարելի այս գումարը մեխանիկաբար բաժանել խանութների թվի վրա և ստանալ հայապատկան խանութների դրամաշրջանառության գումարի չափը, ամեննի՛ն: Հայկական խանութներն առհասարակ քաղաքի ամենանշանավորներն էին: Այսպես, Բաքվում մեծ համբավ էին վայելում կենտրոնական փողոցներում գտնվող Ա.Պետրոսյանի զենքի, ճամպրուկների, մահճակալների, Բոստոզանյան եղբայրների փարիզյան, անգլիական, վարշավյան, վիեննական կահույքի, Ա.Կաֆյանի մանուֆակտուրայի, Ստեփանյան եղբայրների կտորեղենի, Օհանյան եղբայրների կոշիկի, ի վերջո, Կովկասում և Անդրկասպյան երկրամասում կայսերական պալատի մատակարար Ադրյան եղբայրների գինու, կոնյակի, օդու խանութները և այսպիսի տասնյակ, հարյուրավոր առևտրական հաստատություններ:

Մանրամեծաձախ առևտրից բացի, հայերը Բաքվում հիմնել էին նաև այլ եզակի արտադրական ձեռնարկություններ, որոնց համբավը հռչակված էր ոչ միայն Կովկասում, այլև ամբողջ Ռուսական կայսրությունում:

Դրանցից մեկը, ճիշտ է, բուն Բաքվի հետ առնչություն չունի, բայց կապված է այժմյան Ադրբեջանի հետ: Համաշխարհային սննդարդյունաբերության ամենահամեղ և, բնականաբար, ամե-

նաթանկ ուտեստներից մեկի՝ ձկան խավիարի 90%-ը ներկայումս արտադրում են Կասպից ծովի երկրները: Այն վայրում, ուր Կուրը թափվում էր ծով, գետը բաժանվում էր երկու բազկի, որտեղ ձկադրման էին գալիս թառափաձկան վտառները: Ձուկն այդտեղ այնքան առատ էր, որ ձկնավայրը կոչվում էր Բոժիյ պրոմիսել: Ահա հենց այդ ձկնավայրը 1847թ. պետությունից կապալով վարձակալեց Վարդան Աստվածատուրի Արշակունին: 1853թ. նա Շամախի զինվորական նահանգապետ, գեներալ-մայոր Չիլյանին հանձնեց ձկնկիրթով մի քանի թիթեղյա տուփ և խնդրեց դրանք ուղարկել մայրաքաղաք: Պետերբուրգում այնքան հավանեցին սննդամթերքի որակը, որ 1854-ին Արշակունին արդեն առաքեց 200 տուփ, իսկ 1855-ին՝ 160 կգ խավիար¹:

Փաստորեն, ըստ մեզ, նա առաջինն էր, ով ձկնկիրթը երկար պահպանելու նպատակով հորինեց թիթեղյա տուփերի մեջ այն հերմետիկորեն փակելու եղանակը, ինչից հետո սկսվեց խավիարի համաշխարհային ուղին: Հավելենք նաև, որ Վ.Արշակունին ժամանակի ամենահեղինակավոր անձանցից մեկն էր. 1858-1860թթ. եղավ Թիֆլիսի քաղաքագլուխ, նրան էր պատկանում քաղաքի նշանավոր, արևելյան շքեղ ոճով կառուցված քարավանատունը: Վ.Արշակունին Ախալցխայի գավառական ուսումնարանի պատվավոր տեսուչն էր և 500 հազ. ռ. կտակեց որք ու աղքատ երեխաների ուսումնարան հիմնելու համար:

Այժմ անդրադառնանք սննդարդյունաբերության ևս մեկ ճյուղի՝ ծխախոտի արդյունաբերությանը, որի համար Ադրբեջանը պարտական է բացառապես հայերին:

1901թ. ամբողջ Կովկասում ստացվել էր 752.803 փուր ծխախոտի հումք, որից Բաքվի նահանգի 63 գյուղերից՝ 3686 փուր, Ելիզավետպոլի նահանգի 69 գյուղերից՝ 14.321 փուր, Չաքաթալայի շրջանից՝ 2725 փուր: Հեշտ է նկատել, որ ամբողջ Կովկասի փոխարքայությունում ապագա Ադրբեջանի ծխախոտամշակության տեսակարար կշիռը գրեթե աննշան էր՝ ընդամենը 2,75%:

¹ Ս. Կարապետյան, Թիֆլիսի քաղաքագլուխները, Ե., 2003թ., էջ 51:

Սակայն, այնուամենայնիվ, ծխախոտ մշակվում էր. ովքե՞ր և ինչպե՞ս էին այն տնօրինում:

1904թ. Բաքվում կար ծխախոտի երկու գործարան, որոնցից մեկը պատկանում էր Միրզաբեկյանց եղբայրներին, մյուսը՝ «Ս.Ս.Կարակոզ» («*C.M.Καρακος*») ֆիրմայի սեփականատեր Սարգիս Միքայելի Կարագոզյանին և Ավետ Ավետիսի Առաքելյանցին: Այս երկու գործարանն արտադրեցին 26.723 փուլ ծխախոտ և գլանակներ, իսկ վճարած ակցիզային հարկը կազմեց 682.634 ռուբլի:*

Տեսնելով ծխախոտարդյունաբերության ակնհայտ շահավետությունը՝ բիզնեսի այդ ոլորտ փորձեցին ոտք դնել նաև այլ ազգությունների ներկայացուցիչներ: 1908թ. երկու հայկական ֆիրմաների կողքին երևան եկան երկու ադրբեջանցի և մեկ հրեա: Չդիմանալով մրցակցությանը՝ հրեան և ադրբեջանցիներից մեկն իսկույն խաղից դուրս եկան: Մնաց մեկ ադրբեջանցի (Մեհթին), որն ուներ 70 աշխատող և դիմացավ վեց տարի: 1914թ. ներկայիս Ադրբեջանի տարածքում կար ծխախոտի 7 գործարան (2-ը՝ Բաքվում, մախորկա՝ մանրացված ծխախոտ արտադրող 2-ը՝ Նուխիում, 2-ը՝ Շամախում, մեկը՝ Ադդաշ գյուղում), որոնք բոլորն էլ հայապատկան էին:

Հայերն անվերապահ առաջատարներ էին նաև ծխախոտի առևտրում: 1908թ. Բաքվում կար ծխախոտի մանրամեծածախ 15 խանութ, որոնցից մեկի տերն ադրբեջանցի էր, մեկինը՝ հրեա, մյուսները պատկանում էին հայերին՝ «Խ.Հ.Ռուշանյան և ընկ.», «Ա.Տեբ-Գրիգորյան, Ա.Մելքումյան և ընկ.», «Միր» (սեփականատերեր Ն.Ջ. և Ի.Ս.Թառայաններ) ֆիրմաներին, Ա.Աբրահամյանին, Բ.Բարոյանին, Մ.Միրզաբեկյանցին, Խ.Սահակյանին, Սանամյանց եղբայրներին, Սահակյանին և Պողոսյանին, Գրիգորյանին:

Այս հարաբերակցությունը հետագայում էլ չփոխվեց, ընդ որում, եթե 1914թ. 14 խանութներից հայապատկան էին 12-ը, ապա մեկ տարի անց մնաց 7 խանութ (ինչպես նավթարդյունաբե-

րությունում, այնպես էլ ծխախոտարդյունաբերությունում տեղի էր ունենում խոշորացում) և դրանց բոլորի տերերը հայեր էին:

Սակայն այս ամենի մեջ կար մեկ ֆիրմա, որն անմրցելի էր, անմրցակից, որի արտադրանքն ուներ համառուսական սպառում և որը նախաբուլժնիկյան Բաքվի ամենախոշոր ծխախոտարդյունաբերական ձեռնարկությունն էր: Խոսքը Գևորգ և Միրզազան Ռոստոմի Միրզաբեկյանցների (*Егор и Мирзаджан Романовичи Мирзабекянцы*) «Գ. և Մ. Միրզաբեկյանց եղբայրներ» (*«Бр. Е. и М. Мирзабекянцы»*) ընկերության մասին է: Եղբայրները ծնվել էին Շամախի գավառի Նոր Շեն գյուղում: Երիտասարդ տարիքում նրանք տեղափոխվեցին Բաքու և 1873թ. Նիկոլանսկի պողոտայում (հետագայում վերանվանվել է Կոմունիստիչեսկայա, այժմ՝ չգիտենք) կառուցելով սեփական շենք՝ հիմնեցին իրենց նշանավոր գործարանը: Զուտ բիզնեսի տեսակետից այս ձեռնարկության տնտեսական հարաճուն տեմպերը պարզապես զարմանք են հարուցում: Դեռևս 1882թ. Համառուսաստանյան արդյունաբերագյուղատնտեսական ցուցահանդեսում գործարանի մանրացված ծխախոտն ու գլանակներն արժանացան պատվոգրի, իսկ 1889թ. Թիֆլիսում կայացած գյուղատնտեսական և արդյունաբերական իրերի համակովկասյան ցուցահանդեսում՝ ոսկե մեդալի:

1902-ին եղբայրներն արդեն նոր շենք էին կառուցել Բոնդարնայա փողոցում (հետագայում՝ Դիմիտրովի), ուր շուրջ 400 աշխատողներ և 18 ժամանակակից հաստոցներ տարեկան արտադրում էին 7000 փուխ ծխախոտ և 600 հազ. ռուբլու 60 մլն հատ գլանակ: Բարձրորակ հումքը ներկրում էին Թուրքիայից, Ղրիմից, Տաշքենդից, Թիֆլիսի նահանգից:

1908թ. Միրզաբեկյանցների գործարանն արտադրեց 24.220 փուխ ծխախոտ և պատրաստեց 183 մլն 480 հազ. հատ գլանակ՝ 1.763.950 ռ. ընդհանուր գումարով: Ընդ որում, վճարեց 100.112 ռ. ակցիզային հարկ և 615.260 ռ.՝ ծանրոցային բեռնափոխադրումների համար:

1915թ. ձեռնարկությունն արժանացել էր բազմաթիվ բարձ-

բազում պարզունների, և համբավը տարածվել էր Ռուսական կայսրությունով մեկ: Ֆիրման մասնաճյուղեր ուներ Թիֆլիսում (Ժելեզնի ոյադ, Իսարյանի տանը), մեծածախ պահեստներ՝ Աստրախանում (Մոսկովյան փողոցում), Աշխաբադում («Սանամյանց եղբ.» ֆիրմայում), Դերբենտում (Հ.Աստվածատրյանի մոտ), Սամարղանդում (Արթուր Շուբերտի մոտ), Կրասնովոդսկում («Սանամյանց եղբ.»), Շամախում (Շուկայի փողոցում): Բարձրորակ արտադրանքը վաճառվում էր Կովկասի, Անդրկասպյան մարզի ու Թուրքեստանի երկրամասի բոլոր քաղաքներում, ինչպես նաև Վարշավայում, Օդեսայում և մերձվոլգյան քաղաքներում: Ծխախոտի 1 ֆունտն* արժեր 56 կոպ.-10 ռ., գլանակների 1000 հատը՝ 3-20 ռուբլի¹:

Ծխախոտարդյունաբերությունից բացի կային արտադրության բացառիկ ճյուղեր, որոնք նույնպես հիմնել էին հայերը:

1891թ. Փիլիպոսյանց եղբայրները Բաքվում հիմնեցին շոկոլադի առաջին ֆաբրիկան: Դա միակ ձեռնարկությունն էր ամբողջ Կովկասում, որ արտադրում էր ընտիր շոկոլադ՝ շոկոլադ-մինյոն և շոկոլադե կոնֆետներ, ինչպես նաև բարձրորակ կարամելի գանազան տեսակներ: Արտադրանքը տարբեր միջազգային ցուցահանդեսներում արժանացել էր 3 ոսկե մեդալի: Ֆաբրիկան գործում էր Կարանտիննայա փողոցի (հետագայում՝ Ազի Ասլանովի) թիվ 121 հասցեում, սեփական շենքում, իսկ վաճառատունը՝ Մարիինսկայա փողոցի (հետագայում՝ Կորգանովի) թիվ 8 հասցեում:

Նույն 1891թ. Աստվածատուր Բոգդանի Սարաջյանը Բաքվում հիմնեց Կովկասում հայելիների առաջին ֆաբրիկան, որը գտնվում էր Պետրովսկայա հրապարակում, Մուստաֆանի շենքում:

Անդրկովկասում առաջինն էր նաև Ս.Մելիք-Ղուլամբարյանցի բնական մրգահյութերի և հանքային ջրերի գործարանը (հիմնվել է 1891թ.), որի արտադրանքը Մեծ ոսկե մեդալի էր ար-

¹Նախաբոլշևիկյան շրջանում Ադրբեջանի ծխախոտարդյունաբերության մեջ հայոց դերակատարության մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Հայկական ծխախոտ» հոդվածաշարի հրապարակումը («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12 հուլիսի 2003թ.):

ժանացել Վիեննայի միջազգային ցուցահանդեսում:

Մ.Հունանյանին, Ա.Այվազյանին և Գ.Շարաբանդյանին էր պատկանում 1891թ. 550 հազ. ռ. հիմնադիր կապիտալով ստեղծված Բաքվի ձիաքարշային ճանապարհների բաժնետիրական ընկերությունը:

1911թ. քաղաքում կար սպիրտի, օդու, կոնյակի 10 գործարան, որից 6-ի տերերը հայ էին: 1915թ. կաշվի երեք գործարաններից երկուսը պատկանում էին հայերին, մեկը՝ հրեայի:

Բաքվի տնտեսական կյանքի հենասյուներից մեկը ֆինանսավարկային համակարգն էր: Այն մասին, որ այդ ամբողջ ոլորտը ստեղծել են հայերն ու ռուսները, զարգացրել՝ հայերը, իսկ ադրբեջանցիները գրեթե մասնակցություն չեն ունեցել, երկու կարծիք լինել չի կարող:

Այսպես, 1875թ. առաջին անգամ հիշատակվում է Բաքվի *Փոխադարձ վարկի ընկերությունը*, որի խորհրդի նախագահն էր նավթարդյունաբերող Մ.Բենկենդորֆը, տնօրեններ՝ Ա.Թավրիզյանը, Մ.Մամիկոնյանը և Պ.Մուրոմցը: 1881թ. նախագահը Բենկենդորֆն էր, բայց տնօրեններ էին արդեն միայն Հակոբ Այվազյանն ու Գրիգոր Այվազյանը: Երկու տարի անց նախագահը նույն ռուս ձեռնարկատերն էր, տնօրեններ՝ Հակոբ Ադամյանը և Գրիգոր Այվազյանը, խորհրդի անդամներ՝ Նիկողոս Սաֆարյանը և Գրիգոր Թումայանը, գլխավոր հաշվապահ՝ Մաթևոս Մամիկոնյանը, գլխավոր գանձապահ՝ Սարգիս Վարշամյանցը: Իսկ 1886-ից խորհրդի նախագահ է դառնում Հ.Ադամյանը, և այդ տարվանից ընկերությունը դառնում է զուտ հայապատկան: 1908-1918թթ. խորհրդի նախագահն էր Ստեփան Այվազյանը, որը բիզնեսի մեջ ընդգրկեց մեկ ադրբեջանցու:

1902թ. Բաքվում ստեղծվեց ևս մեկ ֆինանսական հաստատություն՝ *Քաղաքային վարկային ընկերությունը*: Վարչության նախագահը ռուս էր, տնօրեններ էին Ալեքսանդր Այվազյանը, Արամ Խան-Ադյանը, վարչության անդամության թեկնածուներ՝ Հովհ. Վարդազարյանը, Թովմաս Մելիքյանը, Հովհ. Ադամյանը,

գլխավոր հաշվապահ՝ Արշակ Դուրինյանը, նրա օգնական՝ Գրիգոր Սարգսյանը: Ընկերությունն ուներ նաև դիտորդական հանձնախումբ, որի նախագահն էր Համբարձում Մելիքյանը, անդամներ՝ Բաղդասար Հակոբյանը, Արշակ Թումայանը և... 2 ադրբեջանցի: Մեկ տարի անց նախագահ դարձավ Խրիստոֆոր Անտոնյանը, իսկ 1912-ից՝ կրկին Ալ. Այվազյանը:

1908թ. ադրբեջանցիները փորձեցին իրենք ստեղծել ֆինանսական հաստատություն և հիմնեցին Բաքվի Փոխադարձ վարկի 2-րդ ընկերությունը: Նախաձեռնողները երկու ադրբեջանցիներ էին, իսկ վարչության անդամ էր Ալեքսանդր Ներսիսյանը:

Չի կարելի առանձնակի չհիշատակել նաև բանկային համակարգի մի հնամենի ու փորձառու գործչի՝ Մաթևոս Մամիկոնյանին: 1886-ից այս մարդը դարձավ Թիֆլիսի Առևտրային բանկի Բաքվի մասնաճյուղի կառավարիչը, 1912-ին տեղը զիջեց Ստեփան Խոջայանին, իսկ ինքը ղեկավարեց Ռուսական առևտրաարդյունաբերական բանկի Բաքվի մասնաճյուղը¹:

Հայոց տնտեսական առաջնությունն ապացուցելու համար բերենք ևս մի քանի խոստուն վիճակագրական տվյալներ: Բաքվում անշարժ գույքի բացարձակ մեծամասնությունն, անշուշտ, պատկանում էր ադրբեջանցիներին, սակայն գույքի արժեքի տեսակետից 1905թ. 18,8% կազմող հայ բնակչությունը տիրում էր 43,5%-ին, ադրբեջանցիները՝ 34%-ին: 1901-1903թթ. նավթահանքերում անշարժ գույքի քանակը 481 էր, որից ադրբեջանցիները տիրում էին 277-ի, հայերը՝ 83-ի, մյուս ազգերի ներկայացուցիչները՝ 35-ի, հավաքական սեփականատերերը (ֆիրմաները)՝ 86-ի: Սակայն եթե մինչև 5000ռ. արժողությամբ գույքի տիրում էին 265 ադրբեջանցի (80,6%), 45 հայ (13,7%), 11 այլազգի (3,5%) և 8 ֆիրմա (2,4%), ապա 50.000 ռուբլուց բարձր արժողությամբ գույքի տիրում էին 55 ֆիրմա (58%), 22 հայ (23,1%), 14 այլազգի (14,7%) և 4 ադրբեջանցի (4,2%): Այսինքն, գույքի քանակով ադրբեջանցիներն առաջինն էին, բայց՝ ոչ արժեքով:

¹ Ավելի մանրամասն տե՛ս մեր «Հայեր և բանկեր» գիրքը (Ե., 2005թ., էջ 5-7):

Հարկատվության ցուցանիշներն էլ էին համապատասխանում այս պատկերին: Ֆիրմաները վճարել էին 13.873.845ռ. (44,7%), հայերը՝ 13.618.950ռ. (44%), այլազգիները՝ 2.477.820ռ. (8%), ադրբեջանցիները՝ 1.014.950ռ. (3,5%)¹:

Գիտենք, այս գրքի ապագա «ընդդիմախոսները» չարախնդալու են, թե՛ բա որ ասում էինք հայերն առևտրականներ են: Ոչ, մենք առևտրական ցեղ չենք, մենք վաճառականական ժողովուրդ ենք, և դրանով կարող ենք հպարտանալ: Քանզի տնտեսական տաղանդի գենը մեր մեջ ձևավորվել է հազարամյակների ընթացքում, իսկ վաճառականությունը հնամենի ժողովրդի քաղաքակրթվածության հենքերից մեկն է: Հենց նա է, որ դարեր շարունակ սնուցեց, ավիշ ներարկեց քաղաքակրթական այլ բաղադրյալների՝ դրանով հանդերձ պահել-պահպանելով թե՛ ազգային ինքնությունը, թե՛ ինքն իրեն: Այդ բաղադրյալներից մեկը *կրթությունն* էր:

Մխավված չենք լինի, եթե ասենք, որ անդրկովկասյան ժողովուրդների մեջ հայերն առաջինն ըմբռնեցին կրթության կարևորությունը: Դեռևս 1880թ. կովկասագետ Ս.Ջելինսկին գրում էր. «Հայը հրաշալի հասկանում է, որ առանց գրագիտության քայլ իսկ չի կարող անել առևտրական ձեռնարկներում, որոնք դարձել են նրա էության, այսպես ասած, անբաժանելի պահանջմունքները»²:

Առաջին հայացքից անպաճույճ այս դիտարկման մեջ խոր իմաստ կա: Պատկերացրեք բաքվահայությանը. փոքրաթիվ մի համայնք, որը գտնվում է ոչ սեփական միջավայրում, ռուսական իշխանության ներքո, բայց որն ապրում է ընդհանուր պետության քաղաքական, տնտեսական, իրավական, մշակութային ընդհանրականության մեջ: Ի՞նչ պիտի անի, որպեսզի գոյապահպանվի. առաջին հերթին՝ նվաճի տնտեսական անկախություն: Իսկ որպեսզի դա անի, հաղթի այլազգիների հետ մրցակցությունում, թող ներվի բառիս համար, իր խոհիկներով է զգում՝ պետք է կրթված և կիրթ լինի:

¹Դ. Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Բ, էջ 64-65:

²Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880г., стр. 249. Ռուս. թարգ. հեղ.:

Քիչ հետո մենք կխոսենք կրթական գործում Մարդասիրական ընկերության դերակատարության մասին, որը դեռևս 1870թ. բացեց հայկական իգական դպրոց և ֆինանսավորում էր Բաքվի ու գավառների 25 կրթօջախ, այստեղ պարզապես կնշենք հետևյալը: Մինչև 1918թ. սեպտեմբեր ամիսը հայ կապիտալիստները ֆինանսավորում-պահում* և իրենց երեխաներին ուսումնառության էին տալիս Բաքվի ներքոհիշյալ կրթօջախներում՝ ռեալական գիմնազիայում, ռեալական նախագիմնազիայում, իգական գիմնազիայում, Մարիանյան իգական գիմնազիայում, Ալեքսանդր II կայսեր հեռավոր նավարկության ծովագնացային ուսումնարանում և դրա նախապատրաստական դպրոցում, առևտրային ուսումնարանում, XIII երկսեռ հայկական դպրոցում, բարձրագույն 4-ամյա ուսումնարանում, հայկական 2-դասյա արական ուսումնարանում, հայկական իգական երեկոյան դասընթացներում, ռուս-հայկական 4 դպրոցներում, Մարիա Քալանթարյանի իգական առևտրական ուսումնարանում, Ա.Բաբայանի և Ա.Իսահակյանի արական ուսումնարաններում, Հ.Քալանթարյանի մասնավոր դպրոցում, Պետրոսյան-Արզումանյանի իգական ուսումնական հաստատությունում, Ա.Տեր-Գասպարյանի, Դ.Թուրյանի մասնավոր հաշվապահական դասընթացներում...

Ինչի՞ էր այս ամենը հանգեցնում: Ռուսական աղբյուրը գրում է. *«Բաքվի բնակչության՝ թաթարներից հետո թվաքանակով երկրորդ տարրը հայերն են: Հայերն այստեղի բնակչության ունևոր դասն են: Նրանց մեջ կան ինչպես շատ խոշոր, այնպես էլ մանր կերտսինի գործարանատերեր ու նավթաղբյուրների սեփականատերեր. նրանց են պատկանում նաև նոր քաղաքի կենտրոնում և հատկապես Օբրազցովի ոյադում բազմաթիվ շքեղ եվրոպական խանութներ, ինչպես նաև բավականին քանակությամբ շոգենավեր Կասպից ծովում:*

Բացի առևտրաարդյունաբերական դասից, բաքվահայերի մեջ կարելի է հանդիպել բարձրագույն կրթությամբ զգալի թվով անձանց. նրանց մեծ մասը տեղի գործարաններում աշխատող

երիտասարդ տեխնիկներն են, ինչպես նաև այլ ազատ մասնագիտությունների ներկայացուցիչներ՝ փաստաբաններ, բժիշկներ և այլք»¹:

Այսինքն, հայերը սեփական աշխատանքով, գործունեությամբ, կրթվածությամբ իրենք իրենց համար ստեղծել էին մարդավայել, բարեկեցիկ ապրելակերպ:

Իսկ ադրբեջանցիները: Նույն աղբյուրը մի ուշագրավ փաստ է նշում. 1891թ. Բաքվում ապրում էր 39.508 ադրբեջանցի, որոնց երեխաները կազմում էին կրթական ոլորտում ընդգրկվածների 10%-ը, ընդամենը 50 հոգի, որոնցից մեկը... իգական սեռի²:

Կրթական թեման ավարտենք մի փոքրիկ վրձնահարվածով. 1860-ական թթ. նավթարդյունաբերության «հայր» Հովհ. Միրզոյանը, երբ դեռ Բաքու ոտք չէր դրել և Բոժիյ պրոմիսելում զբաղվում էր ձկնարդյունաբերությամբ, տարիներ շարունակ հանդիսանում էր Լենքորանի և Սադիանի մուսուլմանական տարրական ուսումնարանների պատվավոր վերատեսուչը³, այլ խոսքով ասած՝ իր միջոցներով պահում էր այդ դպրոցները: Այս փաստն ուզում եք անվանեք բարյացկամություն, ուզում եք՝ ինտերնացիոնալիզմ...

Այժմ անդրադառնանք բաքվահայ քաղաքակրթվածության ևս մեկ դրսևորման, որը մեկ բառով կանվանենք մշակույթ:

1870թ. Մարդասիրական ընկերությունը բացեց ոչ միայն իգական դպրոց, այլև ստեղծեց Բաքվի առաջին տպարանը և ռեալական գիմնազիայի աշակերտների ուժերով նավթարդյունաբերողներ Կրասիլնիկյանների* տանը հիմնեց քաղաքի հայկական թատրոնը: Փետրվարի 28-ին ռեժիսոր Պ. Ասլանյանի բեմադրությամբ ներկայացվեցին Ն. Փուղիսյանի «Դալալ Ղադո» և Գ. Մուսղուկյանի «Գիշերվան սաբրը իսեր է» վոդևիլները⁴: Դրանից հետո, մինչև 1918թ., բեմադրվեցին հայ, ռուս և արտասահմանյան դրամատուրգների տասնյակ պիեսներ: Հայկական թատրոնի բեմում

¹ Баку и его окрестности, Тифлис, 1891г., стр. 68-69. Ռուս. թարգ. հեղ.:

² Նշվ. աշխ., էջ 67:

³ Кавказский календарь на 1863 год, Тифлис, 1862г., стр. 397.

⁴ ՀՄՀ, հտ. 2, Ե., 1976թ., էջ 344:

հանդես եկան մեր լավագույն դերասանները (Միրանույշ, Աբելյան, Ալիխանյան և ուրիշներ), հյուրախաղերով այստեղ էին այցելում բազմաթիվ այլ արտիստներ:

Ինչպես երբեմն պատահում է՝ լավ օրինակն էլ է վարակիչ լինում. ադրբեջանցի Թադիևը XX դարասկզբին հիմնեց իրենց թատրոնը (ուր, ի դեպ, հայերեն պիեսներ էին բեմադրվում), որին հետևեց «հայկական» պատասխան՝ Ժամանակի խոշորագույն ձկնարդյունաբերող Եղիա Ղազարի Մայիլյանը (*Илья Лазаревич Маилов*) 1908թ. կառուցեց օպերային թատրոնի շենքը, որն առաջինն էր ամբողջ մուսուլմանական աշխարհում:^{*}

1906թ. հունիսի 23-ին Կ.Խատիսյանն ստեղծեց «Բաքվի հայոց մշակութային միությունը» (*Бакинский армянский культурный союз*), որի նպատակն էր «բացառապես խաղաղ և օրինական միջոցներով Բաքվի նահանգի հայության մշակութային ու տնտեսական զարգացումը բարձրացնելը»¹: Միությունն ուներ 5 մասնաճյուղ՝ կրթական, առողջապահական, հրատարակչական, գեղարվեստաթատերական և, որքան էլ տարօրինակ լինի, ոռոգման. այս վերջինի ֆինանսական միջոցներով գործում էր ջուլիակային դպրոց, իսկ կրթական մասնաճյուղի միջոցներով՝ կարուձևի և ձեռագործի իգական մասնագիտական դպրոց: Իր գոյության ընթացքում (մինչև 1917թ.) միությունը կազմակերպեց բազմաթիվ համերգներ, երեկոներ, ներկայացումներ, երգեցիկ խմբեր, թատերախմբեր, մեծապես նպաստեց Բաքվի հայկական թատրոնի գործունեությանը, իսկ 1912թ. Ե.Մայիլյանի թատրոնում Անդրկովկասում առաջին անգամ բեմադրվեց Տ.Չուխաջյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» կատակերգական օպերան²:

Մարդասիրականի տպարանը 13 տարվա ընթացքում հրատարակեց երկու տասնյակից ավելի տարաբնույթ գրքեր: Առաջնեկին հաջորդեցին «Մալաֆյանց և ընկ.», Ղասաբյանցի, «Արօր», Տեր-Հովհաննիսյանցի, Գյուլբասարյանի, Շահբաղյանի,

¹ Ежегодник Баку..., стр. 86.

² ՀՄՀ, հտ. 2, էջ 346:

Ղազարյան եղբայրների, Երևանցյանի, Անտոնյանի, Թառայանի, Միրզոյանի, «Արծվաբերդ», «Արամազդ», Կարապետյան եղբայրների տպարանները (էլ չենք խոսում զանազան կուսակցական ընդհատակյա տպարանների մասին), որոնք լույս էին ընծայում հարյուրավոր հրատարակություններ¹: Իսկ Կ.Խատիսյանը, շարունակելով հայոց քարտեզագրության դարավոր ավանդույթները, 1912թ. հրատարակեց Անդրկովկասի երկու քարտեզ²:

1874-1878թթ. Բաքվում լույս էր տեսնում Խ.Ստեփանեի «Հայկական աշխարհ» պարբերականը, որին հաջորդեցին տասնյակ այլ թերթեր և ամսագրեր, բայց որոնց չենք անդրադառնա, քանզի դա մեզ հիմնովին կշեղի մեր նյութից: Նշենք միայն, որ ռուսաց լեզվով հրատարակվում էին մի շարք պարբերականներ, և այդտեղ ևս էական էր հայոց դերը: Այսպես, եթե Թադիևը հրատարակում էր «Каспий», Գ.Ջինորաձեն՝ «Вечер» և «Бакинец», ապա «Баку» և «Кавказский телеграф», «Кавказская копейка» պարբերականների հրատարակիչ-խմբագիրն էր նավթարդյունաբերող Ք.Վերմիշյանը, Ղորղանյանը հրատարակում էր «Джигит», Հ.Տեր-Միքայելյանը՝ «Записки центрального совета родительских кружков при средних учебных заведениях г.Баку», մասնավոր հաշվապահական դասընթացների տնօրեն Դ.Թությանը՝ «Бакинские новости» պարբերականը: Իսկ ամենաազդեցիկ հրատարակություններից մեկի՝ «Нефтяное дело»-ի խմբագիրն էր Ա.Պարոնյանը:

Արդյունաբերական, առևտրատնտեսական, կրթամշակութային և այլ գործունեությունից բացի, հայերը լայն մասնակցություն ունեին նաև վարչական պաշտոններում (անշուշտ, զիջելով միայն ռուսներին): Այսպես, 1853թ. Բաքվի գավառի դատախազը, իսկ հետագայում գավառական պետն էր Բ.Լազարյանը³, 1855-ին գավառական գանձապետն էր Հ.Յաղուբյանը⁴: 1300 անդամ ունե-

¹Նշվ. աշխ., էջ 345:

²Հ. Ստեփանյան, Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695-1955), Ե., 1957թ.:

³Кавказский календарь на 1854 год, Тифлис, 1853г., стр. 606.

⁴Кавказский календарь на 1856 год, Тифлис, 1855г., стр. 631.

ցող Բաքվի Հասարակական ժողովը ղեկավարում էր Ավագների խորհուրդը, որի 17 անդամներից 13-ը հայեր էին, իսկ նախագահն էր նավթարդյունաբերող և բանկատեր Գ.Շովիանյանը¹: Հայոց ներկայությունն է՛լ ավելի ակնառու էր Բաքվի քաղաքային դումայում: Եթե դումայի նախագահները մշտապես ռուսներ էին, ապա 1881թ. քաղաքացիական կառավարման այդ մարմնի անդամներ էին 29 հայեր², 1894-ին՝ 30-ը (8 ռուս, 17 ադրբեջանցի, մեկ հրեա)³: Երբ XIX դարավերջին որդեգրվեց բնակչության թվաքանակին համապատասխան անդամների ընտրության սկզբունքը, ապա հայերի թիվը, բնականաբար, նվազեց. այսպես, 1900թ. հայ էին արդեն 21 պատգամավոր, ադրբեջանցի՝ 27-ը, այլազգի՝ 10-ը⁴: 1907-ին 77 պատգամավորներից հայ էին 18-ը⁵, իսկ 1911-1915թթ. գումարման ընթացքում 81 պատգամավորներից հայ էր 22-ը, ադրբեջանցի՝ 40-ը, վրացի՝ մեկը, մյուսները՝ ռուս⁶:

Հավելենք մի ուշագրավ փաստ. օտար երկրներում, որոնք հետաքրքրություններ ունեին Բաքվում, իրենց դիվանագիտական ներկայացուցիչներ էին նշանակում հայերին. այսպես, 1908թ. Բելգիայի հյուպատոսն էր Ն.Այվազյանը, Իտալիայի հյուպատոսը՝ Վ.Մուրաֆյանը:

Չմոռանանք նաև, որ ռուսական ու եվրոպական ամենատարբեր ֆիրմաների լիազոր-ներկայացուցիչները նույնպես հայեր էին:

Հիմա կուզենայինք հարցնել՝ հայերն առևտրականների ցեղախո՞ւմբ էին:

Ակնհայտ է հետևյալը. Բաքվի հայությունը լիարժեք կյանքով ապրող բարեկեցիկ մի համայնք էր: Այն առաջնային տեղ էր

¹ Кавказский календарь на 1817 год, Тифлис, 1816г., стр. 825.

² Кавказский календарь на 1882 год, Тифлис, 1881г., стр. 51.

³ Кавказский календарь на 1895 год, Тифлис, 1894г., стр. 131-132.

⁴ Кавказский календарь на 1901 год, Тифлис, 1900г., стр. 132.

⁵ Кавказский календарь на 1908 год, Тифлис, 1907г., стр. 105-106.

⁶ Кавказский календарь на 1915 год, Тифлис, 1914г., стр. 132-133.

զբաղեցնում նավթարդյունաբերությունում, առևտրի և արտադրության բազմաթիվ ճյուղերում, ֆինանսաբանկային ոլորտում, բարձրարժեք անշարժ գույքի սեփականատեր էր, բացի այդ, կրթված էր ու կիրթ: Դա պատճառ էր, որ բազմազգ ու բազմաշերտ շահերով խճողված Բաքվում առանց նրա կարծիքը, ցանկությունը հաշվի առնելու ոչ մի հարց չլուծվեր:

Այս ամենը դուր չէր գալիս շատ-շատերին, բայց դրա մասին՝ ավելի ուշ:

ՎԱՍՆ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԷՈՒԹՅԱՆ

Կփորձեմ հայի էության մի մասնիկը բացահայտել՝ բաքվահայության օրինակով, Բաքվի համայնքը ներկայացնելով որպես հայոց մոդել:

Հայերն ի՞նչ գործ ունեին Կասպից ծովի ափին: Դեռևս 500թ. Արցախի Վաչագան Բարեպաշտ թագավորը Բաքվում կառուցել տվեց առաջին հայկական եկեղեցին¹: Այլ տվյալներ չկան, սակայն ստույգ հայտնի է, որ մեկ այլ եկեղեցի՝ Սբ. Աստվածածինը, գտնվում էր ծովեզերքի մոտ, Հին թաղում, բերդի մոտ և վերջին անգամ 1789թ. նորոգվել էր վաճառականների՝ նախիջևանցի Մարկոս Թառումյանի, շուշեցիներ Զոհրաբ, Հովհաննես և Կարապետ Թումայանների կողմից²:

Հայոց թվաքանակի վերաբերյալ առաջին պաշտոնական տվյալին հանդիպում ենք 1851-ին. այդ թվականին Բաքուն ուներ 7431 բնակիչ, որից հայ էին 405-ը³: 1855թ. 97 տներում ապրում էր 412 հայ (արական սեռի՝ 286-ը), որոնք ունեին մեկ եկեղեցի և մեկ դպրոց⁴: Հայերից 29-ը վաճառականներ էին, որոնց հիմնական զբաղմունքը Բաթումից շաքար բերելը և Պարսկաստանում վաճառելն էր:

1859թ. ականավոր հրապարակագիր Ստեփանոս Նազարյանը «Հյուսիսսփայլում» տպագրեց «Հայերի կոչումն մարդկութեան մեջ» հոդվածը, որով առաջարկում էր մի բարեգործական ընկերություն ստեղծել՝ լուսավորություն տարածելու համար,

¹ Հայ սփյուռք. հանրագիտարան, Ե., 2003թ., էջ 19:

² Մ.Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտաստեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախայ թեմի, Թիֆլիս, 1896թ., էջ 377:

³ Кавказский... на 1852 год, стр. 305, 307.

⁴ Кавказский... на 1856 год, стр. 492.

քանզի կրթությունը մշտապես եղել էր ազգային առաջնահերթություն, տարբեր ժողովուրդների մեջ մրցունակ լինելու, հետևաբար և ինքնապահպանվելու լավագույն երաշխիք:

Դժվար է ասել՝ այդ հողվածը կարդացել էին, արդյոք, Կոստանդնուպոլսում, բայց Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում արդեն 1860թ. ստեղծվեց հայկական բարեգործական ընկերություն, որը, սակայն, ի վիճակի չէրավ գործունեություն ծավալել:

Ստ.Նազարյանի հողվածին արձագանքեց մեկ այլ մարդ. Բաքվում աշխատող թիֆլիսցի բժիշկ Դավիթ Ռոստոմյանը (1820-1869), գաղափարից ոգևորված՝ ձեռնամուխ եղավ դրա իրականացմանը: Նրան հաջողվեց գտնել 12 համախոհների, որոնք էին՝ թիֆլիսցի գեներալ Արշակ Տեր-Ղուկասյանը, բաքվեցի Սարգիս Այվազյանը, շամախեցի Գևորգ Լալայանը, շուշեցիներ Մովսես Զոհրաբյանը, Ներսես Կրասիլնիկյանը, Գրիգոր Թումայանը, Մուսայել Շահգեղանյանը, Սարգիս Տեր-Գրիգորյանը, Հակոբ Ապրեայանը, Դավիթ Ադամյանը, Օհանջան Հախումյանը և Սարգիս Գրիգորյանը: Մարդիկ, ովքեր գերազանցապես զբաղվում էին տնտեսական գործունեությամբ՝ նավթարդյունաբերությամբ, առևտրով, արտադրությամբ և որոնք ներդրեցին ու ձևավորեցին 12.650ռ. անձեռնմխելի դրամազուլուխ: Շուրջ երկու տարի կատարվեց նախապատրաստական դժվարին աշխատանք, և 1864թ. մայիսի 21-ին կայսերական թույլտվությամբ հաստատվեց Բաքվի «Մբ. Գրիգոր Լուսավորչի անվան հայոց մարդասիրական ընկերության» (*«Армянское человеколюбивое общество во имя Св. Григория Просветителя»*) կանոնադրությունը: Նշանաբանն էր՝ «Մեր առ մարդիկ», նպատակը՝ ռուսահպատակ հայերին նյութապես աջակցելը և կրթություն տարածելը: Այդպես մեր ժողովրդի բազմադարյա բարերարության ոսկե մատյանում գրվեց փառահեղ մի կազմակերպության 56-ամյա պատմության առաջին տողը: Պատմություն, որտեղ անթեղված են հայոց լավագույն հավաքական հատկությունները, պարփակված են հայի հանդեպ հայի բարիք գործելու, միմյանց սատարելու հոգեկան պոռթկումը, մտավոր

ձգտումը և անթելադիր կամքը: Մարդասիրականն ապացուցեց, որ բարերարությունը մեր քրիստոնյա էության անքակտելի բաղադրամասն է, մեր եկեղեցու և մեր ազգային կապիտալի միասնականության դրսևորումը:

Մարդասիրականը դարձավ բաքվահայոց ինքնակազմակերպման, եթե կուզեք՝ *ազգային ինքնավարության* մի յուրատեսակ մարմին:

Շամախվո Սբ. Աստվածածին եկեղեցու պատին փորագրված էր այսպիսի մի արձանագրություն. «Տէր յիշէ մեզ, էրբ բանք կսպասին և գործք կթագաւորեն»: Սակայն խոսքերը ոչ միայն չեն սպառվել, այլև չեն ասվել: Մենք ենք մոռացել, այնինչ Տերը, անկասկած, հիշում է Մարդասիրականի անդամներին՝ նավթարդյունաբերողների, վաճառականների, պաշտոնյաների, զինվորների, մտավորականների, ուսանողների, կանանց ու տղամարդկանց, ամբողջ գերդաստաններ: Բոլոր նրանց, ում ընթերցողն արդեն հանդիպել է և դեռ պիտի ծանոթանա:

Մարդասիրականն իր գործունեությունն սկսեց՝ ունենալով 13 հիմնադիրների անձեռնմխելի դրամագլուխը, ինչպես նաև 27 անփոփոխ և 15 տարեկան անդամների վճարումները: (Հետագայում անդամությունն այսպիսի կառուցվածք ստացավ. պատվավոր անդամները միանվագ վճարում էին 1000 ռ., անփոփոխները՝ 100 ռ., տարեկան անդամները՝ 5 ռ.): Այդ գումարը հարկ էր շրջանառության մեջ դնել, եկամուտ ստանալ և գործունեություն ծավալել: Քանի որ հիմնադիրների մեծ մասը վաճառականներ ու նավթարդյունաբերողներ էին՝ դրամագլուխը շատ արագ սկսեց շահութատուներ բերել:

Մարդասիրականի հիմնմանը զուգահեռաբար, բաքվահայությունը ձեռնամուխ եղավ (1863թ.) նոր՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցմանը: Շինարարությունն ավարտվեց 1869-ին՝ նավթարդյունաբերողների առաջին սերնդի ներկայացուցիչ Ջավադ Մելիքյանի վերակացությամբ, և ծախսվեց 15.267ռ. (եկեղեցին տրամադրել էր 5758 ռ., մնացած գումարը հանգանակվել էր)¹:

¹ Ս.Սմբատեանց, Նկարագիր..., էջ 377:

Դ.Ռոստոմյանի մահից հետո որոշվեց, որ այդուհետև ընկերության վարչությունը պիտի ունենար եռամյա լիազորություններ, և 1870-ին նախագահ ընտրվեց մայր Մովսես Զոհրաբյանը, որը վիթխարի ներդրում ունեցավ Մարդասիրականի կայացման գործում: Այդ թվականին բացվեց իգական դպրոցը, որտեղ աղքատ հայ աղջնակները սովորում էին հայերեն, ռուսերեն և կարուձև (20-30 աշակերտուհի, որոնց թիվը 1896-ին հասավ 414-ի), հիմնվեց տպարանը՝ դասագրքեր տպագրելու և սովորողներին ձրի բաժանելու համար, ինչպես նաև *Բաքվի առաջին գրադարանը*:

Մարդասիրականն անմիջապես իր խնամակալության տակ առավ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արական ծխական դպրոցը: 1871-1873թթ. եկեղեցու տարածքում (Գիմնազիչեսկայա փողոց, թիվ 119) 7715ռ. 93 կոպեկ գումարով կառուցեց մեկուկես հարկանի շենք, որտեղ հանգրվանեցին վարչության գրասենյակը և դպրոցները՝ 13 դասասենյակներով: 1872թ. քահանա Բուդաղյանցի, գեներալ Լազարյանի, մայր Զոհրաբյանի և վաճառական Դիլդարյանի նախաձեռնությամբ ստեղծվեց եկեղեցական հոգաբարձությունը, որի գանձանակ 20 տարվա ընթացքում մուտք եղավ 31.382ռ., և դրանից 11.805ռ. նպաստ հատկացվեց այրիներին, որբերին, հիվանդներին, աղքատ աղջնակներին: Երբ 1886թ. Մարդասիրականի շենքը հրդեհվեց, 1888-ից սկսվեց նոր, եռահարկ հրաշալի շենքի շինարարությունը, որի վրա ծախսվեց 115.155 ռ.:

Քսանհինգ տարվա՝ 1864-1889թթ., ընթացքում ընկերության ֆինանսական միջոցները զոյացել էին հիմնադիր կապիտալից, նվիրատվություններից, անդամավճարներից, կապիտալի շահութատոկոսներից, շարժական և անշարժ գույքի եկամուտներից, երեկույթների, համերգների, ժողովրդական տոնահանդեսների կազմակերպման գումարներից: Այս բոլոր միջոցները կազմել էին 294.277ռ., որից 90.453ռ. հատկացվեց Բաքվի ու Թիֆլիսի ծխական, ինչպես նաև Ղուբայի, Շամախվո, Նուխիի գավառների և Գանձակի նահանգի 25 հայկական դպրոցներին, 18.915ռ.՝ 209 աղքատ աշակերտներին, 2825ռ.՝ ընչազուրկ ընտանիքներին: Բացի այդ, Մար-

դասիրականը Ռուսաստանի և արտասահմանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 23 որդեգիր ուսանող պահեց: Ընկերության գրադարանում կար 8870 կտոր գիրք, 14 անուն հայերեն, 39 ռուսերեն և 4 արտասահմանյան թերթեր ու ամսագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում էր 13.600ռ.: Քառորդ դարի ընթացքում ընկերությունն ունեցավ 1598 անդամ:

Սակայն ամեն ինչ հարթ ու խաղաղ չէր: Բաքվի հայությանն առաջին լուրջ, ծանր հարվածը հասցրեց Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետ և Կովկասյան զինվորական շրջանի հրամանատար, իշխան Գովիցինը: Նրա հրամանով 1885-1886թթ. փակվեցին Այսրկովկասի հայկական դպրոցները, 1899-ին նա արգելեց Մարդասիրականի լուսավորչական-մշակութային գործունեությունը և թույլ տվեց զբաղվել միայն բարեգործությամբ, այն էլ լոկ Բաքվի նահանգում, ինչի հետևանքով փոխվեց անգամ անվանումը, կոչվեց «Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն»: Եվ միայն 1913-ին վերադարձվեցին նախկին անվանումն ու գործունեության շրջանակները: Սակայն այս արգելանքները գրեթե չխաթարեցին բաքվահայոց ազգապահպանության, հարատևման բուռն ձգտումը: Այս ընթացքում ընկերությունը Ստանիսլավսկայա փողոցում ունեցավ երեք շենք: Գրիգոր Թումայանը Բաքվի հայության ամենաականավոր դեմքերից էր, հայ մարդու բացառիկ մի տիպար: Լինելով խոշոր նավթարդյունաբերող, շոգենավերի տեր, 1882-1885թթ. Մարդասիրականի վարչության նախագահ՝ Գ.Թումայանի ձախ ձեռքը, հիրավի, չգիտեր ինչ է անում աջը: Բավական է ասել, որ նա բազմաթիվ այլ քաղաքներում բնակվող վաճառականների հանձնակատարն էր նաև՝ որպես վերին աստիճանի պարկեշտ և օրինավոր անձ. հանձնակատարության այդ գործունեությունից նրա տարեկան շահույթը կազմում էր 800-1000ռ., որն ամբողջությամբ տալիս էր Մարդասիրականին՝ դպրոցներին տրամադրելու համար: Ահա այս մարդը կառուցեց և ընկերությանը նվիրեց իր անունը կրող երկհարկանի մի շենք, որտեղ բացվեցին մանկամասեր, կարի արհեստանոց և լվացքատուն:

Մեկ այլ նշանավոր նավթարդյունաբերող, «Սյունիք» ընկերության վարչության նախագահ Դավիթ Ավան-Յուզբաշյանը, ի հիշատակ իր վաղամեռիկ որդի Խոսրովի, Գ.Թումայանի շենքի հարևանությամբ 24 հազ. ռուբլով կառուցեց մի երկհարկանի շենք, որտեղ բացվեց որբանոց:

Նրանց օրինակին հետևեց Լյուդվիգ Մերգեյանը, որը 10 հազ. ռուբլով կառուցեց մեկուկես հարկանի մի մասնաշենք, որի ձրի կամ էժան բնակարանները տրամադրվում էին հայ կարիքավորներին:

1902-1906թթ. գործեց ընկերության Աշխատանքի տունը, որի 8 արհեստագործական բաժանմունքներում զբաղված էր 144 կին, 145 տղամարդ և 525 երկսեռ երեխա: Այդ բաժանմունքները պահպանելու համար յուրաքանչյուր աշխատողի վրա օրական ծախսվում էր 15,39-40,03 կոպեկ, ինչը շատ բարձր ցուցանիշ էր, քանզի արտասահմանի նմանատիպ հաստատություններում ծախսվում էր օրական 10-35 կոպեկ:

Մարդասիրականն ուներ նաև իր ճաշարանը, որտեղ օրական 136 ճաշաբաժին էր տրվում, իսկ մագուրն անվճար տրամադրում էին Ալ.Մանթաշյանցն ու Ղուկասյան եղբայրները¹:

Առաջին համաշխարհային պատերազմը Մարդասիրականին դրդեց ակտիվացնել գործունեությունը, ստանձնել բառացիորեն ազգապահպանության առաքելություն: 1914թ. ընկերությունը բացեց հոսպիտալ՝ վիրավոր հայ զինվորների բուժման համար, Բաքվի քաղաքային հասարակական կառավարման վարչությանն առընթեր հիմնեց հատուկ քաղաքային կենտրոնական կոմիտե՝ հայ մարտիկների ու նրանց ընտանիքների համար դրամական նվիրատվություններ ժողովելու նպատակով, քաղաքային կոմի-

¹ Ա.Գալստեանց, Նկարագրութիւն հանդիսի Բագուայ Հայոց մարդասիրական ընկերութեան քսան եւ հինգ ամեայ յոբելեանի, Մոսկվա, 1891թ., էջ 8-48: Ա. Գալստեանց, Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան քսան եւ հինգ ամեայ յոբելեանի, Մոսկվա, 1891թ.: А. Калустянц, Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского Человеколюбивого Общества во имя Св. Григория Просветителя Армении с 1864г. по 1896г., Баку, 1896г. Благотворительные учреждения России, СПб, 1912г., стр. 171-174.

տե՛ վիրավոր և հիվանդ ռազմիկներին օգնելու, Տիկնանց կոմիտե՛ փախստականներին օժանդակելու համար: Սակայն անգամ այս ծանր պայմաններում չմոռացվեց կրթական գործը, 1914/15 ուսումնական տարում Մարդասիրականը ֆինանսական աջակցություն ցույց տվեց Շամախվո թեմի 11 դպրոցների:

Ամեն տարի երկու անգամ՝ Սբ. Ծննդյան և Զատիկի կապակցությամբ, Մարդասիրականին պարտադիր դրամական նվիրատվություններ էին կատարվում, որոնց գումարը տատանվում էր 2-ից 300 ռուբլու սահմաններում: Ամենախոշոր նվիրատուն, անշուշտ, Ալ. Մանթաշյանցն էր, որը չնայած ընկերության անդամ չէր (Թիֆլիսի Կովկասի հայոց բարեգործական ընկերության պատվավոր նախագահն էր), սակայն անհաղորդ մնալ չէր կարող. նա 300-ական ռուբլի էր տրամադրում ամեն տոնի ու ևս 100-ական ռուբլի Թիֆլիսի Առևտրային բանկի անունից: Սակայն որքան կարևոր են մեծահարուստների նվիրատվությունները, պակաս արժեքավոր չեն այն մարդկանց գումարները, որոնք կազմում էին ընդամենը 2-3 ռուբլի (ինչպես, ասենք, Գ.Մելիք-Մարությանի, Գ.Մանգասարյանի, Տեր-Օհանյանի, Ավշարյանի, Չախմախյան եղբայրների և տասնյակ ուրիշների): Քանզի մարդն ինչպիսի հոգեկան պոռթկում, հոգևոր պահանջմունք, պատասխանատվության զգացում պիտի ունենար, որպեսզի իր սուղ միջոցներից բաժին հաներ ազգակիցներին: Եվ միանգամայն իրավացի էր Մարդասիրականի վարչության քարտուղար, Բաքվի փոխադարձ վարկի ընկերության գանձապահ Սարգիս Վարշամյանը, երբ 1872թ. գրում էր. *«Խոհական ու քանքարավոր անձինք փոքր բանով շատ մեծ գործեր են կատարում հոգուտ մարդկության, քան թե կույր բախտի որդիքը յուրյանց հարստութենով»*¹:

1914թ. Սբ. Ծննդյան կապակցությամբ 90 անձինք ու ֆիրմաներ նվիրաբերեցին 7941ռ., իսկ Զատիկի առթիվ 73 անձ և ընկերություն՝ 5978ռ.²: Սբ. Ծննդյան և Զատիկի նվիրատուների թվաքա-

¹ Ս.Վարշամյանց, Հաշի կամ համառոտ նկատողութիւն Մարդասիրական ընկերութեան, Բարուն, 1873թ., էջ 20:

² Отчет о деятельности Армянского Человеколюбивого Общества во имя Св. Григория Просветителя за 1914г., Баку, 1916г. стр. 18-19.

նակների տարբերությունն ուներ հետաքրքիր պատճառաբանություն. Մբ. Ծննդին նվիրատվություններ էին կատարում նաև հայ ձեռնարկատերերի հետ գործնական կապեր ունեցող կամ չունեցող այլազգիներ, իսկ Ջատկի կապակցությամբ՝ չնչին բացառությամբ՝ միայն հայերը: Կարծում ենք, տեղին կլինի, եթե որպես երախտագիտության նշան՝ թվարկենք նվիրատու այլազգիներին: Եվ այսպես, տարբեր տարիներ Մարդասիրականին ֆինանսական աջակցություն են ցույց տվել «Նոբել եղբայրներ», Ռոտշիլդների «Կասպից-սևծովյան ընկ.», «Գոլդյուստ և որդի», «Ստուկեն և ընկ.», «Է.Թիլմանս և ընկ.», «Ժորժ և եղբայրներ» ֆիրմաները, Աննա Բայարդինան, Ռ.Կայզերը, Ա.Շմիտտեն, Մ.Շումախերը, Վ.Բիխովսկին, Գ.Լիստը, Բյերինգը...

Հարց կարող է ծագել՝ հապա աղբբեջանցիները մասնակցություն չունեի ն: Հայտնի է միայն մեկ փաստ. երբ 1902թ. բացվեց Աշխատանքի տունը, Թաղիկը տրամադրեց 500ռ.:

«Մբ. Գրիգոր Լուսավորչի անվան հայոց Մարդասիրական ընկերությունը» միասնական իղձերի ու ձգտումների, հայկականության օրրան էր, սակայն բաբվահայերի բարերարությունը չէր սահմանափակվում միայն այդ կազմակերպության շրջանակներով:

Շուշեցի Ղուկասյան եղբայրները՝ Մարդասիրականի հենապուները, որքան էլ աշխարհանվաճ բարձունքների հասան, այդուամենայնիվ պահպանեցին հոգեհարազատությունը Ղարաբաղի հետ: Եղբայրներն իրենց ծննդավայրում, ի հիշատակ հանգուցյալ քրոջ, հիմնեցին «Մարիամ Ղուկասյան» իգական միջնակարգ դպրոցը, այդ նպատակով նվիրեցին հայրական մեծ տունը, այն ձևափոխելու ու նորոգելու համար տրամադրեցին 30 հազ. ռ. և հատկացրին 200 հազ. ռ. դրամագլուխ, որի շահութատոկոսներով պիտի հոգացվեին դպրոցի ծախսերը: Արշակ Ղուկասյանն իր ամբողջ կարողությունը՝ 8 մլն ռ., կտակեց ազգին, որպեսզի այդ գումարը ծառայի հայոց կրթությանը¹: Աբրահամ Ղուկասյանը դարձավ Փարիզի Մբ. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու 150 ականա-

¹ Ա.Սարուխան, Աղեքսանդր Մանթաշեանց ..., էջ 48:

վոր բարերարներից մեկը¹, այն եկեղեցու, որ 1904թ. կառուցել էր Ալ.Սանթաշյանցը: Նրանց հորեղբայր Ավետիս Ղուկասյանը՝ նավատերը, իր անշարժ գույքն ու կանխիկ դրամը՝ 500 հազ. ռ., կտակեց ազգին, որպեսզի հիմնվի «Ղուկասյան հայկական ճեմարան»²:

1881թ. 30 Բաքվահայեր ժողովեցին 16.550ռ., որով նորոգվեց Բաքվի նահանգի Սաղիան գյուղի Սբ. Ստեփաննոս վանքը: 1888թ. Մովսես, Եղիա և Ենոք Բուրաղյան եղբայրները՝ Բաքվի ու Պարսկաստանի միջև թերևս ամենախոշոր վաճառականները, 10 հազ. ռ. դրամագույն տրամադրեցին, որով ընդամենը 950 հայ բնակիչ ունեցող նույն Սաղիան գյուղում բացվեց իրենց ազգանունը կրող երկդասյա վանական դպրոց:

Կարապետ Լալայանը՝ Բաքվի ամենաշքեղ տների կառուցողն ու տերը, 1000ռ. տրամադրեց Սբ. Էջմիածնին, որպեսզի դրանով ճեմարանում մի որդեգիր ուսանող կրթվի: Իսկ մահվանից հետո (1914թ.) բացված կտակից պարգվեց, որ 100 հազ. ռուբլի էր թողել հայոց կրթական գործին:

Բաքվաբնակները 6931ռ. հատկացրին Զեյթունի հրդեհից տուժած իրենց ազգակիցներին, 17.326ռ.՝ Սբ. Էջմիածնի Մայր տաճարի նորոգությանը (1888 թ.)³:

Ամփոփելով այս գլուխը՝ մենք պետք է փաստենք հետևյալը: Որքան էլ համեմատաբար մանրամասն ներկայացրինք Մարդասիրական ընկերության գործունեությունը (որին դեռևս անդրադառնալու ենք համապատասխան տեղում), այդուհանդերձ, բաքվահայերի բարեգործության դրսևորումներն այլ երկրներում և այլ քաղաքներում շոշափեցինք հպանցիկորեն, որպեսզի բուն Բաքվից չշեղվենք*:

Սակայն այս գլխում պարունակվում էր անչափ կարևոր մի իրողություն: Երբ մենք ասում ենք, թե բաքվահայությունը ունևոր, բարեկեցիկ, կիրթ ու կրթված, լիարժեք համայնք էր, դա չի նշանակում, թե աղքատ ու չունևոր հայեր չկային: Անշուշտ, կային: Բայց բաքվահայ կապիտալիստներն իրենք սերել էին պարսկա-

¹ Գ.Թորոսեան, Մուրբ Յովհաննէս-Մկրտիչ Փարիզի Մայր տաճարը, Փարիզ, 1994թ., էջ 150:

² Ա. Մարուխան, Աղեքսանդր Սանթաշեանց ..., էջ 49:

³ Մ. Սմբատեանց, Նկարագիր ..., էջ 26, 94, 131:

թուրքական բռնատիրության իրավագուրկ, լլկված, կիսաստրկական իրականությունից և քրտինքի, աշխատասիրության, ձեռնարկատիրական տաղանդի շնորհիվ դառնալով դրամատերեր՝ խորապես կապված էին իրենց անցյալի հետ, ունեին *ազգային պատկանելության* սուր զգացողություն: Բաքվահայ կապիտալը տոգորված էր ազգի հանդեպ *պատասխանատվության* զգացումով, որն իրացվում էր Մարդասիրականի միջոցով՝ եկեղեցու շուրջ համախմբված: Նորից կրկնենք՝ նախորդ էջերում հիշատակված բոլոր անձինք Մարդասիրական ընկերության անդամներ էին, ընդ որում՝ սերնդեսերունդ, հաճախ՝ ամբողջ գերդաստաններով: Սա՛ էր բաքվահայ կապիտալի առանձնահատկությունը, որն, ի դեպ, այնքան էլ արտառոց երևույթ չէր. դա բնորոշ էր առհասարակ աշխարհասփյուռ հայոց կապիտալին: Եվ սա մեզ հիմք է տալիս ամենայն պատասխանատվությամբ պնդելու՝ հայ ժողովրդի քաղաքակրթական արժեքների թվում կար ևս մեկը՝ *կապիտալի մշակույթը*:

Այդ մշակույթն ուներ անգամ իր ծրագրային ձևակերպումը, որը պատկանում էր Ալեքսանդր Մանթաշյանցին. «*Հայ վաճառականն է՛ր, ձեր փառքի տունը, ուր անմահ կմնաք՝ ձեր տառապյալ հայրենիքն է: Հայոց կյանքն է այն պանթեոնը, ուր ձեր բարի հիշատակը պիտի պահվի Աստծո և մարդկանց առաջ՝ իր համակ պայծառությամբ. ուրիշ թանգարաններում ձեզ համար միայն մոռացության փոշի է պահված:*

Հայ վաճառականն է՛ր, դուք հայ ազգի վաստակավոր ձեռքն էք, նրա հաստատություններին սնունդ մատակարարող աշխատավորք, նրա կենդանի գանձն էք ու գանձարանը: Հետևաբար, նրանց վրա հսկելու, կարգադրելու, կարգի բերելու բարոյական իրավատերը: Մի՛ լռեք, մի՛ հեռանաք հայ վաճառականի ավանդական ճանապարհից, մի՛ մերժեք ձեր պարտքերն առ հայրենիք, մի՛ հրաժարվեք ձեր իրավունքներից՝ ազգային գործերի դեկը ձեր ձեռքից վար թողնելով»:

Ահա մարգարեական խոսքեր, որոնք իրենց այժմեականությունը չեն կորցրել ներկայումս և չեն կորցնի երբեք: Պիտի չկորցնեն...

ՎԱՍՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԻ ԱՐՅԱՆ ՀԱՄՏԵՍՈՒԹՅԱՆ

Աշխարհում հակահայկականություն գոյություն ունի վաղուց, որը տեսական ձևակերպում չի ստացել մեր իսկ անփութության պատճառով, իսկ այլազգիները դա անելու կարիք չունեին: Հակահայկականության ողնաշարը տնտեսական գործոնն է. զրկվելով պետականությունից, հայրենիքից, մասնատվելով, տրոհվելով՝ հայությունը հոգում պահեց իր կրոնը, սրտում՝ կարոտը և սփռվեց աշխարհով մեկ: Բոլոր երկրներում, բոլոր ժողովուրդների մեջ, նրանց իսկ համար ստեղծեց-արարեց և կոչվեց «օգտակար տարր»: Բայց կար չափաձող. հենց որ հայն իր դարակյիտ տնտեսական տաղանդի շնորհիվ հասնում էր բարձունքների, բնիկներից գերազանցում, հետո սկսում ինքնակազմակերպվել, ազգային կառույցներ ստեղծել, նրան զսպաշապիկ էին հագցնում:

Հակահայկականության այս դասական համակարգը ճիշտ նույնական դրսևորում ունեցավ նաև Ռուսական կայսրությունում, այն նախկին Ռուսիայում, ուր հայերի տնտեսական ներկայությունը սկիզբ էր առնում դեռևս VIII դարից¹: Սակայն կար մի «փոքր» առանձնահատկություն. դա Բաքվի բնույթը և նրա բնիկ թաթարների ազդեցության գործոնն էր...

Երբ 1827թ. բզկտված Արևելյան Հայաստանն անցավ Ռուսաստանին, հայության մի զգալի զանգված թեթևացած շունչ քաշեց, բացվեցին վիթխարի կայսրության անձայրածիր տարածքները, հայերն ստացան ապահովության և ազատության որոշակի

¹ Ст' у Б. Миллер, Об армянских надписях в Болгарах и Казани, М., 1919г.

հնարավորություններ, և վերագարթնեց նրանց գոյատևման ու առաջընթացի լավագույն երաշխիքը՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու գենը: Արդեն 1831թ. Երևանի բերդը գրաված գեներալ-ֆելդմարշալ Ի.Պասկևիչը իր փոխանորդ գեներալ Պանկրատին գրում էր. «Հայերը, որ վաճառականության մեջ վերին աստիճանի ընդունակ ժողովուրդ են և այդ պատճառով տերության համար օգտակար կարող էին լինել, ամենաշատ թվով ցրված լինելով Ռուսաստանում, Թուրքիայում ու Պարսկաստանում և չունենալով քաղաքական անկախություն, միմյանց հետ կապված են միմիայն կրոնով: Նրանք միայն մի ընդհանուր իշխանություն ունեն, այն է՝ հոգևոր իշխանությունը, որը շատ մեծ ազդեցություն ունի նաև նրանց աշխարհիկ գործերի վրա»¹:

1834թ. արդեն կոմս Պ.Ջուբովն էր փորձում հայերին բնութագրել. «Այդուհանդերձ, ժողովրդի ոգին (նկատի ունի մեր ժողովրդին - Խ.Դ.) արևելյան տիրակալների դաժան բռնատիրության հետևանքով ստրկական դրության այսքան հարյուրամյակների ընթացքում չէր կարող չփոխվել: Այստեղից բխում է այն կասկածամտությունը, շահամոլությունը և անձնական շահի ձգտումը, որոնք հայերի առանձնահատկություններն են և կշտամբանքի առիթ են տալիս մյուս ժողովուրդներին: Թուրքերը, պարսիկները և նույնիսկ վրացիներն իրենք առհասարակ հայերին չեն սիրում, բայց առանց նրանց յուրազանց չեն կարողանում: Բոլոր այն պաշտոնները, որոնք կարիք ունեն լավագիտակ, շրջահայաց, համբերատար ու գործուն մարդկանց, զբաղեցրել են հայերը, որոնք կարողանում են հեռատեսորեն գործել հոգուտ իրենց, չնայած արտաքնապես ցույց են տալիս, թե կատարում են իրենց տերերի կանխագծումները: Արհեստների, առևտրի, դիվանագիտական բանակցությունների թուրքական ու պարսկական բոլոր ասպարեզները գտնվում են հայերի ձեռքում, որոնք հարկ եղած դեպքում արտաքնապես խեղճ կեցվածք են ընդունում, որպեսզի խուսափեն հարկերից ու ճնշումներից»:

¹ Ա. Երիցեանց, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք, մասն Ա, Թիֆլիս, 1895թ., էջ 654:

րից, բայց գաղտնաբար գործողության մեջ են դնում նուրբ քաղաքականության ու հարստության զսպանակները»¹:

Չնայած այս գնահատականում բավականին ճշգրիտ է ներկայացված հայի սոցիալ-հոգեբանական ուրվապատկերը, սակայն կոմսի հետևությունը տիպական մեծապետական էր: «Նուրբ քաղաքականության ու հարստության զսպանակները» հայը հանուն ինչի՞ էր «գաղտնաբար գործողության մեջ դնում», հանուն ի՞նչ ազգային վեհ գաղափարի, որն այդ ժամանակ արևելահայոց մեջ միասնականորեն ձևակերպված չէր և գոյություն չունէր: Ո՞չ, հայը միայն մեկ նպատակ ուներ՝ ընձեռված բարենպաստ պայմաններում գոյատևել, ինքնահաստատվել և զարգանալ:

Սակայն Պ.Զուբովի այս կարծիքը ռուսական հակահայկականության, հայության դեմ գրոհ ձեռնարկելու առաջին կոչնակներից մեկն էր:

1883թ. Մոսկվայից Անդրկովկաս է ժամանում վաճառական Ա.Մակարովը՝ նշանավոր կապիտալիստ, մանուֆակտուրիստ Տ.Մորոզովի հանձնակատարը, նպատակ ունենալով ուսումնասիրելու առևտրի վիճակը, որպեսզի իր տերը մուտք գործի շուկա: Նա այցելում է Թիֆլիս, Երևան, Բաքու, ուղևորվում է անգամ Կ. Պոլիս ու վերադառնում: Այն, ինչ տեսնում է, նրան ուղղակի հուսալքության է հասցնում՝ Անդրկովկասի առևտուրն ու արդյունաբերությունը, այդ թվում և նավթարդյունաբերությունը, գտնվում էին հայերի ձեռքում, և այդ բնագավառներ մուտք գործելու Մորոզովի ցանկությունը աղետալի հետևանքներ կարող էր ունենալ իր իսկ համար: Եվ Մակարովն իր հաշվետվությունում գրում է. *«Ընդհանուր եզրակացությունը, որին հանգել եմ ուշադրությամբ խորամուխ լինելով Անդրկովկասի իրավիճակի մեջ, իմ խորին համոզմամբ այն է, որ բնական պաշարներով հարստացույն այդ երկրամասը գտնվում է խիստ ոչ շահավետ տնտեսական պայմաններում, որովհետև երկրամասի ամբողջ արտադրո-*

¹ П.Зубов, Картина Кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель, часть первая, СПб, 1834г., стр.148-149. Ռուս. թարգ. հեղ.:

դականությունը շահագործվում է հայերի կողմից, որոնք իրենց ձեռքն են վերցրել համարյա ամբողջ առևտուրը և ներկայումս ձգտում են նաև քաղաքական տիրապետության՝ աշխատելով երկրամասում ձեռք բերել վարչական պաշտոններ: Այնինչ, հազիվ թե կարելի է հույս տածել, թե նրանք հարկ եղածին պես կծառայեն ռուսական ազգային շահերին»¹:

Ուշադրություն դարձնենք վերջին բառերին: Հետաքրքիր է՝ «ռուսական ազգային շահերին» ո՞վ պիտի ծառայեր, եթե ոչ հայերը: Ադրբեջանցիները, որոնց մասին հենց ինքը գրում է. «Այդ բնակչությունը, ցեղական պայմաններից ելնելով վարելով կիսանստակյաց, կիսաքոչվոր ապրելակերպ, շահավետ է համարում ոչխար պահելը...»²:

Որքան էլ մասնավոր, այդուհանդերձ, նման կարծիքները ձևավորեցին մի մոտեցում, որը ռուսական իշխանությունը որդեգրեց հայերի նկատմամբ: Այն օգտակար տարրը, որն սկզբնական շրջանում խրախուսելի դերակատարություն ուներ Այսրկովկասում Ռուսաստանի ամրապնդման հարցում, այժմ վերածվել էր ինքնուրույն գործոնի և, պարզվում է, ուղղակիորեն խոչընդոտում էր ռուսական ազգային շահերին, ռուսական կապիտալի առաջխաղացմանը:

Ուսումնասիրելով Բաքվում տիրող իրավիճակը՝ Մակարովը շարունակում է. «Կազմելով քաղաքային բնակչության կորիզը և իրենց ձեռքում պահելով ամբողջ առևտուրը, նույնիսկ ավելին կասեմ՝ երկրամասի ամբողջ տնտեսական ճակատագիրը՝ հայերը նախանձախնդրորեն պաշտպանում են իրենց դիրքերը՝ աշխատելով հնարավորին չափ ամրապնդել ներկա իրադրությունը:

Հայ փողատերը Անդրկովկասի համար նույնն է, ինչ հրեա միկլիտանը արևմտյան նահանգներում. տարբերությունը լոկ այն է, որ միկլիտանի կողմից թալանված գյուղացին իրեն հարբեցողության է տալիս, իսկ հայի կողմից թալանված թաթարը դառնում է

¹ А. Макаров, Закавказье в торговом отношении, М., 1884г., стр. 175. Ռուս. թարգ. հեղ.:

² Նշվ. աշխ. էջ 161: Ռուս. թարգ. հեղ.:

ավագակ»¹:

Այս մեջբերման մեջ երկու ուշագրավ պահ կա: Նախ, հայն ու հրեան դրվում են միևնույն հարթության վրա. եթե նկատի ունենանք այդ ժամանակվա ռուսական հակահրեականությունը (ի դեպ, ըստ մեզ, նույնպես թելադրված տնտեսական դրդապատճառներով), ապա պարզ էր, թե Մակարովն ինչ նպատակ էր հետապնդում: Երկրորդ, նա նկատում և ընդունում է ադրբեջանցու ավագակաբարո լինելը, բայց դա բացատրում է... հայի հարստահարմամբ: Սա խիստ կարևոր հանգամանք է, որի կենսունակությունը ստորև կփորձենք պարզել: Կարևոր է հատկապես այն պատճառով, որ անգամ մինչ օրս հայ-ադրբեջանական հակամարտության արմատները ձգտում են մեկնաբանել սոցիալ-դասակարգային մոտեցմամբ կամ, ավելի պարզ ասած, այն բանով, թե, իբր, փոքրամասնություն կազմող հայությունը ճնշել, կեղեքել, հարստահարել է ադրբեջանական բնիկ մեծամասնությանը:

Եվ այսպես, ինչ բան է հարստահարումը և ում էր շահագործում հայը:

Նախ, Բաքվի բնակչության թվաքանակի վերաբերյալ որոշ տվյալներ: 1886թ. այստեղ ապրում էր 37.530 ադրբեջանցի, 24.490 հայ, 21.390 ռուս²: 1891-ին՝ 105.847 բնակիչ, որից ադրբեջանցի՝ 39.508, հայ՝ 25.897, ռուսներ և այլազգիներ՝ 22.693, հրեաներ՝ 402³: 1897-ին՝ 46.255 ադրբեջանցի, 29.099 հայ, 38.965 ռուս: 1914-ին՝ 101.803 մուսուլման (ադրբեջանցի, պարսիկ, լեզգի և այլք), 57.040 հայ, 67.730 ռուս, 1990 վրացի⁴:

Այժմ դիտարկենք բանվորների և նրանց ազգային պատկանելության վերաբերյալ որոշ տվյալներ: **1894թ.** նավթարդյունաբերությունում զբաղվածների տոկոսային հարաբերությունը հետևյալն էր. **հայեր՝ 30%**, ռուսներ՝ 20%, **ադրբեջանցիներ՝ 17%**, լեզգիներ՝ 15%, պարսիկներ՝ 10%, Ռուսաստանի այլ քաղաքներ-

¹Նշվ. աշխ. էջ 175-176: Ռուս. թարգ. հեղ.:

²Բ. Բշխանեան, Վիճակագրական ..., էջ 183:

³Баку и его ..., стр. 67.

⁴Բ. Բշխանեան, Վիճակագրական ..., էջ 183:

րից ժամանակավոր եկածներ՝ 5%, գերմանացիներ՝ 3%: Ծառայողների թվում կային նաև վրացիներ, ֆրանսիացիներ, չեխներ, որոնց թվաքանակը 2-3 տասնյակից չէր անցնում¹:

1898թ. բանվորների և ծառայողների թվաքանակն էր 18.884: Նրանցից **հայեր էին 4783-ը**, պարսիկներ՝ 4048-ը (3606-ը՝ հոր փորող սևագործ բանվոր), **աղբբեջանցիներ՝ 3122-ը**, այլ ազգերի ներկայացուցիչներ՝ 6931-ը: Բոլոր նավթահանքերի և գործարանների վարչական աշխատողներից հայ էին 445-ը (մյուս բոլոր ազգությունների ներկայացուցիչները՝ 357), սևագործ բանվորներ՝ 1877-ը, արհեստանոցների բանվորներ՝ 1472-ը, մեքենաներ սպասարկողներ՝ 785-ը, այլ գործերում զբաղվածներ՝ 204-ը: Հետաքրքիր է, որ բանվորների 23%-ն էր գրագետ, բայց եթե այդ ցուցանիշով ռուսները կազմում էին 65%, **հայերը՝ 41%**, ապա լեզգիները՝ 3%, **աղբբեջանցիները՝ 2%**, պարսիկները՝ նույնպես 2%²:

1907թ. բանվորներ էին 11.618 (25,3%) ռուսներ, **11.217 (24,4%) հայեր**, 22.405 (48,7%) մուսուլմաններ, 708 այլազգիներ, 2778 անհայտներ³:

Ի վերջո, **1913թ.** բանվորների և ծառայողների ընդհանուր թիվն էր 43.073, որից պարսիկներ էին 12.383-ը, ռուսներ՝ 10.701-ը, **հայեր՝ 8969-ը**, լեզգիներ՝ 3954-ը, աղբբեջանցիներ՝ 3937-ը, վրացիներ՝ 371-ը, հրեաներ՝ 337-ը, այլ ազգերի ներկայացուցիչներ՝ 687-ը (1734-ը ծառայողներ էին)⁴:

Այս վիճակագրական տվյալներն անհերքելիորեն ապացուցում են հայի կողմից խեղճ աղբբեջանցուն շահագործելու պնդման կատարյալ սին լինելը, որովհետև բանից պարզվում է, որ եկվոր հայերն ավելի մեծ թվով էին կեղեքվում «անխիղճ» կապիտալիստների (և, անշուշտ, հայերի) կողմից, քան բնիկ աղբբեջանցիները: Եվ, առհասարակ, ի՞նչ շահագործման մասին է

¹ Обзор Бакинской нефтяной промышленности и сведения о нефтяной промышленности в Америке за 1894г., Баку, 1895г., стр. 130.

² Ե. Թոփչեան, Լոյս պատկերագրող օրացոյց հանդես 1904թ., Թիֆլիս, 1903թ., էջ 216-217:

³ Обзор Бакинской нефтяной промышленности за 1907г., т. I, Баку, 1908г., стр. 4.

⁴ Обзор ... за 1913г., стр. 114.

խոսքը. կապիտալիստական հասարակարգում կա երկու հիմնական դաս՝ գործատու ու գործավոր, և «շահագործումը» կատարվում է կամավորության սկզբունքով՝ առանց ռասայական կամ կրոնական խտրականության: Բայց ծագում է մեկ այլ հարց՝ ինչո՞ւ պիտի զբաղվեր աշխատել չսիրող, աշխատելու անընդունակ աղբբեջանցին: Միայն մեկ բանով՝ կուտակեր նախանձ, չարություն, ատելություն և այլընտրանք տնկեր ուրիշի աշխատանքի արդյունքին: Ահա սա՛ էր աղբբեջանցու էությունը, սա՛ էր նրա ավագակարգության հիմնական պատճառը:

Մակայն առաջ չընկնենք, հետ գնանք և մեր շարադրանքը շարունակենք այն կետից, որտեղից շեղվել էինք:

Իրականում Ջուբովը, Մակարովը և նրանց նման մի շարք ուրիշներ արտահայտում էին առաջին հայացքից թվացյալ մասնավոր կարծիքներ, բայց իրականում ձևավորում էին մի մոտեցում, որը ռուսական իշխանությունն աստիճանաբար որդեգրեց հայերի նկատմամբ: Իրեն հպատակ այն օգտակար տարրը, որն սկզբնական շրջանում Անդրկովկասում Ռուսաստանի ներկայության ամրապնդման խնդրում ուներ խրախուսելի դերակատարություն, պարզվում է՝ վերածվել էր ինքնուրույն գործոնի, խոչընդոտի և ուղղակիորեն հակասում էր ռուսական ազգային շահերին: Ինչպե՞ս թե, իրենք նվաճեին Անդրկովկասը, և ամբողջ տնտեսական լծակները հայտնվեին հայերի ձեռքում: Անհրաժեշտ էր զսպաշապիկ հագցնել՝ հայերին դուրս մղել շուկայից և տեղ բացել ռուսական ազգային կապիտալի համար: Մա վերածվեց պետական չհայտարարված քաղաքականության և սկսեց մեթոդաբար կենսագործվել:

Այսպես, XIXդ. վերջին-XXդ. սկզբին Անդրկովկասում հստակորեն ուրվագծվեց մի իրողություն՝ ցարական Ռուսաստանի և նրա հպատակ հայության շահերի անհամապատասխանություն: Այդ ներհակության նախապատճառը տնտեսական էր, որը բնական անցում կատարեց քաղաքական, ազգային ոլորտներ, ինչի հետևանքով թե՛ հայերը և թե՛ ռուսներն ունենալու էին դաժանա-

գույն կորուստներ, իսկ ձեռք էին բերելու ուրիշները:

Հակասության հիմնական «մեղավորը» հայկական կապիտալն էր, և նրա «մեղքն» այն էր, որ բառի լայն իմաստով հեղափոխական էր: Իրադարձությունների «գլխին կանգնած» Դ.Անանունը իրավացիորեն արձանագրում էր. «Ո՞վ էր այն սկզբնապատճառը, որ շարժում էր առաջացնում միջնադարեան ճահճի մէջ, շարժում և նեխում, կործանարար և շինարար միանգամայն: Դա հայ բուրժուազիան էր, դասակարգ առ այժմ իր մէջ, լոկ տարերային տարութեանների ծնիչ, խուսափող հասարակական ու քաղաքական մտադրացումներից: Նա դասակարգ չէր դարձել իր համար, այսինքն դեռ չէր գիտակցել իր նիւթական ոյժն ու կշիռը, որ կարելի էր փոխանցել քաղաքական արժեքի: Նա միայն կապիտալ դիզող էր և լոկ այդ հանգամանքը յեղափոխիչ կերպարանքով էր անդրադառնում Այսրկովկասի վրայ, թշնամիներ ստեղծելով նրա դէմ»¹:

Առաջին թշնամին, անշուշտ, ցարական իշխանությունն էր: Հայոց կապիտալը ներհյուսվում (ինտեգրվում) էր եվրոպական, համաշխարհային կապիտալին և վերածվում քաղաքակրթական արժեքի, ինչը հակոտնյա էր ցարիզմի էությանը: Բացի այդ, հայ կապիտալիստների ֆինանսական օժանդակությամբ բազմաթիվ ինելահաս, ուշիմ, տաղանդավոր երիտասարդներ բարձրագույն կրթություն էին ստանում Եվրոպայի ու Ռուսաստանի խոշոր կրթական կենտրոններում (միայն Ալ.Մանթաշյանցը ֆինանսավորում էր մի քանի տասնյակ ուսանողների), կրում տեղի միջավայրի ազդեցությունը և վերադառնում քաղաքական-հեղափոխական տրամադրություններով: Հայ կապիտալիստը ծնում էր իր գերեզմանափորին, բայց դա զարգացման բնականոն ընթացքն էր:

Ինչպե՞ս պիտի հակազդեր ցարական իշխանությունը. վարեր *հայահալած* քաղաքականություն: Դրա համար կային բազմաթիվ միջոցներ...

¹Դ.Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918), հտ. Գ, Վենետիկ, 1926թ., էջ 10:

XIXդ. վերջին քառորդում ձևավորվեց պանիսլամիզմը՝ կրոնաքաղաքական մի գաղափարախոսություն, համաձայն որի, իսլամ դավանող բոլոր ժողովուրդները պետք է միավորվեին մեկ պետության մեջ: Դրան հաջորդեց պանթուրքիզմը*, ըստ որի, թուրքական լեզվով խոսող բոլոր մուսուլմաններն, իբր, հանդիսանում էին մեկ ազգ և պիտի միավորվեին մեկ միասնական պետության մեջ՝ Թուրքիայի գլխավորությամբ: Այս տեսությունները կոչված էին *նաս* այն բանին, որ արթնացնեին արևելյան ճահճի ծույլ նիրհի մեջ գտնվող ադրբեջանական ժողովրդին և ներարկեին ազգային նշանակալիության մտայնություն:

Ջարդերից հետո 50 հազար փախստական ապաստան էր գտել Անդրկովկասում, և ահա Գոլիցինը, որ փակել էր բազմաթիվ հայկական դպրոցներ, կրթամշակութային ու բարեգործական հաստատություններ, գրոհ սկսեց այդ խեղճ խլյակների դեմ: 1901թ. նոյեմբերին նա նահանգապետերին ուղղված մի շրջաբերական ուղարկեց, ըստ որի, փախստականներից նրանք, ովքեր ցանկանում էին, կարող էին իրենց հաշվին վերադառնալ Արևմտյան Հայաստան, իսկ ովքեր չէին ցանկանում, պետք է ռուսահպատակություն ընդունեին: Ընդ որում, վերջիններս ենթակա էին զինվորագրության և հողաբաժիններ չէին ստանալու՝ նրանք ու նրանց սերունդներն անշարժ գույք կարող էին ձեռք բերել ռուսահպատակություն ընդունելուց միայն 20 տարի անց: Մա տարածվում էր մինչև 1901թ. փետրվարի 1-ը ներգաղթածների վրա, իսկ դրանից հետո եկածները ենթակա էին արտաքսման:

Արդյունքը եղավ այն, որ հպատակություն ընդունեց փախստականների կեսից պակասը. Թիֆլիսում՝ 494 հոգի, Բաքվում՝ 72 ընտանիքից 52-ը, իսկ մեծ մասը՝ 18.132 հոգի, հպատակության երդում տվեց, բայց հաստատվեց Կարսում, Կաղզվանում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Նախիջևանում, այսինքն՝ բնօրրանին սահմանամերձ գոտում:

Միաժամանակ գրոհը տարածվեց նաև հայոց կապիտալի հանդեպ: Այսպես, Թիֆլիսում գոյություն ուներ Հողային վար-

կային բանկ, որի հիմնադիրները և անդամները ռուս քարձրաստիճան պաշտոնյաները, վրացի իշխաններն ու կալվածատերերն էին: Պետական-իշխանական վերնախավի տնտեսական շահերն արտահայտող այս անձարակ հաստատությունը, որ պրոֆեսիոնալ տեսակետից լիակատար անգոր վիճակում էր Ալ. Մանթաշյանցի Առևտրային բանկի համեմատ, 1902թ. բացեիբաց այսպիսի մի կարծիք հրապարակեց. «Եթե սկզբում հայերի գործունեությունը ճանաչվել է օգտակար, որովհետև նրանք, լինելով Թիֆլիսի նահանգի վրացիներից ավելի եռանդուն ու ձեռներեց, իսկ տեղական մուսուլմանական բնակչությունից ավելի զարգացած, քիչ չեն նպաստել երկրամասի առևտրի և արդյունաբերության բարգավաճմանը, երբ հայերի թիվը հասել է Այսրկովկասի ողջ բնակչության 20 տոկոսին, նրանց գործունեության զարգացումն այլևս չպետք է ցանկալի համարել: Այդ տարրը, լինելով միաձույլ և գործելով միաբան, դրսևորում է շոշափելի գերազանցություն մյուս ժողովուրդների նկատմամբ (ուշադրություն դարձրեք՝ հայությունը «տարր» էր, մյուսները՝ ժողովուրդ - Խ.Դ.) և սպառնում է մոտ ապագայում իր ձեռքում կենտրոնացնել երկրամասի ամբողջ առևտուրն ու արդյունաբերությունը՝ ի վնաս բուն ռուս ազգաբնակչության շահերի, ազգաբնակչություն, որի քանակն Այսրկովկասում 8 անգամ պակաս է հայկականից»¹:

Հակահայկականությանը զուգընթաց, Բաքվում ձևավորվում էր ևս մեկ ուժ, որի հետ հաշվի նստել չէր կարելի. դա բանվորությունն էր: Նավթը մագնիսի պես ձգում ու Բաքու էր բերում մարդկային զանգվածներ, որոնք գալիս էին փող աշխատելու և, եթե ստացվեր, հարստանալու ձգտումով: Նավթատենդով բռնված այդ բազմազգ զանգվածում կրկին աչքի էր ընկնում հայրենի հողից կտրված հայ տարրը: Քանի որ հայապատկան կապիտալը զարգացման առաջամարտիկն էր, «առաջադիմական» էր նաև գրագետ ու Բաքվում կրթվող հայ բանվորությունը: Նա դարձավ այն հենքը, որը պարարտ հող տրամադրեց Եվրոպայում ու Ռու-

¹Դ.Անանուն, Ռուսահայերի..., հտ. Բ, էջ 69:

ասատանի կենտրոնական քաղաքներում սոցիալ-դեմոկրատական, հեղափոխական ուսմունքների կրող դարձած երիտասարդներին՝ հնչակներին, դաշնակցականներին, բոլշևիկներին, մարքսիստներին: Եվ հայ բանվորությունը տրոհվեց, բաժանբաժան եղավ զանազան կուսակցությունների միջև: Մակայն քաղաքական տարբեր ուղղություններին, հոսանքներին հարելը, դասակարգային անջրպետներ առաջացնելը դեռևս չէր նշանակում ազգային պատկանելության մոռացում:

1903թ. հունիսի 12-ին Գոլիցինն արձակեց Հայ Առաքելական եկեղեցու նյութական միջոցների գրավման մասին օրենքը, ինչը հավասար էր ռուսահայերին իսկական պատերազմ հայտարարելուն: Դրա երևութական, հնարածին պատճառն այն էր, թե, իբր, խիստ հարուստ հայ եկեղեցին գաղտնաբար աջակցում էր հեղափոխականներին (1902թ. Ռուսաստանի հայոց եկեղեցիների եկամուտը կազմել էր ընդամենը 110.000ռ., որից Սբ. Էջմիածնի եկամուտը՝ 51.301ռ.¹): Ըստ այդ օրենքի, եկեղեցու անշարժ գույքը պիտի անցներ գյուղատնտեսության ու պետական կալվածքների, իսկ դրամագլուխներն ու եկամուտները՝ ներքին գործերի նախարարությունների տնօրինությանը: Սկսվեց մի գործընթաց, որը նպատակ ուներ գլխատելու մեր ժողովրդի ինքնության միակ խորհրդանիշը՝ եկեղեցին:

Եվ մինչ Խրիմյան Հայրիկ վեհափառը նամակ-խնդրագրեր էր հղում ցարին և ՆԳ նախարար Վ.Պլևեին՝ զուր բացատրելով օրենքի ամբողջ անհեթեթությունը, ժողովուրդը տարերայնորեն ոտքի կանգնեց: Տեղի ունեցան զանգվածային ցույցեր Ալեքսանդրապոլում, Երևանում, Կարսում, Էջմիածնում, Գանձակում, Թիֆլիսում, Ախալքալաքում, Բաթումում, Շուշիում, Նոր Նախիջևանում և այլուր: Եկեղեցու գույքի բռնագրավումն ուղեկցվում էր ժողովրդի ու ոստիկանական ուժերի միջև ծեծկոտուքով, արյունահեղությամբ, անհնազանդների բանտարկություններով և աքսորով:

Բաքվի հայ բանվորությունը, որ 1903թ. ամռանն սկսեց իր

¹Դ.Անանուն, Ռուսահայերի..., հտ. Գ, էջ 43:

ծավալներով աննախադեպ գործադուլային շարժում՝ առաջ քաշելով տնտեսական պահանջներ, միացավ ընդհանուր բողոքին: Մեպտեմբերի 2-ին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գույքի բռնագրավման ժամանակ բաքվահայությունը՝ առանց քաղաքական, սոցիալական, տնտեսական խտրության, միացավ և միակն էր, որ զինված դիմադրություն ցույց տվեց կոզակներին ու ոստիկաններին: Համայնքը տվեց 11 սպանված ու 50 վիրավոր... Բայց եկեղեցու գույքի բռնագրավմանը հակազդելը ակնհայտորեն ցույց տվեց, որ հայ բանվորների ազգային շահը գերակա էր դասակարգային շահից: Դա ցույց տվեց նաև, որ հայ քաղաքական կուսակցությունները, չնայած «սոցիալ-դեմոկրատական միջազգային պատկանելությանը» և միմյանց միջև անողոք հակամարտությանը, էությանմբ ազգային էին:

Չկոտեմբերի 14-ին Թիֆլիսում երեք հնչակյաններ, ինքնագոհության դիմելով, դաշունահարեցին Գոլիցինին: Վերջինս, չնայած ծանր վերքերին, ողջ մնաց: Դրանից օգտվելով՝ վրացի և ադրբեջանցի վերնախավը այցելեց փոխարքային և առողջության բարեմաղթանքների հետ միաժամանակ իր գորակցությունը հայտնեց. *«Դա նշանակում էր նրանց դարձնել սանձարձակ ու ստահակ, որ առաջին հերթին պիտի արտահայտվեին իբրև յարձակումն օրենքի հովանաւորութիւնից զրկւած հայութեան վրայ: Եւ այդ յարձակումն ապագայի երաժշտութիւն չդարձաւ, այլ օրուայ քաղաքականութեան խնդիր: 1905 թւի Փետրուարին կուլտուրական ասպետները ներկեցին իրանց ձեռքերը հայկական արիւնով»*¹:

Ավարտելով Գոլիցինի հայատեցության թեման՝ ասենք, որ նա 1904թ. հունիսի 28-ին հեռացավ և այլևս չվերադարձավ. 1905թ. հունվարի 1-ին պաշտոնից ազատվեց՝ արժանանալով Նիկոլայ II-ի... երախտագիտությանը. *«Կովկասյան երկրամասի օգտին»* գործունեության համար:

Բայց ցարիզմի սևհարյուրյակային պահնորդները նրան դեռ երկար էին հիշելու և ափսոսանք հայտնելու: 1910թ. Սբ. Էջմիած-

¹Նշվ. աշխ., էջ 63:

նի գործը քննող դատախազը այսպիսի ցուցմունք տվեց դատական քննիչին. «Շիտակ և ուղղամիտ պետական գործչի ճիշտ հոտառությամբ հանգուցեալ իշխ. Գոլիցինը հասկանում էր, որ Ռուսաստանը Կովկասում ունի մի ռիսերիս և անհաշտ թշնամի - դա հայերն են, և Կովկասեան արդի փլուզումը ցույց է տալիս, թե ինչ յանցանք գործեց տեղական թուլամիտ ծերունական իշխանութիւնը, հրաժարելով հանգուցեալ կառավարչապետի քաղաքականութիւնից»¹:

Ակնհայտ էր, որ Ռուսական կայսրության բանվորահեղափոխական շարժման «մայրաքաղաքը» Բաքուն էր, որի «քաղաքագլուխները» հայ բանվորներն էին: Որպես ապացույց՝ նշենք մի քանի տվյալ. 1903թ. մարտի 2-ին կայացած ցույցի ժամանակ ձերբակալվեց 18 բանվոր, որից 11-ը՝ հայ, 5-ը՝ ռուս, 2-ը՝ հրեա, ապրիլի 27-ի ցույցում՝ 47 հոգի, որից 34-ը՝ հայ, 10-ը՝ ռուս, 2-ը՝ վրացի, 1-ը՝ հրեա²: Հավելենք նաև, որ ամբողջ հեղափոխական գրականությունը (թոուցիկներ, կոչեր, գրքեր ու գրքույկներ) հրատարակվում էր հայերեն ու ռուսերեն:

Հարց կարող է ծագել՝ հապա ադրբեջանցի բանվորները մասնակցություն չունեի՞ն: Ոչ: Իրենց անգրագիտության պատճառով նրանք զերծ էին հեղափոխական քարոզչությունից և ազգությունից ելնելով՝ ականջալուր էին միմիայն բեկ-աղալար «հայրերին», որոնց հետաքրքրում էր լուկ հողային սեփականությունը: Ահա այս հետամնաց ու խավարամիտ, հեշտ կառավարելի բանվորների ու մանր առևտրականների զանգվածն էլ իշխանությունն սկսեց օգտագործել որպես հակակշիռ: Բաքվում տարածվեցին թուրքերեն թոուցիկներ, թե, իբր, հայերը ցանկանում են ցարին զահրնկեց անել, իրենց միջից թագավոր ընտրել և կմորթեն բոլոր մուսուլմաններին, եթե նրանք իրենց չպաշտպանեն...

Իշխանությունը, ձգտելով ցարիզմի հիմքերը խարխլող դասակարգային պայքարի դեմն առնել, Բաքվում սերմանեց

¹Նշվ. աշխ., էջ 20:

²Նշվ. աշխ., էջ 71:

ազգային-կրոնական հակամարտություն:

1904թ. ադրբեջանցի մանր-մունր նավթարդյունաբերողները՝ իրենց նավթահանքերը պաշտպանելու պատրվակով, իշխանության հովանավորությամբ ստեղծեցին, այսպես կոչված, «դոչիների» սեփական զինված կազմավորումը, ինչին հայ նավթարդյունաբերողները պատասխանեցին «մաուզերիատների» ջոկատների ստեղծմամբ¹: Այսպիսով, Բաքվում ի հայտ եկան ոչ պետական զինված ուժեր:

1904թ. սկսված ռուս-ճապոնական պատերազմն արագացրեց ցարիզմի վախճանը: 1905թ. հունվարի 9-ին Պետերբուրգում գնդակահարվեց բանվորների ցույցը, որը հանգեցրեց հեղափոխության և որն անհապաղ ինքնատիպ արձագանք ունեցավ Բաքվում:

Խոսքը Անդրկովկասով մեկ հայ-թաթարական (իմա՝ հայ-ադրբեջանական) բախումների մասին է, որն սկսվեց Բաքվից: Դրա առիթն ու բուն պատճառները ներկայացնելու համար մենք հիմնվել ենք Դ.Անանունի աշխատության վրա, որը տողատակի ծանոթագրության մեջ նշում է. «Պատմում ենք իբրև ականատես»²: Այսինքն՝ հավաստիությունը կասկածից վեր է:

Բաքվում արդեն ձևավորվել էր ազգամիջյան հարաբերությունների մի իրավիճակ, երբ անհատին հասցված վիրավորանքն ընկալվում էր որպես անպատվություն ամբողջ ազգի հասցեին: Ամեն ինչ սկսվեց այն բանից, որ սպանվեց դաշնակցական ինքնապաշտպանական խմբի պարագլուխ, նորբայազետցի Միսաք Ենգոյանը: Այդ ոճրագործության մեջ կասկածանքով ձերբակալվել էր ադրբեջանցի Ադա-Բալան: 1905թ. հունվարի 12-ին, Պետերբուրգում բանվորների ցույցի գնդակոծությունից երեք օր անց, երկու հայ զինվոր նրան բանտից ուղեկցում են քննիչի մոտ: Ադրբեջանցին փախուստի փորձ է կատարում, և հայ զինվորները նրան գնդակահարում են:

Փետրվարի 6-ին, կիրակի, երբ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկե-

¹ Монополистический капитал..., стр. 702.

² Դ.Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Գ, Վենետիկ, էջ 168:

դեցու բակն ու շրջակայքը լի էին պատարագի եկած հայությամբ, սպանված աղբբեջանցու ազգական, քաղաքի հայտնի ավագակ ու գլխակեր Ադա-Ռիզա Բաբանը փորձում է վրեժ լուծել և կրակում է հայ զինվորներից մեկի վրա: Ամբոխը նրան բռնում է և հանձնում ռուս ոստիկանական պաշտոնյային: Բայց վերջինս փոխանակ ձերբակալվածին տեղամաս տանելու, մի քանի քայլ հետո ազատ է արձակում: Ավագակը հետ է վերադառնում ու նորից հարձակում գործում: Այս անգամ ամբոխը նրան լինչահարում է:

Նույն օրը երեկոյան «հարգված» աղբբեջանցու բազմաթիվ ազգականներն ու համախոհները կոտորում են 40 հայի: Ազգամիջյան ընդհարումը դադարում է միայն փետրվարի 9-ին, երբ հանկարծակիի եկած հայերը՝ Նիկոլ Դումանի գլխավորությամբ, կարողանում են կազմակերպվել և համարժեք պատասխան տալ:

Արդյունքը եղավ այն, որ երեք օրվա ընթացքում՝ փետրվարի 6-9-ը, սպանվեց 224 հայ, 41 աղբբեջանցի և 4 ռուս: Վիրավորվեց 95 հայ, 87 աղբբեջանցի, 38 այլազգի:* Հրկիզվեց 4 տուն, թալանվեց 176 առևտրական հաստատություն, արհեստանոց ու մասնավոր բնակարան, որից 136-ը պատկանում էր հայերին, 30-ը՝ աղբբեջանցիներին, մնացյալը՝ այլ ազգությունների: Ուշագրավ է, որ ոչ ոք չձերբակալվեց ու պատասխանատվության չենթարկվեց, չնայած քաղաքում կար 1223 ռուսական սվին:

Այժմ անդրադառնանք գործն ուսումնասիրած մեկ այլ հեղինակի՝ սենատոր Կուզմինսկուն: Նույն թվականի ապրիլի 13-ին նա կայսեր կարգադրությամբ ժամանում է Բաքու՝ կատարվածը պարզելու և հաշվետվություն ներկայացնելու առաքելությամբ: Ապշահար սենատորն արձանագրում է. «*Չրանք (ջարդերը - Խ.Դ.) ուղեկցվում էին զանգվածային սպանություններով, հրկիզումներով, կողոպուտներով և ի հայտ էին բերում զազանության ու դաժանության այնպիսի դրսևորումներ, որոնք հատուկ են միայն զազազած և ոչնչով չզսպվող ամբոխին*»¹:

¹ Всеподданнейшая записка, содержащая главнейшие выводы отчета о произведенной в 1905 году, по Высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии, СПб, 1905г., стр. 1. Այս աշխատության բոլոր մեջբերումների թարգ. հեղ.:

Ապա սկսում է մանրակրկիտ կերպով, մեթոդաբար խորամուխ լինել ազգամիջյան ընդհարման մեջ: Նախ նկատում է. «*Խանությունների անկումից և ռուսական տիրապետության հաստատումից հետո նրանց (հայերի - Խ.Դ.) դրությունը կտրուկ փոխվեց, նրանք դարձան մի տեսակ միջնորդներ ռուսական իշխանությունների ներկայացուցիչների և նվաճված ցեղի (ադրբեջանցիների - Խ.Դ.) միջև, կարողացան իրենց հանդեպ վստահություն արթնացնել և թույլտվություն ստացան ոչ միայն մասնակցելու զանազան կապալառությունների ու մատակարարումների, այլև ընդունվեցին պետական ծառայության մեջ*¹:

Ապա ավելացնում է. «*...Արտաքնապես նրանց (հայերի և ադրբեջանցիների - Խ.Դ.) կյանքի պայմանները որքան էլ հաշտ թվան, այդուհանդերձ, մուսուլմաններին հատուկ մոլեռանդությունը ու դրամական և առևտրական տեսակետներից նրանց մշտական, ծանր կախվածությունը հայերից շարունակ արթնացնում է փոխադարձ անվստահություն և կոծկված թշնամանք:... Դրամական և առևտրաարդյունաբերական հարաբերությունների ասպարեզում հայերը, որոնք զգալի թվաքանակով դարձել են խոշոր կապիտալիստներ, վերջին տարիներին Բաբվում իշխող դիրք են գրավել և իրենց ազդեցությանն են ենթարկել տեղի մուսուլման բնակչությանը: Դրա հետևանքով ստեղծված նյութական կախվածությունն ու տնտեսական և արդյունաբերական տեսակետից բավականին վառ արտահայտված հարստահարման պարբերական ոտնձգությունները չէին կարող հայերի դեմ չհանգեցնել մուսուլմանների ուժգին չարացածությանը, ինչպես նաև նրանց վճռական ձգտմանը՝ դուրս պրծնելու եկվոր և իրենց այլազգի ու այլադավան հայ բնակչության և տարեցտարի ահագնացող անտանելի լծից*²:

Կուզմինսկու այս մտայնության դրդապատճառը մենք քիչ ուշ ցույց կտանք:

¹Նշվ. աշխ., էջ 4:

²Նշվ. աշխ., էջ 5-6:

Մենատորը շարունակում է. «... Տնտեսական հարաբերությունների ասպարեզում մուսուլմաններն առաջնությունը զիջում են այլ ազգությունների ներկայացուցիչներին, որոնց թվում ականառու տեղը պատկանում է հայերին՝ մուսուլմանների ձեռներեց և, անկասկած, ավելի կիրթ մրցակիցներին: Միակ ասպարեզը, որտեղ մինչ օրս մուսուլմաններն առաջնակարգ դերակատարում ունեն, Բաքվի նահանգի գյուղատնտեսությունն է, միայն այս ասպարեզում է, որ հայերի մասնակցությունը միանգամայն չնչին է և հարկ չկա դրա հետ դրականորեն հաշվի նստել: Հայերը, ինչպես նաև այլ ազգությունների ներկայացուցիչները բացի մուսուլմաններից ու մասամբ ռուսներից, տվյալ նահանգում խմբվում են գլխավորապես քաղաքներում և առհասարակ առևտրական ու արդյունաբերական գործունեության առավել աշխույժ կենտրոններում: Կապիտալների առավելագույն կենտրոնացման ոլորտը դեպի իրեն է ձգում ոչ միայն վաճառականության ներկայացուցիչներին. արդյունաբերությունն ընդհանուր և հատուկ գիտական իմացություն ունեցող մարդկանց կարիք է զգում: Եվ հայերը տեղի արդյունաբերության՝ Բաքվի կյանքի գլխավոր նյարդի կարիքների համար լիուլի տրամադրում են գիտականորեն կրթված անձանց: Դրան զուգահեռ, հարկ է նշել բարձրագույն կրթություն ստացած մուսուլմանների չափազանց սղությունը, մուսուլման բժիշկներն ու ճարտարագետները եզակի են, այնինչ այդպիսի հայ անձինք մի քանի տասնյակ են: Տեղի արդյունահանող ու վերամշակող արդյունաբերության ոլորտում հատուկ գիտական իմացություններ պահանջող համարյա բոլոր պաշտոնները պատկանում են հայերին, ռուսներին, գերմանացիներին և կիրթ ազգությունների այլ ներկայացուցիչներին»¹:

Ահա՛ ճշմարտությունը. մի կողմից ադրբեջանցու ցեղային անլիարժեքությունը, անկրթությունը, թերզարգացածությունը՝ միախառնված գազանաբարո ազրեսիվության, հայի հանդեպ օրգանական մերժողության հետ, մյուս կողմից՝ հայի անուրանալի

¹Նշվ. աշխ., էջ 17:

աստեղծարարությունը, քարից հաց քամելու ընդունակությունը, համախմբվածությունը՝ զուգակցված այն իդեալիստական մոլորության հետ, թե ապրում է ընդհանուր պետությունում:

Սակայն վերադառնանք Բաքվի դեպքերի ժամանակագրությանը:

Նախ, Դ.Անանունը կատարում է մի նուրբ դիտարկում, նկատում է, որ իշխանությունները *«չեզոքանում էին առաջին երեք օրը, որ Ռուսաստանի ջարդերի համար մի խորհրդավոր և բնորոշ ժամանակամիջոց է: Կովոդներն իրենց տխուր արհեստը շարունակում էին մինչև հոգնածություն և ուժերի սպառում: Կովի մակրնթացությանը հաջորդում էր նրա տեղատվությունը, որ ուժերի ու միջոցների հավաքումն էր նոր բախման համար»*¹: Մենք չգիտենք, թե կոտորածի մեխանիզմին քաջածանոթ որ «ականավոր» ուղեղն է եռօրյա ժամկետում չմիջամտելու այս մտքին հանգել, բայց պարզ է, որ 1989թ. փետրվարի 28-ին Սումգայիթում սկսված հայոց սարսափելի ջարդի ժամանակ խորհրդային կենտրոնի կրավորական կեցվածքը այս տխուր «ավանդույթի» շարունակությունն էր:

Բախումից 10 օր անց՝ 1905թ. փետրվարի 18-ին, Բաքվի նորանշանակ գեներալ-նահանգապետ, իշխան Ի.Ամիլխաթրին հրավիրում է հայ, ռուս և ադրբեջանական հասարակայնության ներկայացուցիչներին՝ ցանկանալով պարզել ընդհարման պատճառը: Ռուսներն ու ադրբեջանցիները մեղքն ամբողջովին բարդում են Դաշնակցության վրա, ինչին հակազդում են հայոց պատվիրակները: «Կասպից ընկերակցության» նախագահ Պողոս Ղուկասյանը, «Արամազդ» նավթարդյունաբերական ընկերության վարչության նախագահ, ճարտարագետ Աստվածատուր Վաչյանցը և Բորսայական կոմիտեի նախագահ, ճարտարագետ Ստեփան Թադիանոսյանը բացատրում են, որ ՀՅԴ գործունեությունն ուղղված է Թուրքիայի դեմ, Բաքվում Դաշնակցությունը զուտ ինքնապաշտպանություն է իրականացրել և իրենք չեն պատկերացնում,

¹ Դ.Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Գ, էջ 218:

թե ինչպես կարող են ներագդել այդ կուսակցության վրա:*

Եվ այստեղ դումայի պատգամավոր, նորածիլ ադրբեջանական կապիտալի ազդեցիկ ներկայացուցիչ, տնատեր Իսրաֆիլ Հաջիևը արտաբերում է մոզական խոսքեր, որոնք անչափ կարևոր են բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ըմբռնել հայադրբեջանական փոխհարաբերությունների թե՛ անցյալի, թե՛ ներկայիս էությունը: Նա հայտարարում է. «*Ի՞նչ արժեք ունի, թե հայերը վստահեցնում են, որ հեղափոխականները գործում են Թուրքիայի դեմ, այդ Թուրքիան հարազատ է Այսրկովկասի մահմեդականներին. ով գործում է Թուրքիայի դեմ՝ նա բնականաբար և Այսրկովկասի թուրքերի թշնամին է*»¹: Ահա՛ պատճառների պատճառը, ահա՛ պանիսլամիզմի դրսևորումը: Ադրբեջանցիները հրապարակավ իրենց հայտարարում էին Թուրքիայի դաշնակից, թուրքերի ցեղակից, այն թուրքերի, որոնք 1894-1896թթ. սրի էին քաշել հարյուր հազարավոր հայերի:

Միաժամանակ, հակահայկականության դրոշի ներքո, ադրբեջանցիները զորակցություն էին հայտնում ցարական իշխանությանը՝ ընդդեմ հայության, որը միակ խոչընդոտն էր պանիսլամիզմի գործնական իրականացման ճանապարհին: Պատահական չէ, որ Կուզմինսկուն այցելած ադրբեջանցիները նրան ասել էին. «*...Թող զարգացնեն իրենց ուժերը բոլոր ուղղություններով, բայց և դրա մեջ արգելք չկանգնեն մուսուլմաններին, թող չձգտեն երկրի բարեկեցության բացառական տիրապետության, ինչպես և մուսուլմանների հոգևոր և տնտեսական ստրկացման*»²: Իրենց ազգային անլիարժեքության այս հնարածին «բացատրությունը», ինչպես արդեն ընթերցողը տեսավ, տեղ գտավ սենատորի հաշվետվությունում:

Հայությունն ինչպիսի՞ ղիբբորոշում պիտի որդեգրեր, երբ ամեն ինչ պարզ էր, ակնհայտ, որ իշխանության հայաստաց քաղաքականության զինանոցում ի հայտ էր եկել հետամնաց, միջ-

¹Նշվ. աշխ., էջ 233:

²Նշվ. աշխ., էջ 235:

նադարյան վայրենի բնագոյներով ներծծված ադրբեջանական խուժանը: Մի տարր, որն անգիտակցաբար ներարկվելով պանիսլամիզմի գաղափարախոսությամբ, հրահրվելով ցարական իշխանության և բեկ-աղալարական դուրսպրծուկների կողմից՝ իր բոլոր դժբախտությունների, ազգեական թերարժեքության միակ պատճառ համարում էր հայերին:

Բաքվի զինված բախումն արագորեն տարածվեց Անդրկովկասով մեկ: Արդեն փետրվարի 20-ին ընդհարում տեղի ունեցավ **Շրևանում**, որը կրկնվեց մայիսի 23-25-ին, սեպտեմբերի 18-ին, 1906թ. մայիսի 27-ին, հունիսի 8-9-ին: Հայ-ադրբեջանական բախումների ժամանակագրությունն ու աշխարհագրությունը այսպիսին էր. մայիսի 10-ին՝ **Նախիջևանում**, ապա՝ գավառներում (ինչի հետևանքով 15 հայկական գյուղեր հիմնովին ավերվեցին, 10-ը՝ կիսավերվեց, իսկ 19 գյուղ կորցրեց ունեցվածքի զգալի մասը), **Շուշիում**՝ օգոստոսի 16-30-ին, 1906թ. հուլիսի 12-22-ին, նորից **Բաքվում**՝ օգոստոսի 20-25-ին (ադրբեջանցիները հրկիզեցին 1894 նավթարուրգ, և կառավարությունը 20 մլն ռ. վարկ տրամադրեց՝ կորուստը վերականգնելու համար), **Գանձակում**՝ նոյեմբերի 18-23-ին, **Թիֆլիսում**՝ նոյեմբերի 22-28-ին:

Ո՞րն էր բախումների հանրագումարը: Մոտավոր տվյալներով՝ հայերը քաղաքներում տվեցին 400-ից ավելի սպանված, ադրբեջանցիները՝ 300-ից ոչ պակաս, գյուղական բնակավայրերում զոհվեց 1100 հայ, ադրբեջանցի՝ 1300: Սակայն քանի որ հայությունն ավելի ունևոր էր, նրա նյութական կորուստն անհամեմատ մեծ էր՝ ավելի քան 43 մլն ռուբլի:

1905թ. ռուսական հեղափոխությունը ցարին ստիպեց զիջումների գնալ: Դրանցից մեկն այն էր, որ փետրվարի 26-ին վերականգնվեց Կովկասի փոխարքայությունը, Գուլիցինի փոխարեն նշանակվեց Ի.Վորոնցով-Դաշկովը, իսկ օգոստոսի 1-ի Սենատի որոշմամբ չեղյալ հայտարարվեց հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին 1903թ. օրենքը: (Մեր խեղճ ժողովուրդը դա կապեց նոր փոխարքայի «բարեհաճության» հետ, և բազմաթիվ

նորածին արու գավակներ կոչվեցին նրա անունով՝ **Վորոնցո**):

Ցարական բարեփոխումները մասնիկն էին «ձնհալի», որի նպատակն էր կասեցնել դրդոցով գառնիվայր գլորվող, տարեց-տարի թափ հավաքող հեղափոխության վիթխարի ձնագնդի ընթացքը: Ձուգակցվելով աշխարհում կուտակվող իրադարձությունների հետ՝ այդ ընթացքն այնքան արագ էր, որ մեր շարադրանքին էլ է ստիպում դրվագային-արձանագրային լինել:

1905-1907թթ. հեղափոխությունը բաքվահայ կապիտալիստներին առանձնապես չանհանգստացրեց, նրանք չզիջեցին իրենց առաջնային դիրքերը նավթարդյունաբերությունում, առևտրում, արտադրական այլ ճյուղերում, սակայն «ապահովության» համար սկսեցին դրամագլուխներ ներդնել անշարժ գույքի մեջ և ֆինանսավարկային ոլորտում:

Ցանկանալով պատնեջ դնել գործադուլային շարժմանը, ինքնապահովվել՝ այլազգի նավթարդյունաբերողները նախաձեռնեցին «Միություն ընդդեմ գործադուլների - Բաքվի նավթարդյունաբերողների փոխօգնության ընկերություն» նոր կազմակերպության հիմնումը: Դժվար է ասել, թե դա ինչ հետևանքների կհանգեցնե՞ր (մի բան ակնհայտ է՝ փողոց կշպրտվեին գործադուլների մասնակցողները), բայց այդ ձեռնարկը խափանվեց այն պատճառով, որ Ալ.Մանթաշյանցի գլխավորությամբ՝ հայ նավթարդյունաբերողները հրաժարվեցին մասնակցել¹: Հրաժարվեց Ալ.Մանթաշյանցը, նա, ով զգալի կորուստներ էր ունեցել, բայց հրաշալի հասկանում էր, որ գործադուլային շարժման մղիչ ուժը իր ազգակիցներն էին:

Հեղափոխության «ձնհալը» արևելահայ բազմաբնույթ, խայտաբղետ քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, մտավորականության մեջ վերաթնացրեց ազգային միասնության գաղափարը, և նրանք հայացքներն ուղղեցին Արևմտյան Հայաստանին:

1908թ. հուլիսին Օսմանյան Թուրքիայում ընդունվեց նոր

¹ Монополистический капитал ..., стр. 714.

սահմանադրություն, ինչը «ձնհալ» էր խոստանում նաև հայությամբ: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին ռուս կալվածատեր, ազգայնամոլ Վ.Պուրիշկևիչը Պետական դումայի ամբիոնից հայտարարեց. «Կովկասում ամենից պահպանողական, ամենից կայուն և հավատարիմ բնակչությունը մուսուլմաններն են: Եթե Կովկասում ռուսական իշխանությունը պիտի հենվի որևէ մեկի վրա՝ դա միայն մուսուլմաններն են, այսինքն այն բնակչությունը, որ Ռուսաստանի վերապրած դառը պահին ապստամբության դրոշ չի պարզել»¹:

1909թ. մարտին Կովկասի «հավատարիմ մուսուլմանների» ավագ ցեղակիցը Ադանայում իրականացրեց հայոց կոտորած, իսկ ինչո՞վ էր զբաղված ռուսական իշխանության «հավատարիմների» դրոշակակիրը՝ Բաքվի ադրբեջանցին: Նա 1911թ. հիմնեց «Մուսավաթ» («Հավասարություն») անմեղ անվամբ կուսակցությունը և սկսեց **սպասել**՝ կաթիլ առ կաթիլ ժողովելով վրեժխնդրությունը, անձպտուն սպասել:

Բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը նոր հույս արթնացրեց հայության մեջ, և Գևորգ Ե կաթողիկոսը 1912թ. նոյեմբերի 10-ի կոնդակով Պողոս Նուբարին նշանակեց Ազգային պատվիրակության՝ ըստ էության, ապագա Հայաստանի կառավարության ղեկավար:

1913թ. Ի.Վորոնցով-Դաշկովը ցարին գրեց. «Ոչ միայն ռուսահայերը չեն ձգտում բաժանելու Ռուսաստանից, այլ նոյնիսկ թուրքահայերը յամսորեն փնտրում են նրա հովանաւորութիւնը, որ արդարութեամբ դատելով պետք է ցոյց տրուի նրանց»²:

1914թ. հուլիսի 15-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի մահակուլ մսադացի մեջ ներքաշվեց 38 պետություն, այդ թվում՝ հայ ժողովուրդը: Հուլիսի 19-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, հուլիսի 21-ին՝ Ֆրանսիային, մեկ օր անց՝ Մեծ Բրիտանիային:

¹ «Кавказский запрос», СПб, 1908г., стр. 7-8.

² Դ. Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Գ, էջ 504:

Հոկտեմբերի 16-ին պատերազմի մեջ մտավ Թուրքիան, և ձևավորվեց մի կողմից՝ Գերմանական, Ավստրո-հունգարական, Օսմանյան կայսրություններից, մյուս կողմից՝ Ռուսական, Բրիտանական կայսրություններից ու Ֆրանսիայից կազմված մի խաչվածք, բայց խաչ հանվեց հայ ժողովուրդը:

Գործող բանակներում կռվում էր ավելի քան 29 մլն մարդ և 74 մլն զորահավաքվածներ: Սպանվեց 10 մլն մարդ, վիրավորվեց ավելի քան 20 միլիոն: Տոկոսային հարաբերությամբ ամենամեծ կորուստն ունեցավ հայ ժողովուրդը, որի 1,5 միլիոն ներկայացուցիչների ցեղասպանության ենթարկեց Թուրքիան: Բայց այդ անմեղ զոհերը տեղ չգտան վիճակագրության մեջ. ո՞վ պիտի հաշվի նստեր հայության հետ, որը պաշտոնապես պատերազմող կողմ չէր ճանաչվել...

Հայոց ցեղասպանությունն ավերեց ժողովրդի նկարագիրը, առաջացրեց բարդություններ, որոնցից մինչ օրս չենք կարողանում ձերբազատվել: Ի՞նչ կարող էր անել հայությունը՝ կամ կռվել ու զոհվել, կամ չկռվել, բայց միևնույն է՝ զոհվել, խոսել ու բողոքել...

Ցանկանալով ռուսական կառավարության ուշադրությունը հրավիրել իրենց տարաբախտ ճակատագրի վրա՝ 1916թ. մայիսի 23-26-ը Պետրոգրադում կազմակերպվեց Համառուսական հայկական համագումարը, որին մասնակցեցին շուրջ 60 բնակավայրերի ավելի քան 150 հեղինակավոր պատվիրակներ, որոնք ներկայացնում էին 97 քաղաքական ու հասարակական կազմակերպություններ: Բաքվահայության անունից, ի թիվս այլոց, հանդես էին գալիս նավթարդյունաբերողներ Պողոս և Աբրահամ Ղուկասյաններն ու նրանց եղբայր *Հակոբը* (ընթերցողը հիշում է, որ մենք խոստացել էինք վերջինիս առանձին անդրադառնալ): Ո՞վ կհավատա, թե այդքան տարաբնույթ կազմակերպությունների մեկուկես հարյուրյակ հայեր կարող էին ինչ-որ միասնական որոշում կայացնել և արդյունքի հասնել: Այն ամենն, ինչ ասվեց այդ համագումարում, նման էր ջարդված ժողովրդի ինքնակորույս գավակների ճիչի, որը պատկերավոր խոսքի չափանիշներով լավագույն

դեպքում արժանի էր տեղ գրավելու համաշխարհային հրապարակախոսության անթուղզիայում, բայց՝ ոչ ավելին¹: Աշխարհամարտի գլխավոր գործող անձ Ռուսաստանը ոչ հնարավորություն, ոչ էլ ցանկություն ուներ ականջալուր լինելու հայերին:

Քաղաքական հակասությունների, սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման, մահ ու ավերի, ընդհանուր ճգնաժամի հետևանքով 1917թ. փետրվարի 23-ին Ռուսաստանում սկսվեց հեղափոխություն, իսկ մարտի 1-ին ստեղծվեց Ժամանակավոր կառավարություն, որը հռչակեց զանազան բարեփոխումներ, այդ թվում՝ ժողովրդավարություն և ազգային ինքնորոշում: Ցարական իշխանությունը տապալվեց, վիթխարի կայսրությունը երերաց ու սկսեց փլուզվել, որի փլատակների տակ ամենից շատ սուժելու էր հայ ժողովուրդը, իսկ շահելու էին նրա հարևանները:

Ընթերցողն, անշուշտ, ուշադրություն դարձրել է, որ մենք մինչ հիմա ոչ մի բառ չենք ասել մի հիմնական ուժի մասին, որի անվանումն է *բոլշևիզմ*: Մարդկության պատմության մեջ առաջին անգամ ի հայտ եկավ մի քաղաքական հանրակցություն, որի համար բացարձակապես նշանակություն չունեին ազգային պատկանելությունը և որը բաղկացած լինելով ամենատարբեր ազգերի ներկայացուցիչներից՝ առաջ քաշեց դասակարգային շահը և համաշխարհային հեղափոխության գաղափարը: Դա մարդկային նոր ցեղատեսակ էր, որը հաստատելու էր իր իշխանությունը: Մեր շարադրանքն այսուհետ կշարունակվի այդ տեսակի ուղեկցությամբ:

1917թ. փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում ստեղծեց միանգամայն նոր իրավիճակ, որն իր անմիջական անդրադարձն ունեցավ Անդրկովկասում. *երկրամասում տարածքային հարցը դարձավ գերիշխող*, և իրադարձությունները սրընթաց զարգացում ապրեցին:

Նախ, գրեթե միանգամից ակնհայտ դարձան հայության խո-

¹ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Ա.Վիրաբյան, Գ.Ավագյան, Ռ.Գրիգորյան, Ա.Կիրիմյան), Ե., 2004թ., 135-147:

ցելիությունը և դիրքերի թուլությունը, ինչը դիպուկ բնորոշեց սոցիալ-դեմոկրատ Բ.Իշխանյանը. «...Հայերը միակն են Անդրկովկասի տեղական ժողովուրդների մեջ, որոնք թվական բաժանումների և տերիտորիական գրվածութեան վերաբերմամբ ամենաանպաստ պատկերն են ներկայացնում. աննպաստ ամենից առաջ ազգային-հասարակական համախմբման և ազգային-կուլտուրական առաջադիմութեան շահերի տեսակետից: Իսկ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի արդի հաղթական մոմենտին այդ գրվածութիւնը աննպաստ է նաև քաղաքացիական իրավունքների պաշտպանութեան և քաղաքական ծանրակշիռ պրօբլեմների հաջողակ լուծման տեսակետից»¹:

Ասվածի իմաստը հետևյալն էր: Ռուսական իշխանությունը հայության բնօրրան Արևելյան Հայաստանը կամ ավելի ստույգ՝ Երևանի նահանգը, տնտեսապես զարգացնելու մտադրություն չունեք, երկար տարիներ նա այստեղ ֆինանսատնտեսական ներդրումներ չէր կատարում, և պատճառը զուտ ռազմաքաղաքական էր: Արևելյան Հայաստանը մի տարածք էր, բուֆերային գոտի, որը ռուս-թուրքական կանխահաս առճակատման ժամանակ կվերածվեր ռազմական գործողությունների թատերաբեմի, հետևաբար ներդրումներ կատարելու կամ տնտեսական առաջընթաց ապահովելու իմաստ չկար: Ռուսաստանի համար տնտեսական տեսակետից շահավետ էին Թիֆլիսն ու Բաքուն: Դա հայությանն ստիպել էր սփռվել, տարրալուծվել ամբողջ Անդրկովկասի մեջ, ավելին՝ գրոյից ստեղծել Թիֆլիս* ու Բաքու և ապրելով ընդհանուր պետության մեջ՝ մոլորություն ունենալ, թե *իր ստեղծածը իրենն էր*: (Պատահական չէ, որ 1917թ. հոկտեմբերի 6-ին, Թիֆլիսում կայացած համահայկական համագումարի ժամանակ, Արամայիս Երզնկյանը* հուզված բացականչում էր. «Ո՞ւր է Բազվի և Թիֆլիսի խնդիրը: Ձեր լռությամբ ասում ենք, թե Բազուն թողնում ենք թուրքերին, իսկ Թիֆլիսը՝ Վրաստանին: Ո՞ւմ անունից եք այդ պահանջը դուք դնում, ո՞ր հայ ժողովուրդն է այդ իրավունքը ձեզ

¹ Բ.Իշխանեան, Վիճակագրական ..., էջ 73:

տվել: Դեմոկրատիան չի կարող հանդուրժել, որ Բազուն ու Թիֆլիսը լինեն այս կամ այն ազգի, նրանք պիտի լինեն միջազգային: Այդ է դեմոկրատիայի պահանջը, իսկ այդ անել կարող ենք, եթե կանգնենք կանտոնալ տեսակետի վրա»¹):

Սակայն Ժամանակավոր կառավարության հռչակած ազգային ինքնորոշման սկզբունքը, ըստ էության՝ ապահարզանի կոչը, առաջին հերթին ենթադրում էր հողային, տարածքային հարցի լուծում:

Դա Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդներին ստիպեց ինքնակազմակերպվել և գործի անցնել: Ադրբեջանցիները 1917թ. ապրիլին ստեղծեցին իրենց Ազգային խորհուրդը, որի զինված բազուկը Ելիզավետպոլում բանակած «Վայրենի դիվիզիան» էր:

Սեպտեմբերի 29-հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում կայացած համագումարում հայերն ստեղծեցին 35 հոգուց բաղկացած օրենսդիր մարմին՝ Ազգային ժողով և 15 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ Ազգային խորհուրդ: Աշնանն արդեն գոյություն ուներ հայկական զինվորական անկուսակցական մի միություն, որի ջանքերով նոյեմբերի 12-ին կազմակերպվեց Հայկական կորպուսը՝ զեներալ Նազարբեկյանի գլխավորությամբ: Նոյեմբերի 21-ին Երևանում հրավիրվեց հայ գորականների համագումար (մասնակցեց 121 պատգամավոր՝ 68 սպա, 45 զինվոր, 8 բժիշկ), ինչի արդյունքում հայոց օրենսդիր և գործադիր մարմիններն ունեցան իրենց զինուժը:

Վրացիներն իրենց Ազգային խորհուրդը հիմնեցին նոյեմբերի 19-ին:

Հողային հարցը ի դերն հանեց բոլոր թաքուն հակասությունները: Հայոց առաջատար քաղաքական ուժը՝ Դաշնակցությունը, առաջադրեց մի ծրագիր, որը համահունչ էր Ռուսաստանի շահերին և լայն իմաստով փոխզիջումային էր. Բաքվի ու Թիֆլիսի նահանգները թողնվում էին ադրբեջանցիներին ու վրացիներին (չնայած մի քանի հարյուր հազար հայ ազգաբնակչության

¹ Համահայկական խորհրդակցություններ ..., էջ 199:

անկայությանը. այստեղից էլ անհամաձայնությունները այլ կուսակցությունների հետ), բայց հայապատկան էին ճանաչվում հայահոծ զանգվածներով տարածքները: Դրան կտրականապես դեմ էին ադրբեջանցիները. ԱՇեյխ-Ուլ-Իսլամովի ծրագրով՝ անասնապահ ադրբեջանցին կարիք ուներ արոտատեղիների և, ոչ ավել, ոչ պակաս, ադրբեջանական պիտի լինեին բոլոր այդպիսի տարածքները (բոլշևիկների շնորհիվ նրանք հիմնականում կարողացան կենսագործել իրենց նպատակները): Վրացիները, չնայած չէին ցանկանում զիջումներ անել Լոռվա և Ախալքալաքի հարցում, բայց հայերի հետ ընդհանուր հայտարարի եկան:

Անդրկովկասի սահմանաբաժանման խնդիրը քննարկվեց Ժամանակավոր կառավարության տեղական մարմնի՝ Հատուկ կոմիտեի հանձնաժողովում, բայց քանի որ ադրբեջանցիները դեմ եղան՝ այն լուծում չստացավ:

Ինչպես նշում է Դ.Անանունը. «Վարչական բաժանումների շուրջը ստեղծված հայ-թուրքական յարաբերությունները կարելի է նմանեցնել ընտանեկան բաժանման հետ, երբ եղբայրներից մեկը (ներկայ դեպքում հայը) կամենում է առանձին օջախի տեղ դառնալ, իսկ միւսը խոչընդոտներ է յարուցանում դրա դեմ, կամ եթե տալիս է իր համաձայնությունը՝ ապա այն պայմանաւորում է այնպիսի հանգամանքներով՝ որ եղբայրը միշտ մնայ անհրապոյր խրճիթի բնակիչ»¹:

Հոկտեմբերի 25-ին «ժողովուրդների առաջնորդը» Պետրոգրադում իրականացրեց բոլշևիկյան հեղաշրջում, ինչի հետևանքով սկսվեց քաղաքացիական պատերազմ, և Ռուսաստանը հայտնվեց մի իրավիճակում, որը կարելի է բնութագրել երկու բառով՝ *լիակատար քաոս*:

Հոկտեմբերի 26-ին հռչակվեց «Խաղաղության մասին դեկրետը», և պատերազմից հոգնած զինվորներն սկսեցին զանգվածաբար լքել ռազմաճակատները: Գերմանիայի մտադրությունն իրականացավ:

¹ Դ.Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Գ, էջ 646:

Հոկտեմբերի 27-ին բուլշևիկների Բաքվի կոմիտեն՝ Ստ.Շահումյանի գլխավորությամբ, չկարողացավ օրենսդրական ճանապարհով իշխանության անցնել, Բայց ոտքի հանեց Բանվորներին ու զինվորներին և նոյեմբերի 2-ին հռչակեց Անդրկովկասում առաջին խորհրդային հանրապետության ստեղծումը:

Դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքվեց զինադադար, և ռուսները թողեցին ռազմաճակատը: Առիթից օգտվելով, վիստացող թուրք գործակալների ու լրտեսների թելադրանքով՝ ադրբեջանցիները Շամխոր, Ելիզավետպոլ, Եվլախ և մյուս կայսրանները վերածեցին թակարդների: Տուն դարձող ռուս զինվորներով գնացքները կանգնեցվում էին, և ադրբեջանական խուժանը պահանջում էր զենքն ու զինամթերքը թողնել: Այդ ձևով ադրբեջանցիներին հաջողվեց մինչև ատամները զինվել և ձեռնամուխ լինել Մեծ Թուրան ստեղծելու գաղափարի իրականացմանը: Գաղափար, որին խոչընդոտում էր մի «տարր»՝ բնաջնջման ենթակա հայ ժողովուրդը:

Անդրկովկասը ոտք դրեց 1918 թվական: Մի տարեթիվ, որն արևելահայության համար դառնալու էր պարտությունների ու հաղթանակների, կորուստների ու նվաճումների, ցեղասպանության ու վերապրումի խորհրդանիշ:

Մի տարեթիվ, որը ծնեց ազգամիջյան հակամարտություն, ինչի լուծումով հայությունն զբաղված է այսօր:

ՎԱՍՆ ԲԱՔՎԱՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ

Ստորև կշարադրենք մի ցեղասպանության պատմություն, որ իրականացրել են ադրբեջանցիներն ու թուրքերը և որը Մեծ եղեռնի ուղղակի շարունակությունն էր:

Դա անելու համար մեծի մասամբ հիմնվել ենք երկու անվիճարկելի սկզբնաղբյուրների վրա. մեկը 2003թ. ՀՀ Ազգային արխիվի լույս ընծայած «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու» գիրքն է (հրատարակության հովանավոր՝ ՀՀ նախագահի տիկին Բ.Քոչարյան, խմբագիր՝ Ա.Վիրաբյան, կազմողներ՝ Ս.Միրզոյան, Ա.Ղազիյան), մյուսը՝ Բաքվի Հայոց ազգային խորհրդի քարտուղար, խորհրդին առընթեր հարցաթերթիկային հանձնաժողովի նախագահ Բախշի Իշխանյանի 1920թ. Թիֆլիսում հայերեն և ռուսերեն հրատարակած «Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերեան անցքերի 1918թ.» վիճակագրական աշխատությունն է:

Նախքան 1918թ. սեպտեմբեր հասնելը, հարկ է պատկերացում կազմել Ռուսաստանում և մասնավորապես Անդրկովկասում տիրող իրավիճակի մասին, քանզի չի կարելի երևույթը դիտարկել իրադարձությունների ընդհանուր ուղեծրից դուրս:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո, 1917թ. նոյեմբերի 15-ին, Թիֆլիսում Ե.Գեգեչկորիի գլխավորությամբ կազմավորվեց Անդրկովկասյան կոմիսարիատ՝ գործադիր մի մարմին, որի նպատակն էր պահպանել երկրամասի ինքնուրույնությունն ու ամբողջականությունը: Դա մի փորձ էր՝ ստեղծելու Անդրկովկասյան պետություն, և դժվար է ասել զարգացումներն ինչ ընթացք կստանային, եթե ադրբեջանցիները չընթանային «պետական դաւաճա-

նի շաւղով»¹:

Գերմանիայի կողմից ռուս իրականության մեջ ներդրված Վ.Լենինը պետք է արդարացներ հույսերը, և նա արագորեն սկսեց «հատույց» տալ: 1917թ. դեկտեմբերի 2-ին Բրեստում զինադադար կնքվեց Խորհրդային Ռուսաստանի և Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի միջև: Ռուսաստանը դուրս եկավ Անտանտից և դեկտեմբերի 9-ին սկսեց խաղաղության շուրջ բանակցություններ վարել: Ստանալով «դիրքային առավելություն»՝ հակաանտանտյան դաշինքն ակտիվացավ, այդ թվում և՛ Թուրքիայի կրտսեր եղբայր ադրբեջանցին:

Արդեն 1918թ. հունվարի կեսերին հազարավոր ադրբեջանցիների զինյալ հրոսակախմբեր Թիֆլիսի ու Ելիզավետպոլի միջև ընկած երկաթգծի հատվածում հարձակումներ իրականացրին ռուսական զորամասերի վրա, գազանաբար սպանեցին բազմաթիվ ռուս զինվորների և խլեցին 15 հազար հրացան, 70 գնդացի, ավելի քան 20 հրանոթ ու վիթխարի քանակությամբ ռազմական հանդերձանք: Կտրեցին նաև Բաքու-Ելիզավետպոլ երկաթգիծը և սկսեցին մեթոդաբար ոչնչացնել հայ ուղևորներին, հատկապես՝ ռազմաճակատներից վերադարձող զինվորականներին: Ռուսական զորամասերի հետ բախումներում հաջողությունների հասնելով, ավելի ու ավելի համարձակություն ձեռք բերելով՝ ադրբեջանցիները Ելիզավետպոլում ու Բաքվի նահանգի գերակշիռ մասում իշխանությունը նվաճեցին:

Խախտելով Երզնկայում կնքված զինադադարը՝ Թուրքիան 7 հետևակային դիվիզիաներով (շուրջ 25 հազ. մարդ, զլխավոր հրամանատար՝ Մեհմեդ Վեհիբ-փաշա) լայնածավալ հարձակում սկսեց Երզրումի, Վանի և Սև ծովի ուղղություններով: Նույն օրը նրանք գրավեցին Երզնկան, իսկ փետրվարի 11-ին՝ Տրապիզոնը:

Փետրվարի 18-ին ավստրո-գերմանական զորքերը հարձակում ձեռնարկեցին ամբողջ ռազմաճակատի երկայնքով, իսկ փետրվարի 23-ին բոլշևիկյան իշխանությանը ներկայացվեց վերջ-

¹Գ.Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Գ, էջ 674:

նագիր, որով վիթխարի տարածքներ պիտի անցնեին Գերմանիային ու նրա դաշնակիցներին: Նույն օրը լույս փետրվարի 24-ի գիշերը բոլշևիկները որոշում կայացրին՝ անհապաղ ընդունել վերջնագրի պահանջները, և մարտի 3-ին ստորագրվեց Բրեստի ստորագուցիչ դաշնագիրը:

Ճիշտ այդ նույն ժամանակ Բաքվում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք իրենց անջինջ կնիքն էին թողնելու հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների հետագա ընթացքի վրա:

Քաղաքում իշխանությունը թե՛ պաշտոնապես, թե՛ փաստացիորեն պատկանում էր բոլշևիկներին՝ Ստ.Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունային: Մենք արդեն ասել ենք, որ բոլշևիկությունն էությամբ ապագային, դասակարգային պայքարի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների վրա հիմնված երևույթ էր: Պատահական չէ, որ կոմունայի ղեկավար կազմի մեջ մտնում էին ինչպես հայեր (Ղորղանյան, Կարինյան, Հովսեփյան, Ավագյան, Ամիրյան, Բորյան, Միկոյան, Ստամբուլցյան, Աղամիրյան, Կոստանդյան), ռուսներ (Ֆիոլետով, Կոզանով, Ա.Բոգդանով, Ս.Բոգդանով, Սոլնցև, Միշնե, Մետակսա, Ջևին, Կոլեսնիկովա, Մալիգին, Պետրով, Պոլուխին, Բերգ, Գաբիշև, Բասին, Սուխարցև), վրացիներ (Ջափարիձե, Նիկոլաշվիլի), այնպես էլ ադրբեջանցիներ (Ազիզբեկով, Նարիմանով, Վեզիրով):

Կոմունան ուներ իր զինված ուժերը՝ Կասպից ծովի ռազմական նավատորմ, ավիացիոն գունդ, հրետանային ու հետևակային զորամասեր, որոնց հրամանատարն էր... ցարական զեներամայոր *Հակոբ Գերասիմի Բագրատունին** (1878-1943թթ.): Այժմ քիչ մանրամասն ենք այս մարդու մասին, որովհետև ցանկանում ենք մեր ժողովրդին «վերադարձնել» նրա հերթական անարդարացիորեն մոռացության մատնված զավակին:

Մինչ ընթանում էին լարված բանակցությունները, Պետրոգրադից Բաքու ժամանեց գեներալ Հ.Բագրատունին: Նա ծնվել էր Ախալցխայում, ժառանգական ազնվականի ընտանիքում: Ավարտելով Կիևի ռազմական ուսումնարանը, գլխավոր շտաբի

Նիկոլայան ակադեմիան՝ 1900-1904թթ. հետախուզական աշխատանք էր կատարել Պարսկաստանում, 1904-1905թթ. մասնակցել էր ռուս-ճապոնական պատերազմին, 1908-1914թթ. ծառայել էր Թուրքեստանի ռազմական շրջանում, եղել այդ շրջանի շտաբի 4-րդ (հետախուզական) բաժնի պետ, գիտառազմական և հետախուզական գաղտնի առաջադրանքներ կատարել Սոնդոլիայում, Տիբեթում, Կորեայում, Աֆղանստանում, Միջին Ասիայում: Հ.Բագրատունին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել էր Հարավարևմտյան և Արևմտյան ռազմաճակատներում, եղել էր 1916թ. ավստրո-գերմանական ճակատի նշանավոր ճեղքումն իրականացրած գեներալ Ա.Բրուսիլովի 8-րդ բանակի շտաբի պետը: 1917թ. հունիսի 15-ից փոխադրվել էր գլխավոր շտաբ, արժանացել գեներալ-մայորի կոչման, իսկ հոկտեմբերի 25-ին նշանակվել Պետրոգրադի ռազմական շրջանի գլխավոր հրամանատար: Ժամանակավոր կառավարության տապալումից հետո՝ բոլշևիկները նրան ձերբակալեցին, երեք ամիս բանտարկված պահեցին, բայց գնահատելով զինվորականի անուրանալի պրոֆեսիոնալիզմը՝ ազատ արձակեցին, և Լենինի հանձնարարությամբ Հ.Բագրատունին ճանապարհվեց Բաքու ու ստանձնեց Կոմունայի զինված ուժերի հրամանատարությունը¹:

Բաքվում մյուս իրական ուժը Հայոց ազգային խորհուրդն էր, որը հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնության առաջնորդն էր: Նրա իրավասության ներքո էին եկեղեցին ու Մարդասիրական ընկերությունը, նրան էին ականջալուր լինում հայոց կապիտալի, մտավորականության ներկայացուցիչները, բոլոր նրանք, ովքեր ներքաշված չէին դասակարգային կամ քաղաքական պայքարի մեջ:

Ազգային խորհրդի պատվավոր նախագահն էր Շամախվո և Բաքվի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Վարդագարյանը: Կարդալով նրա ստորագրությամբ բազմաթիվ փաստաթղթեր՝ մեզ զարմացնում էր այդ մարդու տոկունությունը, աննկուն կամքը, և անպատասխան էր մնում մի հարց՝ ինչպե՞ս է հոգևոր հայրը

¹ Ե.Գեղամեանց, Տաճիկները Կովկասում և Բազուի անկումը, Բաքու, 1919թ., էջ 36-38:

դիմացել ու չի խելագարվել՝ սեփական աչքերով տեսնելով իր հոտի ջարդը:

Ազգային խորհրդի նախագահն էր նավթարդյունաբերողների եղբայր Հակոբ Ղուկասյանը: Խորհրդի գործերի կառավարիչն էր... փաստաբան Հակոբ Մանանդյանը: Այո, այո, ապագա ակադեմիկոսը, հայոց գիտական մտքի ամենաականավոր դեմքերից մեկը: Ուսանելով Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի համալսարաններում և ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան, ավարտելով Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը՝ նա վերադառնում է Թիֆլիս ու Հայաստան, սակայն ժամանակը պատրաստ չէր ընդունելու նրա գիտելիքները: Ապրուստի տարրական միջոցներ վաստակելու համար Հ.Մանանդյանը 1909թ. Դորպատի (Տարտու) համալսարանի իրավաբանական ֆակուլտետում էքստերն քննություններ է հանձնում և ստանալով երդվյալ հավատարմատարի կոչում՝ նույն թվականի ամառվանից հաստատվում է Բաքվում, զբաղվում փաստաբանությամբ և մարդավայել կյանքով ապրում: Երբ նայում ես թախծալի աչքերով նրա լուսանկարներին, սկսում ես հասկանալ թախիծն ու խորհել, թե ինչու էր 1923թ. գրած նամակներից մեկում մեր ժողովրդին այսպես որակում. «... որը վիրավոր ու տանջված է, ինչպես ոչ մի այլ ժողովուրդ աշխարհում»¹:

Վերջապես, խորհրդի քարտուղարն էր Բախշի Իշխանյանը, որի անձին ու գործունեությանը կանդրադառնանք համապատասխան տեղում:

Հայոց Ազգային խորհուրդն ուներ իր զինված ուժերը՝ 2-րդ պահեստային հայկական հետևակային գունդը, մեկ հրետանային մարտկոց և խմբապետ Համազասպի (Համազասպ Մրվանձտյան) ջոկատը:

Բաքվի երրորդ իրական ուժն, անշուշտ, ադրբեջանցիներն էին՝ ի դեմս Մուսուլմանական ազգային խորհրդի, «Մուսավաթ» կուսակցության և Վայրի դիվիզիայի:

¹ Լ.Բարսյան, Վ. Հակոբյան, Հակոբ Մանանդյան, Ե., 1974թ., էջ 22:

Հարկ է նշել, որ Բաքվի կոմունայի և ադրբեջանցիների միջև գոյություն ունեին խոր, օրավուր սրվող հակասություններ: Բանն այն է, որ պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ տոգորված, թուրքական լրտեսների ու գործակալների կողմից ուղղորդվող, գերմանա-թուրքական բանակների ռազմական հաջողություններով ոգևորված բեկ-աղալարական խոշոր հողատիրական վերնախավի համար բոլշևիկներն ուղղակի սպառնալիք էին: Վերջիններս ոչ միայն խոստանում էին հողը գյուղացուն տալ, այլև ստեղծում էին մի նոր պետականություն, որի գերիշխանությանը կենթարկվեին նաև ադրբեջանցիները:

Դա հանգեցրել էր պայթյունավտանգ իրավիճակի և հղի էր ծանր հետևանքներով, ինչն էլ, ի վերջո, տեղի ունեցավ:

Ռուսական Արևմտյան ռազմաճակատից, Պարսկաստանից ու Հյուսիսային Կովկասից Բաքվում կուտակվել էին շուրջ 10 հազար հայ զինվորներ, որոնց մի մասը ձգտում էր Կովկասյան ռազմաճակատ, իսկ մյուս մասը պարզապես տուն էր ուզում հասնել: Մակայն ճանապարհները կտրված էին, և Բաքու-Թիֆլիս երկաթուղու ամբողջ երկայնքով հայության բացեփրաց սպանդ էր իրականացվում:

Կիսաքաղց, կիսամերկ հայ զինվորների այդ զանգվածին կերակրելու, ապաստան տալու ի վիճակի չէին ոչ Հայոց ազգային խորհուրդը, ոչ Մարդասիրական ընկերությունը: Օգտվելով այս հանգամանքից՝ Բաքվի կոմունան, բարձր աշխատավարձեր առաջարկելով, սկսեց հայ զինվորներին հավաքագրել սեփական զինուժի մեջ: (Բոլշևիկները հայ զինվորներին վճարում էին ամսական 800ռ., գումարած 75-ական ռ.՝ ընտանիքի ամեն անդամի համար և ապահովում էին պարենով¹): Կոմունային որտեղից փող. Լենինը շատ լավ հասկանում էր Բաքվի նավթի արժեքը (Մտ.Շահումյանից հեռագրով նունիսկ նավթ էր պահանջում) և դրամական միջոցներ չէր խնայում: Կիսաքաղց հայ զինվորներից շատերը ստիպված համալրեցին կարմիր բանակի շարքերը:

Տեսնելով օրավուր ահագնացող իրավիճակը՝ Հայոց ազգային

¹ Ե.Գեղամեանց, Տաճիկները Կովկասում ..., էջ 115:

խորհուրդը քանիցս նախագուշացրեց Մուսուլմանական ազգային խորհրդին և «Մուսավաթին», նրանց հորդորելով բացել ճանապարհները և թույլ տալ, որ հայ զինվորների զանգվածն անարգել հեռանա: Սակայն ադրբեջանցիներն ականջալուր չեղան, որովհետև, ըստ նրանց, այդ նույն զինվորները կռվելու էին Կովկասյան ռազմաճակատում՝ թուրքերի դեմ: Բոլոր նախապայմաններն ստեղծվել էին արյունահեղ բախման համար, և առիթը չուշացավ:

1918թ. մարտի սկզբին Լենքորանում պատահաբար ինքնասպան եղավ Հաջի Ջեյնալ-Աբդին Թադիևի որդին՝ մուսուլմանական Վայրի դիվիզիայի սպան: Այդ գործարկավորման 43-48 հոգանոց զինված պահակախումբը դին դրեց Ավետյան եղբայրներին պատկանող «Էվելինա» նավի վրա և տեղափոխեց Բաքու: Սակայն նավի վրա պահակախումբը գնդակահարեց մի քանի բոլշևիկ զինվորների: Երբ Վայրի դիվիզիայի ջոկատը դին հանձնեց Թադիևին (ի դեպ, վերջինիս կինը ռուս էր) և բարձրացավ նավ՝ հետ դառնալու համար, խորհրդային իշխանությունը զինաթափեց նրան: Այս հանգամանքը վրդովմունք առաջացրեց մուսուլմանական բնակչության մեջ, իսկ «Մուսավաթը» հայտարարեց, թե իսկված զենքը պիտի վերադարձվի, այլապես ոտքի կհանի ազգակիցներին: Կոմունայի և «Մուսավաթի» միջև սկսվեցին բանակցություններ, ընդ որում, Հայոց ազգային խորհուրդը կողմերին հաշտեցնելու համար եռանդորեն խաղաղարար միջնորդական դեր էր ստանձնել: Ավելին, Ազգային խորհուրդն առաջարկեց իսլամ հրացանների փոխարեն իրեն պատկանող զենքը տալ, միայն թե վերջ դրվի միջադեպին: Սակայն ամեն ինչ զուր անցավ. հակասությունները սկզբունքային արմատներ ունեին, և երկու կողմն էլ անդրդվելի էին:

Գեներալ Հ.Բագրատունին քաղաքի հայկական հատվածը տրոհեց տեղամասերի, նշանակեց դրանց պետեր, սահմանեց հավաքակետեր, ուր հարկ եղած դեպքում պիտի ժողովվեին տեղամասերի զինյալները: Բացի այդ, նա քաղաքի արվարձաններում գործամասերի ու հրետանու համար ընտրեց դիրքեր, որպեսզի ընդհարման դեպքում ռմբակոծվեին շրջակա ադրբեջանական

գյուղերից քաղաք տանող ճանապարհները և կասեցվեր աղբբեջանցիների մուտքը Բաքու:

Ինչպիսի՞ դիրքորոշում որդեգրեց Հայոց ազգային խորհուրդը. այն ոչ մի ցանկություն չունեի միջամտելու կոմունայի և աղբբեջանցիների միջև օրեցօր սպասվող զինված բախմանը: Ավելին, խորհուրդը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որով լիակատար չեզոքություն հռչակեց (ինչի համար, ի դեպ, խորհրդային իշխանությունը մարտի 21-ին Ազգային խորհրդին վերջնագիր ներկայացրեց հայկական գորամիավորումները ցրելու և բուն խորհուրդը լուծարելու պահանջով):

Բոլշևիկյան իշխանության և «Մուսավաթի» միջև բանակցությունների վերջնաժամկետ էր նշանակված մարտի 17-ի երեկոյան ժամը 6-ը: Սակայն չսպասելով այդ ժամկետի ավարտին, ժամը 5-ին աղբբեջանցիները, որոնց շարքերում կային Նարգեն կղզու գերությունից փախած գերմանացի ու թուրք սպաներ և ասկյարներ, իրենք նախահարձակ եղան ու ռազմական գործողություններ սկսեցին:

Աղբբեջանցիների համար արդյունքը ողբալի եղավ: Խորհրդային զինուժը բարիկադներ էր կառուցել, խրամատներ փորել և փողոցները երկայնքով մեկ կրակի տակ էր պահում: Կասպից ծովի նավատորմը ռմբահարեց քաղաքի աղբբեջանական հատվածը, ինչի հետևանքով տարբեր մասերում հրդեհներ բռնկվեցին, ավերվեց նաև մուսուլմանական «Իսմայիլիյե» շենքը, որտեղ գտնվում էր աղբբեջանական շտաբը:

Ձինված ընդհարումը տևեց երկու օր ու գիշեր և ավարտվեց աղբբեջանցիների լիակատար պարտությամբ: «Մուսավաթի» պարագլուխների մեծ մասը փախավ Ելիզավետպոլ, իսկ ոմանք էլ թաքնվեցին քաղաքամերձ աղբբեջանական գյուղերում: Տարբեր տվյալների համաձայն, երկու կողմերի կորուստները այսպիսին էին. աղբբեջանցիներ՝ 700-2000 սպանված, բոլշևիկներ (ռուսներ ու հայեր)՝ 300-1200 հոգի¹:

¹ Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2003թ., էջ 260-263:

Ինչո՞վ էր զբաղված Հայոց ազգային խորհուրդը: Ժամանակակցի աչքերով գուցե տարօրինակ թվա, բայց խորհուրդը... *բոլշևիկներից թաքցրեց, ապաստան տվեց 20 հազար ադրբեջանցու (13 հազարին՝ հասարակական շենքերում, 7 հազարին՝ սեփական տներում)*¹, որոնց թվում էին նաև նավթարդյունաբերողներ Հ.Թադիևը և Շ.Ասադուլանը: Ընդ որում, Ստ.Շահումյանը հաշվեհարդարից փրկեց Բեհբուժ խան Ջիվանշիրին, որը 6 ամիս անց իր «երախտագիտությունն» արտահայտեց հայերին:

Մարտի 27-ին Թադիևը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ (տպագրվել է Թիֆլիսի «Զնամյա տրուդա» թերթի մարտի 29-ի համարում). *«Բաքվում հանդարտություն է տիրում: Երկրամասի բարգավաճման շահերից էլնելով ես անձամբ պարտքս եմ համարում ի լուր ամենքի հայտարարել, որ Բաքվի իրադարձությունները հայ-թաթարական բախումների բնույթ չեն կրել: Կռիվների ամբողջ ընթացքում թաթարները վնաս չեն տվել թաթարական թաղամասերում բնակվող հայերին: Իսկ հայկական հատվածը փրկեց և օթևան տվեց ավելի քան 14.000 մուսուլմանների, որոնց վերադարձրեցին պարսից հյուպատոսի միջոցով: Չայն եմ բարձրացնում հոգուտ ամենուրեք ամեն տեսակ հաշվեհարդարների և թշնամական գործողությունների անհապաղ դադարեցման: Ենթադրելով, որ սա համապատասխանում է ընդհանուրի շահերին, շատ եմ խնդրում ձեզ ամեն կերպ աջակցել բնակչության շրջանում խաղաղության և հանդարտության պահպանմանը: Թող բոլորն անցնեն իրենց խաղաղ գրադմունքներին»*²:

Ո՞րն էր ադրբեջանցիների հանդեպ բաքվահայության այդպիսի մարդասիրության պատճառը: Նախ, նրանք չէին հավատում բոլշևիկյան իշխանության հարատևմանը, երկրորդ, շուրջ 70 տարի ապրել էին ադրբեջանցիների հետ կողք կողքի, իրենք էին քաղաքը քաղաք դարձրել, վիթխարի ձեռքբերումների հասել մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում և, բնականաբար, գի-

¹Նշվ. աշխ., էջ 158-161:

²Նշվ. աշխ., էջ 21: Ռուս. թարգ. հեղ.:

տակցում էին, որ դեռ պիտի ապրեն ադրբեջանցիների հետ:

Բաքվի բոլշևիկյան կոմունան մի նախաձեռնություն էլ դրսևորեց. ձևավորեց զինվորական միավորում, որը Բաքվից ռազմերթով պիտի շարժվեր Ելիզավետպոլ և այնտեղ վերջ տար ջարդված ադրբեջանցիների քաղաքական պարագլուխներին՝ «Մուսավաթին» և Մուսուլմանական ազգային խորհրդին:

Սակայն դա չիրականացվեց. չիրականացվեց այն պատճառով, որ Բաքվի ճակատագիրը լուծվում էր այլ տեղերում...

Բրեստի դաշնագրի 4-րդ հոդվածով ռուսական զորքը պետք է թողներ Արդահանի, Կարսի վիլայեթները և Բաթումի շրջանը: Փետրվարի 10-ին ստեղծված Անդրկովկասյան սեյմը մարտի 1-ին Տրապիզոնում բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Դրանք տարօրինակ բանակցություններ էին. մի կողմից թուրքական պատվիրակության ղեկավար Ռաուֆ-բեյը «Անդրկովկասյան պետության» հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու հավաստիացումներ էր շոայլում, մյուս կողմից՝ թուրքական բանակը, մահ ու ավեր սփռելով, բնաջնջելով հայ ազգաբնակչությանը, առաջ էր շարժվում՝ ստիպելով բանակցություններում զիջումներ անել և ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Մարտի 6-ին թուրքերը գրավեցին Արդահանը, 12-ին՝ Էրզրումը:

Մարտի 31-ին Անդրկովկասյան սեյմի նիստում դրվեց Թուրքիայի դեմ պատերազմը շարունակելու-չշարունակելու հարցը: Ելույթ ունեցավ նաև Ս.Հարությունյանը, որը մասնավորապես ասաց. *«Նրանք (թուրքերը - Խ.Դ.) մեզ ասում են՝ ընդունեք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, այսինքն՝ տվեք երեք սանջակները, և ականայից հարց է ծագում՝ կբավարարվի՞ արդյոք, այդ պետությունը երեք սանջակով, թե՞ առաջ կշարժվի և կիրականացնի իր վաղեմի երազանքը՝ Կոստանդնուպոլիսը Բաքվի հետ մուսուլմանական համատարած զանգվածով միավորելու ծրագիրը, մի ծրագիր, որը նա կատարել է բազում դարերի ընթացքում, վերջին հարյուրամյակների ընթացքում՝ քայլ առ քայլ, օրեցօր, ընդհանուր առմամբ»:*

Ուլքե ը են մնացել այդ տարածության մեջ, որոնք խանգարում են այդ պետությանը վերջնականապես կատարելու իր ծրագիրը: Մնացել են երկու փոքր ժողովուրդ՝ վրաց և հայ ժողովուրդները ու չնչին քանակությամբ ասորիներ: Համատարած մուսուլմանական ծովին այս ժողովուրդների հախից գալը հեշտ է, հատկապես այնպիսի պետության համար, որի պայքարի կերպը կոտորածն է, որը կարող է սրի քաշել ամբողջ ազգություններ:

...Նա առաջ կշարժվի, նա վստահ է հայտնի ներքին տարրի աջակցության հարցում: Եվ հենվելով այդ տարրի, սեփական կազմակերպված ուժերի վրա, դիմացն ունենալով ապակազմակերպված գորամիավորումներ՝ նա մտածում է, որ վերջնականապես կարող է հասնել ուզածին՝ հասնել Բաքու և մեկընդմիջտ խնդիրը լուծել այնպես, ինչպես հարկ է համարում թուրքական պետությունը:

...Այս պետության ամբողջ կյանքը բաղկացած է ավերածություններից, և եթե վերջին հարյուրամյակի ընթացքում ռուսների ու ռուսական մշակույթի օգնությամբ մեզ հաջողվել է ինչ-որ բարեկեցություն ստեղծել Կովկասում, ապա այդ ամենը մենք կկորցնենք՝ հենց որ թուրք պաշտոնյայի, թուրք զինվորի ու սպայի ոտքը դիպչի մեր հողին:

...Եթե մեզ վիճակված է պարտվել և եթե մեզ վիճակված է մեռնել, ապա մենք՝ հայերս, կմեռնենք զենքը ձեռքներիս»¹:

Ադրբեջանցի Ռուստամբեկովը «Մուսավաթի» անունից հրապարակավ հայտարարեց, թե իրենք չեն պատերազմի իրենց հավատակիցների դեմ, բայց կսատարեն Անդրկովկասի մյուս ժողովուրդներին, ինչին վրացի Ջուղեյին հակադարձեց, թե այդպիսի «...չեզոքությունը թուրքիային ակտիվ աջակցության բնույթ է կրում»²:

Ամեն ինչ պարզ էր. եթե հայերն ու վրացիները զգում ու

¹ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919г., стр. 174-177: Ռուս. թարգ. հեղ.:

² Նշվ. աշխ., էջ 181:

տեսնում էին թուրքական իրական սպառնալիքը, ձգտում էին պահպանել Անդրկովկասի միասնական պետականությունը, ապա եռամիասնության մյուս անդամը՝ ադրբեջանցիները, ունեին այլ նպատակ: Թուրքիայի կողմից ներդրված «հինգերորդ շարասյունը»՝ ադրբեջանական «ականը», պայթելու էր և փլուզելու Անդրկովկասը:

Երկարատև և բուռն քննարկումներից հետո նիստում որոշվեց Թուրքիայի դեմ պատերազմը շարունակել:

Ապրիլի 9-ի սեյմի նիստում պաշտոնապես հռչակվեց Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության (Անդրֆեդերացիա) ստեղծումը: Ապրիլի 14-ին թուրքերը գրավեցին Բաթումը, իսկ 25-ին՝ Կարսը:

Կարսի անկման օրը Բաքվի բոլշևիկյան իշխանությունը կազմավորեց Ժողովրդական կոմիսարների խորհուրդը, որը ձեռնամուխ եղավ կոմունիստական դրախտի կառուցմանը: Բնականաբար, առաջնային հիմնարար դրույթը մասնավոր սեփականության վերացումն էր: Ինչպե՞ս պիտի դա անեին բոլշևիկները, երբ քաղաքի տնտեսության մեծ մասը, իսկ նավթարդյունաբերությունը գրեթե ամբողջովին, գտնվում էր հայերի, անգլիական կապիտալի և ռուսական բանկերի ձեռքում, այսինքն՝ մասնավոր սեփականություն էր:

Թուրքական բանակի առաջխաղացումն անհանգստացրեց Գերմանիային, որն ամեննին ցանկություն չունեի Բաքվի նավթն ու Ճիաթուրիի մանգանը զիջել դաշնակցին: Այդ իսկ պատճառով Գերմանիան թուրքերին ստիպեց ապրիլի 27-ին Կ.Պոլսում ստորագրել գաղտնի համաձայնագիր՝ ազդեցության ոլորտների բաժանման վերաբերյալ. Թուրքիային էին հանձնվում Վրաստանի գրավված տարածքները և գրեթե ամբողջ Հայաստանը, իսկ մնացյալ Անդրկովկասը պետք է պատկաներ Գերմանիային¹: Ապրիլի 28-ին Գերմանիայի պահանջով Թուրքիան հայտարարեց, թե համաձայնվում է խաղաղության շուրջ բանակցություններ սկսել

¹ Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия, М., 1987г., стр. 145.

Անդրֆեդերացիայի հետ, բայց Բաթումում սեղանի շուրջ նստեց մայիսի 11-ին: Մայիսի 14-ին Վրաստանի Ազգային խորհուրդը, առաջնորդվելով «եղունգ ունես՝ գլուխդ քորիր» սկզբունքով, խնդրեց Գերմանիայի հովանավորությունը, և մայիսի 25-ին Փոթիի նավահանգիստ ափ իջավ գերմանական 3 հազարանոց զորք:

Հայաստանը մեն-մենակ մնաց թուրքական հորդայի դեմ: Մայիսի 13-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, զինաթափեցին բոլոր տղամարդկանց և քաղաքում հայոց արյան բաղնիս սարքեցին: Մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատը, և եթե այդ օրհասական պահին չլիներ հայոց միակամությունը՝ ժողովրդի ճակատագիրը վճռված կլիներ: Սարդարապատի հերոսամարտը, Ղարաքիլիսայի ու Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտերը ոչ միայն կանխեցին Երևանի, Արևելյան Հայաստանի զավթումը, այլև խանգարեցին Թուրքիայի հիմնական ծրագրի իրականացմանը՝ հասնել Բաբուն և տապալել խորհրդային իշխանությունը:

Մայիսի 26-ին Թուրքիայի արդարադատության նախարար Հալիլ-բեյը Անդրֆեդերացիային վերջնագիր ներկայացրեց, որտեղ կային այսպիսի տողեր. *«Հարյուր հազարավոր թյուրքեր ու մուսուլմաններ Բաբվում ու նրա շրջակայքում գտնվում են անողոր ավազակների՝ այսպես կոչված, հեղափոխականների արյունոտ լճի տակ, և այդ տարաբախտներին սպառնացող անուղղելի աղետը ավելի ու ավելի է անխուսափելի դառնում»*¹: Ապա հայտնում էր, թե Թուրքիան չի կարող անհաղորդ մնալ հավատակիցների ճակատագրի հանդեպ:

Նույն օրը ժամը 15-ին կայացավ Անդրկովկասյան սեյմի նիստը, որի ժամանակ Ի.Շերեթելին փաստեց. *«Թուրքիայի առաջխաղացումը և նրա ներխուժումը Անդրկովկաս ուժեղացրել են Անդրկովկասում բնակվող առավել բազմաքանակ ազգի՝ մուսուլմանական ազգի ձգտումը դեպի Թուրքիա, դեպի Անդրկովկասից անջատում:*

...Եվ ահա ստեղծվել է այսպիսի մի իրավիճակ. Անդրկով-

¹ Документы и материалы ..., стр. 309: Ռուս. թարգ. հեղ.:

կասի վիթխարի մասը գտնվում է նրանց ուղղակի կամ անուղղակի ենթակայության ներքո, ովքեր մեր պատվիրակության հետ բանակցություններ են վարում (նկատի ունի Բաթումի բանակցությունները - Խ.Դ.) Անդրկովկասի վիթխարի մի մասն արդեն անջատվել է Անդրկովկասյան Հանրապետությունից. մի մասը՝ զենքի ճնշման ներքո, նկատի ունեմ հայ ազգին, որը ձեռքից եկած ամեն ինչ արեց, բայց իր տարածքի զգալի մասը ստիպված եղավ տալու ֆիզիկական գերակշռություն ունեցող հակառակորդին: Բնակչության մյուս մասը, փաստացիորեն, նույնպես անջատվել է, քանզի վճռական պահին նա մեզ չզգուշացրեց և նրա ներկայացուցիչներն անկնհայտորեն կամ ոչ պաշտոնապես աջակցում են հակառակորդ կողմին (նկատի ունի ադրբեջանցիներին - Խ.Դ.)»¹:

Սեյմը ընդունեց իր վերջին որոշումը. «Ելնելով այն բանից, որ պատերազմի ու խաղաղության հարցում ի հայտ են եկել արմատական տարաձայնություններ Անդրկովկասի անկախ Հանրապետությունը ստեղծած ազգերի միջև, ինչի հետևանքով անհնարին է դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, սեյմը փաստում է Անդրկովկասի տրոհումը և վայր է դնում իր լիազորությունները»²:

Այս որոշումից անմիջապես հետո Վրաստանի Ազգային խորհուրդը նիստ գումարեց և 2 ժամ անց հռչակեց Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետության ստեղծումը: Ինչո՞ւ էր այդքան շտապում մեր հարևանը. իրեն էր փրկում, Ռուսաստանի փոխարեն գտել էր նոր դաշնակից՝ ի դեմս Գերմանիայի:

Մայիսի 27-ին ազդարարվեց Ադրբեջանի Հանրապետության ծնունդը: Մեր դիտերիմ բարեկամներն ինչո՞ւ էին շտապում. ի դեմս Թուրքիայի նրանք ունեին բնական դաշնակից և ցանկացած գնով պիտի նվաճեին Բաքուն:

Մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետության

¹Նշվ. աշխ., էջ 322: Ռուս. թարգ. հեղ.:

²Նշվ. աշխ., էջ 330: Ռուս. թարգ. հեղ.:

աստեղծումը, որն շտապելու բան չունեի: Նա այլևս զուրկ էր դաշնակցից և մեն-մենակ մնաց Թուրքիայի ու Գերմանիայի և նրանց նորընծա «գործընկերներ» Ադրբեջանի ու Վրաստանի դիմաց:

Մայիսի 28-ին Գերմանիան ճանաչեց Վրաստանի Հանրապետությունը, և Փոթիում ստորագրվեց 6 պայմանագիր, որոնցով Վրաստանի տնտեսական պաշարների շահագործումը մենատիրության իրավունքով՝ մի քանի տասնամյակի կտրվածքով, անցնում էր Գերմանիային, իսկ երկաթուղին ու Փոթիի նավահանգիստը հայտնվում էին գերմանական զինվորական հրամանատարության վերահսկողության ներքո: Արդեն հունիսին Վրաստանի ամբողջ տարածքում տեղակայվեց 30-հազարանոց գերմանական զորք՝ գեներալ-մայոր Ֆ. Կրես ֆոն Կրեսենշտեյնի հրամանատարությամբ¹: Մա էր Վրաստանի վճարած գինը, բայց դրա մեջ տրամաբանություն կար՝ մտնել գերմանական լծի տակ՝ պահպանելով տարածքը: Ավելին, տարածքային նոր ձեռքբերումների ձգտել (օգտվելով Գերմանիայի հովանավորությունից՝ վրացական զորքը գրավեց Տուապսեն, Մոչին, Աղլերը):

Հունիսի 4-ին Բաթումում Թուրքիան «խաղաղության և բարեկամության» պայմանագրեր ստորագրեց Հայաստանի ու Վրաստանի հետ, որոնցով, բացի Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերից, Թուրքիային էին անցնում Ախալքալաքի գավառը և Ախալցխայի գավառի մի մասը, Սուրմալուի գավառը և Ալեքսանդրապոլի, Շարուրի, Էջմիածնի ու Երևանի գավառների մասերը: Թուրքական զորքը իրավունք ստացավ ազատորեն օգտվել երկաթուղուց:

Այդ պահից մրցավազք սկսվեց Թուրքիայի ու Գերմանիայի միջև, թե ով ավելի շուտ կհասնի Բաքու՝ Անդրկովկասում ռազմական գործողությունների հիմնական նպատակակետին:

Դրա «բնական» իրավունքը պատկանում էր թուրքերին և ադրբեջանցիներին: Բաքուն գրավելուց, նավթին տիրանալուց հետո նրանք կոչնչացնեին թե՛ Հայաստանի Հանրապետությունը,

¹ Гражданская война ..., стр. 145.

թե՛ արևելահայությամբ:

Հունիսի 16-ին Ադրբեջանի Հանրապետություն հռչակած Մուսուլմանական Ազգային խորհուրդը Թիֆլիսից տեղափոխվեց Ելիզավետպոլ՝ թուրք-ադրբեջանական որջ Գյանջա, իսկ մեկ օր անց ստեղծվեց կառավարություն՝ Ֆաթալի Խան-Խոյսկու գլխավորությամբ:

Բայց դրանից առաջ տեղի ունեցան շատ ավելի նշանակալի իրադարձություններ: Բաթումի պայմանագրից անմիջապես հետո թուրքական զորքը մտավ Ելիզավետպոլ, «ձեռի հետ» զինաթափեց քաղաքի ինքնապաշտպանական հայկական ջոկատները և սկսեց նախապատրաստվել Բաքվի գործողությանը:

Հարկ է նշել, որ Բաքվից բացի թուրքական հրամանատարությունը ծրագրել էր զավթել նաև Դադստանը և Հյուսիսային Կովկասի մուսուլմանաբնակ այլ շրջանները: Դրա համար ստեղծվեց «Արևելք» զորամիավորումը (շուրջ 28 հազար մարդ), իսկ բուն Բաքվի գրավումը դրվեց «Կովկասի մուսուլմանական բանակի» (մոտ 13 հազար մարդ ու 40 հրանոթ) և մուսավաթական զորքերի (մոտ 5 հազար մարդ և 10 հրանոթ) վրա: Հունիսի 10-ին թուրք-ադրբեջանական զորքն սկսեց արշավանքը երեք ուղղություններով. հյուսիս-արևելք՝ դեպի Շամախ, կենտրոնական՝ Անդրկովկասյան երկաթուղու երկայնքով դեպի Քյուրդամիր կայարան, հարավ-արևելք՝ դեպի Մուղան: Դադստան ուղարկվեց 500 հոգանոց մի ջոկատ¹:

Թուրք-ադրբեջանական զորախմբերի առաջխաղացումը խոչընդոտվում էր միայն մեկ հանգամանքով՝ հայ ազգաբնակչության ներկայությամբ, այն բնակչության, որը գիտեր Արևմտյան Հայաստանում իր 1,5 միլիոն ազգակիցների բնաջնջման մասին և հրաշալի հասկանում էր, թե ինչ է սպասվում իրեն: Ինչպես նշում է Դ.Անանուրը. *«Արտաքին ու ներքին թուրքը, արտաքինն իբրև նւաճող օսմանեան փաշայ, ներքինն իբրև նրան գործակցող թուրք խան ու բէկ, օգտուելով մեր երկրի յեղափոխական երկունքից՝ սուր*

¹Նշվ. աշխ., էջ 146:

էր մերկացրել նրա դէմ և ձգտում էր ամենից առաջ այդ առաջապահի-հայությունն ճիտը տալ¹: Իրենց ճանապարհին թուրքերն ու ադրբեջանցիները միայն Նուխիի և Արեշի գավառների 51 հայկական գյուղերից ոչնչացրին 48-ը և սրի քաշեցին 26.700 մարդու՝ խաղաղ հայ բնակչության 50 տոկոսին²: Մենք այստեղ չենք նկարագրի գլխակերների գազանությունները՝ ընթերցողի «ընկալման թարմությունը» վերապահելով Բաքվում կատարվածին:

Ի՞նչ էր հակադրում բոլշևիկյան իշխանությունը թուրք-ադրբեջանական զինուժին: Բաքվի կոմունան ընդհանուր առմամբ ուներ շուրջ 18 հազար զինվոր ու սպա, 19 հրանոթ, 3 զրահագնացք, մի քանի ինքնաթիռ և 7 նավ: Դրանից 13 հազարը կովելու էր բուն Բաքվի մատույցներում: Խորհրդային Ռուսաստանը հունիսին Բաքու ուղարկեց 4 զրահամեքենա, 13 ինքնաթիռ, զենք ու զինամթերք, իսկ հուլիսին՝ 800-հոգանոց ջոկատ: Գլխավոր հրամանատարն էր գեներալ Հ.Բագրատունին:

Դրան ի պատասխան, թուրքերը Բաքվի ռազմաճակատ տեղափոխեցին ևս 2 դիվիզիա³:

Հուլիսի 17-ին սկսվեցին ռազմական գործողությունները, բայց 3 օր անց խմբապետ Համազասպը իր ջոկատը մարտի դաշտից դուրս բերեց, ինչի հետևանքով հակառակորդը գրավեց Շամախը: Հուլիսի 30-ին նույն կերպ վարվեց Լ. Բիչերախովը*, որն իր զորագնդով թողեց ռազմաճակատը, հեռացավ Դաղստան և անպաշտպան թողեց ռազմաճակատի 32 կմ հատվածը:

Հուլիսի 31-ին «Կովկասի մուսուլմանական բանակը»՝ արևմտահայության դահիճ Իսմայիլ Էնվեր փաշայի զարմիկ, Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգների հայության դահիճ Նուրի փաշայի (1889-1949) հրամանատարությամբ, անցավ լայնածավալ հարձակման:

Նույն օրը տապալվեց Բաքվի ինտերնացիոնալ բոլշևիկյան

¹ Դ.Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Գ, էջ 612:

² Հայերի կոտորածները ..., էջ 429:

³ Гражданская война ..., стр. 146.

կոմունան և ձևավորվեց նոր իշխանություն՝ 11 մենշևիկներից, աջ էսեռներից (Սադովսկի, Տյուշկով, Բիչերախով և այլք*), դաշնակցականներից կազմված «Ցենտրոկասսյան դիկտատուրան», որի գերագույն խնդիրը, բնականաբար, դարձավ քաղաքի ինքնապաշտպանությունը:

Ըստ թիֆլիսյան «Էրթոբա» թերթի, Բաքվի զինուժը բաղկացած էր հետևյալ միավորումներից. տարբեր ժամանակ ռազմաճակատներից վերադարձած հայ զինվորներ՝ 10.000 հոգի, Դաշնակցության մարտական ջոկատներ՝ 5.000, Բիչերախովի ջոկատ՝ 2.500, 2-րդ հայկական գունդ՝ 2.000, ինտերնացիոնալ գունդ՝ 2.000, միլիցիա, մենշևիկների ջոկատ և պաշտպանության ջոկատ՝ 1.500, Ռուսաստանից եկած բոլշևիկյան ջոկատ՝ 1.000, նախկին Կովկասյան գնդի երկու վաշտ՝ 500. ընդամենը՝ 27.000 հազար մարդ¹: Սակայն թերթը, հավանաբար, չգիտեր, որ օգոստոսի 4-ից Բաքվի պաշտպանների թվում կովում էր շուրջ 1000 անգլիացի զինվոր ու սպա՝ գեներալ Դենատերվիլի հրամանատարությամբ²:

Այստեղ հարկ է որոշակի բացատրություն տալ՝ կապված ինքնապաշտպանական ուժերի այլազգի և տարաբնույթ լինելու հետ: Բանն այն է, որ չնայած նրանցից գրեթե յուրաքանչյուրն ուներ իր սեփական շահն ու նպատակը, այդուհանդերձ, տվյալ պահին թիվ 1 թշնամին թուրք-ադրբեջանական բանակն էր: Ինքնապաշտպանական ուժերը հրաշալի հասկանում էին, որ նախ պետք էր դիմագրավել ընդհանուր թշնամուն, ապա միայն ձգտել սեփական նպատակների իրականացմանը: Բ.Իշխանյանը գրում է. *«Բազու քաղաքը միակն է իր տեսակում, որ իր պատերազմական գործողությունների սկզբնական շրջանում, ունենալով բոլշևիկ-սովետական իշխանություն, ընդունեց արտաքին թշնամու նետած ձեռնոցները և որոշեց պաշտպանել քաղաքը արշաւող հակառակորդի առաջ: Մինչդեռ սովետական Ռուսիայի միւս ճակատներում բոլշևիկական իշխանությունը և զորքը սովորաբար*

¹ Հայերի կոտորածները ..., էջ 78-79:

² Гражданская война ..., стр. 228.

առանց որևէ յամատ դիմադրության նահանջում էին շարունակ արևմուտքից արշաւող աւստրո գերմանական զորքերի առաջ: Բագուի ճակատի վերոյիշեալ առանձնայատկութիւնը պէտք է բացատրել նրանով, որ կռուող ոյժերի մեծագոյն մասը բաղկացած էր հայերից, որոնք գերազանցապէս շահագրգռուած էին պաշտպանել քաղաքը մի այնպիսի պատմական թշնամու արշաւանքի դէմ, ինչպիսին Թիւրքիան է, որի հասցրած մահացու հարւածները - նրա յաղթութեան դէպքում - ամենամեծ չափով և ամենից առաջ պիտի տեղային հայ ժողովրդի գլխին»: «...Հայկական տարրը աւելի, քան որևէ մի ուրիշը Բագում, գերազանցապէս շահագրգռուած էր քաղաքի պաշտպանութեամբ. դա հայութեան համար կեանքի և մահուան հարց էր»: «...Տաճիկներին դիմադրելու համար հայերը կարիք ունէին զինակիցների: ...Այդ է պատճառը, որ ողջ հայ ժողովուրդը, մեծ թէ փոքր, առանց կուսակցական խտրութեան, ողջունեցին անգլիացիների Բագու գալը օգոստոսի սկզբներին և խանդավառ ոգևորութեամբ ընդունեցին նրանց զինակցական օգնութիւնը Բագուի ճակատում»¹:

Այո, այսպիսին էր Բաքվի ռազմաճակատի բնույթը. քաղաքը թուրք-ադրբեջանական նվաճումից պաշտպանում էր հիմնականում հայությունը, ինչպէս նաև Առաջին աշխարհամարտի թելադրանքով միմյանց հակառակորդ ուժերի ժամանակավոր միասնությունը: Ընդ որում, եթէ հայկական զինուժը պաշտպանում էր քաղաքի խաղաղ բնակչությանը և, անշուշտ, առաջին հերթին՝ հայ ազգաբնակչությանը, ապա պարզ էր, որ արհավիրքը հետ մղելուց հետո «Ցենտրոկասայան դիկտատուրան» և անգլիացիները զենքը շուտ կտային բոլշևիկների դեմ:

Սակայն կար մեկ առանձնահատկություն ևս՝ Բաքվի բնակչության շուրջ 45%-ը կազմող ադրբեջանցիները: Ռազմաճակատի գիծը նրանց բաժանել և «պաշտպանում» էր իրենց իսկ ցեղակիցներից: Ո՞վ կուզէր այդպիսի պաշտպանություն: Ստացվում էր, որ Բաքվի ինքնապաշտպանական ուժերը կոպում էին

¹ Բ.Բշխանեան, Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920թ., էջ 1, 2, 3:

առանց թիկունքի, ավելի ճիշտ՝ թիկունքում ունենալով չպայթած ական, որը հարմար պահի գործի կողմեր և մահ ու ավեր կսփռեր: Իսկ քանի դեռ այդ պահը չէր հասել՝ Բաքվի ադրբեջանցիները դանակները սրած սպասում էին:

Սկզբում դավաճանեցին բոլշևիկները: Օգոստոսի 10-ին նրանք կոնֆերանսում որոշում կայացրին և օգոստոսի 14-ին իրենց ջոկատներով բարձրացան 16 շոգենավերի վրա ու դուրս եկան բաց ծով՝ նպատակ ունենալով հասնել Աստրախան: Նրանք չէին ուզում մասնակցել մի կովի, որի մեջ ներգրավված էին, մի կողմից, իրենց ներքին հակառակորդները՝ մենշևիկները, էստոները, դաշնակները, մուսավաթականները, մյուս կողմից՝ արտաքին թշնամիները՝ թուրքերն ու անգլիացիները: Սա էր բոլշևիկյան տրամաբանությունը, նրանց մտածելակերպում այսպես էր անցնում ռազմաճակատի գիծը: (Ոչինչ, որ քաղաքի հայ բնակչությունը կրնա ջնջվեր. համաշխարհային հեղափոխությունը զոհեր էր պահանջում):

Սակայն բոլշևիկների բախտը չբերեց. փոթորկի պատճառով նրանց նավերը Բաքվից 40 կմ հեռավորության վրա ստիպված կանգ առան բաց ծովում: Հետևից հասան «Ցենտրոկասսայան դիկտատուրայի» նավերը և հրետակոծությամբ ստիպեցին վերադառնալ: Բաքվում բոլշևիկների ջոկատներին զինաթափեցին, իսկ նրանց 35 պարագլուխներին կալանավորեցին ու որոշեցին ռազմադաշտային դատարանին հանձնել: (Դա, անշուշտ, նշանակում էր գնդակահարություն):

Կոմիսարներին առայժմ թողնենք փակի տակ և տեսնենք, թե ինչ էր կատարվում ռազմաճակատում:

Թուրք-ադրբեջանական բանակը երբեմն-երբեմն ժամանակավոր հաջողություններ էր ունենում (հուլիսի 31, օգոստոսի 4-5, օգոստոսի 31), բայց ամեն անգամ համարժեք հակահարված էր ստանում:

Օգոստոսի 22-ին թուրքական դիվիզիայի հրամանատար Մուրսալի բեյը (Մուրսել, Մուրզալի) և գլխավոր շտաբի փոխ-

գնդապետ, գերմանացի Պարակենը Հայոց ազգային խորհրդին այսպիսի վերջնագիր ներկայացրին. «... Մենք, գերմանացիներս, եկել ենք, որպեսզի Ձեզ հավաստիացնենք, որ Ձեր կողմից Բաքուն հանձնելու դեպքում Ձեր հանդեպ ոչ մի անարդարացի և չար բան չի պատահի: Հայերի կյանքը, ունեցվածքը և ազատությունը կլինեն անձեռնմխելի:

Մենք պարտական ենք հայերին, որ նրանք մեր հպատակներին (պարոն Նեելոյին և իր շրջապատին) ժամանակին նախազգուշացրեցին և հնարավորություն ընձեռեցին թողնելու Բաքուն, երբ նրանց վտանգ էր սպառնում (նկատի ունեն մարտյան դեպքերը - Խ.Դ.): Առավել ևս մենք պատրաստ ենք Ձեզ օգնել:

Իսկ եթե այդ նավթային քաղաքը չէք ցանկանում հանձնել անվնաս և առանց մարտի՝ ազատ օգտագործման ամենքի, ապա մարտ կլինի: Հայոց կյանքը և հայոց ունեցվածքը պետք է ոչնչացվեն ու կոչնչացվեն: Բայց գիտե՛ք, որ Դուք դրանով ոչ թե հայկական և ոչ թե ռուսական, այլ անգլիական քաղաքականություն էք վարում:

...Մենք Ձեզնից միայն պահանջում ենք.

1. Չավերված և անվնաս վիճակում ամբողջապես հանձնել Բաքուն և թույլ տալ օգտագործել այդ նավթային քաղաքը:

2. Խաղաղություն ու բարեկամություն:

Փոխարենը մենք Ձեզ խոստանում ենք.

1. Որ Բաքվում չեն հաստատվի թուրքական զորքերը և, թե ցանկանում եք, դեպի Բաքու տանող բոլոր ճանապարհները և մատույցները որպես պահապաններ կարող են վերահսկել գերմանական զորամասերը:

2. Քաղաքի բոլոր բնակիչների կյանքը, ունեցվածքը և ազատությունը կմնան անձեռնմխելի:

3. Քաղաքի ուրբակոծությունը կդադարեցվի:

4. Մեր կողմից փակված ջրատարներն անմիջապես կբացվեն»¹:

¹ Հայերի կոտորածները ..., էջ 82-83: Ռուս. թարգ. հեղ.:

Հայոց ազգային խորհուրդը, բնականաբար, մերժեց այս վերջնագիրը, պատճառաբանելով, թե «իսկական պատերազմը վարում է Ռուսաստանը՝ ի դեմս տեղական ռուսական իշխանության», նկատի ունենալով «Ցենտրոկասսայան դիկտատուրան», սակայն սա, անշուշտ, թույլ փաստարկ էր:

Անգլիացիների մի մասը գտնվում էր Բալաջարի, իսկ մյուս մասը՝ Վոլչիյե վորոտայի մոտ: Նրանց միջև հայ և ռուս զինվորների դիրքերն էին: Սեպտեմբերի 13-ին թուրքերը հարձակվեցին հենց այդ դիրքերի վրա, գրավեցին երեք շարք խրամատներ և դուրս եկան Բալաջարում գտնվող անգլիացիների թիկունք: Վերջիններս գրեթե բոլորը զոհվեցին կամ վիրավորվեցին: Ռազմաճակատի գիծը ճեղքվեց: Պարտությունն ակնհայտ էր...

Սկսվեց փախեփախը:

Քաղաքը լքեց «Ցենտրոկասսայան դիկտատուրան»:

Ողջ մնացած անգլիացիները՝ գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ, նստեցին «Արմյանին» նավը (ճակատագրի հեզնանք) և հեռացան Պարսկաստան:

Սեպտեմբերի լույս 14-ի գիշերը բոլշևիկների մի խումբ բանտից ազատ արձակեց իրենց ընկերներին: Սկզբում կոմիսարների փախուստը ծրագրվում էր «Սևան» շոգենավով (ճակատագրի ևս մեկ հեզնանք), բայց դա չստացվեց, իսկ Ա.Միկոյանին հաջողվեց 35 ընկերներին նստեցնել Թ.Ամիրյանի «Թուրքմեն» նավը (ճակատագրի խորհրդանշական հեզնանք): Նավի անձնակազմը, փոխանակ ուղղություն վերցնելու «կարմիր» Աստրախան, կոմիսարներին տարավ «սպիտակ» Կրասնովոդսկ, որտեղ նրանց «գրկաբաց» ընդունեց «Անդրկասսայան ժամանակավոր կառավարությունը»: Խուզարկության ժամանակ Ղորղանյանի մոտ հայտնաբերվեց 25 հոգու անուն-ազգանունով մի ցուցակ, որով նա Բաքվի բանտում մթերք էր բաշխում ընկերներին: Այդ ցուցակը դարձավ «մեղադրական ակտ». 25 հոգուն ավելացրին նավատեր Ամիրյանին և սեպտեմբերի 20-ին բոլորին գնդակահարեցին:

Քաղաքը լքեցին բոլորը՝ թուրք-ադրբեջանցիների հոշոտմա-

նր թողնելով ստեղծարար, աշխատասեր, տաղանդավոր, ունևոր հայությանը: Վրա հասավ ցեղասպանների աստեղային ժամը. իսկը պահն էր վերացնելու խոչընդոտը՝ բնաջնջելու անպաշտպան հայ «տարրը», տիրանալու նրա վիթխարի ունեցվածքին և մեկ հարվածով լուծելու ազգային, աշխարհաքաղաքական բազմաթիվ խնդիրներ:

Մինչ քաղաքի ականավոր հայերից մեկը՝ Բաքվի բորսայական կոմիտեի նախագահ, ԲՆՀ վարչության անդամ, քաղաքային դումայի պատգամավոր, Մարիինսկայա իգական գիմնազիայի և Առևտրային ուսումնարանի հոգաբարձական խորհուրդների նախագահ Ստեփան Թադիանոսյանը, «Նոբել եղբայրներ» նավթարդյունաբերական ընկերության տնօրեն Լեսները, Դանիայի ու Պարսկաստանի հյուպատոսներ Բյերինգը և Մահմեդխանը թուրքերի հետ բանակցություններ էին վարում քաղաքը հանձնելու շուրջ, Ադրբեջանական Հանրապետության վարչապետ Ֆ.Խան-Խոյսկին* Նուրի և Մուրսել փաշաներից պահանջեց, որ երեք օր կանոնավոր զորք չմտցնեն Բաքու. վրեժխնդրության մոտալուտ արբանքի ժամն էր, հայի արյուն հեղելով ադրբեջանցին պետք է ինքնահաստատվեր...

Այն, ինչ կատարվեց հետո, մենք պետք է ներկայացնենք՝ հիմնականում օգտագործելով Բ.Իշխանյանի բացառիկ գիրքը: Մակայն նախքան դրան անդրադառնալը, կցանկանայինք հայ ընթերցողին «վերադարձնել» մեր ժողովրդի ևս մեկ արժանավորագույն, բայց, ավաղ, նույնպես անարդարացիորեն մոռացված մի զավակի:

Բախշի Չաքարիայի Իշխանյանը ծնվել է 1879թ., Ղարաբաղի Խաչեն գավառի Խանձք գյուղում, աղքատացած հին մելիքական գերդաստանում: Ավարտում է ծննդավայրի եռադաս և Շուշվա թեմական դպրոցները, 1899-ին ընդունվում է Գևորգյան ճեմարան, իսկ 1901թ. մեկնում է Գերմանիա և ընդունվում Լայպցիգի Առևտրային ինստիտուտ: Այստեղից եռանդորեն թղթակցել է Թիֆլիսի «Մշակին», «Արշալոյսին», «Լոյս» օրացույցին, «Մուր-

Ճին»: Գերմանիայում Բ.Իշխանյանն ուսումնասիրում է մարքսիզմ, հարում սոցիալ-դեմոկրատական շարժմանը, ապա ուսումնառությունն ավարտելուց և վիճակագիր-տնտեսագետի բարձրագույն կրթություն ստանալուց հետո՝ 1905թ., վերադառնում է Թիֆլիս ու դառնում Սոցիալ-դեմոկրատական հայկական բանվորական կազմակերպության (հետագայում՝ ՄԴՀԲ կուսակցություն) «Կեանք» պաշտոնական երկշաբաթաթերթի գլխավոր խմբագիրը: 1908-ին հեղափոխական գործունեության համար ձերբակալվում է և դատապարտվում երկուսուկես տարվա ազատազրկման: Ազատվելով 1911-ին՝ կրկին մեկնում է Գերմանիա և 1913թ. վերադառնում:

Բ.Իշխանյանը ոչ միայն բացառիկ բեղուն գրիչ ուներ, այլև իր ժամանակի ամենաակնառու հասարակական-քաղաքական, կուսակցական գործիչն էր, մտավորականն ու գիտնականը: Նա հեղինակ է բազմաթիվ գրքերի, որոնց մեջ աչքի են ընկնում «Կարլ Մարքսը և մարքսիզմը», «Տնտեսական զարգացման ֆազերը», «Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան», «Թյուրքիայի ապագան», «Հայ-վրացական յարաբերությունների պրոբլեմը», «Գերմանիայի և Թյուրքիայի տնտեսա-քաղաքական փոխյարաբերությունները», «Դիմակները պատռուած. ովքե՞ր են բոլշևիկները», «Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում», «Ազգային պրոգրեսը և դասակարգային շահերը», «Միլիտարիզմի և իմպերիալիզմի զարգացումը Գերմանիոյ մեջ» և այլն, և այլն: Աշխատություններ, որոնց մեծ մասը լույս է տեսել նաև ռուսերեն ու գերմաներեն:

Սակայն Բ.Իշխանյանի բոլոր գրքերի մեջ կա մեկը, որը *խիստ այժմեական* արժեք ունի, քանզի «*Բազուի մեծ սարսափները*» 88 տարի անց մեզ հասած *Վկայի ցուցմունքներ են*, որոնք ոչ թե լացուկոծ են, վիշտ ու կական, աղերսանքի անիմաստ ճիչեր, այլ փաստագրական, վիճակագրական տվյալների ծանրակշիռ գիտական վերլուծություններ: Այդ ցուցմունքներն են հանդիսանում հենքը մեր այս «գիրք-հայցադիմումի», որով թուրք-ադրբե-

ջանությունը պատասխանատվության պիտի ենթարկվի ոչ միայն Մարդկային խղճի ու բարոյականության համաշխարհային դատարանում, այլև միջազգային աստաններում՝ զուտ իրավական տեսակետից:

Նախ, չնայած գիրքը հրատարակվել է 1920թ., բայց Բ.Իշխանյանն այն սկսել է 1919թ. մայիսին և ավարտել Բաբվի անկման տարեդարձի օրը՝ սեպտեմբերի 15-ին: Տիտղոսաթերթին նշել է, որ գրքի վաճառքից ստացված եկամուտը՝ «զուտ արդիւնքը», հատկացնում է Բաբվի հայ որբերին, իսկ առաջաբանում գրել է. *«Այս գիրքը հայկական ողբերգության սգամատեանն է: Եւ գլուխ խոնարհելով բազմահազար անմեղ զոհերի աճիւնի առաջ, այս սգամատեանը նուիրաբերում ենք նրանց անջինջ յիշատակին»*:

Թերթենք այդ սգամատյանի էջերը:

Կարծես կանխագգալով ապագա «ընդդիմախոսների» գոյությունը՝ Բ.Իշխանյանը հայտնում է. *«Մեր միակ և իսկական նպատակը եղել է պարզել ու տալ կատարուած անցքերի հարազատ պատկերը, անաղարտ հայելին. ասել է՝ գտնել ու ցուցակագրել փաստական ճշմարտությունը: Իսկ այդ նպատակին կարող էինք մենք հասնել միայն և բացառապէս կիրառելով օբիեկտիւ գիտական վերլուծութեան մեթոդը: Մենք հեռու ենք եղել քաղաքական էֆեկտի և հասարակական ազդեցիկայի բոլոր նկատառումներից. հետևապէս սկզբից և եթ Վտարուած է եղել մեր գործից միտումնաւոր գունաւորման և տենդենցիոզ վերաբերմունքի նշույլն անգամ: Մենք նայել ենք մեր գործին, որպէս զուտ գիտական ուսումնասիրութեան, և ստատիստիքական մեթոդը կամ թուերի լեզուն այն սուր զէնքն է և լուսաւոր ջահը, որով կարելի է լոյս սփռել մթապատ անկիւններին ու հարթել մացառոտ ուղիները՝ ճշմարտությունը որոնելու և ճշմարտութեանը հասնելու համար: Այդ զէնքն ու ջահը գործածել իմացողը կարիք չունի ամեննին էֆեկտների և իրաւամբ արհամարհում է ամեն մի տենդենցիոզ գործ»¹:*

Մեկ այլ էջում, մի դրվագի կապակցությամբ, հեղինակը

¹ Բ.Իշխանեան, Բագուի ..., էջ 106:

գրում է. «Տեղը չէ և վեր է մեր գրչի զօրութիւնից՝ այդ սրտաճնկիկ մանրամասների վրայ կանգ առնելու»¹: Այսինքն, Բ.Իշխանյանը ձգտել է հնարավորինս զերծ մնալ հուզականությունից և օգտագործելով Գերմանիայում ձեռք բերած վիճակագիր-տնտեսագետի իր բարձր որակավորումը՝ երևույթը դիտարկել զուտ մասնագիտական տեսանկյունից: «Սրտաճնկիկ մանրամասները» նա նկարագրում է այնքանով, որ հասկանալի լինի իր վերլուծությունը:

Չնայած «մեր գրչի զօրութիւնից» էլ է վեր (թեկուզ այն պատճառով, որ դեպքերի ժամանակակիցը չենք), բայց ստորև կներկայացնենք «մանրամասները»՝ օգտագործելով թե՛ Բ.Իշխանյանի և թե՛ այլ վկաների «ցուցմունքները»: Ընթերցողից ներողամտություն պիտի հայցենք երկարաշունչ մեջբերումների համար, բայց մենք ցանկացել ենք, որ մեր «հայցադիմումը» լինի հիմնավոր ու փաստարկված:

Ռազմաճակատում կրած պարտությունը լիովին անսպասելի էր բնակչության համար: Մարդիկ հավատում էին, որ անգլիացիներն ու Բիչերախովը կպաշտպանեն իրենց: Բայց երբ սեպտեմբերի 14-ին, ժամը 14-15-ը անգլիական շտաբը տեղ է գրավում «Արմյանին» նավի վրա՝ քաղաքում սկսվում է իսկական խուճապ և իրարանցում:

«Քաղաքի բոլոր ծայրերից ժողովուրդը, գրեթե բացառապէս հայ բնակչութիւնը անվերջ քարաւաններով հաւաքւում և կուտակւում է նաւամատոյցներում: Էվակուացիան, բնականաբար, շատ անկանոն էր կազմակերպուած: Եւ ի՞նչ կարելի էր անել մի քանի ժամուայ ընթացքում, նաւերի անբաւարար թւով, երբ, բացի մի քանի տասնեակ հազարաւոր փախչող ազգաբնակչութիւնից, նոյն նաւերով պիտի տեղափոխէին նաև զօրքը, ռազմամթերքը և պետական զանազան գոյքեր, որքան այդ հնարաւոր էր անել մի քանի ժամուայ ընթացքում:

...Սրտաճնկիկ տեսարաններ են տեղի ունեցել այդ տեսակէտից ծովի ափերին: Փախչել ցանկացողների հսկայական բազմու-

¹Նշվ. աշխ., էջ 66:

թիւնը և նաւերի անբաւարար սակաւութիւնը ստեղծել է այն աղիտողորմ շփոթը, որ կոչուում է ճանապարհորդական, կամ աւելի շուտ գաղթականական տրագեդիա: Հարագատները կորցնում էին իրար, ծնողները որդիներին, եղբայրը քրոջը, ամուսինը ամուսնուն. մէկը ճանապարհուում էր, միւսը մնում՝ նաւում տեղ չգտնելու պատճառով¹:

Չգիտենք ինչ պատճառով, բայց Բ. Իշխանյանը նալ չնստեց: Չգիտենք ինչու, բայց նա մնաց և ստանձնեց առաքելություն՝ տեսնել և նկարագրել այն ամենն, ինչ կատարվելու էր Բաքվում:

«Մեպտեմբերի 15-ին առաւօտուանից քաղաքը անտէր աւարի նման փռուած էր արդէն թշնամու ոտքերի տակ»²:

Պատերազմական օրենքներով՝ Բաքվում իշխանությունը պետք է ստանձներ հաղթանակած կողմը՝ թուրքական զինվորական հրամանատարությունը և Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը: Մակայն թուրք-ադրբեջանական բորբոքված ուղեղի ծալքերում այլ դիվային ծրագիր էր հղացված: Թուրքերն արդէն ունեին հայաջնջման հարուստ փորձ, որը հաճույքով տրամադրեցին իրենց ցեղակիցներին:

«Նրանք քաղաքը մատնեցին վրիժառու, արիւնարբու և աւագակային հարուստ ինստիտուտներով օժտուած բանդաների քմահաճոյքին: Նուրի փաշայի և Ֆաթալի Խան-Խոյսկու իշխանութիւնները չմտան քաղաք, այլ լուռ հանդիսատես էին քաղաքի արուարձանից, թէ ինչպէս իրենց իսկ համաձայնութեամբ և կարգադրութեամբ (ընդգծ. հեղ. - Խ.Բ.) ոտից զզլուիս զինուած, զագանացած ամբոխը, ասկեարների հետ միասին և առանձին-առանձին, օր ու գիշեր անդադար աւերում ու կործանում են շէն քաղաքը՝ կոտորելով և մինչև վերջին ծայր կողոպտելով ու թալանելով բնակիչներին:

...Երեք օր շարունակ՝ սեպտեմբերի 15-ից (առաւօտուանից) մինչև 17-ը (երեկոյեան), կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի օրե-

¹Նշվ. աշխ., էջ 4-5:

²Նշվ. աշխ., էջ 5:

րը, *քաղաքի դրուժեան նոր տէրերը* (ընդգծ. հեղ. - Խ.Դ.) *համարուում էին կազմակերպուած մարդասպանների, աւազակների, թաւանջիների բազմաթիւ և բազմատեսակ բանդաները, բաղկացած տաճկական կանոնաւոր զօրքից և Բագուի ու շրջակայ գիւղերի թաթարական տարրից: ...Քաղաքի տէրերը սանձակոծ և արհւնարբու պօգրով շիկներն էին: Նուրի և Մուրսէլ փաշաներին մի կողմից, Խոյսկի և Ջեվանշիր խաներին միւս կողմից հաճելի է եղել չափած-ձևած նախահաշիւներով, որ երեք օր շարունակ և անդադար Բագու քաղաքի և նրա շրջանի ողջ հայկական էլէմենտի կէանքն ու գոյքը յանձնուի բանդաների և պօգրով շիկների խնամքին:*

Որքան կարող են թող կոտորեն ու ջարդեն, յափշտակեն ու բռնաբարեն, կողոպտեն ու թաւանեն (ընդգծ. հեղ. - Խ.Դ.) *դա թոյլատրուում է նրանց. դա թողնուում է նրանց ոյժին, եռանդին և բնդունակութեան»¹:*

Բաքվի բնակչությունն իսկույն բաժանվեց երեք կարգի: Առաջինը ադրբեջանցիներն էին՝ հաղթողները, որոնք հայոց ցեղասպանության համահեղինակներն էին: Երկրորդը, այսպես կոչված, չեզոք տարրն էր՝ ռուսներ, հրեաներ, վրացիներ, սլավոնական ու եվրոպական բազմաթիվ խմբեր: Նրանց դեմ ոչ մի կազմակերպված, գիտակցված քաղաքականություն չի վարվել, և եթե ունեցել են մարդկային կամ նյութական կորուստներ, ապա դա եղել է պատահամբ կամ տարերային ձևով: Ավելին, այս տարրն օգտագործվեց թուրք-ադրբեջանցիների կողմից, որպեսզի միջազգային հանրությանը ցույց տան, թե իրենք «քաղաքակիրթ» են ու «ժողովրդավար». ադրբեջանական կառավարությունը մի քանի հավատակցի հրապարակավ կախաղան հանեց՝ չեզոքների ունեցվածքի հասարակ գողության համար: Թուրք-ադրբեջանական «օրինապահություն»...

«Երրորդ կաթեգորիան - հայ բնակչութիւնն էր: Սա էր պատերազմող և պաշտպանուող Բագու քաղաքի քաւութեան նոխա-

¹Նշվ. աշխ., էջ 6:

զր: Մա էր այն դժբաղդ զոհը, որի դէմ ուղղուած էին արտաքին և ներքին թշնամիների - տաճիկների և թաթարների - բոլոր սլաքներն ու նետերը: Միայն հայ անպաշտպան և անզէն ժողովուրդն էր Բազուն քաղաքում, որ բիրաւոր զոհեր տուաւ իրենից՝ առանց սեռի ու հասակի խտրութեան - տղամարդիկ ու կանայք, ծերունիներ ու երեխաներ, առողջներ ու հիւանդներ, անզամ ծծկեր մանուկներ, հայ ժողովուրդն էր միայն, որ մինչև վերջին թելը կողոպտուեց ու թալանուեց, բռնաբարուեց ու ոտնահարուեց իր ընտանեկան սրբութեան և մարդկային տարրական իրաւունքների սահմաններում, գերուեց, անյայտութեան մէջ հազարաւոր մարդիկ կորցրեց, բանտարկուեց, ստրուկի նման աշխատեցրուեց, գրաստի նման սայլերին լծուեց, մահամերձ ծեծուեց մարդ-հրէշների ձեռքով, հայհոյուեց, թքուեց ու մրոտուեց, սովալլուկ մեռցրուեց, որպէս իլոտներ, որպէս անբան արարածներ:

Բազունի սեպտեմբերեան ողբերգութիւնը - հայկական ողբերգութիւն էր՝ իր ողջ ծաւալով ու խորութեամբ: Հայ լինելը ինքնին վերցրած յանցանք էր տաճիկի և թաթարի աչքում. և, իք ցեղային պատկանելիութեան համար (ընդգծ. հեղ. - Խ.Ղ.), «յանցագործ» հայը արժանի էր վիրաւորանքների, զրկանքների, տանջանքների այն բոլոր տեսակներին, որոնց յղացման ընդունակ է եղել երբևիցէ արնելեան բռնակալութիւնը և որոնց ամենայն հետևողականութեամբ ու սիստեմատիկորէն գործադրել են հայերի դէմ Սուլթանների ու Չինգիզ-խանների հազարերորդ շառաւիղները 20-րդ դարում»¹:

Սակայն կոտորածները հո չավարտվեցին երեք օրով. բաբվահայության եղեռնը տևեց 2 ամիս և 2 օր, մինչև նոյեմբերի 17-ը:

Սեպտեմբերի 16-ի երեկոյան քաղաք մտավ թուրքական հրամանատարական վերնախավը (իսկ զորքը՝ 24 ժամ անց): Բաքվում կար հինգ հյուրանոց, որից չորսը պատկանում էին հայերին. այդ երեկո Նուրի, Մուրսել փաշաները և Ֆաթալի խանը խնջույք կազմակերպեցին Գրիգոր Թումայանի և Ավագ Մալխա-

¹Նշվ. աշխ., էջ 7:

այանցի «Մետրոպոլ» առաջնակարգ հյուրանոցում, բայց իսկական կերուխումը շարունակվում էր հյուրանոցի պատերից դուրս. թուրք-ադրբեջանցին հռչակում էր հայոց մարմինը: Սեպտեմբերի 17-ին քաղաք մտավ թուրքական կանոնավոր զորքը, և սպանողը վերածվեց կանոնավոր կոտորածի:

Անդրկովկաս ներխուժած թուրքական զորամիավորման հրամանատար, Ղարաբաղի (Շուշվա) հայոց կոտորածի կազմակերպիչ Հալիլ փաշային Բաքու ուղեկցած գերմանացի սպաներից մեկը արդեն սեպտեմբերի 21-ին Թիֆլիսի կայարանում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ջամալյանին ասել էր՝ նկատի ունենալով բաքվահայության սպանողը. «Ո՛չ, լինել քրիստոնյա ու եվրոպացի և ստիպված լինել այդպիսի խժոժություններ տեսնել ու լռել՝ իմ ուժերից վեր բան է և ես այս երեկո նեթ պետք է հրաժարական տամ»¹:

Նույն օրը գերմանացի մայոր Մայերը Անդրկովկասում գերմանական օկուպացիոն զորքերի հրամանատար, գեներալ ֆոն Կրեսենշտեյնին հղած զեկուցագրում այսպիսի տողեր էր գրում. «Ինչպես երևում է, թուրքերն ու հատկապես ադրբեջանցիները զգում են, որ ամբողջ աշխարհի առաջ այլանդակ խարան են կրելու: ...Համընդհանուր է այն կարծիքը, որ տեղի է ունեցել հայերի պարբերաբար ոչնչացում, այսինքն, քաղաքի գրավումից առնվազն 24 ժամ անց զորքին տրվել է լիակատար ազատություն... Ես կարծում եմ միայն, որ հնարավոր չի եղել ազատվել այն դևից, որին կանչել էին, և որ ճակատամարտի հաջորդ օրը զորքը պիտանի չի եղել ոստիկանական նպատակներով օգտագործելու համար, այլ պարզապես ցրվել է: Մեղավոր է ոչ այնքան չար կամքը, որքան թուրքական ռասայի թարուն բարոյական թերարժեքությունը (ընդգծ. մերն է - Խ. Դ.)»²:

Հայերին կոտորելու մեխանիզմը մշակել և «հաջողությամբ» կիրառել էին թուրքերը՝ Արևմտյան Հայաստանում: Դրա առանձ-

¹ Հայերի կոտորածները ..., էջ 94:

² Նշվ. աշխ., էջ 91:

նահատկությունը հետևյալն էր. թուրքերը որևէ նահանգում, քաղաքում առաջին հերթին ոչնչացնում կամ «աքսորում» էին հոգևորականներին, հեղափոխականներին ու մտավորականներին (թուրքի աչքում հայ մտավորականն արդեն հեղափոխական էր): Երկրորդ հարվածը կրում էր տեղի ունևոր դասը՝ կապիտալի ներկայացուցիչները և նրանց ընտանիքի անդամները: (Օրինակ, 1915թ. հունիսի 15-ին, տեղափոխելու «բարի» պատրվակով, թուրքերը Խարբերդից դուրս բերեցին 3000 հոգուց բաղկացած երկրորդ քարավանը, որտեղ գտնվում էին հարուստ վաճառականները, սեղանավորները, ձեռնարկատերերը և նրանց գերդաստանների անդամները: Դա գրքի կամ կինոյի արժանի տեսարան էր. շողում կանայք հագել էին եվրոպական շքեղ շրջագգեստներ, գլխներին բռնել էին հովանոցներ, որ չարևահարվեն, իսկ սպասավորները տանում էին մեկական կով, որպեսզի խանումներն ու նրանց երեխաները ճանապարհին թարմ կաթ խմեն: Երբ կլիմետորեր անց այդ զարմանատեսիլ, էպիկական քարավանը հայտնվեց կիրճում՝ թուրքերը բոլորին մորթեցին, բռնաբարեցին ու թալանեցին): Զրկվելով առաջնորդներից, հեղինակավոր անձանցից՝ հայ բնակչության մնացած հիմնական զանգվածը հոգեբանորեն դառնում էր լքված, անտեր, որին արդեն հեշտ էր մորթել: Միաժամանակ, դա թուրք բարբարոսներին հնարավորություն էր տալիս թալանի, ավարի տիրանալու շնորհիվ միանգամից հարստանալ, այսինքն՝ շարքային ցեղասպանները, կատարողները նյութական խթան ունեին:

Ահա այս հղկված, բնագոյի վերածված մեխանիզմը թուրքերը կիրառեցին նաև Բաքվում՝ իրենց փորձը գործնականորեն փոխանցելով ադրբեջանցիներին:

Ընթերցողը հիշում է, որ քաղաքը հանձնելու վերաբերյալ թուրքական հրամանատարությանն այցելեցին Ս.Թաղիանոսյանը, Նոբելների ներկայացուցիչ (ազգությամբ ավստրիացի) Լեսները և Դանիայի ու Պարսկաստանի հյուպատոսները: Հարց է ծագում՝ ինչո՞ւ հենց Ս.Թաղիանոսյանը, նախորդ գլուխներում մենք շատ

ավելի նշանավոր, հեղինակավոր հայերի մասին էինք խոսել: Բանն այն է, որ բաբվահայ գրեթե բոլոր նավթարդյունաբերողները, ձեռնարկատերերը, վաճառականները, անշարժ գույքի խոշոր սեփականատերերը արդեն հեռացել էին քաղաքից: Կապիտալը վախենում է միայն մեկ բանից՝ ուժից, և հեռացած կապիտալիստները հետագայում փրկարար օղակի դեր էին կատարելու, թուրք-ադրբեջանական բարբարոսության հիմնական ծանրությունը կրած ու ողջ մնացած ազգակիցներին օգնելու էին վերապրել:

Առաջին իսկ օրերին ձերբակալվեցին 14 նշանավոր հայեր (այդ թվում՝ Կովկասյան բանկի տնօրեն Մ.Աթաբեկյանը, Առևտրային բանկի տնօրեն Խուրլարյանը և Հ.Մանանդյանը), որոնցից մի քանիսը միայն փրկվեցին: Ձերբակալվեց նաև Ս.Թադիանոսյանը, որին անխուսափելի մահից ազատեց Լեսները՝ «Նոբել եղբայրների» գանձարկղից խոշոր կաշառք վճարելով: (Այդ զարմանալի մարդու՝ Ս.Թադիանոսյանի հետագա ճակատագրին մենք դեռ կանդրադառնանք):

Սեփական բնակարանում գնդակահարվեց քաղաքի խոշոր տնատերերից մեկը՝ Բաբվի դումայի անդամ, Ազգային խորհրդի գանձապահ Ստեփան Այվազյանը: Հետաքրքիրն այն է, որ սկզբում ներխուժած խուժանի պարագլուխը եղել էր Ս.Այվազյանին շատ լավ ճանաչող մի ադրբեջանցի, որը համբուրվել էր նրա հետ, խոստացել, որ նրա և ընտանիքի հետ ոչինչ չի պատահի, ապա դուրս էր եկել և անմիջապես մեկ ուրիշ հրոսակախումբ ուղարկել...

Երբ մարտ ամսին իրենց կողմից փրկված Շ.Ասադուլանին խնդրում են միջնորդել Մելիքյան եղբայրներին ազատ արձակելու համար, նավթարդյունաբերողը դիմում է ներքին գործերի նախարար Բեհբուժ խան Ջիվանշիրին: Վերջինս պատասխանում է. «Ի նչ էք ասում, ես համաձայնվել եմ նախարար դառնալ բացառապես այն բանի համար, որպեսզի հայերի վերջը տամ»: Երբ այս նույն հրեջին* հաղորդում են անասնական պայմաններում գտնվող հայ բանտարկյալների մասին, ինքնագոհությամբ արձա-

զանքում է. *«Թող սաստկեն նրանք, որպես շներ»:*

Ադրբեջանի նախարարներից մեկ ուրիշը, դժգոհելով, որ սպանդի են ենթարկվել շարքային հայերը, այլ ոչ թե ունևորները, ասում է. *«Պոչը կտրել են, իսկ գլուխը՝ թողել»¹:*

Սակայն վերադառնանք մեր գլխավոր վկային ու նրա գիրք-ցուցմունքին:

Տեսնելով, թե ինչպիսի սպանդ է կատարվում՝ Հայոց ազգային խորհուրդը որոշում է տեղեկություններ ժողովել մարդկային զոհերի, կորուստների և կրած վնասների մասին: Բնակավայրեր, այդ գործը հանձնարարվում է լավագույն մասնագետին՝ պրոֆեսիոնալ Բ.Իշխանյանին: Վերջինս հոկտեմբերի 10-ին պատրաստում է մի հարցաթերթիկ և կյանքը վտանգի ենթարկելով՝ գաղտնաբար այցելում թաղեթաղ, տնետուն: Նոյեմբերի 17-ից՝ անգլիացիների մուտքից հետո, կազմավորում է խումբ և լայն թափով շարունակում աշխատանքը:

Հարցաթերթիկն ուներ 6 բաժին, որոնք պարունակում էին 26 հարց: Առաջին բաժնում՝ «Տեղեկություններ հայ բնակիչների թվի մասին», կար 3 հարց, երկրորդ բաժնում՝ «Դրամի և գույքի կողպուտ ու թալան»՝ 2 հարց, երրորդ բաժնում՝ «Տեղեկություններ բռնաբարության և առևանգման դեպքերի մասին»՝ 5 հարց, չորրորդ բաժնում՝ «Տեղեկություններ կոտորող և կողոպտվող տարրերի մասին»՝ 4 հարց, հինգերորդ բաժնում՝ «Սպանության, անհայտացման, բռնաբարության կամ առևանգման, գերության, բանտարկության և բռնագրավման դեպքեր կոտորածից հետո կամ սեպտեմբերի 5-18-ից ի վեր»՝ 11 հարց, վեցերորդ բաժնում՝ «Փախստականների վերադարձը»՝ 1 հարց:

Ցուցաբերելով իսկական գիտնականին վայել բարեխղճություն (ինչն ավելի հավաստի է դարձնում աշխատությունը)՝ Բ.Իշխանյանը գրում է. *«Մենք հեռու ենք, ի հարկե, այդ արդիւնքները լրի ու կատարեալ համարելու մտքից: Անկետան, նոյն իսկ առաջադր կուլտուրական երկրներում, անխուսափելիորեն ունենում*

¹Նշվ. աշխ., էջ 301:

է իր որոշ թերութիւնները, ուր մնաց, որ մեր երկրում, այն ևս Ազերբեյջանի բոլորիս հայտնի պայմաններում, հնարաւոր լինէր կատարեալ գործ տալու: Գոյութիւն ունեցող անյարմարութիւններին աւելացրէք ժողովրդի կուլտուրական ըմբռումների ստոր մակարդակը, նրա անսովոր լինելը, նահապետական վերաբերմունքը դէպի անկետային հարց ու փորձը և վիճակագրական հաւաքումների գործը, որպէսզի հասկանալի լինի, թէ որքան դժուար է մասսայական տեղեկութիւններ և թեր հաւաքելու աշխատանքը մեր երկրում:

Բայց և այնպէս արել ենք, ինչ առհասարակ հնարաւոր էր անել, մաքառելով շատ խոչընդոտների դէմ: Բացի սկզբնական ըզգիստրացիայից, կատարել ենք տուել երկրորդ և երրորդ վերաստուգիչ (կոնտրոլ) աշխատանքը բայօնից բայօն, փողոցից փողոց, տնից տուն: Եղած ու նկատուած բացերը աշխատել ենք աւելի ու աւելի լրացնել նորանոր տուեալներով:

...Աշխատանքի շտապողականութիւնը և ժամանակի սղութիւնը ստիպեցին մեզ առ այժմ բաւականանալ նիւթերի մշակման այդ համառօտ նախագծով: Այնքան հսկայական և թանկագին նիւթեր են կուտակուել մեր տրամադրութեան տակ, որ արժէր աւելի ընդարձակ հիմքերով և գիտական խստապահանջութեամբ մշակման ու վերլուծութեան ենթարկել նրանց: Դա թողնում ենք ապագային, եթէ միայն կը ներեն մեզ ժամանակն ու հանգամանքները»¹:

(Ավա դ, ոչ ժամանակը, ոչ հանգամանքները Բ.Իշխանյանին այդպիսի հնարավորություն չընձեռեցին):

Այժմ տեսնենք, թե ինչպիսի արդյունքներ է արձանագրել Վկան:

Եվ այսպէս, մինչև Բաբվի անկումը հայ բնակչութիւնը կազմել է 88.673 հոգի (22.622 ընտանիք), որոնք բնակվել են 81 փողոցներում՝ 80.644 հոգի և Բալախան, Բիբի-Նէյրաթ, Հայկավան, Հայոց-Քիշլի, Սև քաղաք, Սպիտակ քաղաք արվարձաններում՝ 8029 մարդ:

¹ Բ.Իշխանեան, Բագուի ..., էջ 14-15:

Սեպտեմբերի 14-ին քաղաքից փախել է 31,543 հոգի (35,29%), մնացել է 57.380 մարդ:

Կոտորածի պատկերը հետևյալն է. միայն երեք օրվա ընթացքում (սեպտեմբերի 15-17) 57.380 մարդուց սպանվել է 5248-ը (71,71%-ը՝ արական սեռի, 28,29%-ը՝ իգական, ընդ որում՝ սպանվել են մի քանի ամսական ծծկեր երեխաներից մինչև 85 տարեկան ծերունիներ ու պառավներ): Բ.Իշխանյանը հետևություն է անում. «Կոտորածների համար, իբրև երևոյթի, մի ընդհանուր կշռաչափ, մի բնորոշ գիծ կամ տենդենց գտնել դժուար է, որովհետև երևոյթը եղել է տարերային, բանդաների միջոցով կատարուած: ...Նայած թէ ինչ բանդաներ են պատել այս կամ այն փողոցը և ինչ մտադրութիւններ ու տրամադրութիւններ են ունեցել նրանք, ըստ այնմ էլ արտայայտուել է կոտորածների այս կամ այն չափը: Եղել են բակեր, որ սրի են անցուել խմբուած ահագին բազմութիւններ (օր. Չադրովայա փողոց N245, ուր սպանուել են 70-ից աւելի մարդիկ) և այնպիսի բակեր (Ստանիալաւսկի, Տելեֆոննի, Բոնդարնի և այլ փողոցներ), ուր մի քանի հարիւրի հասնող և նոյն իսկ դրսից ապաստան գտած մեծաթիւ հայ բնակիչների հետ չի պատահել սպանութեան ոչ մի դեպք: Կրկնում ենք, նայած ինչ կազմ են ունեցել կողոպտող և կոտորող բանդաները և ինչ կողմն է գրաւել նրանց ուշադրութիւնը պոգրումի բոպէներին, ըստ այնմ էլ այս կամ այն վիճակին են ենթարկուել թալանող զոհերը: Մեր աշխատակիցների տուած հարցերի բազմաթիւ պատասխաններից երևում է, որ այնտեղ, ուր առատ թալան է եղել կամ դրամական խոշոր տուգանք, մարդկային զոհեր կամ չեն եղել, կամ սակաւ են պատահել: Մանաւանդ այն բանդաները, որոնք ուղեկցել են տաճիկ ասկեարներին կամ բաղկացած են եղել առաւելապէս ասկեարներից, այնտեղ մեծագոյն մասով եղել են թալան, կողոպուտ, դրամական փրկանք (ընդզծ. հեղ. - Խ.Գ.)»¹:

Սրանցից բացի, սպանվել են Շամախից և Գյոկչայից՝ Բաքվում ապաստանած 1500 փախստականներ և 2240 զինվորներ ու

¹Նշվ. աշխ., էջ 37:

բանվորներ, որոնք ամուրի էին կամ հարազատներ չունեին: Այսպիսով, առաջին երեք օրերի ընթացքում սպանվեց 8988 հայ:

Սակայն մարդկային զոհերի քանակն այս թվով չի սահմանափակվում. Իշխանյանը դրանց ավելացնում է անհետ կորածներին: «Դրանք այն զոհերն են, որոնց ուր տանելը, ինչ վիճակի մեջ լինելը և ինչ վախճան ունենալը կատարելապես անյայտ են մնացել նրանց հարազատներին, բարեկամներին կամ հարևաններին: Այդ կաթեգորիայի մի շատ չնչին մասն է անյայտացել կոտորածների երեք օրերին (սեպտ. 15-17-ին): Ընդհակառակը, նրանց մեծագույն մասը անյայտ կորել է կոտորածներից յետոյ, սեպտեմբերի 17-ից ի վեր, այն ժամանակից սկսած, երբ Ազերբեյջանի «հանրապետութեան» մինիստր-նախագահը հանդիսաւորապէս յայտարարել էր (սեպտ. 19-ին), որ «երկրի բոլոր քաղաքացիները, առանց ազգի և դաւանանքի խտրականութեան, հաւասարապէս պիտի վայելեն կառավարութեան պաշտպանութիւնն ու հովանաւորութիւնը իրանց շահերի և իրաւունքների սահմաններում»:

Երեքօրեայ կոտորածների նկատմամբ Ազերբեյջանի քաղաքագետներն ու գաղափարախօսները ուրիշ ոչ մի «արդարացում» չեն գտնում հասարակական դատաւիետող կարծիքի առաջ, բայց եթե այն կեղծ ու անճարակ առարկութիւնը, որ իբր դա սոսկ վրէժ-խնդիր ամբոյսի տարերային մի գործողութիւն է, անխուսափելիօրէն պայմանաւորուած քաղաքի անկման առաջին օրերով: Հապա ի՞նչ կարող են ասել նրանք տարերային կարճատև վանդալիզմը տևական սիստեմի վերածած այն պաշտօնական կուրսի մասին, որով Ազերբեյջանի կառավարութիւնը արտաքին իրաւակարգի քողարկող շիրմայի տակ երկու ամիս շարունակ չինայեց իր հայաջինջ քաղաքականութեան հարուածները հայ ժողովրդի դէմ՝ երեքօրեայ զոհերի պակասը լրացնելու համար (ընդգծ. հեղ. - Խ.Դ.)»¹:

Ըստ հարցախույզի արդյունքների, անհետ կորածների թիվը կազմել է 3572 հոգի: Եթե այս թվին գումարենք սպանվածների թիվը (8988 հոգի), ապա կստանանք 12.560 զոհ:

¹Նշվ. աշխ., էջ 47:

Բ.Բշխանյանի աշխատությունում առանձին գլուխ է հատկացված հայ գերիներին՝ ռազմագերիներին և *քաղաքացիական* գերիներին: Անկազմակերպ տարիանման պատճառով մի քանի հազար զինվորներ՝ հայեր, ռուսներ և սակավաթիվ անգլիացիներ, ընկան թուրքերի ձեռքը: Բայց եթե առաջին իսկ շաբաթներին Լ.Բիչերախովն ու «Ցենտրոկասայան դիկտատուրայի» ներկայացուցիչները բանակցեցին թուրքական հրամանատարության հետ և ազատեցին ռուս, անգլիացի գերիներին՝ նրանց փոխանակելով Նարզեն կղզում գտնվող թուրք ռազմագերիների հետ, ապա հայերն իրենց խաչը տարան մինչև վերջ: Այն կարգավիճակով, *«ինչպէս աւանդաբար թիւրքերը վարում են հայերի հետ՝ վրիժառութեան գերաստիճան գրգռման բռպէներին»*¹:

Սակայն թուրքական հրամանատարությունը և ադրբեջանական կառավարությունը գերեվարում էին նաև քաղաքի հայ բնակիչներին: *«Գերիները - դրանք տներից դուրս քաշած և փողոցներում մասսայական շուրջկայությունը հաւարած հայ խաղաղ ու անզէն քաղաքացիներ էին՝ ամէն հասակի, դիրքի ու սեռի, որոնց «մեղքը» նրանց հայ լինելու փաստն էր, իսկ գերելու դրդապատճառները հայկական տարրը ճնշելու և խեղդելու քաղաքականությունն էր պիտի որոնել: Գերութիւնը - հալածանքի և բնաջնջման քաղաքականության մեթոդներից մէկն էր, որ սիստեմատիկօրէն կիրառոււմ էր Բագուի հայութեան դէմ երկու ամսուայ ընթացքում (ընդգծ. հեղ. - Խ.Դ.)»*²:

Եվ այսպէս, զուտ քաղաքացիական գերիների թիվը կազմել է 4246 *հոգի*, որոնք գրեթե ամբողջությամբ կամ սպանվել են, կամ կարճ ժամանակում մահացել հյուծվածությունից և հիվանդություններից: Ահա թե ինչ է գրում Ականատեսն ու Վկան. *«Հայ գերիները՝ զինւորներից թէ քաղաքացիներից միևնոյն է, տեղաւորուած էին Բագուում և Բագուի շրջանից դուրս՝ գրեթէ բոլոր կայարաններում և կայարանների շրջակայքում: Միայն քաղա-*

¹Նշվ. աշխ., էջ 58:

²Նույն տեղում:

քում և նրա շրջակայքում գերիները ամփոփուած էին մօտ երեսուն տեղերում: Ամենից մեծ և ամենից զարհուրելի կենտրոնը համարում էին այսպէս կոչուած Սալեանակի կազարմաները:

Հայ գերիները պահում և աշխատեցում էին ավելի քան քաջատիկ պայմանների մէջ՝ դուրս որևէ օրէնքի, կանոնի և նորմայի սահմաններից: Եթէ ստրուկն ու գրաստը համարում են սև աշխատանքի և անողորմ շահագործութեան մշտապէս ենթակայ աննախանձելի զոհեր, ապա հայ գերիները կատարեալ հիմք ու առիթ ունէին մի քանի կողմերից նախանձելու և՛ ստրուկին, և՛ գրաստին: Եթէ ստրուկին օգտագործում ու շահագործում են ամեն կերպ և բոլոր եղանակներով, բռնում են ամեն կարգի ծանրութիւններ, ապա մի բանում նրա դրութիւնը անհամեմատ նախանձելի է հայ գերիների դրութիւնից. միշտ և արդիւնավէտ կերպով շահագործելու համար ստրուկի ֆիզիքականը, ստրկատէրը սնում, պահում ու պահպանում է՝ իր իսկ շահերի տեսակէտից, իր շահագործութեան օրիէկտի ֆիզիքական գոյութիւնը: Ստրուկը ենթակայ չէր այն սիստեմատիկ չարչարանքներին, մահամերձ բրածեծի և սովամահութեան ճիրաններում գալարուելու դրութեան, որոնց ենթակայ էին հայ գերիները տիրապետող կուրսի յատուկ կարգադրութեամբ: Եթէ մէկը որոշ վճարով գնում էր ստրուկին, իբրև առևտրի ենթակայ օրիէկտի, ապա միայն նրա համար, որպէսզի աշխատեցնէ և շահագործէ այդ «մարդ-ապրանքը»: Իսկ երբ հայ գերիին գնում և դուրս էին տանում կազարմայից՝ վճարելով դրա համար մի քանի հարիւր թուրլի պահապան ասկեարներին, ապա միայն նրա համար, որպէսզի տանեն նրան մի խուլ ու մութ անկիւն և մորթեն, սպանեն: Եթէ գրաստին բռնում են կամ լծում սայլին, ապա ոչ այն պատճառով, որ նրան ծեծեն, չարչարեն, բարոյապէս տանջեն ու վիրաւորեն, այլ որոշ իր տեղափոխելու, ծառայութիւն մատուցանելու համար: Իսկ հայ գերիներին - ասա և կրկնիք՝ մարդ արարածին - ասկեարները օր ցերեկով մարդկանց ներկայութեամբ լծում էին ծանրաբեռ սայլերին և անգութ հարուածներով քշում, պտտեցնում փողոցներով,

միայն նրա համար, որպեսզի դրանով հայերին չարչարեն, տանջեն և նրանց մարդկային արժանապատուությունը վիրավորեն:

...Այդ մերկանդամ, մինչև սովամահության աստիճան քաղցած և ստրկական պայմաններում աշխատող դժբաղդների համար դիտաւորութեամբ ստեղծուել էր մի այնպիսի դժոյք, որտեղ ընկած գոհերը դատապարտուած էին սկզբից և եթ ոչնչացման, համարում էին մահուան ապահով թեկնածուներ: Շարքայների ընթացքում, ողջ, առողջ, առնական կենսալիք հասակում մարդիկ, հետզհետէ տառապելով, սովի ճիրաններում գալարուելով և հիւծուելով, մէկը միւսի յետնից գերեզման էին իջնում:

...Այսպէս անուանուած «ազատուածները» կենդանի դիակների տպաւորութիւն էին թողնում: Ծանր աշխատանքը, ծեծն ու պատիժները, չարչարանքները և, որ գլխաւորն է, քրոնիքական քաղցը մաշել, հիւծել և կատարեալ կմախքացրել էին շատերին: Դրանք կենդանի մարդիկ չէին, այլ մարդկանց շուաքներ, ուրուականներ: Գերութիւնից «ազատուած» այդ կենդանի դիակները մեռնում էին ոչ սակաւ թւով. բժշկական օգնութիւնը և հիւանդանոցային խնամքը չէին կարող փրկել այդ «ողջ» վերադարձողներին՝ այնքան քայքայուած էր նրանց առողջութիւնը (ընդգծ. հեղ. - Խ.Դ.)»¹:

Այժմ անդրադառնանք Բ.Իշխանյանի սգամատյանի ամենաքստմնելի էջերին, որոնք վերաբերում են բռնաբարված և առևանգված հայուհիներին:

«...Մի այնպիսի երևոյթ, ինչպիսին թոյլ սեռի անմեղ գոհերի բռնաբարութիւնը՝ այն ևս մասսայական դէպքերով, դա մի առանձնահատուկ գազանութիւն է, որով միշտ և ամեն տեղ գերազանցել է թուրք-թայթար անորակելի բարբարոսութիւնը (ընդգծ. հեղ. - Խ.Դ.)»²:

Բռնաբարվել են ամենատարբեր տարիքի հայուհիներ՝ 5-6 տարեկան երեխաներից մինչև 60-65 տարեկանները:

¹Նշվ. աշխ., էջ 66-67:

²Նշվ. աշխ., էջ 73:

«Եղել են բազմաթիւ դէպքեր, երբ միևնոյն անձնաւորութիւնը (օրիորդ թէ կին) բռնաբարուել է մի քանի անգամ և՛ մի քանի մարդկանցից - կամ կողոպտիչների միևնոյն խմբի և կամ տարբեր խմբերի մարդկանց կողմից: Եղել են դէպքեր, երբ դեռահաս աղջիկներ - 9, 12, 14 տարեկան, բռնաբարուել են ծնողների ներկայութեամբ: Եղել են դէպքեր, երբ մորը և աղջիկներին բռնաբարել են միաժամանակ և իրար ներկայութեամբ: Եղել են դէպքեր, երբ սրի են անցրել ընտանիքի տղամարդ անդամներին և նրանց դիակների կողքին բռնաբարել կին անդամներին. մօրը, դուստրերին, քոյրերին և այլն:

Անորակելիօրէն լկտիացած բանդաները դիւային քրքիջով օրգիաներ էին սարքում արիւնաներկ դիակների վրայ»¹:

Ըստ հարցախույզի, բռնաբարված հայուհիների թիվը կազմել է 288 հոգի: «Սակայն եթէ կայ գոհերի մի կաթեգորիա, որ ամենից թերի ցուցակագրութիւն է ունեցել և ահագին քանակով դէպքեր է բաց թողել, դա բռնաբարուածների կաթեգորիան է: Եւ ուրիշ կերպ չէր կարելի: Բռնաբարութեան դէպքը ընտանեկան պատուի, հասկանալի ամօթխածութեան հետ կապուած մի փափուկ հարց է: Չէր կարելի սպասել, որ անկետային հարց ու փորձին առանց այլ և այլի ստացուէր դրական պատասխան այդ ցաւոտ դէպքի վերաբերեալ: Շատ շատերն են քաշուել այդ հարցին պատասխանելուց և նոյն իսկ ապշել, նեղացել են, երբ այդ հարցով դիմել են նրանց: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, մենք հազիւ թէ չափազանցրած լինէինք, եթէ բռնաբարութեան ցուցակագրած դէպքերը համարէինք միայն կէտը իրապէս տեղի ունեցած դէպքերի և եթէ մենք առնուազը 50%-ով աւելացնէինք մեր ստացուած թիւը»²:

Ոչ պակաս (եթե ոչ ավելի) ողբերգական էր առևանգված հայուհիների ճակատագիրը: Որովհետև, ինչպէս վկայում է Ականատեսը. «Եթէ բռնաբարուած հայուհին դժբաղդացել է տեղն ու

¹Նշվ. աշխ., էջ 73-74:

²Նշվ. աշխ., էջ 75:

տեղը, իրանց տանը կամ հարևանի ու ծանօթի մոտ (ուր նա պատասպարուել էր), ապա առևանգուած հայուհին կրկնակի դժբաղդույթեան գիրկն էր մատնուել տեսապէս: Բռնաբարուած զոհը տանջուել է զոնէ ժամանակաւորապէս: Առևանգուածը, ընդհակառակը, մշտապէս և անընդհատ ենթակայ է եղել բռնաբարույթեան, բռնութեան և կամայականութեան գործողութիւններին: Առևանգուած հայուհիները դարձել էին տեղական բանդիտների և ասկետարների կամ նրանց տերերի կատարեալ և անկողոպտելի սեփականութիւնը այնքան ժամանակ, որքան դա հաճելի էր մարդ-գազաններին»¹:

Բնականաբար, առևանգում էին ամենագեղեցիկներին ու բարետեսներին: Սկզբում այդ խեղճերին պահում էին Բաքվի ադրբեջանական թաղամասերում, խուլ անկյուններում, ապա տեղափոխում շրջակա գյուղեր և հատկապէս Ելիզավետպոլ: Նրանց վաճառում էին կամ տալիս «ժամանակավոր օգտագործման»: Երբեմն ծնողներից ու հարազատներից փրկագին էին պահանջում, երբեմն վերադարձնում էին նրանց դիակները, իսկ շատերը բռնի պահվեցին ադրբեջանցիների մոտ և թրքացվեցին:

Ըստ հարցման արդյունքների, առևանգված հայուհիների թիվը կազմեց 571 հոգի, բայց սա էլ, անշուշտ, իրականությանը չէր համապատասխանում՝ պայմանավորված հարցի «փափուկ» լինելով հանգամանքով:

Բաքվի ցեղասպանության անմիջական զոհերից են նաև *փախստականները*: Ինչպես արդեն նշվել է, նրանց թիվը կազմում էր 31.293 հոգի (քաղաքի հայ ազգաբնակչության 35.29%-ը): Փախստականները ապաստան էին գտել Պետրոպոլսկում, Անդրկասպյան մարզում և Պարսկաստանի մերձծովյա բնակավայրերում (Էնզելի, Հասան-Կալե, Ռեշտ): Չնայած Ադրբեջանի Հանրապետության կառավարության մերժումներին և հարուցած խոչընդոտներին՝ անգլիացիների շնորհիվ նրանց վերադառնալու թույլտվություն տրվեց: Վերադարձավ 16.526 մարդ, իսկ 14.767 հոգին

¹Նշվ. աշխ., էջ 76:

կամ մահացան փախստավայրերում, կամ այլևս չցանկացան հետ գալ, կամ վերադարձան 1919թ. փետրվարից հետո, երբ Վկան արդեն ավարտել էր հարցախույզը:

Բ.Իշխանյանը վերադարձածների մեջ հարցում անցկացրեց, թե ընտանիքի անդամներից քանիսն են մահացել գաղթի ժամանակ և ստացավ 3263 թիվը: Ապա լրացուցիչ հաշվարկ կատարեց, որի արդյունքում պարզվեց հետևյալը. Մարդասիրականի որբանոցում մահացել էին 2-15 տարեկան 230 որբ երեխաներ, Էնզելիում մահացել էր 1382 հոգի, Հասան-Կալեում ու Ռեշտում՝ 500, Պետրովսկում՝ 1500, Անդրկասպյան երկրամասում՝ 800 և Բաքվի հիվանդանոցներում զանազան վարակիչ հիվանդություններից՝ 564 վերադարձածներ: Ընդհանուր թիվը՝ 8139 հոգի, ինչն, անշուշտ, խիստ մոտավոր ցուցանիշ էր:

1919թ. մարտ-ապրիլ ամիսներին վերադարձան նոր փախստականներ, և Բ.Իշխանյանը ճշգրտումներ կատարեց, որից հետո ներկայացրեց երկու ամսվա ընթացքում թուրք-ադրբեջանցիների իրականացրած հայոց ցեղասպանության ամփոփիչ արդյունքները: Եվ այսպես, *մահվան էր ենթարկվել 25.465 հոգի (հայ ազգաբնակչության 28,55%-ը), որից 12.258-ը՝ կոտորածի: Բռնության ու բռնաբարության զոհ էր դարձել, բայց «ողջ» մնացել 3598 հոգի: Երկամսյա ցեղասպանողի զոհերի ընդհանուր թիվը՝ 29.063 մարդ:*

Այժմ անդրադառնանք Բ.Իշխանյանի սգամատյանի ևս մի կարևորագույն հատվածի, որը նույնպես մեր այս գրքի հենքերից մեկն է: Խոսքը վերաբերում է բաքվահայության *նյութական վնասներին ու կորուստներին:*

Մենք կրկին ներողություն ենք խնդրում երկարաշունչ մեջբերումներ կատարելու համար, բայց կուզենայինք, որ ընթերցողը լիարժեք պատկերացում կազմեր կատարվածի մասին: Իսկ դա Բ.Իշխանյանից լավ ոչ ոք չի կարող անել:

«Թալան ու կողոպուտ խօսքերը շատ են հասարակ ու սովորական արտայայտություններ, որպեսզի նրանց տակ կարելի լինէր ամփոփել այն բոլոր փաստերն ու գործողությունները, որոնք

տեղի ունեցան հարուստ, շէն ու փարթամ քաղաքի նիւթական բարիքների և կուլտուրական արժէքների հետ: Դա մի հեղեղ էր, սոսկալի մի արհաւիրք, որ խղճալ ու խնայել, գթալ ու զիջել չգիտէր, այլ կոյր տարերքների աննահանջ մղումով աւերում ու կործանում, ջարդում ու խորտակում էր ամեն բան, ինչ վերցնել ու իւրացնել չէր կարող, և կողոպտում, թալանում ու յափշտակում էր ամեն բան, ինչ կարող էր հետը տանել և սեփականացնել:

...Երեք օր շարունակ, կոտորածների հետ զուգընթացաբար, կատարում էր «տարերային» կողոպուտը կամ «անպաշտօն» թալանը, իսկ երկու ամիս շարունակ և սիստեմատիկօրէն տեղի էին ունենում կազմակերպուած յափշտակութիւնը և պաշտօնական իւրացումները:

...Երեք օր շարունակ ու անդադար տաճիկ ասկեարները, տեղական մուսուլման հազարաւոր բանդաները և շրջակայքից թափուած թուրք գիղացիները կողոպտում, յափշտակում ու տանում էին այն բոլորը, ինչ ցանկանում էին և ինչ կարող էին տանել հայերի տներից, խանութներից, գրասենեակներից, հաստատութիւններից և եկեղեցիներից: Երկու ամիս շարունակ տաճիկական հրամանատարութիւնը և ազերբէյջանեան ադմինիստրացիան՝ վերջին ռստիկանից սկսած մինչև մինիստրները, բեկվիզիցիայի անուան տակ հայ ունևոր ընտանիքների կահ-կարասիքները, զարդարանքներն էին յափշտակում, քաղաքային շտեմարաններն և պահեստներն էին դատարկում, դուրս տանելով դէպի Գանձակ և այլուր, քաղաքի սեփականութիւնը, ինչքն ու գոյքը:

...Ինչպէս սպանութիւնների դէպքերն են եղել, այնպէս էլ թալանի ու կողոպուտի փաստերն ու գործողութիւնները կատարուել և արտայայտուել են քաղաքի զանազան մասերում, փողոցներում, տներում, և՛ զանազան ու զանազան, և՛ նման եղանակներով: Բոլոր զանազանութիւններով հանդերձ, մի քանի փաստեր ընդհանուր են եղել ամեն տեղ: Չի եղել մի տուն, մի բակ և նոյն իսկ մի ընտանիք, որտեղ կողոպուտիչների միայն մի խումբ մտած լինի. ամեն տեղ եղել են մի քանի խմբեր մէկը միւսից

առանձին, մեկը միւսից անկախ պահանջներով. բայց եղել են նաև շատ դեպքեր, երբ միևնույն խմբերը «այցելել» և թալանել են միևնույն տներն ու բակերը մի քանի անգամ: Այնուհետև չի եղել մի տուն, բակ կամ ընտանիք, որտեղ մուտք կոխած թիրքն ու թաթարը առանց թալանի դուրս գնային:

...Ուվքե՞ր են եղել թալանչիները:

Դրանք եղել են կոչման, ծագման ու հասակի, դիրքի ու զբաղմունքի մի խառնիճադանճ հասարակություն: Ե՛ւ տաճիկը, և՛ թաթարը, և՛ թիրք ասկեարը, և՛ մուսուլման ամբոխը, թե՛ փոքրահասակ փողոցային լակոտները և թե՛ բարձր տարիքաւորները, թե՛ բեռնակիր համշարիները, մանրավաճառները և թե՛ դոչիների բոլոր զաղտնի ու ակնյայտնի տեսակները - բոլորն էլ անխտիր թաթախուել ու իւղուել են թալանով: Նրանք պտտում էին խումբ-խումբ, խառը կամ զատ-զատ, մեկը միւսին ուղեկցելով կամ մեկը միւսից անկախ:

Վերյիշելու է այն ակնյայտնի փաստը, որ թիրք ասկեարներն իրանց թալանի եղանակով զգալի կերպով տարբերում էին տեղական մուսուլմանական բանդաներից: Ասկեարները գլխաւորապէս պահանջում և յափշտակում էին դրամ, ոսկի, արծաթ, թանկարժէք իրեր ու զարդարանքներ: Մինչդեռ թաթարները ինչ պատահում էր, ինչ գտնում էին փակ պահարաններում, կողպած սնդուկներում ու արկղներում - բոլորը անխտիր, մինչև վերջին թելը հանում, կողոպտում էին, կացիններով, մուրճերով և երկաթե ձողերով ջարդ ու փշուր անելով ամեն մի փակ տեղ, ամեն արգելադիր խոչընդոտ: Ապշեցուցիչ էր տեսնել բաշրոմե-ի ենթարկուած բնակարաններում, թե՛ ինչպէս թուրք պոզրուճչիկները, չկշտանալով հսկայական առատ աւարից, չէին քաշուել անգամ վերջին գեադայի աւազակային ազահութիւնից. նրանք պոկել, վերցրել էին ոչ միայն ներքնակի երեսն ու աստառը, այլ և բազկաթոռների և աթոռների վերնի (նստելատեղի) ծածկոցը, չթեղեն կամ մահուղէ կտորը: (Տողերիս գրողը կոտորածից երեք օր անց ամեն օր դուրս էր գալիս քաղաք և այցելում շատ ծանօթների և

ընկերների, նրանց միջոցով նաև ուրիշ բնակարաններ ստեղծուած դրութեան հետ ծանօթանալու համար: Դիտածս տեսարանները չեն ենթարկուում ոչ մի նկարագրութեան): Կրկնակի անխնայ է եղել վերաբերմունքը այսպէս անուանուած «անտէր» բնակարանների հետ, որոնց տէրերը թողել փախել էին քաղաքից: Շատ տեղեր նկատուել է հետնեալ փաստը. այն բնակարաններում, ուր թալանչիները փող չէին գտել, իրանց զայրոյթը թափել են անշունչ առարկաների վրայ: Կողոպտելով այն բոլորը, ինչ ցանկանում էին և կարող էին կողոպտել, պոգրումչիկները վրէժխնդրութեամբ կատաղած ջարդել, կոտորատել էին պահարաններ, սեղաններ ու աթոռներ, մեծ հայելիներ ու կոմոդներ, կախած ժամացոյցներ: Գետնին ասեղ ձգելու տեղ չէր լինում, թափթփուած էին փշրտուած ամանեղէններ բոլոր տեսակների, պատառոտուած էին թղթեր ու գրքեր ամենավանդալական եղանակով:

Այն, ինչ տեղի էր ունեցել տների, մասնաւոր բնակարանների հետ, նոյնը կրկնուել է խանութների, առևտրական տների և գրասենեակների, գործարանների և այլ ձեռնարկութիւնների, եկեղեցիների, դպրոցների և զանազան կուլտուրական հաստատութիւնների հետ: Ամեն տեղ նոյն աւերն ու կողոպուտը, թալանն ու կործանումը, աւագակութիւնն ու վանդալիզմը: Մարսափելի տեսարան էին ներկայացնում այն փողոցները, ուր զետեղուած էին հայերի խանութներն ու առևտրական տները: Երկաթէ ձողերով ու կացիներով ջարդուփշուր արած դռները, դատարկած ողջ բովանդակութիւնը, աւերած ու կործանած ներսի կահաւորութիւնը: Եկեղեցիները ամբողջապէս կողոպտել էին - բոլոր թանկագին զարդերը, խաչերը, հոգևորականների հանդերձները, սրբութիւնները և նոյնիսկ այն գրքերը, որոնց կազմի վրայ արծաթե խաչեր են եղել: Ի հարկէ, չեն խնայուել նաև առաջնորդարանը, կոնսիստորիան:

...Սակայն այդ անբաւ հարստութիւնը ոչ բոլորը բաժին է ընկել նրանց, որոնք անմիջապէս մասնակցել են պոգրումներին և բաշքոմէ-ներին: Երևակայեցէք, որ նոյն իսկ կողոպուտի և թալա-

նի մէջ կան գործողի և վայելողի, «վաստակաւորի» և պարագիտի սոցիալական տարբերութիւններ: Մի թէ այն յաղթանդամ բազուկները, որոնք ջարդում, փշրում, կոտրում էին դարպասները, դռները, պատուհանները, պահարաններն ու սնդուկները, կամ այն բեռնակիր մշակները, որոնք բոլոր ծանրութիւնները շալակում և դուրս էին տանում կողոպտավայրերից դէպի անյայտ անկիւններ, - մի թէ, ասում ենք, դրանք են, որ տէր են դարձել այդ հարստութիւններին և պիտի վայելէին այդ բարիքները:

Քաւ լիցի:

Դրանք ուրիշի հաշուին վարձուած և չնչին պատառներ իւրացրած բանդաներ էին, որոնց ամբողջ «քրտնաթոր աշխատանքը» յափշտակում, իւրացնում և վայելում էին կուլիսների յետև մեքենայութիւններով պարապող մեծերը, հարուստներն ու ազդեցիկները, դոչիների դոչիները:

Ահա ում ձեռքն են անցել միլիոնները և միլիոնների հարստութիւնները:

Տիրողներն ու մեծերը գիտէին թալանած հարստութիւնը իրար մէջ բաժանելու եղանակը:

Մեծ պահեստները և առանձնապէս թանկարժէք կարասիներն ու իրերը իւրացնում էր թիւրքական հրամանատարութիւնը և հայրենիք տեղափոխում: Մնացածը՝ բազմատեսակ իրերի և բարիքների անբաւ պաշարը անցնում էր տեղական մեծերի և ազդեցիկների ձեռքը, որոնք առաջին շաբաթների ընթացքում կամ պահեցին թագգրած կամ տեղափոխեցին շրջակայքի ապահով վայրեր և կամ Գանձակ ու այնտեղ հրապարակային տօնավաճառ սարքեցին: Յետոյ արդէն, Ազերբեյջանի «օրինական» իշխանութիւնը և քաղաքական կացութիւնը «ամրապնդուելուց», սկսուեց թալանած ապրանքների ազատ վաճառքը Բազում թէ՛ մասնաւոր կերպով թուրքական թաղերում ու տներում յատուկ յայտարարութիւններով և թէ՛ մանավանդ, բազարներում ու թուրքական խանութներում:

Հայի ապրանքը ծախուում էր թուրքի խանութում և թուրքի

միջոցով օր-ցերեկով, օրէնքի բոլոր կանոններով: Աւելին կասենք. հայերի խանութները զաւթել էին թուրքերը և այնտեղ վաճառում էին հայերից կողոպտած ապրանքները: Բշխանութիւնների կողմից թոյլատրուած թալան ու կողոպուտը վաճառում էր, որպէս նոր տիրոջ սեփականութիւն, նոյն իշխանութիւնների կարգադրութեամբ, գուցէ և մասնակցութեամբ: Ուրիշ խօսքով, մասսայական աւազակութիւնը պաշտպանում և հովանաւորում էր կառավարութեան օրէնքի կողմից:

Ահա դրա մէջ էր կայանում Ազերբեյջանի «նոր պետականութեան» հիմքերից մէկը:

Ստեղծուել էր հայ ազգաբնակչութեան համար մի անելանելի դրութիւն:

Մի կողմից Ազերբեյջանի կառավարութեան բացառիկ օրէնքներով (Հոկտեմբերի 8-ի օրէնքը 1918թ.) փողոց էին նետուել հայ բանտրութիւնը, տեխնիկական և գրասենեակային պերսոնալը, իսկ միւս կողմից թուրքերի անարգել զաւթումներով գրկուել էր իր ունեցուածքից հայ առևտրական դասը, որ այնքան խոշոր էր իր քանակով և պատկառելի իր ունեցած մասնակցութեամբ Բագուի առևտրի մէջ: Այն դասը, որ առաջ իր ձեռքն էր կենտրոնացրել Բագուի մի քանի յայտնի փողոցների առևտրական տների և խանութների բացարձակ մեծամասնութիւնը (որոշ մասերում անգամ ամբողջութիւնը), ինչպէս են Տելեֆոննի, Բոլշոյ-Մորսկոյ, Տորգովի, Մերկուրևսկի, Կրիվոյ, Բարեատինսկի, Վելիկոկնեաժևսկի փողոցներում, - այդ դասը չքացել է այժմ առևտրական ասպարեզից և նրա փոխարէն հրապարակ են եկել մանրավաճառների, մրգավաճառների և գինեվաճառների խղճուկ թափփուկներ Ստանիսլաւսկի և Կանիտապինսկի յետրնկած փողոցներում:

Այդպէս, Բագուի հայ ազգաբնակչութիւնը երբեմնի ամենաշէն ու բարգաւաճ համայնքը, ամենահարուստ ու փարթամ գաղութը Անդրկովկասի ողջ հայութեան մէջ, ենթարկուեց տնտեսական ճնշումների ու հալածանքների անօրինակ հարուածների: Հայկական չքաւորութիւնը հասել էր ծայրահեղ չափերի, մաս-

սայական պատուպերիզմը դարձել էր տիրապետող երևոյթ. երկու սեռերից փողոց նետուած անգործների թիւը հասնում էր լեզիոնների»¹:

Ահա այսպիսին էր ցեղասպանության դրդապատճառներից և միաժամանակ նպատակներից մեկի ընդհանուր պատկերը:

1918թ. նոյեմբերի վերջին անգլիական հրամանատարությունը հրապարակում է մի պաշտոնական հաղորդագրություն, որով Բաքվի բնակչությանը կոչ է անում թուրքերի երկամսյա տիրապետության ժամանակ կրած նյութական վնասների ու կորուստների վերաբերյալ եռօրյա ժամկետում ներկայացնել տնային կոմիտեների կողմից վավերացված ցուցակներ՝ փոխհատուցում ստանալու համար: Անշուշտ, այդպիսի կարճ ժամկետում, երբ դեռ բնակչությունը հոգեբանական ցնցակաթվածի մեջ էր, իսկ փախստականները նոր-նոր էին սկսում վերադառնալ, նման գործ կատարելն անհեթեթություն էր: Այդ իսկ պատճառով անշարժ գույքի տնօրինման գլխավոր մարմինը՝ Ցենտրոդոմը, ստիպված է լինում ժամկետը, նախ, երկարաձգել մինչև դեկտեմբերի վերջ, ապա՝ մինչև 1919թ. փետրվարի 15-20:

Բնակչությունից քննարկման ընդունվեց 32.817 ցուցակ, որից հայերի ներկայացրածը 25.103 (76,50%) էր, ռուսների, հրեաների, փոքրաթիվ եվրոպացիների՝ լեհերի, չեխերի, հույների և այլոց ներկայացրածը՝ 6596 (20,10%), վրացիներինը՝ * 434 (1,32%), որքան էլ տարօրինակ լինի՝ մուսուլմաններինը՝ 216 (0,66%), հիմնարկներինը, ձեռնարկություններինը և հաստատություններինը՝ 468 (1,42%): Ընդ որում, հայերի ներկայացրածների թվաքանակի մեջ չմտան 1913 ցուցակներ, որոնք «կորան». դրանք գրանցվել էին տնային ու թաղային կոմիտեներում, սակայն չէին հասել Վերստուգիչ հանձնաժողով:

Բ.Իշխանյանը ռուսներին և այլ ազգերին, ինչպես նաև «թխրքերի և թաթարների դաշնակից վրացիներին» ու մուսուլմաններին պատկանող ունեցվածքի թալանն իրավացիորեն հա-

¹Նշվ. աշխ., էջ 107-111:

մարում է թյուրիմացության արդյունք: Մակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ «*թուրքական ռասայի թաքուն բարոյական թերարժեքությունը*» պատճառ էր դարձել, որ «ձեռի հետ» կողոպտվեին նաև հավատակից մուսուլմանները:

Ըստ ներկայացրած ցուցակների, ընդհանուր գումարը կազմեց 951 մլն 700.575ռ., որից հայերինը՝ 660 մլն 788.148ռ. (69,43%), ռուսներինը և այլազգիներինը՝ 86 մլն 208.074ռ. (9,06%), վրացիներինը՝ 6 մլն 052.901ռ. (0,63%), մուսուլմաններինը՝ 6 մլն 140.916ռ. (0,65%), ձեռնարկություններինն ու հաստատություններինը՝ 192 մլն 510.536ռ. (20,23%):

Այստեղ հարկ է նշել մեկ հանգամանք ևս: Վերստուգիչ հանձնաժողովը մերժեց և հրաժարվեց քննարկել 498 ցուցակ, որից 301-ը պատկանում էր հայերին (60,44%), 116-ը՝ ռուսներին և այլազգիներին (23,30%), 12-ը՝ վրացիներին (2,41%), 16-ը՝ մուսուլմաններին (3,21%), 53-ը՝ ձեռնարկություններին ու հաստատություններին (10,64%): Վերջինները ներառում էին բաժնետիրական ընկերությունները, քաղաքային, պետական, հասարակական, մշակութային, կրթական, եկեղեցական հաստատությունները, արհեստակցական ու կոոպերատիվ միությունները, առևտրային, արտադրական ձեռնարկությունները, կուսակցությունները և այլ հիմնարկներ: Ակնհայտ է, որ հայ բնակչությունից հետո ունեցվածքի արժեքով երկրորդ տեղում այս խումբն էր, և եթե նկատի ունենանք, որ դրանց մեծ մասը հայապատկան էր, ապա պարզ է, որ հանձնաժողովը աչառու վերաբերմունք ուներ:

Ուշագրավ են մերժումների պատճառաբանությունները: Նախ, ցուցակների մեծ մասի վրա ուղղակի մակագրված էր «Մերժել» և ուրիշ ոչինչ: Ապա կային այսպիսի մակագրություններ՝ «Կողոպտուտի փաստը ապացուցված չէ», «Վնասները պայմանավորված են պատերազմով», «Վնասները եղել են Բաքվի շրջանից դուրս», «Վնասի պատճառը հրդեհն է»: Բայց ամենատարօրինակն այն էր, որ մերժվեցին այն ցուցակները, որոնք առնչվում էին *ադրբեջանական իշխանության բռնագրավումների և*

տեղի աղբբեջանցիների ձեռքով կատարված կողոպուտի հետ: Ահա թե ինչ է գրում Բ.Իշխանյանը. «Ի՞նչ հիման վրայ մերժել են այդպիսի վնասներին բաւարարութիւն տալու - անհասկանալի է: ...Ըստ երևոյթին վերաստուգիչ յանձնաժողովը կամ նրան հրահանգներ տուող վերին մարմինը առաջնորդուել են ֆորմալ իրաւաբանական տեսակէտով և ոչ տեղի առանձնայատուկ դրութեամբ: Նրանց համար կարևոր և ընդունելի են եղել միայն արտաքին թշնամու հասցրած հարուածները և սրանց պատճառած վնասները, մոռանալով, որ ներկայ դէպքում (և առհասարակ մուսուլմանական վայրերում) չկայ տարբերութիւն արտաքուստ արշաւող թիւրքի և ներքուստ ճանապարհ հարթող թաթարի միջև ըստ նրանց ունեցած վերաբերմունքի դէպի ռուս պետականութիւնը մի կողմից և դէպի հայկական տարրը միւս կողմից: Դրսի տաճիկը և ներսի թաթարը կատարել են իրանց թալանն ու պոզրոմները միննոյն մեծերի կամքով ու կարգադրութեամբ: Դա ակներև փաստ է բոլորի համար և ամենից լաւ յայտնի իրան՝ անգլիական հրամանատարութեան, այնպէս որ ի զուր վերաստուգիչ յանձնաժողովը ձևական առարկութիւններով մերժել է տնտեսապէս վերջին ծայր քայքայուած բազմաթիւ ընտանիքների արդար պահանջները (ընդգծ. հեղ. - Խ.Դ.)»¹:

Ինչևէ: Հանձնաժողովն ընդունեց ցուցակները, սակայն սկսեց ստուգել դրանց իսկությունը, համապատասխանությունն իրականությանը, նշված վնասների փոխհատուցման ենթակա գումարների ճշմարտացիությունը: Շուրջ երկամսյա ստուգումներից հետո հանձնաժողովը հանգեց հետևյալ եզրակացության. ընդհանուր գումարը նվազեցրեց 37,39%-ով և բավարարման ենթակա ճանաչեց 592 մլն 101.642ռ., որից հայերին՝ 453 մլն 184.126ռ. (կրճատումը՝ 31,51%), ռուսներին և այլազգիներին՝ 48 մլն 824.531ռ. (կրճատումը՝ 43,37%), վրացիներին՝ 3 մլն 995.049ռ. (կրճատումը՝ 34%), մուսուլմաններին՝ 2 մլն 226.822ռ. (կրճատումը՝ 63,74%), հիմնարկ-ձեռնարկություններին՝ 83 մլն 871.114ռ. (կրճատումը՝ 56,44%):

¹Նշվ. աշխ., էջ 122:

Այս թվական տվյալները որոշակի խորհրդածությունների առիթ են տալիս: Նախ, պարզ է, որ ամենից քիչ նվազեցվել է հայերի գումարը, բայց դա հայի «սիրուն» աչքերի համար չէր արվել: Բանն այն է, որ ցուցակներ ներկայացնելուց առհասարակ հրաժարվել էր քիչ թե շատ ունևոր դասը, իսկ ներկայացնողների գերակշիռ մասը վնասի արժեքը նշել էր իրական-շուկայականից մի քանի անգամ էժան՝ մտածելով, որ եթե ցածր գին նշանակի, գուցե թե ինչ-որ բան ստանա: Բնական է, որ այդ պայմաններում հանձնաժողովը հաճույքով «ընդառաջեց» հայերին:

Երկրորդ, հիմնարկ-ձեռնարկությունների գումարը վիթխարի էր, և դրա կրճատումն էլ էր տրամաբանական: Այնինչ, ըստ Բ.Իշխանյանի մոտավոր հաշվարկների, միայն հայկական դպրոցների ու երեք եկեղեցիների վնասը կազմում էր 20 մլն ռուբլի:

Երրորդ, խիստ խոսուն է մուսուլմանների՝ տոկոսային հարաբերությամբ ամենամեծ չափով կրճատման պարագան: Դա «թյուրքական ռասայի բարոյական թերարժեքության» ևս մեկ դրսևորում էր: Չնայած ադրբեջանցիներն իրենք էին թալանել, կողոպտել ու հարստացել, բայց ցանկություն էին ունեցել մի բան էլ պլոկել անգլիացիներից և իրենց կառավարությունից: Ավելին. *«...տուժած մուսուլմանների մէջ եղել են այնպիսիները, որոնց գոյքը թալանուել է Մարտի անցքերի ժամանակ և ոչ Սեպտեմբերի նրանք օգտուել են հանգամանքից և ցանկացել են «նադդել» իրանց հին վնասը. այդպիսի կեղծիքներից միայն քչերն են բացուել»*¹:

Արդյունքները հրապարակելուց հետո՝ հանձնաժողովը 1919թ. մայիսի 8-ից բոլոր ցուցակ ներկայացնողներին տրամադրեց չեկեր, որտեղ նշված էր յուրաքանչյուրի ստանալիք գումարի չափը:

Ի վերջո, որո՞նք են Բ.Իշխանյանի ուսումնասիրության սարսափալի հայկական «վերջնահաշվարկները»: Ընթերցողին կխնդրեմք մտապահել հետևյալ թվերը. *Ֆիզիկապես ոչնչացված՝*

¹Նշվ. աշխ., էջ 115:

25.462 հոգի, բռնության ենթարկված՝ 3598 հոգի: Դաշնակիցների ստեղծած ազգամիջյան հանձնաժողովի կողմից օրինական վճարման ենթակա է ճանաչվել 453 մլն 184.126 տուրլի:

Փակենք Վկայի և Ականատեսի ցուցմունքների գիրքը՝ հեղինակի իսկ խոսքով. «Ահա թիւրք-թաթարական բարբարոսութեան և արիւննուշտ քաղաքականութեան արդիւնքը Սեպտեմբերեան մեծ սարսափների օրերին:

Հարկ ենք համարում աւելացնել, որ այդ թուերից թէ առաջինը և թէ երկրորդը պակասաւոր են: Իրապէս աւելի է եղել մէկի թէ միւսի քանակը: Մեր թուերը տալիս են միայն մօտաւոր պատկերը իրականութեան:

Սակայն միամտութիւն կլինէր, ի հարկէ, կարծել, որ այդ չոր հաշիւների սիստեմատիկ նկարագրութեամբ սպառում է այն ակտի և հարուածների շարանը, որի անունն է Բագուի հայութեան Սեպտեմբերեան ողբերգութիւն: Ոչ գոհերի նոյնիսկ մաթեմատիկօրէն ճիշտ թիւր, ոչ նիւթական վնասների և կորուստների անգամ մինչև վերջին կոպէկի թուաբանական անսխալ հաշիւները անկարող են անցած օրերի ողբերգական խորութիւնը վերարտադրել, եթէ այդ բոլորն անհրաժեշտ են նրա համար, որպէսզի կարելի լինի որոշ գաղափար տալ օտարներին և առհասարակ ոչ-ականատես եղածներին այն դրութեան և ապրումների մասին, որ Բագուի հայութիւնը ունեցել է երեքօրեայ կոտորածների և պոգրոմների ժամանակ և երկամսեայ բարբարոսական ըեժիմի շրջանում:

Բայց մենք հասած ենք համարում մեզ մեր նպատակին»¹:

Այո, Բախշի Իշխանյանը հասավ իր նպատակին: Նա ոչ միայն արձանագրեց, վիճակագրեց, գիտականորեն վերլուծեց բաբվահայոց ցեղասպանությունը, այլև մեզ ավանդեց մի անգնահատելի և անվիճարկելի վավերաթուղթ, որն այսօր պետք է հետապնդի հեռահար նպատակներ և հիմք հանդիսանա պատմական արդարության վերականգնման համար:

¹Նշվ. աշխ., էջ 187-188:

Այդ մասին՝ ավելի ուշ:

Այժմ ծանոթանանք այլ վկայությունների (XXI դարի ընթերցողի հոգեկան աշխարհը չխաթարելու համար փաստաթղթերից ներկայացնում ենք համեմատաբար «անմեղ» հատվածներ):

Գերմանական բանակի փոխգնդապետ Պարակենը սեպտեմբերի 26-ին գրում էր. *«Գազանությունները մեծ մասամբ կատարվում էին տների ներսում: Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք գերագանցապես անկյուններում էին դարաված, այնպես որ հաճախ միայն հոտից կարելի էր իմանալ: Մի տեղում ես իրար վրա դարսած 7 դիակ տեսա՝ այդ թվում մի քանի երեխա...»*

Գրեթե բոլոր դիակները ծածկված էին կապտուկներով, որոնք առաջացել էին հրացանների խզակոթերի հարվածներից և խողխողումներից: Նկուղներից դիահոտ էր փչում»¹:

Հոկտեմբերի 4-ին բարոն ֆոն դեր Գուլը նշում էր. *«Թուրքերի և ադրբեջանցիների կողմից Բաքվի գրավման ժամանակ տեղի ունեցած դեպքերին իրազեկ ակնատեսների կարծիքով պարզապես կասկածից վեր է, որ թուրքական հրամանատարները հայերին բնաջնջելու և նվաճված քաղաքը կողոպտելու համար թաթարներին 3 օրով լիակատար ազատություն էին տվել:*

...Նրանք (հայերը - Խ.Դ.) ոչ միայն գրկված են անձնական իրավունքից, այլև նրանց մասնավոր սեփականությունն առանց վերապահումների պատկանում է թուրքերին:

...Ոչ թուրքերին, ոչ էլ ադրբեջանցիներին ընդունակ չեն համարում Բաքվի նավթարդյունաբերությունը նորից գործի դնելու»²:

Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ, բարոն Ֆինկելշտայնը հոկտեմբերի 5-ի զեկուցագրում մասնավորապես նշում էր. *«Հայկական մեծ թաղամասը, որն այցելեցի, ամբողջովին կողոպտված էր և լրիվ դատարկ: Բազմաթիվ ապացույցներ ստացա գազանային դաժանությունների՝ հիվանդանոցներում հայ բժիշկ-*

¹ Հայերի կոտորածները ..., էջ 104:

² Նշվ. աշխ., էջ 111:

ների, հիվանդանոցների և երեխաների կոտորածի մասին»¹:

Գրական գործիչ Սերգեյ Ռաֆայովիչը՝ «չեզոք» հրեան, իր «Ճշմարտություն Բաբվի իրադարձությունների մասին» հոդվածում գրում էր. «Նախ, Կովկասում ես գտնվում եմ առաջին անգամ, Անդրկովկասի երեք գլխավոր ազգություններից ոչ մեկի հետ կապված չեմ և ազգային հարցերի ու բախումների հանդեպ եղել և մնացել եմ խորթ: Իմ վկայությունը պետք է ընկալվի որպես միանգամայն անաչառ վկայի ցուցմունք, որը երբեք առնչություն չի ունեցել քաղաքականության հետ և որն առաջնորդվում է բացառապես ճշմարտության և արդարության վրդովված զգացումով՝ տալու փաստերի իրական և անաչառ լուսաբանումը:

Օրեր շարունակ մեծ սայլերով ու բեռնատարներով քաղաքից դուրս էին բերվում դիակները: Ջարդից դեռևս ութ օր անց քաղաքի կենտրոնական և կայարանամերձ մասերում, ուր անձամբ եղել եմ փողոցներում ու տներում, տիրում էր դիակների անտանելի հոտ: Հիմնահատակ ավերված բնակարաններում ես տեսել եմ բռնաբարված ու սպանված կանանց, ծծկեր երեխաների արնաշաղախ դիակներ: Ես կարող եմ մատնացույց անել տները, բնակարանները և տնային կազմակերպությունների այն ներկայացուցիչներին, որոնք ինձ հետ միասին կատարել են այդ շրջայցերը և կհաստատեն իմ ամեն մի խոսքը:

20-25 հազար սպանվածների մասին ինձ ասել են մարդիկ՝ բացարձակապես չեզոք և միանգամայն անաչառ ռուսներ, որոնք գլխավորում էին կենտրոնական տնային կազմակերպությունը, այսինքն՝ առավել հնարավորություն ունեին գոնե մոտավորապես պարզելու դուրս բերվող դիակների քանակը, և նախկին դատական գերատեսչության բարձրաստիճան պաշտոնատարները՝ մարդիկ, որոնք բավականաչափ իրավասու էին նման հարցերում:

...Իսկ դրան (սպանդին - Խ.Բ.) նախորդող ջարդարարության մասին խոսելու հարկ իսկ չկա: Դա իսկապես մի բացառիկ երևույթ էր: Եվ եթե սպանությունների մեջ հիմնականում մեղա-

¹Նշվ. աշխ., էջ 112:

վոր են տեղացի թաթարները, ապա թալանի հարցում նրանց հետ լիովին պատասխանատու են թուրք ասկյարները: Քաղաքի պարետն ինքը՝ գնդապետ Նազիմ-բեյը, որը գլխավորել էր Բաքուն գրաված բանակը, իմ բարեկամներից մեկի հետ գրույցի ժամանակ այսպես էր արտահայտվել այդ ջարդարարության կապակցությամբ. «*Et quand enfin je suis entre dans la ville ce que j'ai vu c'était e norme*» («Եվ երբ ես ի վերջո մտա քաղաք, ապա այն, ինչ տեսա՝ հրեշավոր էր») (Ֆրանս. թարգմ. Ս.Ռ.-ի - Խ.Դ.)¹:

Նոյեմբերի 7-ին Բաքվում հրաշքով գնացք նստեցին և 2 օր անց Թիֆլիս հասան Սիրանույշ և Շուշանիկ Մկրտչյան քույրերը: Ասում ենք՝ հրաշքով, որովհետև Բաքվից մեկնողներին ստուգում էին ոչ միայն փաստաթղթով, այլև «արտաքին տեսքով, աչքերի հայացքով, գանգի կազմությամբ» և ըստ այդմ բացահայտում «հանցավոր տարրերին»: Քույրերն այսպիսի ցուցմունք տվեցին. «Քաղաքը գրավելուց հետո, Նուրի փաշայի հրամանով, թուրք-թաթարական ավազակախմբերը 3 օր աներևակայելի զազանություններ էին գործում քաղաքի հայ բնակչության նկատմամբ: Չոհերի թիվն առնվազն 30.000 է: Գազանությունների պատկերը սարսափելի է՝ չէին խնայում ոչ կանանց, ոչ երեխաներին, ոչ ծերերին: Ամեն բակում կար 80-100 դիակ, փողոցները լի էին դիակներով, ջրում լողում էին դիակները դժբախտ երեխաների, որոնց սպանել էին ափին և նետել ծովը... Խոսքեր չկան նկարագրելու այն զազանությունները, որոնց ենթարկվում էր անպաշտպան բնակչությունը. սպանությունները սարսափելի բնույթ ունեին, գնդակահարում էին միայն ծանակումից ու պղծանքից հետո՝ կտրում էին ականջները, լեզուն, մարմնի մասեր, ապա նոր սպանում: Շուրջկալներ էին սարքում աղջիկների նկատմամբ. նրանց բռնաբարումները սովորական երևույթ էին:

...Այդ զազանությունների ժամանակ պատշաճ բարձրության վրա չէր գտնվում նաև ռուս և հրեա բնակչության մի մասը, որը չէր խորշում հայերի բնակչության վայրերը մատնելուց»²:

¹Նշվ. աշխ., էջ 167-170:

²Նշվ. աշխ., էջ 140: Ռուս. թարգ. հեղ.:

Դեկտեմբերի 4-ին Բաքվից մերձծովյա Ալյաթ երկաթուղային կայարան են ուղարկում «Պոլյուս» շոգենավը, որպեսզի այնտեղից բերեն հայ գերիներին: Անձնակազմից բացի, նավի վրա կար սանիտարական ջուկատ, որը բաղկացած էր բժշկից, բուժակուսանողից ու երեք սանիտարներից (նրանցից մեկը ավստրիացի էր): Ահա թե նրանց ստորագրությամբ ինչպիսի փաստաթուղթ է պահպանվել. «Վերջապես որոշեցինք նավակներով ափ իջնել. մեզ հետ էին նավապետի օգնականն ու երեք նավաստիներ: Մեզ շրջապատող մեռյալ լռությունը ճնշող տպավորություն էր գործում: Ափ իջնելով՝ մենք նկատեցինք մի մարդու, որն արագ քայլերով մեզ էր մոտենում. նա Ջուլֆայի երկաթուղագծում ծառայող ռուս պահակ էր: Հետագայում նա ամենուրեք մեզ ուղեկցում էր և բացատրություններ տալիս: Ինչպես պատմեց այդ պահակը, նոյեմբերի 17-ին կամ 18-ին (ուշադրություն դարձրեք ամսաթվին, այսինքն, անգլիացիների՝ Բաքու մտնելու օրը - Խ.Դ.) Բաքվից՝ Մադիանի գորանոցներից, բերել էին 260 հայ նոր գերի, որոնց առանց հաց ու ջրի պահել էին 3-4 օր, ապա ավելի վաղ այստեղ եղած հայ գերիների հետ երկաթգծով տարել Ելիզավետպոլ: Թե ավելի վաղ որքան հայ գերի կար, չհաշված այդ 260 մարդը, պահակը չգիտեր:՝ Երբ հասանք ափին գտնվող փայտաշեն կառույցներին՝ տեսանք ընդարձակ գերեզմանոց կամ, ավելի ճիշտ, սպանդանոց: Աջ ու ձախ ընկած էին այլանդակված, կիսամերկ, կիսով չափ հողի մեջ թաղված դիակներ, դիակներ՝ առանց ոտքերի կամ ձեռքերի, առանձին ընկած գանգեր... Այդպիսի դիակները տասնյակներ էին: Պահակի խոսքերով, ծարավից տանջվող գերիները գնում էին ծովափ, որպեսզի գոնե ծովի ջրով հագեցնեն պապակը, և շատերին գնդակահարում էին ջրի ափին:

...Բայց նկարագրվածից շատ ավելի սարսափելի էին այն պատկերները, որոնց ականատես եղանք բարաքներում. հավանաբար, այստեղ էին եղել հիվանդները և ուժասպառները: Նրանցից մեկը կիսամերկ էր, մյուսի ուսերին գցված էր պարկի լաթակտոր. այդ տարաբախտը, երևի, ցանկացել էր դրանով պաշտ-

պանվել ցրտից, այդ վիճակում էլ մահացել էր...

Փայտե շինությունների կողքին տեսանք պարզունակ աղաց, շուրջը՝ մանրացրած հարդի մնացուկներ: Պահակի խոսքերով՝ դժբախտ գերիներն այդպես իրենց համար հաց էին պատրաստում:

...Ոչ մի հնարավորություն չունենալով այդտեղ մնալ, որպեսզի գոնե դիակները թաղեինք (ոչ մի գործիք չունեինք), ամսույս 6-ին վերադարձանք Բաքու»¹:

Եվս մեկ վկայություն: Նոյեմբերի 23-ին Հայոց ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպիսկոպոս Վարդագարյանը Բաքվում և Բաքվի շրջանում դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Թոմսոնին մի ծավալուն ուղերձ հղեց, ուր ամենայն խորությամբ նկարագրել էր բաքվահայության ողբերգությունը: Մենք կարող էինք ամբողջությամբ ներկայացնել այդ փաստաթուղթը, բայց խնայելով ընթերցողի (ինչպես նաև ինքներս մեր) նյարդերը, մեջ կբերենք որոշ պատառիկներ. «Մորթում և սպանում էին անխտիր բոլոր հայերին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, ծերերին, առողջներին ու հիվանդներին, անգամ՝ ծծկեր երեխաներին, հավանաբար նպատակ ունենալով բնաջնջել ամբողջ հայ բնակչությանը:

Ըստ հավաստի տեղեկությունների, սայլերից բացի, 250 փութ բեռնատարողությամբ 25 բեռնատար ավտոմեքենաներ 4 օր ու գիշեր անընդհատ դիակներ էին տեղափոխում, և այդ աշխատանքը չէր վերջանում: Դիակների մեծ մասը, զանգվածային սպանդի հետքերը կոծկելու նպատակով, այրվեց Սադիանի գորանոցների մոտ, հիմնականում՝ աղբանոցում:

...Հրեշավոր սպանդին զուգընթաց, ինչպես գորամասերը, այնպես էլ տեղի մուսուլմանները առանց շունչ քաշելու, շարունակաբար, կարծես նախօրոք հղացված ծրագրի համաձայն, իրականացնում էին խաղաղ քաղաքացիների ունեցվածքի նույնքան հրեշավոր կողոպուտ: Բոլորից շորթում ու իլում էին փող, ոսկե և արծաթե իրեր, զարդեղեն, հայերի բնակարաններից, պահեստներ-

¹Նշվ. աշխ., էջ 156-157: Ռուս. թարգ. հեղ.:

րից, խանութներից, կրպակներից վիթխարի քանակությամբ կրում-տանում էին գողացված ինչք՝ ապրանքներ, մանուֆակտուրա, կահույք, զգեստներ, հագուստ, կոշիկներ, սպիտակեղեն և զանազան տնային կարասի, ընդ որում՝ շորթման ու թալանի ժամանակ հաճախ տարբերություն չէին դնում հայերի և այլ ազգությունների, անգամ՝ արտասահմանցիների միջև:

...Մարդասպաններն ու թալանչիները բացեփրաց հայտարարում էին, որ քաղաքը երեք օրով դրված է իրենց լիակատար տրամադրության տակ:

Գազանային զանգվածային կոտորածը երբեմն իրականացվում էր այնպիսի դաժանությամբ, որ դժվար է անգամ հավատալ այդպիսի մոլագարության հնարավորությանը: Դեպքեր են եղել, երբ ցնորված հայերի աչքի առաջ դահիճները դանակներ էին սրում և համակվելով ինչ-որ հրեշավոր սադիզմով՝ իրենք իրենց ոգևորում էին, դժբախտներին թվարկելով ու նկարագրելով այն կտտանքները, որոնց ենթարկվելու էին:

Բալախանում՝ Բաքվի նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի հիվանդանոցում, մորթել են բոլոր հայ հիվանդներին, բոլոր հայ ծառայողներին ու երեք հայ բժիշկներին, ընդ որում՝ ծանր հիվանդներին ոտքերից քարշ տալով տարել էին բակ:

Փախստականների մանկական որբանոցում կատաղությամբ բռնում էին վախից խելագարված երեխաներին և չորրորդ հարկից նետում փողոց:

Հրեշագործություններն ու անմարդկայնությունը հասնում էին այնպիսի ծայրահեղ աստիճանի, որ տեղի մուսուլմանները ասկյարներից գնում էին գերի հայերի՝ վրեժխնդրության և դաժան հաշվեհարդարի համար: Երիտասարդ հայուհիներ, երբեմն էլ տղա-երեխաներ գազանաբար բռնաբարվել են, հաճախ՝ ամուսինների ու հարազատների աչքի առաջ:

...Զանգվածային հանցագործություններից հետո սկսվեց Ազերբեյջանական կառավարության բուռն, համակարգված գործունեությունը, վաղօրոք հղացված գործունեությունը, որն այլ

կերպ չի կարելի անվանել, քան արյունալի վրեժխնդրության քաղաքականություն, խաղաղ հայ բնակչության ոչնչացման, քայքայման և լիակատար տնտեսական սնանկացման քաղաքականություն: Ընդհուպ մինչև դաշնակից զորքերի մուտքը քաղաք՝ հայ բնակչության ողջ մնացած մնացորդները գտնվում էին օրենքից դուրս, առանց տարրական պաշտպանության ու հայտնվել էին խավար բարբարոսության ժամանակների հալածյալ հիլոտների և իրավագուրկ ստրուկների վիճակում:

...Նրանց մեռցնում էին քաղցից, կտտանքների էին ենթարկում, անխնա ծեծում էին, սպանում, ընդ որում՝ այդ ամենն անում էին կատաղաբար ու դաժանությամբ: Նրանցից շատերը, որոնցից ասկյարները բռնի խլել էին հագուստն ու ոտնամանները, մերկությունը ծածկելու համար հագնում էին կեղտոտ պարկեր և այդ տեսքով ոտաբոբիկ դուրս գալիս ստիպողական աշխատանքների: Նրանց շարք էին կանգնեցնում և ծեծով ու տանջանքներով ստիպում բարձրաձայն կրկնել, որ իրենք գյավուր շներ են: Լծում էին ծանր բեռնավորված սայլերին ու արարաններին, իսկ ասկյարները քաղաքացիների աչքի առաջ մտրակներով խփում էին նրանց և գրաստի նման քշում՝ նրանց հետ վարվելով ավելի վատ, քան կվերաբերվեին անասուններին: Հիվանդ ու սովալլուկ գերիներից շատերին փակում էին արտաքնոցներում և ստիպում ձեռքերով հանել կղկղանքը ու մաքրել գուգարանները»¹:

Բա՛վ է. այլևս ուժ չմնաց: Հայոց ցեղասպանության ահասարսուռ տեսարանների, թուրք-ադրբեջանական նողկանքների հետագա նկարագրությունը կարող է հանգեցնել հոգեկան խանգարման...

Մեզ անհրաժեշտ է դուրս պրծնել թուրք-ադրբեջանական գազանություններով և նրանց անմեղ զոհերի՝ հայ անթաղ մեռելներով լեփ-լեցուն խորխորատից ու փորձել սթափ մտածելակերպով գիտակցել իրադարձությունների աստառը:

Ըստ էության, թուրքերն ստեղծեցին Ադրբեջանի «Ժողովր-

¹Նշվ. աշխ., էջ 146-148: Ռուս. թարգ. հեղ.:

դավարական» Հանրապետությունը և Բաքուն հռչակեցին նրա մայրաքաղաք: Հիմնվեց թուրքական մի նոր պետական կազմավորում, որն ապագայում շատ էր պետք գալու...

Թուրքիայի և ադրբեջանական կառավարության միջև կնքված պայմանագրերի համաձայն, նավթարդյունաբերությունը, Բաքու-Բաթում նավթամուղը, կասպյան առևտրական նավատորմը, երկաթուղին 5 տարով հանձնվեցին Թուրքիային: Բացի այդ, Ադրբեջանը պարտավորվեց Թուրքիային մատակարարել 2 մլն լիրայի զանազան ապրանքներ և 1 մլն լիրայի նավթ, բամբակ, բուրդ և այլ հումք: Ամեն օր թուրքերը դուրս էին բերում առնվազն 44 ցիստերն նավթ ու վիթխարի քանակությամբ պարենամթերք: Նրանք անդարձ յուրացրին 60 շոգեքարշ, շուրջ 150 ապրանքատար և ավելի քան 100 ուղևորատար վագոն: Թուրքական բանակի կերակրման համար երկու ամսվա ընթացքում հատկացվեց 1.3 մլն փուխ ցորեն և 11 մլն ռուբլի¹:

Առաջին աշխարհամարտում Գերմանիայի ու նրա դաշնակիցների պարտությունից և Մուղրոսի զինադադարի կնքումից հետո (30 հոկտեմբերի 1918թ.) թուրքական զորքը հեռացավ Բաքվից: Նոյեմբերի 13-ին Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան վերահաստատեցին Ռուսաստանում ազդեցությունների ոլորտի բաժանման մասին նախկին համաձայնագիրը, և նոյեմբերի 17-ին անգլիական 39-րդ հետևակային բրիգադը՝ զենեռալ Թոմսոնի գլխավորությամբ, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի ներկայացուցիչների ուղեկցությամբ, մտավ Բաքու: Բաքվահայության երկամսյա մահաբեր մղձավանջն ավարտվեց, բայց իրականում հայության համար գրեթե ոչինչ չփոխվեց. դահիճը՝ թուրքի ստեղծած ադրբեջանական շինծու պետականությունը, արդեն թամբի վրա էր:

Ստեղծվեց նոր իրավիճակ. մի կողմից՝ բռլշևիկները, մյուս կողմից՝ «սպիտակներն» ու նախկին Անտանտի երկրները, որոնցից ամեն մեկն ուներ իր շահը, իսկ Բաքվից բոլորին պետք էր մեկ բան՝ նավթը:

¹ Гражданская война ..., стр. 146.

Անգլիացիները բացեիբաց հայտարարում էին, որ իրենք Բաքու են եկել, որպեսզի տեր կանգնեն ժամանակին նավթարդյունաբերությունում կատարած կապիտալ ներդրումներին (ինչի մասին մենք խոսել ենք համապատասխան գլխում): Եվ քանի որ Բաքվում գոյություն ուներ «օրինական» իշխանություն՝ ադրբեջանական կառավարությունը, անգլիացիներն իսկույն սրտակից հարաբերություններ հաստատեցին իրենց նախկին հակառակորդի հետ: Ինչո՞ւ պետք է նրանք հաշվի նստեին հայության հետ, որը ոչ միայն պաշտոնապես պատերազմող կողմ չէր ճանաչվել, այլև ակնհայտ ռուսական կողմնորոշում ուներ: Ընդ որում, այդ հայության մի մասը՝ բաքվաբնակները, արդեն սպանդի էին ենթարկվել, կիսամեռ վիճակում էին և ուղղակի կախում ունեին հենց իրենցից՝ անգլիացիներից:

Գեներալ Թոմսոնին ադրբեջանական կառավարության առաջին պահանջներից մեկն այն էր, որ նա... Ղարաբաղը մտցնի Ադրբեջանի կազմի մեջ: Գեներալը, հանուն նավթի և անգլիական կապիտալի, երկու անգամ պատվիրակություն ուղարկեց Շուշի՝ ղարաբաղցիներին հորդորել-համոզելով ենթարկվել Ադրբեջանին: Դրան ի պատասխան՝ Շուշվա, Դիզակի, Վարանդի, Խաչենի, Ջիվանշիրի* ներկայացուցիչներ Հ.Մուսայեյանը, Ա.Շահնազարյանը, Ա.Տեր-Միքայելյանը, Բ.Մուրադյանը, Ա.Մելիք-Հովսեփյանը Ղարաբաղի ամբողջ հայ բնակչության անունից դեկտեմբերի 24-ին հայտարարեցին. «...Մինչև այսօր Ղարաբաղի հայ ժողովուրդը չէ ճանաչել Ադրբեջանի կառավարություն և չի էլ կարող ճանաչել թե ներկայումս և թե ապագայում. մենք դորա համար կռիվ ենք մղել տաճիկ զորքերի դեմ. ճիշտ է, Վարանդի և Խաչենի կողմերում տաճիկները մի քանի հայ գյուղեր են ավերել, բայց և այնպես ոչ մի հայ նրանց չէ հպատակվել. Շուշին ստիպված է եղել միմիայն տեղի տալ տաճկաց ուժին, այն ևս ժամանակավոր... Մինչև այսօր ամենանեղ թույլներին անգամ մենք առանց երկյուղի պաշտպանել ենք մեր անկախությունը:

...Ղարաբաղի հայը եթե տաճիկ զորքերի թնդանոթների դեմ

կովել է Ադերբեյջանի իշխանությունը չճանաչելու համար, մեր բարեկամ Անգլիան չպետք է մեզ ստիպե նրան (Ադերբեյջանին) ենթարկվելու. դա մեզ համար, եթե մինչև իսկ տևելու լինի 3-4 ամիս, ոչ թե միայն պատվի հարց է, այլ նաև ֆիզիկական գոյության, որի համար այնքան արյուն ենք թափել. մեր ժողովրդի մի մասը մերկ է ու քաղցած, զուրկ է նյութական ամեն մի միջոցից, փողի երես ահա մի տարի է չի տեսել, նա պատրաստ է նույն զոհողությունն տանել նաև ապագայում, միայն թե չճանաչել ոչ մի մահմեդական գերիշխանություն ազատ Ղարաբաղի լեռներում: ...Ամբողջ 5 տարվա ընթացքում ազատության համար կովող դարաբաղցին չէ կարող յուր արշալույսի օրերին Ադերբեյջանի իշխանություն ճանաչել»¹:

(«Բարեկամ Անգլիան» ժամանակ ու հնարավորություն չուներ Ղարաբաղը Ադրբեյջանին հանձնելու: Դա արեց Ստալինի գլխավորած Կովկասյան բյուրոն, որն ունեցավ 2 տարվա կյանք, բայց որի՝ 1921թ. մարտի 21-ին ընդունած տխրահոշակ որոշումը մնաց պատմության մեջ):

1919թ. անգլիացիներն Ադրբեյջանը փրկեցին Ա. Դենիկինի ձեռքից, որի Կամավորական բանակը բոլշևիկներից մաքրեց Ռուսաստանի ամբողջ հարավը և հասավ Կասպից ծով: Մեծ Բրիտանիան ուներ իր աշխարհաքաղաքական խոշոր ծրագիրը. Դենիկինի ռազմական հաջողությունները կարող էին հանգեցնել բոլշևիզմի դեմ նրա լիակատար հաղթանակի, և արդյունքում Ռուսաստանը կվերականգնվեր նախկին կայսրության սահմաններում, բայց դա Անգլիային բոլորովին պետք չէր: Անգլիացիները ձգտում էին Անդրկովկասն անջատել, ստեղծել իրենց ենթակայության տակ գտնվող բուֆերային գոտի՝ Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև: Անջատման գիծն անցնում էր Ղրզըլ Բուրունով-Չաքաթալայով-Կովկասյան լեռնաշղթայով մինչև Տուապսե:

Այդ իսկ պատճառով, երբ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն այցելեց Թիֆլիս, հանդիպեց Անդրկովկա-

¹ Հայերի կոտորածները ..., էջ 171:

սում բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ֆորեսթեր Ուոքերին և հայտնեց, թե Հայաստանը մտադիր է լիակատար համաձայնության գալ Կամավորական բանակի հետ՝ հանուն Ռուսաստանի վերականգնման, գեներալը շատ սառը պատասխանեց, որ քանի դեռ Հաշտության կոնֆերանսում Անդրկովկասի հետագա պետական կարգը չի լուծվել, Ռուսաստանի հետ Հայաստանի վերամիավորման օգտին ցանկացած քարոզչություն անընդունելի է¹:

Ժամանակակիցը գրում է. «...Հստակ տպավորություն էր ստեղծվում, որ բրիտանական կառավարությունն առանձնակիորեն շահագրգռված է Բաքվի նավթային հարստություններով և ցանկություն չունի թույլ տալու, որ Բաքուն հայտնվի Կամավորական բանակի ուշադրության գոտում»²:

Անգլիայի ռազմական մատակարարումներով կովող Դենիկինը, բնականաբար, չէր կարող հաշվի չնստել այդ կարծիքի հետ, բայց ռուսաց զինվորականության ամենականավոր դեմքերից մեկը 1919թ. ապրիլին իր ներկայացուցչին ուղարկեց Բաքու, որը ադրբեջանական կառավարությանը հայտնեց հետևյալը. «Ռուսաստանի Հարավի բանակը Ադրբեջանը համարում է Ռուսաստանի մաս, բայց մինչև Ռուսաստանում գերագույն իշխանության հաստատումը հնարավոր է համարում Ադրբեջանի ինքնուրույն գոյությունը»³:

Դենիկինի պատկերացրած «գերագույն իշխանությունը» չհաստատվեց: Մոլեգնող քաղաքացիական պատերազմի, Անդրկովկասում տիրող իրավիճակի, իրարամերժ շահերի ու հակասությունների խառնարանում թուրք-ադրբեջանցին միայն մեկ ձգտում ուներ՝ զավթել նոր տարածքներ:

1919թ. հուլիսին անգլիացիների աջակցությամբ ադրբեջանական հարձը զավթեց ու յուրացրեց բացառապես ռուսներով

¹ А.Лукомский, Деникин и Антанта (Деникин, Врангель, Юденич. Мемуары), М.-Л., 1927г., стр. 91.

²Նշվ. աշխ., էջ 107: Ռուս. թարգ. հեղ.:

³Նշվ. աշխ., էջ 104: Ռուս. թարգ. հեղ.:

բնակեցված Մուղանը:

Ստորև մենք չենք խոսի Թուրքիայի և Ադրբեջանի տարածքային բռնազավթումների, Նախիջևանի, Ղարաբաղի մասին: Այդ առթիվ կան բազմաթիվ հիմնարար աշխատություններ: Մեզ հետաքրքրում է բուն Բաքուն:

1920թ. ապրիլի 29-ին Ադրբեջանի մայրաքաղաքում 11-րդ կարմիր բանակը հաստատեց նոր «գերագույն իշխանություն»՝ բոլշևիկյան բռնապետությունը, և հարձն իսկույն նետվեց նոր սիրեկանի գիրկը: Ադրբեջանցի ցեղասպաններն արագորեն վերածվեցին բոլշևիկ-ինտերնացիոնալիստների, և սկսվեց բաքվահայության «կարմիր ջարդը»:

Ապրիլի 30-ին Թիֆլիսում լույս տեսնող «*Եօրեճա*» թերթը գրում էր. «*Ադրբեջանական բանակը միացավ խորհրդային զորամասերին: Մութ հետնաբեմում տեղի ունեցած առուծախն ավարտվեց: Գործարքը կայացավ: Այդ գործարքի գինը արյան գին է:*

Համաձայնագիրը, որ խորհրդային իշխանությունը կնքեց Ադրբեջանի ազգայնամուլների հետ, գնված է հայ ժողովրդի արյան գնով, խորհրդային և ադրբեջանական միացյալ զորքերը հարձակվում են «Հայաստանի», «հայերի վրա», ինչպես աննկարագրելի ցինիզմով հայտարարեց Բաքվում իշխանության մեջ գտնվող «կոմունիստ» Սուլթանովը: Արևելքում խորհրդային քաղաքականությունը բնութագրվում է բոլշևիկների դաշինքով համախալամական հետադիմության, իսկ Անդրկովկասում՝ թուրքական հետադիմական ուժերի հետ:

«Կոմունիստական» իշխանության ձեռնարկած առաջին միջոցներից մեկը ռազմական արշավանքի շարունակումն է հայերի դեմ: Ըստ Համիդ Սուլթանովի հայտարարության, ադրբեջանախորհրդային «կարմիր» զորքերը Եվլախից հարձակվում են «հայերի վրա»: Նույն Սուլթանովի հայտարարությամբ, այդ հակահայկական արշավանքի նպատակն է խորհրդա-ադրբեջանական զորքերի միավորումը Անատոլիայի հետ»¹:

¹ Հայերի կոտորածները ..., էջ 406-407: Ռուս. թարգ. հեղ.:

Խորհրդային Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը 1920թ. հուլիսի 17-ին Հայաստանի արտգործնախարարին զեկուցում էր. «Հայերի ձերբակալությունները մասսայական բնույթ առան: Զարմանալի բարեխիղճ կերպով, շղթայազերծ ստրուկների նման այդ գործում եռանդ են թափում հայ կոմունիստները: Այսպես կոչված «Դաշնակցականների գործը» նրանց է հանձնված. դրանք են ձերբակալում ըստ իրանց հայեցողության, դրանցից է կազմված քննիչ հանձնախումբը Արտավազդ Հովհաննիսյանի նախագահությամբ: Դաշնակցական անվան տակ բանտարկված են հազարավոր բոլորովին անմեղ և անմասն հայեր: Թուրքի աստելությունը և ծրագիրը հայի վերաբերմամբ և հայ մեծամասնականի կուսակցական կիրքը այստեղ զուգադիպում են և եռանդով կրկնապատկվում»¹:

Մի քանի օր անց նույն դիվանագետը շարունակում էր. «Խորհրդային Ադրբեջանում հայ մեծամասնականների դրդումով կառավարությունն սկսել է իր հալածանքը Դաշնակցության դեմ: Այդ կուսակցությունը հայտարարված է անլեգալ, իսկ նրա շարքերում գործող անհատները՝ օրենքից դուրս: Գործի գլուխն են անցել Բաքվում գործող հայ մեծամասնականներից Ա.Միկոյանը, Ավիս Նուրիջանյանը, Կոստանյանը և ուրիշներ»²:

Բաքուն, որ տասնամյակներ շարունակ հանդիսացել էր նավթ և այլ ապրանքներ արտահանող քաղաք, վերածվեց բոլշևիզմի, խորհրդային կարգերի արտահանման կենտրոնի: Այստեղից սկիզբ առավ այն «կարմիր» հեղեղը, որը Գանձակով ու Ղազախով մտավ Իջևան և 1920թ. աշնանը ստիպեց անձնատուր լինել Հայաստանի Առաջին Հանրապետությանը...

Սկսվեց պատմական նոր դարաշրջան. ոչնչացվեց ծաղկուն, փթթուն, հարուստ և քաղաքակիրթ բաքվահայ համայնքը, իսկ նրա ուրվականները մնացին Խորհրդային Ադրբեջանում: Մնացին, որպեսզի ցեղասպանական նոր մահափորձի ենթարկվեն 68

¹Նշվ. աշխ., էջ 475:

²Նշվ. աշխ., էջ 476:

տարի անց: Եվ դա հնարավոր եղավ զուտ այն պատճառով, որ ոչ միայն չղատապարտվեց 1918թ. ցեղասպանությունը, այլև փաստն ինքը տասնամյակներ շարունակ խնամքով կոծկվեց, թաքցվեց, իսկ հավաքական հանցագործությունը պարտակվեց...

* * *

Այժմ գլխի ամփոփման փորձ կատարենք:

Բաքվահայությունը դատապարտված էր Պատմությամբ: Ըստ մեզ, Բաքվի ռազմաճակատում 1918թ. սեպտեմբերին կոլոդ հայության պարտությունը պայմանավորված էր ոչ այնքան «Ցենտրոկասայան դիկտատուրայի», Բիչերախովի կամ անգլիացիների գործոններով, որքան այն իրողությամբ, որ հայերը *սեփական հողի վրա և սեփական հողի համար* չէին մարտնչում: Նրանք ունեին *սեփական քաղաքի* մոլորություն, որովհետև, իրոք, Բաքուն իրենք էին քաղաք դարձրել և ունեին ընդհանուր պետականության զգացողություն: Ընդ որում, ճակատամարտի ելքը վճռված էր ի սկզբանե, որովհետև բացակայում էր թիկունքը, իսկ ավելի ստույգ՝ առկա էր թշնամական թիկունք:

Որ 1918թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Բաքվում կատարվածը ցեղասպանություն էր՝ կասկածից վեր է: Եթե մի կողմ թողնենք 1,5 մլն արևմտահայության եղեռնը, ապա պատերազմի մեջ ներքաշված տասնյակ երկրներից որո՞ւմ է կատարվել այնպիսի սարսռագրու սպանդ, ինչպիսին տեղի ունեցավ Բաքվում:

Թուրքերն ու ադրբեջանցիներն ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ Բաքվահայության բնաջնջումը պատճառաբանում են մարտ ամսվա դեպքերով և դա ներկայացնում են որպես պատասխան վրեժխնդրության «հատուցման գործողություն»: Դա կատարյալ անհեթեթություն է, որովհետև մենք մանրամասնորեն ներկայացրինք նաև մարտյան իրադարձությունները: Մարտ ամսին միմյանց հետ կռվում էին երկու զինված ուժ՝ Բաքվի բոլշևիկյան կոմունան և Մուսուլմանական ազգային խորհուրդը, իսկ Հայոց

ազգային խորհուրդը մահից փրկեց ու թաքցրեց 20.000 ադրբեջանցու: (Եվ հետո, եթե վրեժ էին լուծում, ապա ինչո՞ւ ողջ մնացած Նարիմանովի հախից չեկան և աստվածացրին):

Մեպտեմբերին կոտորվեց, բռնաբարվեց, ունեցվածքից զրկվեց խաղաղ, անզեն բնակչությունը, և դա կատարվեց միմիայն *ազգային պատկանելության* հատկանիշով, ահա թե ինչու երևույթը ունի միայն մեկ անուն՝ *ցեղասպանություն*:

Թուրքերը 1915 թվականը կրկնեցին Բաքվում՝ ադրբեջանցիներին հաղորդելով իրենց «հարուստ» փորձը, և հայի արյան գնով ստեղծեցին երկրորդ թուրքական պետական կազմավորումը՝ Ադրբեջանի «Ժողովրդավարական» Հանրապետությունը:

Դա իրենց պետք էր գալու ապագայում՝ հիմա՛...

ՎԱՍՆ ԲԱՔՎԱՀԱՅՈՑ ՍՏՎԵՐՆԵՐԻ

Թուրք-ադրբեջանցիներն իրենց հաշվարկներում, այդուհանդերձ, սխալվեցին: Նրանք հաշվի չառան (և չէին էլ կարող) մի կարևորագույն հանգամանք. դա հայ ժողովրդի ապրելու ձգտումն էր, վերապրելու կամքը:

1920թ. Բաքվում հայ բոլշևիկները և ադրբեջանցի բոլշևիկ-ցեղասպանները գնդակահարեցին բազմաթիվ անմեղ մարդկանց: Նրանց թվում էր նաև մի պայծառ անհատ՝ Հայոց ազգային խորհրդի անդամ Ներսես Ջաղեթյանը, որն իր եղերական մահվանից մեկ տարի առաջ Հայոց ազգային խորհրդի նախագահ Հակոբ Ղուկասյանի մահվան առթիվ, հունվարի 30-ին գրել էր. *«Ամբողջ հոգով ձեզ բոլորիդ տոկունություն մաղթելով ձեր դժվարին աշխատանքում՝ հանուն փրկության կենդանի կմախքների այն զանգվածի, որին մեր թշնամիներն ու բարեկամները հեզնանքով հայ ժողովուրդ են անվանում, չեմ կարող չարտահայտել մի ամոքիչ միտք, որը, թերևս, ձեզ էլ ամոքի: Մենք դեռ շատերին ստիպված կլինենք հողին հանձնել: Միգուցե, բոլորին: Ուրեմն, մեր մեռելներին ցաքուցրիվ չանենք, բոլորին ժողովենք մի ընդհանուր գերզմանատանը: Հո չեն կարող մեր բարեկամներն ու թշնամիները մերժել այնպիսի մի ողորմածություն, որ մեր գերեզմանատան դարպասի վրա գրենք նրանց հավերժական ամոթի բառերը. «Աստ հանգչի Հայաստանը քրիստոնյա»:*

Իսկ մենք ամուր լինենք մեր հավատքի մեջ, որն այս աշխարհի հզորներից ոչ ոք ի վիճակի չէ սպանել՝ Հայաստանը հարություն կառնի մեռելներից»¹:

Այո, ապագայում գնդակահարվողը իրավացի էր երիցս:

¹ Հայերի կոտորածները ..., էջ 204: Ռուս. թարգ. հեղ.:

Մեր ժողովրդի գոյապահպանության ու վերապրումի ազգային դարավոր գենի լավագույն դրսևորումներից մեկը «Մբ. Գրիգոր Լուսավորչի անվան հայոց մարդասիրական ընկերության» վերջին տարիների գործունեությունն էր: Հայտնի պատճառներով հնարավորություն չունենալով հրապարակել 1917, 1918, 1919թթ. տարեկան հաշվետվությունները, Մարդասիրականը (նախագահ Հայկ Տեր-Միքայելյան) 1920թ. հանդես եկավ այդ երեք տարիների իր գործունեության ամփոփիչ զեկույցով: Ահա դրանից մի հատված, որը լավագույնս է բնութագրում թե՛ այդ փառապանծ ընկերության, թե՛ առհասարակ հայի կենսասիրության տենչը. *«1918թ. զինվորական իշխանությունը (խոսքը թուրքերի մասին է - Խ.Դ.) խլել է ընկերության Ստանիսլավսկի փողոցի վրա գտնվող տները (Թումայանի կորպուսը) և այդ պատճառով ընկերությունը ստիպված է եղել փակել մտուրը և լվացքատունը: Նույն թվականին խլել են և Գիմնազիայի փողոցի վրա գտնվող տները, ուստի և փակվել է տների դահլիճը: 1918թ. սեպտեմբերին, երբ տաճկական ռումբերը տեղում էին քաղաքի վրա, ընկերությունը ստիպված է եղել յուր որբերին վերահաս վտանգից ազատելու համար փախցնել նրանց Պարսկաստան (այդ որբերին վերադարձրեցին անգլիացիները, որոնք նավային փոխադրության ծախսը համառորեն պահանջում էին Արարատյան Հայաստանի Հանրապետությունից - Խ. Դ.):*

Այդ օրերին տեղացող ռումբերից մեկը ծակելով գրադարանի կտուրը, պայթել է գրադարանում: Մի ռումբ էլ ընկել է և պայթել Գիմնազիայի փողոցի տան դահլիճի մուտքում:

Այդ դեպքերով թալանվել են ընկերության հիմնարկությունների մթերքները և այլն: Ընկերությանը հասցրած վնասների մանրամասն ցուցակները ներկայացված են в Контрольную комиссию Союзных держав в Баку: Վնասների գումարը հասնում է 308.777ռ. 50 կոպ.:

Զգալի վնաս է ունեցել և ընկերության գրադարանը:

Չնայած տիրող բացառիկ աննպաստ պայմաններին, այնու-

ամենայնիվ ընկերության այս վերջին երեք տարիների գործունեության հաշիվները՝ անցյալ տարիների հետ համեմատած, ավելի արդյունավետ են:

Այսպես.

1) 1917թ. ընկերությունը ունեցել է նույն հիմնարկությունները, ինչ որ 1916թ., նպաստներ է տվել Շամախու թեմի 16 ծխական-եկեղեցական դպրոցներին, հովանավորել է հայկական հիվանդանոցը (այն հիվանդանոցը, որտեղ թուրքերն ու ադրբեջանցիները գնդակահարեցին անկողնային հիվանդներին - Խ.Դ.) և այլն:

Այդ թվականի հայկական երեկույթի փոխարեն ընկերության խորհուրդը հանգանակություն է կատարել և հավաքել հոգուտ ընկերության 34.209 ռ. 50 կոպ.:

2) 1918թ. մինչև սեպտեմբերյան դեպքերը ընկերության որբանոցը, գրադարանը և կարուձևի արհեստանոցը դարձյալ գոյություն են ունեցել, և այդ տարվա մուտքը և ելքը ավելի է, քան 1917թ.:

Այս տարի ևս հայկական երեկույթի փոխարեն ընկերության խորհուրդը հանգանակել է 17.890ռ.:

3) 1919թ. մարտ ամսից ընկերության գրադարանը և կարուձևի արհեստանոցը նորից վերաբացվել են և շարունակում են իրենց գործունեությունը: Փակվել է միայն ընկերության որբանոցը: Փակելու պատճառն այն է, որ Պարսկաստանում Ազգային խորհուրդը ընկերության որբերին միացրել է մյուս վայրերից հավաքված որբերի հետ և բոլորի համար հիմնադրել է մի ընդհանուր որբանոց յուր ղեկավարության տակ: Այդ թվականին Ս.Ծննդյան և Ջասկի տոների առթիվ ընկերության խորհուրդը նվերներ է հավաքել 87.150ռ., բացի դրանից նվեր է ստացել Անգլիայում Գլխավոր շտաբից 360.000ռ., Թիֆլիսից՝ Կովկասյան բարեգործական ընկերությունից 25.000ռ., և «Նորել եղբ.» ընկերությունից 100 թերթ=25 փ. ծածկի երկաթ (փութը հաշվելով 1000ռ.) =25.000ռ.:

Սույն հաշվետարում խորհրդի անդամները մեծ աջակցություն և եռանդ են ցույց տվել և Ազգային խորհրդի հետ միասին

հավաքել հոգուտ սովյալների ու որբերի 735.000ռ.:

Այդ թվականին ընկերության խորհուրդը աչքի առաջ ունենալով, որ քաղաքում այլուրը օրեցօր թանգանում է և անհնար է որոշել, թե մինչև ուր է հասնելու այդ թանգությունը, չի մերժել Ազգային խորհրդի առաջարկությունը և 450.000ռ. պարտք վերցնելով և 190.000ռ. էլ յուր միջոցներից ավելացնելով, յուր ժամանակին 2000 փութ ցորեն է գնել, որից այժմ հաց է պատրաստվում Ազգային խորհրդի որբանոցի համար:

1919թ. ծխական հոգաբարձությունը որոշել էր վերադառնալ հայոց դպրոցները, բայց որովհետև դպրոցներին հատկացված ընկերության Գիմնագիչ. փողոցի տները երկար ժամանակ գորանոցի էր վերածված, ուստի նախքան դպրոցները բաց անելը, անհրաժեշտ էր այդ տներում զգալի վերանորոգություններ կատարել: Ընկերության խորհուրդը ծախսելով 86.550ռ., կատարել է անհրաժեշտ վերանորոգությունները և շինությունը հանձնել դպրոցին և այդպիսով մեծ աջակցություն ցույց տվել դպրոցների հոգաբարձությանը:

1919թ. զանազան չքավորների և հիմնարկությունների նպաստներ է բաժանված փողով, ճաշերով, շորեղենով և այլն. գումարը մոտ 70.000ռ.:

Նույն թվականին նպաստ է փոխադրվել Նուխու հայոց դպրոցին՝ 5000ռ.:

Բացի այդ Բագվի կենտրոնական Տնային կոմիտեի սննդատու կայաններից ընկերության հաշվին նույն թվականին հայ չքավորներին և հայոց դպրոցի չքավոր աշակերտ- ուհիներին 9450 ռ. ձրի ճաշ է բաժանված»¹:

Ահա այսքանը: Ավելացնենք միայն, որ 1921թ. սկզբին 56-ամյա Մարդասիրականը փակվեց...

Առաջին աշխարհամարտը, ցեղասպանությունը, քաղաքացիական պատերազմը և բոլշևիկյան իշխանությունը ավերեցին բաբվահայության շեն բույնը, ցաքուցրիվ արեցին վառ անհատա-

¹Նշվ. աշխ., էջ 435-436:

կանությունների աստղաբույլի շուրջ համերաշխորեն ժողովված քաղաքակիրթ, ունևոր, պայծառ մի համայնք: Այդ անհատականություններից նրանք, ովքեր կարողացան խույս տալ թուրքի յաթաղանից և ադրբեջանցու գազանությունից, սփռվեցին աշխարհով մեկ՝ վիշտը, ցավն ու կարոտը պահելով սրտերում: Մեծ դժվարությամբ մեզ հաջողվեց այդ մարդ-սովերների հետագա ճակատագրի մասին որոշ պատասխիկներ պարզել, ինչն էլ կուզենայինք ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Առաքել Ծատուրյան: «Ա. Ծատուրյան և այլք», ապա «Շիխովո» նավթարդյունաբերական և առևտրային ընկերությունների խոշոր բաժնետեր այս շուշեցին բազմիցս դրամական խոշոր նվիրատվություններ կատարեց ազգին, Անգլիայի Հարվարդեն քաղաքի եկեղեցում պատրաստել տվեց Մբ. Գրիգոր Լուսավորչի և Մբ. Բարդուղիմեոսի գունապակե (վիտրաժ) պատկերները ու չգիտենք երբ և չգիտենք ինչու ինքնասպան եղավ Երևանում:

Բարսեղ Ղորղանյան: «Միրզոյան եղբայրներ և ընկ.» նավթարդյունաբերական և առևտրային ֆիրմայի վարչության անդամ այս երաժշտագետը Թիֆլիսից տեղափոխվեց Երևան, իր անձնական հարուստ գրադարանը նվիրեց Հայաստանին (նաև դրա շնորհիվ հիմնվեց ներկայիս Ազգային գրադարանը) ու երկար տարիներ դասավանդեց պետական կոնսերվատորիայում:

Աստվածատուր Վաչյանց: «Արամազդ» նավթարդյունաբերական և առևտրային ընկերության վարչության նախագահ, նավթարդյունաբերության լավագույն ճարտարագետներից մեկը հանդիսացող, Մարդասիրականի մշտական անդամ այս շուշեցին վտարանդվեց Ֆրանսիա: Այստեղ նա հանդիպեց արևմտահայ նշանավոր բանաստեղծ և էլ ավելի ականավոր վաճառական Ռուբեն Որբերյանի որդու՝ Հարությունի հետ, և 1925թ. երկուսով Փարիզում հիմնեցին «Հայ տեխնիկական միությունը»:

*Ստեփան Թադիանոսյան:** Այս զարմանալի և տարօրինակ մարդու բազմաթիվ տիտղոսների ու պաշտոնների մասին արդեն նշել ենք, ավելացնենք միայն, որ 1914թ. նաև Ս.Լ.Իանոսյանի հիմ-

նաձ «Ռուսական նավթարդյունաբերական ընկերության» Բաքվի շրջանի կառավարիչն էր: Ասում ենք՝ տարօրինակ, որովհետև սեփական ճակատագիրը տնօրինելու հարցում կայացրած նրա որոշումը մեզ համար բացարձակապես անըմբռնելի է: Լինելով խիստ ունևոր մարդ, հեղինակավոր անձնավորություն, բարերար, նավթարդյունաբերության բնագավառի լավագույն ճարտարագետներից մեկը, ցեղասպանության ականատեսն ու տուժողը, երկու տարի ապրելով Ադրբեջանի Հանրապետության դժոխքում՝ Ս.Թադիանոսյանը... չլքեց Բաքուն: Ավելին, դառնալով Խորհրդային Ադրբեջանի «Ագրոնկ» պետական ձեռնարկության հիմնադիրներից մեկը՝ իր հարուստ փորձն ու գիտելիքներն ի սպաս դրեց «կոմունիստական նավթարդյունաբերության» զարգացմանը: Կրկնում ենք՝ Բաքվին այդպիսի «սիրահարվածությունը» մենք բացատրել ի վիճակի չենք:

Եվ գիտե՞ք ինչ եղավ: 1930թ. Ս.Թադիանոսյանին, «հակահեղափոխական, վնասարարական գործունեության» շինծու մեղադրանք ներկայացվեց, և նա մի ինտերնացիոնալ խմբի կազմում գնդակահարվեց... Սա էր կոմունիստների երախտիքը, և Ս.Թադիանոսյանն իր «վարձքը» ստացավ: Թուրքերից ու ադրբեջանցիներից փրկվեց, Ստալինից՝ ոչ:

Բախշի Իշխանյան: 1921թ. օգոստոսի 26-ին Բումբեյից դուրս եկած անգլիական «Անկոր լայն» շոգենավը խարխիսի գցեց Պորտ Սուդան նավահանգստում: Պատգարակով ափ իջեցրին մահամերձ Բ.Իշխանյանին, և նրան դիմավորող մի քանի ազգակիցները առաջ նետվեցին: Իսկույն տեղափոխեցին նավահանգստի հիվանդանոց և քանի որ պատճառը ջերմախտն էր՝ մորեմերկացրին, պառկեցրին մեկ սավանով ծածկված երկաթե մահճակալին և ամբողջ մարմինը պատեցին սառցակտորներով: Ավա՞ղ, ոչինչ չօգնեց, և ընդամենը 42 տարեկան հասակում օտար ափում հոգին ավանդեց մի մարդ, որը բռնազրկվել էր հայրենիքից: Մարդ, որն, անկասկած, հայոց ազգային, հասարակական, քաղաքական մտքի տիտաններից մեկն էր:

Հանգուցյալի ուղեբեռը բաղկացած էր մաշված հագուստներով մի փոքրիկ ճամպրուկից և երեք մեծ սնդուկներից, որոնք բերեցին 11 էին փաստաթղթերով, ձեռագրերով ու նշագրումներով: Այդ անգնահատելի արխիվը տեղափոխեցին Կահիրե: Թղթերի մեջ հայտնաբերվեց մի ավարտուն ձեռագիր, որի վերնագիրն էր «*Երկու ամիս բոլշևիկեան բանտում*»: 1924թ. Դաշնակցությունը, որի անգիջում քննադատն էր եղել հեղինակը, ձեռագիրը հրատարակեց: Գրքի առաջաբանը գրել էր Վահան Նավասարդյանը, որը մանրամասնորեն նկարագրելով Բ.Իշխանյանի կյանքն ու գործունեությունը՝ խոսքն ավարտել էր հետևյալ տողով. «*Ափսոս ու մեր հակառակորդ Բախշին*»: Այս տողը քաղաքական մշակույթի, քաղաքական հակառակորդի քաղաքակիրթ պահվածքի բարձրագույն դրսևորում էր, որից, ըստ մեզ, կարող են դաս առնել Հայաստանի Հանրապետության արդի քաղաքական գործիչները:

«Երկու ամիս բոլշևիկեան բանտում» գիրքը հուշագրային բնույթ ունի, որը միաժամանակ լույս է սփռում հեղինակի հետագա կարճատև ու բուռն կենսուղու վրա:

Եվ այսպես, 1919թ. ավարտելով ցեղասպանության «անկետային ուսումնասիրությունը» և 1920-ին հայոց ու ռուսաց լեզուներով Թիֆլիսում հրատարակելով «Բագուի մեծ սարսափները»՝ Բ.Իշխանյանը տեղափոխվում է Երևան: Հարկ է ըմբռնել, որ նա կայուն քաղաքական հայացքների ու սկզբունքների տեր անձնավորություն էր և քննադատում էր ոչ միայն Դաշնակցությանը, այլև իր բազմաթիվ հողվածներով երիցս կատաղի պայքար էր մղում բոլշևիզմի դեմ: Դա էր պատճառը, որ 1920թ. դեկտեմբերի 2-ի ցերեկվա ժամը 12-ին բոլշևիկները առաջին հերթին ձերբակալեցին Բ.Իշխանյանին, ինչի հետևանքով նա մեր պատմության մեջ արժանացավ «առաջին քաղբանտարկյալ» «պատվավոր» տիտղոսին: Երկու ամիս անցկացրեց Չեկայի բանտում, ենթարկվեց բազմաթիվ հարցաքննությունների: Իր հուշագրությունում նա ներկայացնում է բազմաթիվ սարսռազդու տեսարաններ, նկարագրում զանգվածային գնդակահարության մի ողբալի պատկեր:

Բ.Իշխանյանի ձերբակալության ձևական կողմերից մեկն էլ այն էր, որ նրան... Խորհրդային Ադրբեջանը պահանջում էր Բաքու վերադարձնել: Դե, իհարկե, բոլշևիկ դարձած ադրբեջանցի ցեղասպանները Բ.Իշխանյանին չէին կարող ներել «Բազուի մեծ սարսափները» և պահանջում էին Բաքու ուղարկել, որպեսզի Վկային ոչնչացնեն: (Ի դեպ, հայ բոլշևիկներն իրենց ադրբեջանցի «եղբայրներին» հանձնեցին 2000, այլ տվյալներով՝ 1200 հայ սպա ու զինվոր): ՄԴԲՀ կուսակցությունը բողոքի ակիբ բարձրացրեց ի պաշտպանություն իր կենտկոմի անդամի, բայց, միննույն է, Բ.Իշխանյանին կուղարկեին Բաքու, եթե նրան և հազարավոր այլ մարդկանց չփրկեր Փետրվարյան ապստամբությունը:

6000 հոգանոց գաղթականական մի ամբողջ բանակի հետ Բ.Իշխանյանը մեծագույն չարչարանքներով ու զրկանքներով Սյունիքով անցավ Թավրիզ: Այստեղից իր գաղափարական հակառակորդ Ս.Վրացյանի հանձնարարությամբ պատրաստվեց մեկնել Եվրոպա՝ բոլշևիզմի դեմ քաղաքական պայքար մղելու համար: Թավրիզից անցավ Բոմբեյ, նավ նստեց և կատարեց իր վերջին երկրային ճամփորդությունը...

Ի՞նչ թողեց Բ.Իշխանյանը. տասնյակ գրքեր և հարյուրավոր հոդվածներ, որոնք խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում մնացին փակ ֆոնդերի բանտարկության մեջ:* Թողեց Վկայական ցուցմունքներ: Եվ, կարծես, ժամանակի հեռվից տեսնելով մեր այսօրը՝ մարգարեաբար ավանդեց. *«Հայաստանի այս կամ այն իշխանությունը՝ լինի նա բաղկացած դաշնակցականներից, մի այլ կուսակցությունից կամ լինի կոալիցիոն նրա կազմը, միննույն է,- սոսկ ժամանակավոր մի երևոյթ է, պայմանաւորուած գործող քաղաքական ոյժերի փոխյարաբերութեամբ: Հիմնականը ինքը պետականությունն է, էականը և տևականը՝ ինքը ընդհանուր հայրենիքն է»:*

Ստեփան Լիանոսյան: Որքան մեծ է մարդը, այնքան մեծ է նաև նրա սովերը, որից դեպի իրական արարած ընկած ճանապարհը խոտոր է ու խրթին: Տարօրինակ է՝ լինել համաշխարհային

նավթարդյունաբերության հսկաներից մեկը և միաժամանակ ապրել «գաղտնագրված» կյանքով... Չնայած, զարմանալի բան էլ չկա, համաշխարհային բիզնեսի բոլոր հիրավի մեծերը գործել են մարդկանց աչքից, հրապարակայնությունից հեռու:

Ս.Լիանոսյանի մասին նյութեր ժողովելու մեր շատ փորձեր անհաջողության մատնվեցին:* Ստիպված եղանք կարդալ մի քանի «ամորձատված» գրքեր, որոնց այդպես ենք անվանում հետևյալ պատճառով:

1920-ական թվականների կեսերից խորհրդային իշխանությունը հակաքարոզչական լայնածակատ պատերազմ սկսեց «սպիտակ շարժման» դեմ: Դրա դրսևորումներից մեկն այն էր, որ կոմունիստական քարոզչամեթոդների վտարանդիների՝ արտասահմանում լույս տեսած հուշագրությունները վերցնում էր, «ամորձատում», տեքստից անխնա ոչնչացնում էր բոլշևիկների մասին ամեն բան և թողնելով «սպիտակների» ներքին հակասություններին, զգվտոցներին վերաբերող հատվածներ՝ վերահրատարակում:

(Այդպիսին է Պողոս Մակինցյանի «խմբագրմամբ» 1925թ. Թիֆլիսում լույս տեսած գեներալ Դենստերվիլի «Британский империализм в Баку и Персии 1917-1918» անհեթեթ վերնագրով գիրքը, որը կարդալուց հետո ոչինչ չես հասկանում: Դժվար է պատկերացնել անգամ, որ անգլիացի գեներալը այդպես կոչեր իր հուշագրությունը: Ցավում ենք, որ Բաքվի ինքնապաշտպանությանը մասնակցած Դենստերվիլի գրքի բնօրինակը չենք կարողացել հայթայթել):

Քանի որ մեզ հասու չէին Բեռլինում ու Փարիզում «սպիտակ շարժման» գործիչների լույս ընծայած գրքերը, մնում էր մեկ բան՝ կարդալ «ամորձատվածները» և փորձել տողերի արանքից ինչ-որ բան կորզել: Սպասումները լիովին արդարացան, և պատճառը կոմունիստ-«խմբագիրների» մասնագիտական անփութությունն էր, ինչպես նաև այն քառսը, որի ժամանակ գլուխը տեղյակ չէր, թե պոչն ինչով է զբաղված: Բանն այն է, որ նույն 1927 թվականին, նույն քաղաքում՝ Լենինգրադում, տարբեր մարդկանց խմբագր-

մամբ լույս տեսավ երկու գիրք. մեկը կոչվում էր «Յուդենիչը Պետրոգրադի մատույցներում: Սպիտակ հուշագրություններից», մյուսը՝ «Դենիկին, Յուդենիչ, Վրանգել: Հուշագրություններ»: Երկու ժողովածուներում էլ գետեղված էր Վասիլի Գորնի «Քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի հյուսիս-արևմուտքում» հուշագրությունը, բայց քանի որ խմբագիրները տարբեր էին և միմյանցից անտեղյակ՝ «ամորձատել» էին յուրովի: Ահա այդ խմբագրումների համադրումից էլ մենք շատ բան պարզեցինք:

Ինչո՞ւ էր մեզ համար կարևոր Վ.Գորնի հուշագրությունը: Բանն այն է, որ բոլշևիկյան հեղափոխության, Բաքվի ցեղասպանության, Ադրբեջանի Հանրապետության ստեղծման պատճառով Ս.Լիանոսյանը կորցրեց պապի և հոր քրտինքով ստեղծածը, իր հիմնած նավթարդյունաբերական կայսրություն «Օյլը»: Բայց, ի տարբերություն բազմաթիվ հայ կապիտալիստների, նա ոչ թե սուսուփուս վտարանդվեց, այլ անզիջում պայքար ծավալեց բոլշևիզմի դեմ:

ԽՍՀՄ պատմություն սերտած մարդիկ, անշուշտ, կմտաբերեն «Յուդենիչի հարձակում», «Յուդենիչի ջախջախում» դասագրքային արտահայտությունները: Սակայն բանն այն է, որ Ն.Յուդենիչը*... Ստեփան Լիանոսյանի կառավարության ռազմական նախարարն էր:

Ռուսաստանի հյուսիս-արևմուտքում, Պետրոգրադի ռազմաճակատում կուտակված էր ավելի քան 20-հազարանոց սպիտակգվարդիական զորախումբ, որն ուներ 500 գնդացի, 57 հրանոթ, 4 զրահագնացք, 6 տանկ, 6 ինքնաթիռ: Էստոնիայում կազմավորված այս Հյուսիսարևմտյան բանակը՝ գեներալ Ռոձյանկոյի հրամանատարությամբ, 1919թ. մայիսին հարձակվեց Պետրոգրադի վրա, սակայն հետ շարժվեց: Անհաջողությունից հետո սպիտակգվարդիական ուժերի գլխավոր հրամանատար Կոլչակը բանակի նոր հրամանատար նշանակեց Հելսինգֆորսում (Հելսինկի) գտնվող Յուդենիչին: Վերջինս ժամանեց Ռևել (Տալլին), մայիսի 24-ին հրավիրեց Քաղաքական խորհրդակցության նիստ, որին

ներկա էին մի քանի հոգի, այդ թվում և Ս.Լիանոզովը (այսուհետ կօգտագործենք ազգանվան ռուսական գրելաձևը, քանի որ խոսքը վերաբերելու է զուտ ռուսական իրականությանը):

Քաղաքական խորհրդակցությունը որոշեց ստեղծել Հյուսիսարևմտյան հանրապետություն (ՀԱՀ) և կազմավորել կառավարություն: Հարկ է նշել, որ Ռևելում կուտակվել էին ոչ միայն բազմաթիվ գեներալներ, այլև ամենատարբեր քաղաքական հոսանքների ներկայացուցիչներ, որոնցից ամեն մեկն իր էջն էր առաջ քշում: Եվ այդ խառնամբոխից հարկ էր կառավարության անդամներ ընտրել:

Ինչպես նշում է Գորնը. *«Իր կեցվածքով առանձնանում էր Ս.Գ.Լիանոզովը, որը Խորհրդակցությունում զբաղվում էր ֆինանսական գործերով: Նա ամեննին չէր շփվում քաղաքականությանը՝ իր ամբողջ գործունեությունը կենտրոնացնելով բանակի համար ֆինանսներ հայթայթելու վրա, եթե իհարկե այդ ժամանակվա անհուսալի իրավիճակում առհասարակ հնարավոր էր որևէ բան հայթայթել»¹:*

Ռևելի Քաղաքական խորհրդակցությունը գործում էր Մեծ Բրիտանիայի ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Մարշի* անմիջական վերահսկողության ներքո, և նրա խոսքը որոշիչ էր: Սկզբում Մարշը ցանկանում էր, որ վարչապետ լինի Կարտաշևը, իսկ Լիանոզովը՝ նախարար: Սակայն Արմատական կուսակցության հիմնադիր, փաստաբան Մ.Մարգուլիեսը *«...պահանջեց Կարտաշևին փոխարինել Լիանոզովով, քանզի կամազուրկ Կարտաշևի վարչապետության դեպքում փաստացիորեն կկառավարեր նրա քարտուղարը՝ ոմն ճարտարագետ Նովիցկի, որը կույրին ուղեկցողի դեր էր կատարում»²:*

Մարշը համաձայնվեց, և Ս.Լիանոզովը, հմտորեն խուսանավելով նախարարական պորտֆելների շուրջ ծագած կրքերի

¹ В.Горн, Гражданская война в Северо-Западной России (Юденич под Петроградом. Из белых мемуаров, Л., 1927г., стр. 61). Ռուս. թարգ. հեղ.:

² Նշվ. աշխ. էջ 68: Ռուս. թարգ. հեղ.:

մեջ, ցուցաբերելով հիրավի դիվանագիտական նրբանկատություն, ձեռնամուխ եղավ կառավարության ձևավորմանը:

Ամենից առաջ, չնայած բուռն ընդդիմությանը, նա պնդեց, որ ռազմական նախարար և զինված ուժերի գլխավոր հրամանատար դառնա Յուդենիչը, այլապես Կոլչակը կհրաժարվեր ֆինանսական աջակցություն ցույց տալ:

Ի վերջո, մեծ դժվարությամբ, բազմաթիվ բանասարկություններ, խարդավանքներ, զգվոտոցներ հաղթահարելու գնով օգոստոսի 10-ին հաստատվեց ՀԱՀ կառավարության կազմը, որն ուներ հետևյալ տեսքը.

վարչապետ՝ Լիանոզով
ռազմական նախարար՝ Յուդենիչ
մշակույթի և ներքին գործերի նախարար՝ Եվսեն
առևտրի, մատակարարման և ժողովրդական առողջապահության նախարար՝ Մարգուլիես
արդարադատության նախարար՝ Կեդրին
պարենի նախարար՝ Էյշինսկի
պետական վերահսկիչ՝ Գորն
լուսավորության նախարար՝ Էրն
հողագործության նախարար՝ Բոգդանով
փոստի և հեռագրատների նախարար՝ Ֆիլիպպետ
հասարակական խնամատարության նախարար՝ Պեշկով:

Ընդ որում, քանի որ հարմար թեկնածուներ չկային, արտաքին գործերի և ֆինանսների նախարարների պաշտոնները նա հանձնվեցին Ս.Լիանոզովին:

Հաջորդ իսկ օրը՝ 1919թ. օգոստոսի 11-ին, կառավարությունն ընդունեց և հրապարակեց պատմական մի փաստաթուղթ, որը ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Նախնական հայտարարության վերջնական խմբագրումը կներկայացվի վաղը:

Էստոնական կառավարությանը և Ռեւելում Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներին:

Նկատի ունենալով ստիպողական անհրաժեշտությունը՝ կազմավորելու Ռուսաստանի Հյուսիսարևմտյան Մարզի համար ժողովրդավարական կառավարություն, ինչը միակն է, որի հետ էստոնական կառավարությունը համաձայն է բանակցություններ վարել՝ Պետրոգրադի, Պսկովի, Նովգորոդի նահանգները բռլնիկյան բռնապետությունից ազատագրելու նպատակով ռուսական գործող բանակին աջակցություն ցուցաբերելու խնդրում, և Պետրոգրադում Սահմանադիր ժողով հրավիրելու, որը կամ կհաստատի, կամ իրավաբանական լեզվով ասած՝ կփոխի մեր համապատասխան նշանակումները որպես նախարարներ, որոնք ստիպված ստանձնել ենք՝ էլնելով մեզնից անկախ հանգամանքներից, մենք՝ ներքոստորագրյալներս, սույնով հայտարարում ենք, որ Ռուսաստանի Հյուսիսարևմտյան Կառավարությունը ձևավորված է, ինչպես նշված է ստորև: Որպես առաջին ակտ, ի շահ մեր երկրի, մենք ճանաչում ենք Էստոնիայի բացարձակ անկախությունը (ընդգծ. մերն է - Խ.Դ.) և խնդրում ենք Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներին, որպեսզի հորդորեն իրենց կառավարություններին ճանաչելու Էստոնիայի բացարձակ անկախությունը:

Վարչապետ՝ Լիանոզով
Նախարարներ՝ Մարգուլիես
Իվանով
Ալեքսանդրով
Ֆիլիպպետ
Գորն»¹:

Փաստենք. ստեղծվեց ռուսական նոր պետական կազմավորում, որն իր առաջին ակտով ճանաչեց Էստոնիայի բացարձակ անկախությունը:

Ս.Լիանոզովը գլխավին լծվեց զուտ պետականաշինական գործունեության: Ինչպես նշում է Վ.Գորնը. «Կառավարությունը

¹ В.Горн, Гражданская война на северо-западе России (Деникин, Юденич, Врангель. Мемуары), М.-Л., 1927г., стр. 313-314: Ռուս. թարգ. հեղ.:

լուսավոր, ուրախալի օրեր իսպառ չունենք: Գոյության առաջին իսկ օրերից սկսվեցին իրար տակ փորելը, խարդավանքները, դավաճանությունը, խաբեությունը, կեղծիքը, զրպարտությունը և բանասարկությունները: Հետագայում գոյատևման դժոխքին ավելացան նաև դավադրությունները, և կառավարության անդամների մի մասը մյուս մասին սկսեց պարզապես հետապնդել»¹:

Ս.Լիանոզովն այս ամենից վեր էր, նա, կարծես, «անձեռնմխելի» լինեք: Մենք սա պնդում ենք ամենայն պատասխանատվությամբ, որովհետև կարդացել ենք նաև այլ մարդկանց հուշագրություններ (Մարգուլիես, Կիրդեցով, Իվանով. չմոռանանք՝ բոլշևիկյան խմբագրմամբ), և չենք հանդիպել նրա անձի վրա ստվեր ձգող գեթ մեկ տողի: Դրա պատճառը, ըստ մեզ, Ս.Լիանոզովի մարդկային կերպարն էր, նրա անձնական բարձր հատկանիշների ամբողջությունը: Ահա թե ինչպես է նրան բնութագրում Վ.Գորնը. «Կետաձկան նշույլ իսկ չունենք, բարձրակիրթ, եվրոպական փայլով մարդ էր, որը գործնական հարաբերություններում իր հազվագյուտ նրբանկատությամբ և հակառակորդի հանդեպ հանդուրժողականությամբ համակրանք էր առաջացնում: ... Վարչապետի պաշտոնում Ս.Գ.-ին (անվան և հայրանվան սկզբնատառերն են - Խ.Դ.) բոլորը համարում էին միանգամայն հարմար՝ որոշակիորեն առաջադեմ է, հոչակագրի կողմնակից է, հիանալի կերպով կարողանում է պահպանել և իրականացնել նախարարների խորհրդի ընդհանուր միտումները և այդ փափկանկատ պաշտոնի համար ունի անհրաժեշտ անձնական նրբանկատություն: Հետագայում նա հրաշալի արդարացրեց այդ կարծիքը և գեներալներից բացի Կառավարության կազմում չհայտնվեց գեթ մեկը, ով բաժանվելով Ս.Գ.-ից՝ կարողանար որևէ հարցում կշտամբել նրան որպես վարչապետի ու գործընկերոջ»²:

Ահա այս անկշտամբելի մարդը ուներ իր հստակ ուղեգիծը, հանուն որի տքնում էր՝ ամրապնդել պետականությունը և ամեն ինչ անել, որպեսզի Պետրոգրադում տապալվի բոլշևիկյան

¹Նշվ. աշխ., էջ 314: Ռուս. թարգ. հեղ.:

²В.Горн, Гражданская ... (Юденич стр. 95-96). Ռուս. թարգ. հեղ.:

իշխանությունը:

ՀԱՀ կայացման նպատակով նա ձեռնարկեց և իրականացրեց մի կարևորագույն գործ ևս՝ թողարկեց հանրապետության սեփական դրամական միավորը՝ նոր ռուբլի: Տնտեսության, ֆինանսների մասին տարրական գիտելիքներ ունեցողը կպատկերացնի, թե դա որքան բարդագույն ձեռնարկ էր, դա հո թուղթ չէ, որ տպագրես և շրջանառության մեջ դնես: Ս.Լիանոզովի հեղինակությունն այնքան մեծ էր համաշխարհային բիզնեսի գործարար շրջանակներում (մտաբերենք՝ աշխարհի երեք խոշոր նավթարդյունաբերողներից մեկն էր եղել), որ երբ նա դիմեց Անգլիական բանկին՝ վերջինս 400 հազար ֆունտ ստերլինգի երաշխավորված վճարման պաշտոնական երաշխիք տվեց: Դրա դիմաց Ս.Լիանոզովը Հելսինգֆորսում 1:10 հարաբերակցությամբ (կլինդրեինք մտապահել այս թվերը) թողարկեց 4 մլն ռուբլի (այդ գումարի մասին պատկերացում տալու համար ասենք, որ Յուդենիչի բանակի զինվորի ամսական ռոճիկը 150ռ. էր): Ուշագրավ է, որ թղթադրամները ստացան «թևիկներ» մականունը («*КРЫЛЫШКИ*», պատճառը ռուսական երկզլիսանի արծվի լայնատարած թևերն էին), իսկ դրանց վրա դրված էին Լիանոզովի ու Յուդենիչի ստորագրությունները:

Հյուսիսարևմտյան Հանրապետությունը, ավա՛ղ, կարճատև կյանք ունեցավ: 1919թ. սեպտեմբերին Յուդենիչը հաջող հարձակում սկսեց Պետրոգրադի վրա, բայց հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նրա բանակը պարտվեց, իսկ մնացորդները հայտնվեցին Էստոնիայում: 1920թ. հունվարի 22-ին Յուդենիչը ստորագրեց մի ակտ, որով նրա բանակը, հետևաբար և ՀԱՀ-ը, դադարեց գոյություն ունենալուց:

Ս.Լիանոսյանը տարագրվեց Փարիզ, բայց այստեղ ևս չդադարեց իր հակաբոլշևիկյան պայքարը: Գ.Նոբելի, Պ.Ռյաբուշինսկու, Ն.Դենիսովի, Լ.Մանթաշյանցի, Պոդոս և Աբրահամ Ղուկասյան եղբայրների հետ հիմնեց «Առևտրային, ֆինանսական և արդյունաբերական կոմիտեն» (կրճատ՝ «Տորգպրոմ») և մինչև 1940թ.

պայքար մղեց խորհրդային իշխանության դեմ: Երբ ֆաշիստական Գերմանիան գրավեց Փարիզը, Ս.Լիանոսյանը դադարեցրեց հակախորհրդային գործունեությունը և «որդեգրեց հակազերմանական դիրքորոշում»¹: Ստույգ ինչպիսի՝ չգիտենք: Մեզ այլևս ոչինչ հայտնի չէ...

Աղբյուրներից մեկում² նշված է Ս.Լիանոսյանի փարիզյան երկու հասցե՝ Շանգ Էլիզե թ.125 և Վագրամ պողոտա թ.133: Մենք չգիտենք, թե այս հասցեներից որում էր ապրում և որտեղ 1951թ.՝ 79 տարեկան հասակում, վախճանվեց: Մենք չգիտենք որ գերեզմանատանն է ամփոփված Ֆրանսիայի Պատվավոր լեգեոնի շքանշանի ասպետի աճյունը:

Մենք չգիտենք՝ մտաբերո՞ւմ էր, արդյոք, իր ժողովրդին: Հիշո՞ւմ էր, որ հիմնել էր աշխարհի խոշորագույն նավթարդյունաբերական կորպորացիաներից մեկը, Ռուսաստանում ստեղծել էր ռուսական պետություն և ճանաչել էր Հայաստանի պես փոքրիկ Էստոնիայի «բացարձակ անկախությունը»:

Բայց մենք գիտենք, որ նրա պապը, հայրը և ինքը Բաքվի Մարդասիրական ընկերության անդամներն էին և կանոնավորապես ֆինանսական նվիրատվություններ էին կատարում: Գիտենք, որ 1994թ. Փարիզի Սբ. Հովհաննես-Մկրտիչ հայոց եկեղեցու տիկնանց հանձնախմբի երկու անդամուհիներից մեկը Լիդիա Լիանոզոֆն էր: Ո՞վ էր տիկին Լիդիան՝ դո՞ւստրը, թոռնուհի՞ն, զարմուհի՞ն...

* * *

Թուրք-ադրբեջանցի ցեղասպանների և բոլշևիկ ավերիչների պատճառով պայծառ բաքվահայոց խամրած ստվերներն անէացան օտարության մեջ, մատնվեցին անարդար մոռացության:

Բայց ողջ մնացին նրանց ժառանգները: Մենք:

¹ Советская историческая энциклопедия, т. 8, М., 1965г., стр. 613-614.

² Ֆրանսահայ տարեգիրք-1927, Բ տարի, Փարիզ, 1926թ.:

ՎԱՄՆ ՁԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Հակահայկականության, հայության դեմ մղվող տեղեկատվական պատերազմների անքակտելի բաղադրյալը գեղծարարությունն է՝ պատմական իրողությունների, փաստերի կանխամտածված խեղաթյուրումը, որի նպատակը ընթերցողին, ունկնդրին և ակնդրին հիմարացնելը, ձեռնասուն դարձնելն է:

Ձեղծարարությունը շատ նման է քրեական իրավունքում *խարդախություն* որակվող երևույթին, բայց եթե վերջինս հետապնդում է անհատական կամ մարդկանց նեղ շրջանակի շահադիտական նպատակներ, ապա առաջինի ընդգրկումներն անհամեմատ մեծ են, այն հող է նախապատրաստում գործնական քայլերի համար, որոնք ուղղված են քաղաքական, տնտեսական և այլ խոշորածավալ խնդիրների լուծմանը:

Հայեր-Բաքու առնչությունները տարբեր ժամանակներում մշտապես ուղեկցվել են գեղծարարությամբ, ընդ որում, դրանց հեղինակները հետապնդել են զանազան նպատակներ, սակայն բոլորին միավորում է մեկ գերխնդիր՝ հայությունը տրոհել, կտրել պատմական արմատներից, ի չիք դարձնելու աստիճանի նսեմացնել հայության դերը Բաքվի կայացման ու զարգացման հարցում՝ դրանով հանդերձ մեզ զրկելով արդար պահանջի բարոյական զգացումից և ստեղծելով նոր, շինծու իրավատերեր:

ԽՍՀՄ փլուզումից և նորանկախ պետությունների առաջացումից հետո տեղեկատվական պատերազմի տեխնոլոգիաները փոփոխության ենթարկվեցին, ձեռք բերեցին նոր որակներ. իր դրսևորումը փոխեց, շատ ավելի նրբին բնույթ ստացավ նաև գեղծարարությունը:

Վերջին տասնամյակում Բաքվի նավթարդյունաբերության

պատմական հենքերի հանդեպ եռանդագին շահագրգռվածություն են ցուցաբերում ռուսաստանցի հեղինակները: Ռուսները պետական մակարդակով ձեռնամուխ են եղել ազգային ծրագրերի համալիր ստեղծելու իրականացմանը, որի բաղադրյալներից մեկը ռուսական կապիտալի դասականության գիտական ձևակերպումն է: Նախանձով ենք փաստում՝ փառք ու պատիվ իրենց նրանք գիտակցում են երևույթի կարևորությունը և առարկայորեն զբաղվում (մի բան, որից մենք՝ հայերս, լիովին գուրկ ենք):

Մեզ հայտնի են տասնյակ գիտնականների աշխատություններ, որոնց մի մասը հասու չէ, բայց մի մասն էլ հայթայթել ենք և ուսումնասիրել, ինչի արդյունքում ակնհայտորեն նկատել ենք հստակ միտում: Դա Բաքվի նավթարդյունաբերությունում հայերի դերակատարությունը *լռության մատնելն է*, ինչը ոչ այլ ինչ է, եթե ոչ զեղծարարության նորովի արտահայտություն: Իրենց շքեղ, պատկերազարդ, պոլիգրաֆիական ու հրատարակչական խոշոր գումարներ չինայած գրքերին արժանահավատություն հաղորդելու համար հեղինակներից ոմանք մեկ-երկու տող գրում են Հովհ.Միրզոյանի մասին, որովհետև առանց նրա Բաքվի նավթարդյունաբերությունը պատկերացնել հնարավոր չէ: Մյուսները Միրզոյանին զրկում են այդ «պատվից», բայց փոխարենը կցկտուր տեղեկություններ են հաղորդում Ալ.Մանթաշյանցի ու Ս.Լիանոսյանի մասին կամ զետեղում են Լիանոսյանի ու Հովհ.Տեր-Հակոբյանի ֆիրմաների բաժնետոմսերի պատկերները: Սակայն հաճույքով գրում են ադրբեջանցի երեք քիչ թե շատ հայտնի նավթարդյունաբերողներից Հ.Թադիևի և Մ.Նադիևի մասին (զարմանալի է, որ այքաթող են անում Շ.Ասադուլանին): Ո՞րն է դրա նպատակը. զեղծարարությունն ինքնին պարզունակ երևույթ է, և ռուսաստանցի հեղինակներն այդպես վարվելով՝ համահարթեցնում են մեզ ու ադրբեջանցիներին, այսինքն՝ կանխամտածված կերպով նվազեցնում հայերի դերակատարությունը, որպեսզի լիաթոք տարփողեն ռուս նավթարդյունաբերողների նվաղկուն ներդրումը:

Կհարցնեք՝ հապա ո՞ր մնացին գիտնականի բարեխղճու-

թյունը, մարդկային խիղճը: Չէ՞ որ ամբողջ «նավթարդյունաբերական» գրականությունը՝ արխիվները, փաստաթղթերը, ֆինանսատնտեսական հաշվետվությունները և այլ վկայագրեր գտնվում են Սանկտ Պետերբուրգում ու Մոսկվայում: Բավական է մի քանի հիմնարար աշխատության հպանցիկ հայացք գցել, մի արխիվային գործ թերթել, և ճշմարտությունը պարզ կդառնա: Արդի ժամանակների տիպական դրսևորում է, սակայն ռուսաստանցի հեղինակները նման մոտեցմամբ պարզապես վնաս են հասցնում իրենց երկրի շահերին: Թեկուզ այն ակնհայտ պատճառով, որ պաշտոնական, իրավական տեսակետից հայ նավթարդյունաբերողները ռուսահպատակներն էին, Ռուսաստանի քաղաքացիներ, ռուսական իրականության ներկայացուցիչներ, և նրանց ամբողջ գործունեությունը միտված էր մեկ նպատակի՝ նպաստել Ռուսաստանի բարգավաճմանը, ինչպես նաև՝ սեփական ազգի պահպանմանը: Այսինքն, ազգությամբ հայ ռուսահպատակները ռուսական ազգային կապիտալի ձևավորողներն ու անբաժանելի բաղադրատարրն էին: Սրա մեջ նսեմացնող ի՞նչ կա:

Սակայն ստորև մենք կանդրադառնանք կոնկրետ մարդկանց և նրանց գրվածքներին: Եվ դա անելու ենք միմիայն այն պատճառով, որ ճշմարտությունը, առաջին հերթին, պետք է մեզ՝ հայերիս: Այդ ճշմարտությունն է նպաստելու մեր ազգային ինքնագիտակցության, ազգային արժանապատվության առաջընթացին:

Ռուս գրականության դասական Ալեքսեյ Տոլստոյը (1882-1945) 1919թ.՝ քաղաքացիական պատերազմի ժամանակ տարագրվեց, ապա 1923-ին վերադարձավ Խորհրդային Ռուսաստան և «ակտիվորեն ներգրավվեց գրական ու հասարակական կյանքում»: Նա Ստալինի սիրեցյալներից էր, ուներ «կարմիր բարոն» մականունը և երեք անգամ՝ 1941թ., 1943թ., 1946թ. (հետմահու) արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի: Ա.Տոլստոյի գրական ժառանգությունից մեզ հետաքրքրում է «Վտարանդիները» («Эмигранты») վիպակը: Այն մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում այն բանով, որ հիշատակումներ է պարունակում

հայերի վերաբերյալ: Եվ եթե անձեռնմխելի Ս.Լիանոսյանի նկատմամբ Ա.Տոլստոյը ցուցաբերել է խիստ զուսպ, վերին աստիճանի զգուշավոր մոտեցում, ապա Լևոն Ալեքսանդրի Մանթաշյանցին անխնա ձաղկել է:

Ըստ նրա, 1912թ. Մոսկվայում սակարանային գների անակնկալ տատանման հետևանքով Լ.Մանթաշյանցի ձեռքն է ընկնում 8 մլն ռուբլի, և գրողը բացականչում է. «Ո՛ւրթ միլիոն՝ անբանին, վատնողին, խորոված ուտող հային»¹: Ընդ որում, հուզմունքն այնքան կրքոտ է, ասես Լ.Մանթաշյանցը Ա.Տոլստոյի փողերն էր յուրացրել: Ապա գրողը նկարագրում է, թե այդ առթիվ նավթարդյունաբերողն ինչպիսի շքեղ ընթրիք էր կազմակերպել 100 հոգու համար: Մեկ առ մեկ թվարկում է նրբախորտիկները, նշում, որ դրանցից շատերը հայթայթելու համար հանրահայտ ֆրանսիացի խոհարար Օլիվյեն (իր անունը կրող աղանդերի հեղինակը) մեկնել էր Փարիզ, և տեղեկացնում, որ այդ ամենի վրա ծախսվել էր 200 հազար ռուբլի:

Ա.Տոլստոյն այսքանով չի բավարարվում, վտարանդի դարձած Լ.Մանթաշյանցին՝ «բարձրահասակ, գեղեցկատես ձիասերին» անդրադառնում է Փարիզում, 1919թ.: Պատմում է, որ նա ապրում էր Շանգ Էլիզեում գտնվող «Կարլտոն» նշանավոր հյուրանոցում, իրվել էր պարտքերի մեջ և կորցրել էր կյանքի շնորհներից մեկը՝ անհոգությունը: Հետո միանգամից բախտը բերեց՝ Հ.Դետերդինգին վաճառեց Բաքվի նավթադաշտերը, առձեռն ստացավ 19 մլն ֆրանկ, «Կարլտոնին» վճարեց 80 հազարի պարտքը և տեղափոխվեց քաղաքի ամենաշքեղ հյուրանոց՝ «Մաժեստիկ»: Ապա Սենայի ափին գնեց մի մռայլ պալատ՝ բազմաթիվ ննջարաններով, լողավազանով, մարզադահլիճներով (հավանաբար, նկատի ունի Վիկտոր Հյուգո պողոտայի թիվ 69 հասցեի պալատը): Իսկ բնակարանամուտի կերուխումին հրավիրեց 300 հյուր և ծախսեց 300 հազար ֆրանկ:

Ա.Տոլստոյը չի մոռանում հրնթացս նշել, որ Լ.Մանթաշյանցը

¹ А.Толстой, Эмигранты, М., 1982г., стр. 53. Ռուս. թարգ. հեղ.:

ազգային պատկանելությունից զուրկ, անբարոյական մարդ էր թե՛ կյանքում, թե՛ բիզնեսում և կաշառում էր ֆրանսիական մամուլը:

Ի՞նչ կարելի է այս ամենին պատասխանել: Նախ, ռուս գրողը որտեղի՞ց գիտեր Լ.Մանթաշյանցի միլիոնների ստույգ թվերը, նավթաբիզնեսում դա անհնար է, նման խոշոր գործարքների մասին տեղյակ է լինում շատ նեղ շրջանակ:

Երկրորդ, ընթրիքի, պալատի նկարագրություններն այնքան մանրակրկիտ, հավաստի են, որ մենք հավատում ենք՝ գրողը ներկա է եղել և անձամբ է տեսել: Բայց այդ դեպքում հարց է ծագում՝ որքանով է բարոյական մասնակից լինել ընդունելություններին և տեսածը հրապարակել, ընդ որում՝ խալիսի գրպանի փողը հաշվելով:

Բայց մեզ հետաքրքրում է ավելի կարևոր հարց՝ իրո՞ք Լ.Մանթաշյանցը զուրկ էր ազգային պատկանելության զգացումից:

Նա 1914թ. 300 հազար ռուբլի նվիրաբերեց Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցին՝ նոր շենք կառուցելու համար, Բորչալվի գավառում 3 դեսյատին հողատարածք գնեց ու հատկացրեց գյուղատնտեսական գիտական փորձարկումներ կատարելու նպատակով, 20 հազար ռուբլի տրամադրեց Ներսիսյան ճեմարանին, 15 հազար ռուբլի՝ Հայկական դրամատիկական ընկերությանը¹, 1917թ. նույն ընկերությանը՝ 5000 ռուբլի՝ «կյանքի թանկացման պատճառով արտիստների ռոճիկը բարձրացնելու համար»: Իսկ 1918թ. նորաստեղծ Հայաստանի Հանրապետության համար գնեց և որպես նվիրատվություն ուղարկեց մի ամբողջ սանիտարական գնացք, որը ճամփին անհետացավ և այդպես էլ տեղ չհասավ²:

Սա՛ է պատասխանը:

Լավ, Լ.Մանթաշյանցն ի՞նչ «վատություն» էր արել Ա.Տոլստոյին: Թերևս՝ ոչ մի: Պարզապես ռուս գրողը կատարում էր իր տիրոջ քաղաքական պատվերը, զբաղվել էր զեղծարարությամբ,

¹ Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը - 1915, Կ. Պոլիս, 1915թ., էջ 286:

² С.Гевинян, Мой Тифлис, Эчмиадзин, 2002г., стр. 62.

որի նպատակն էր «աշխատավոր» հայ ժողովրդին կտրել իր կապիտալիստից: Հիշո՞ւմ եք 1918թ. ադրբեջանցի նախարարի խոսքը՝ պոչը կտրել են, գլուխը՝ թողել: Տոլստոյի արածը շարունակություն էր. կոմունիստների նպատակն էր թույլ չտալ, որպեսզի կիսառնչնչացված պոչը հանկարծ հիշի իր չռնչացված գլխին:

Սակայն Ալ.Մանթաշյանցի ու նրա որդիների սովերենները շատերին հանգիստ չեն տվել: Հայկական սովետական հանրազիտարանում բառացիորեն կարդում ենք. «Մանթաշյաններ, Մանթաշյաններ, Մանթաշյաններ, խոշոր նավթարդյունաբերողներ Անդրկովկասում, XIXդ. վերջին և XXդ. սկզբին: Թավրիզցի, ապա թիֆլիսաբնակ հայ առևտրական Հովհաննեսի որդի Ալեքսանդրը (1849-1911) հոր մահից (1878) հետո Բաքվում զբաղվել է նավթարդյունաբերությամբ: Դարձել է «Թիֆլիսի առևտրական բանկ»-ի (մասնաճյուղեր է ունեցել Բաքվում ու Բաթումում) գլխավոր բաժնետերը, 1899-ին՝ հիմնել «Ա.Մանթաշյանց և ընկ. առևտրական տուն» բաժնետիրական ընկերությունը (կապիտալը 1899-ին՝ 22 մլն, 1916-ին՝ 30 մլն ռ.): Ռուս կառավարության հովանավորությամբ օտարերկրյա ընկերությունների հետ կատարել է մի շարք առևտրա-ֆինանսական գործարքներ և դարձել Ռուսաստանի մեծահարուստներից մեկը: Նրա ընկերությունը մասնաճյուղեր է ունեցել Ռուսաստանի, Լեհաստանի, Թուրքիայի, Ռումինիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Իրանի, Հնդկաստանի տարբեր քաղաքներում: Ունեցել է բազմաթիվ շոգենավեր, կալվածքներ, տներ: Բավականին գումարներ է ծախսել բարեգործական նպատակներով (Թիֆլիսում հիմնել է «Մանթաշյան առևտրական դպրոցը», կառուցել է Ներսիսյան դպրոցի նոր շենքը, վերանորոգել Մայր եկեղեցին): 1894-ին նվիրատվություն է կատարել Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը և ընտրվել նրա Կենտրոնական խորհրդի փոխնախագահ: Ալեքսանդրի մահից հետո որդիները (Հովհաննես, Լևոն, Հովսեփ, Գևորգ) «Ա.Մանթաշյանց և ընկ. առևտրական տան» բաժնետոմսերի մի մասը վաճառել են Պետերբուրգի ռուս. բանկերին, և 1913-ին ընկերության

վարչությունը Բաքվից (մինչև 1911-ի վերջը Թիֆլիսում էր) տեղափոխվել է Պետերբուրգ: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Մ. վտարանդվել են: Մ-ին հաջողվել է անգլո-հոլանդական «Ռոյալ դատչ-Շել» տրեստին 10 տարի ժամկետով վաճառել սովետական կառավարության դեկրետով ազգայնացված իրենց նախկին նավթահանքերի շահագործման իրավունքը: Հետագայում պայմանագիրը չեղյալ է հայտարարվել, և Մ. հեռացել են «գործարար աշխարհից»¹:

Այս բառ-հոդվածում այնքան սուտ, կեղծիք, անճշտություն ու սխալ կա, որ լռել անհնարին է: Ալ.Մանթաշյանը ծնվել է ոչ թե 1849-ին, այլ՝ 1842-ին և նավթարդյունաբերությամբ զբաղվել է ոչ թե 1879-ից, այլ՝ 1889-ից, ընդ որում, հոդվածի հեղինակը կամ հեղինակները չեն էլ հասկացել, թե ինչ տարբերություն կա «Ա. Մանթաշյանց առևտրային տան» ու «Ա.Մանթաշյանց և ընկ.» բաժնետիրական ընկերության միջև: Ալ.Մանթաշյանցի ֆիրման երբեք չի ունեցել 30 մլն ռ. հիմնադիր կապիտալ: Ընկերության վարչությունը Բաքվից Պետերբուրգ է փոխադրվել ոչ թե 1913-ին, այլ՝ 1912-ին: Եվ հետո, ի՞նչ է նշանակում՝ ազգայնացված նավթահանքերը վաճառեցին «Ռոյալ Դատչ-Շելին»: Ինչ է, այդ ընկերության անդամները լուսնի՞ց էին իջել և ոչնչից տեղյակ չէին, Դետերդինգը հո խելապակաս չէր: Սա կատարյալ իդիոտիզմ է, ո՞վ կհավատա նման բանի իսկությանը:

Ոչ, իրականում խնդիրը գուտ գեղծարարական բնույթ ունի: Նախ, հանրագիտարանը գրքերի թագուհին է, որի բացարձակ ճշմարտությանը մարդիկ աներկբայորեն հավատում են, հետևաբար հալած յուրի տեղ կղնեն նաև սուտուկեղծիքը: Երկրորդ, ՀՍՀՆ-ում զետեղված այս բառ-հոդվածը... *Советская историческая энциклопедия*-ից բառացի թարգմանություն է: Հիմա արդեն հնարավոր չէ պարզել՝ ո՞ւմ ցանկությամբ կամ թելադրանքով է այդ հոդվածը տեղ գտել հայկական հանրագիտարանում, բայց նպատակը պարզ է: Բանն այն է, որ Ալ. Մանթաշյանը մեր բոլոր մեծերի պես առաս-

¹ ՀՍՀ, հտ. 7, Ե., 1981թ., էջ 221-222:

պել է, տասնամյակներ շարունակ մեր ժողովուրդը նրա անվան շուրջ լեզենդներ է հյուսել և դա արել է, որպեսզի իր մեծի շնորհիվ հաղթահարի սեփական խեղճությունը: Իսկ նման կեղծիք տպագրելով, այն էլ՝ հանրագիտարանում, ժողովրդին կտրում էին իր հերթական արմատից: Գլուխը պոչից էին անջատում:

Իսկ ի՞նչ էք կարծում, ո՞ւմ կարող է պատկանել հակահայկականության, զեղծարարության բացարձակ առաջնությունը: Անշուշտ, մեր սիրելի աղբրեջանցուն:

1990 թվականին (ուշադրություն դարձրեք այս տարեթվին) Բաքվում, ռուսերեն թարգմանությամբ, 35.000 օրինակ տպաքանակով լույս տեսավ Մանաֆ Ֆարաջ-օղլի Մուլեյմանովի «Անցած օրեր...» գիրքը: Առաջաբանում բանասիրական գիտությունների դոկտոր Բ.Թայիրբեկովը սիրային զեղումներ չի խնայում՝ հեղինակին ներկայացնելով ծննդյան օրվանից մինչև իր ժամանակը: Ո՞վ է Մ.Մուլեյմանովը. ծնվել է 1912թ., ավարտել է Աղբրեջանի նավթային ինստիտուտը, գիտության թեկնածու է, 50 տարուց ավելի նույն ինստիտուտում դասավանդել է նավթագագային հանքերի երկրաբանության և հետախուզման հիմունքներ: Նաև գրող է ու թարգմանիչ, «նավթային» թեմայով ստեղծագործությունները հրատարակվել են արտասահմանում: «Բաքընը բալասի»-ի («Բաքվի զավակի») այս գրքի աղբրեջաններն հրատարակությունն անասելի հաջողություն է ունեցել և ստացել «Մանաֆըն քիթաբը» («Մանաֆի գիրք») պատվանունը: Առաջաբանի հեղինակն այն համեմատում է Գիլյարովսկու «Մոսկվան ու մոսկվացիները» և Օլդրիջի «Կահիրե: Քաղաքի կենսագրությունը» գրքերի հետ, ապա ասում. *«Մանաֆ Մուլեյմանովն իսպառ գիտի այն, ինչի մասին գրում է»*¹:

Տեսնենք իրոք գիտի:

Նախ, ասենք՝ չենք բացառում, որ այստեղ ճշմարիտ բաներ կան՝ կապված Բաքվի նիստուկացի, կենցաղավարության, բարքերի, աղբրեջանցիների հետ, սակայն քանի որ այն ամենն, ինչ

¹ М. Сулейманов, Дни минувшие..., Баку, 1990г., стр. 4: Այս գրքից բոլոր ռուս. թարգ. հեղ.:

վերաբերում է հայերին՝ կեղծիք է, ապա մենք չենք հավատում այս գրքի ոչ մի տողի: Որովհետև ինչ-ինչ ճշմարիտ բաները գեղ-ծարարության փաթեթավորման դեր են կատարում:

Հիմա տեսնենք, թե Մանաֆն իր «քիթաբում» ինչպիսի «գլուխգործոցներ» է գետեղել:

«Քաղաքում շատ լուսանկարչատներ կային: Ամենահայտնի լուսանկարիչներից էին Կուլիևը, Կակավիիսինը և Դավիթ Ռոստոմյանը (ընդգծ. մերն է - Խ.Դ.): Նրանց հաճախորդներն էին նավթարդյունաբերողները, կալվածատերերը, հարուստ վաճառականները, նավատերերը, բարձրաստիճան պաշտոնյաները, մի խոսքով՝ ընտրյալների խավը:

...Դավիթ Ռոստոմյանի լուսանկարչատունը գտնվում էր Մարիինակայա և Տորգովայա փողոցների հատույթում, երկհարկանի առանձնատանը: Առաջին հարկում՝ լուսանկարելու տեղում, աշխատում էին Դավթի ծառայողները: ...Վերևում՝ վեց սենյակներից բաղկացած շքեղ բնակարանում, ապրում էր տերը: Այստեղ էլ հենց նա ընդունում էր առավել հարգարժան հաճախորդներին, անձամբ սպասարկում էր նրանց և լուսանկարում: Ցածրահասակ, մեծ գլխով ու վիթխարի փորով այդ մարդը ծիծաղելի տպավորություն էր թողնում: Միգուցե, այդ պատճառով էլ հենց չէր ամուսնացել: Դավիթը պարսկահայատակ էր և բարեկամություն էր անում հյուպատոսի հետ: Լուսանկարչին ծառայում էին վեց թե յոթ աղջիկներ, բոլորը՝ գեղեցկուհիներ...*

Մի անգամ այդ աղջիկները Դավթի գլխին կատակ խաղացին: Վարպետը սովորություն ուներ գինի խմել արծաթագոծեղջյուրից: Աղջիկներն ինչ-որ տեղ այդպիսի եղջյուր պատրաստել տվեցին, բայց՝ ծայրը ծակ: Երեկոյթներից մեկի ժամանակ, երբ ծերուկը մի լավ գինովցել էր, նրանք մատուցեցին իրենց եղջյուրը: Գինին թափվեց ու թրջեց Դավթի շալվարը: Սպասուհիները նրան տարան ննջարան և շորերը փոխելիս վարպետին լուսանկարեցին կիսամերկ վիճակում՝ առանց շալվարի ու գեղեցկուհիներով շրջապատված:

Դրանից հետո հենց որ Դավիթը բարկանում էր ու սպառնում գործից ազատել, աղջիկը հանում էր վարկաբեկող լուսանկարը և խոստանում ուղարկել քաղաքի հարգարժան մարդկանց, այդ թվում և՛ հյուպատոսին: Դավիթն իսկույն ձայնը կտրում էր: Լուսանկարի հրապարակումը նրա համար հավասարազոր էր մահվան»¹:

Թիֆլիսցի բժիշկ, Մարդասիրական ընկերության հիմնման նախաձեռնող Դավիթ Ռոստոմյանը դարձել է իրանահպատակ, ծեր, անբարոյական լուսանկարիչ: Զարմանալի ոչինչ չկա, Մանաֆն «իսպառ գիտի ինչ է գրում»: Եթե ճշմարտություն գրեր, պիտի ասեր նաև, թե ինչ բան է Մարդասիրականը և ինչ կատարվեց այդ ընկերության հետ:

Նա շարունակում է. «Շատ տարիներ առաջ Բաքվի նավթը գտնվում էր Միրզոնի կապալառության ներքո: Երբ կապալատվությունը վերացվեց, հողը բաժանեցին մասերի ու հանձնեցին անհատ անձանց՝ ի գործածություն»²: Նավթային գործի «մասնագետը» գիտի ինչ է անում. եթե ասեր, որ 1872թ. Հովհ. Միրզոյանը 1 մլն 220 հազար ռուբլով գնել էր նավթատարածքները և այդ հողը նրա սեփականությունն էր, ապա դրա տակից ինչպե՞ս էր դուրս գալու:

Բայց Մանաֆն ավելի ստոր հարված է հասցնում. «Նախարարական գրասենյակներում, վարչություններում, անգամ սուլթանի պալատում գործում էին անգլիական հետախուզության գործակալներ: Օրինակ, «Ինթելիջենս սերվիսից» էր Գալուստ Մարգիս Գյուլբենկյանը՝ սուլթան Աբդուլ Համիդի հատուկ խորհրդականը օգտակար հանածոների գծով: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Պողոս Նուբար փաշան նույնպես գաղտնի համագործակցում էր անգլիացիների հետ»³:

«Գիտնականը» Պողոս Նուբարին «դարձնում» է Թուրքիայի արտգործնախարար մի պարզ նպատակով՝ որպեսզի հասկացնի,

¹Նշվ. աշխ., էջ 47-48:

²Նշվ. աշխ., էջ 65:

³Նշվ. աշխ., էջ 78:

թե հայն ինչ դավաճան էր, թուրքական նախարար էր և համագործակցում էր անգլիացիների հետ:

Սուլեյմանովը լավ է անում: Երբ մենք 2001թ. թերթերից մեկում հոդված տպագրեցինք և խնդրեցինք, կոչ արեցինք մի որևէ հանդիսավոր նիստով, որևէ միջոցառմամբ նշել Պ.Նուբարի ծննդյան 150-ամյակը՝ ոչ ոք բանի տեղ չդրեց: Է, եթե այդպես է, եթե մենք չենք մեծարում մեր ժողովրդի մեծագույն զավակներից մեկին, ուրեմն աղբյուրներում ի՞նչ ենք պահանջում: Լավ է անում: Ինքը կարևորում է Պ.Նուբարին ու մեզ «խփում»:

Մանաֆը Գ.Գյուլբենկյանի թեման շարունակում է. *«Գյուլբենկյանն իր ժամանակվա հետաքրքիր դեմքերից մեկն էր: 16 տարեկան հասակում նա ընդունվում է Լոնդոնի արքայական քոլեջ, ստանում հանքաբանության և լեռնային գործի մասնագետի դիպլոմ: Մանրակրկիտ կերպով ուսումնասիրում է ռուսական նավթարդյունաբերությունում տիրող իրավիճակը, հետաքրքրվում է արտասահմանյան նավթարդյունաբերական ընկերությունների գործունեությամբ և, իհարկե, հրաշալի տեղյակ է, թե ինչ է կատարվում այդ բնագավառում Թուրքիայում ու Միջագետքում: XIX դարի վերջերից, որպես Օսմանյան կայսրության կառավարության ֆինանսական ներկայացուցիչ, նա հաճախ մեկնում է Փարիզ ու Լոնդոն:*

Առաջին աշխարհամարտի նախօրյակին պայքար բռնկվեց մեծ տերությունների միջև հանուն մերձավորարևելյան նավթի: Գյուլբենկյանը մտավ խաղի մեջ: Նա մերձենում է Դետերդինգի հետ, եռանդուն մասնակցություն ունենում «Թյուրքիշ փեթրոլեում քոմպանիի» ստեղծման գործում (այն հիմնվել է 1912թ.): Այդ մենատիրությունը միավորում էր «Շելլը», «Անգլո-պարսկական նավթային ընկերությունը» և «Գերմանական բանկը»: Հաշվի առնելով Գյուլբենկյանի վաստակը, միջնորդությունը և հիմնարար գիտելիքները՝ նրան տրամադրվեց ընդհանուր շահույթի 5%-ը, ինչի համար նա նույնիսկ ստացավ «Պարոն հինգ տոկոս» մականունը: Նա առհասարակ կարևոր տեղ է զբաղեցնում միջազգային նավ-

թային միությունների գործունեության մեջ: Մասնակցել է բազմաթիվ կոնցեսիաների գործերի: Եվ արդյունքում դարձավ 3 միլիարդ ֆունտ ստերլինգի տեր (ի դեպ, ոմանք էլ նրա կարողությունը գնահատում էին 20 մլրդ ֆունտ ստերլինգ - Խ.Դ.): Եվրոպական շատ մայրաքաղաքներում նա ուներ սեփական պալատներ, բանկեր ու գրասենյակներ: Թուրքական կառավարությունը Գյուլբենկյանին պարզնասորեց փաշայի տիտղոսով և նշանակեց Լոնդոնում պատվավոր դեսպան: Ի դեպ, Իրանի շահը հետագայում նրան «Չնորհեց» խանի տիտղոս: (Գյուլբենկյան փաշա՝ Գյուլբենկյան խա ն: Ինչե ր ասես, որ չեն անի փողերը...)»¹:

Այսքանից հետո Մանաֆը մի ենթախորագիր է դնում՝ «Մերը և նավթը» ու պատմում, թե ինչպես, իբր, Գյուլբենկյանն ու Դետերդինգը սիրահարվում են միևնույն ռուս գեղեցկուհու, ինչի հետևանքով նրանց փոխհարաբերությունները լրջորեն սրվում են: «Երկու միլիարդատեր, որոնք երկար ժամանակ համաշխարհային ասպարեզում որպես զինակիցներ համատեղ պայքար էին մղում Ռոկֆելերի դեմ, դարձան երդվյալ թշնամիներ: Գյուլբենկյանն ամեն կերպ աշխատում էր վնաս հասցնել Դետերդինգին, նսեմացնել նրա ֆիրմայի հեղինակությունը՝ այդ նպատակով նույնիսկ համագործակցության մեջ մտնելով Ռոկֆելերի մարդկանց հետ: Մակայն էական վնաս նրան այդպես էլ չհաջողվեց հասցնել»²:

Մանաֆի այս աղբակույտը բանի տեղ չէինք դնի, բայց Գ.Գյուլբենկյանին անդրադառնալու ենք, որովհետև դա, կրկնում ենք, առաջին հերթին պետք է մեզ՝ նրա ազգակիցներին:

Գալուստ Մարգարի Գյուլբենկյանը (1869, Կ. Պոլիս - 1955, Լիսաբոն) այն եզակի մարդկանցից էր, ով լիովին և լավագույնս իրացրեց ճակատագրի ընձեռած հնարավորությունը. վերջինս զուգակցեց իր բնատուր խելքի, հրաշալի կրթության, ազնվագարմության հետ և հասավ փայլուն արդյունքների: Ավելի քան կես

¹Նշվ. աշխ., էջ 78-79:

²Նշվ. աշխ., էջ 80:

դար նա աշխարհի և ժամանակի հզորագույն մարդկանցից մեկն էր, առանց նրա մասնակցության միջազգային որևիցե խոշոր նավթարդյունաբերական գործարք չէր կայանում: Նա առաջինն էր, որ մասնագիտական ունակությունների շնորհիվ կանխագուշակեց Թուրքիայի, Իրաքի, Արաբական թերակղզու, Պարսից ծոցի նավթային խոշորագույն պաշարների գոյությունն ու եվրոպական առաջատար երկրներին ներգրավեց դրանց շահագործման մեջ: Դրանով հանդերձ նա ուղղակիորեն վերափոխեց աշխարհի կայացած կացութիւնը և անուղղակիորեն խառնեց համաշխարհային քաղաքականության խաղաթղթերը: Որովհետև Մերձավոր Արևելքի, Արաբական թերակղզու նավթի երևան գալուն գուզնթաց սկսեցին խարխլվել ամերիկյան ու ռուսական (իմա՝ Բաքվի) նավթարդյունաբերության տիրապետող դիրքերը:

Գ.Գյուլբենկյանը նախնական կրթությունն ստացել է Կ.Պոլսի Արամյան-Ունճյան վարժարանում և Սեն-ժոզեֆ ֆրանսիական դպրոցում: Ֆրանսերենը կատարելագործելու նպատակով մեկնել է Մարսել, ապա տեղափոխվել ծնողների մոտ՝ Լոնդոն, ուր 1887-ին գերազանցությամբ ավարտել է Քինգզ քոլեջը՝ ստանալով ճարտարագետի մասնագիտություն: Ապա տեղի ունեցավ մի իրադարձություն, որը կանխանշեց երիտասարդի հետագա կենսուղին. «22 տարեկանին՝ Գ.Գիւլպենկեան գնաց Անդրկովկաս և շրջեցաւ Պաքուի քարիւղային վայրերը: Այս ճամփորդութիւնն անոր առիթն ընձեռեց հեղինակելու «*La Transcaucasie et la Peninsule d'Apcheron - Souvenirs de Voyage* («Անդրկովկասը և Ապշերոնի թերակղզին. ճամփորդական նութեր» - Խ.Դ.) և գրելու *զանազան յօդուածներ Revue des Deux Mondes* թերթին *համար*»¹: Այս մասնագիտական գրքույկն ու հոդվածները պատճառ հանդիսացան, որ Օսմանյան Թուրքիայի հանքերի նախարարը իր երկրի հպատակին առաջարկի ուսումնասիրել և տեղեկագիր պատրաստել կայսրության և հատկապես Միջազգային նավթի ենթադրյալ պաշարների վերաբերյալ, ինչն էլ Գ.Գյուլ-

¹ Գալուստ Սարգիս Գիւլպենկեան. մարդը եւ իր գործը, Լիսաբոն, 1999թ., էջ 13:

բենկյանը փայլուն կերպով կատարեց:

Մակայն հարց է ծագում՝ Լոնդոնում ապահով կյանքով ապրող 22-ամյա երիտասարդն ինչպե՞ս հանկարծ վեր կացավ-գնաց օտար մի երկիր, այն էլ՝ Անդրկովկաս, Բաքու: Բանն այն է, որ Գ.Գյուլբենկյանը նավթարդյունաբերությամբ սկսեց հետաքրքրվել ու զբաղվել *Ալեքսանդր Մանթաշյանցի* շնորհիվ: Եվ Աստծո կամոք նրան ներգրավելով նավթարդյունաբերության մեջ՝ Մանթաշյանցը Գյուլբենկյանին հանձնեց մի բան, որն ավելին էր, քան բիզնեսը: Հանձնեց ազգ պահելու պարտականությունն ու պատիվը:

Նրանց առնչության վերաբերյալ ականավոր պատմաբան Ա.Ալպոյաճյանը նշում է, որ Մանթաշյանցը Գյուլբենկյանի հետ ծանոթացել է Մանչեստրում ու երիտասարդի ուշադրությունը հրավիրել նավթարդյունաբերության վրա: Վերջինս էլ *«Անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու և գործն ուսումնասիրելու համար 1890-1891թթ. մեկնել է Կովկաս, հատկապես՝ Բաքու, ուր որոշ ժամանակ աշխատել է Ալ. Մանթաշյանցի մոտ»*¹:

Բաքվի նավթարդյունաբերությունում արդեն լայն ճանաչում ունեցող Մանթաշյանցն ինչո՞ւ որոշեց հենց Գյուլբենկյանին հովանավորել՝ հրավիրել իր մոտ ու «տիրություն անել»: Դրդապատճառը հեռվից է գալիս. Կեսարիայի Թալաս գյուղաքաղաքը հիմնադրել են յոթ հայ ընտանիքներ, այդ թվում՝ Եսայաններն ու Գյուլբենկյանները, որոնք դարեր շարունակ միմյանց հետ գտնվում էին խնամիական կապերի մեջ (ի դեպ, Գ.Գյուլբենկյանի կինը Նվարդ Եսայանն էր): 1870-ական թթ. Մանթաշյանցը Մանչեստրից մանուֆակտուրա էր առաքում հորը և ցկյանս բարեկամական հարաբերություններ հաստատեց Եսայան եղբայրների հետ: Ուրեմն տրամաբանական է ենթադրել, որ փայլուն կրթություն ստացած, ինելացի Գյուլբենկյանին Անդրկովկաս հրավիրելը, նավթարդյունաբերությանը ծանոթացնելը կատարվել է Եսայանների խնդրանքով:

Ինչնէ, մեկնարկը տրված էր, և համաշխարհային նավթար-

¹ Ա.Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Կահիրէ, 1937թ., էջ 2013:

ըյունաբերությունն ունեցավ իր պատմության մեծագույն գործիչներից մեկին: Դեռևս 1898թ. նշանակվելով Թուրքիայի դեսպանատների տնտեսական խորհրդական Փարիզում ու Լոնդոնում, իսկ 1902-ին ստանալով բրիտանական հպատակություն՝ Գյուլբենկյանը Ֆրանսիայի և Անգլիայի ուշադրությունը հրավիրեց մերձավորարևելյան նավթարդյունահանման վրա: Նրա ջանքերով Իրաքի նավթապաշարների շահագործման նպատակով 1912-ին (այն թվականին, երբ Ս.Լ.Իսնույանը հիմնեց իր հռչակավոր «Օյլը») ստեղծված «Թուրքական նավթային ընկերության» մեջ 35% բաժնեմասը պատկանում էր Թուրքիայի Ազգային բանկին, 25-ը՝ «Ռոյալ Դատչ Շելին», 25-ը՝ Գերմանական բանկին («Դոյչե բանկ»), իսկ 15%-ը՝ անձամբ իրեն:

Սակայն աշխարհը չէր կարող համակերպվել նոր իրողությունների հետ: Մի կողմից Եվրոպայում գերիշխանության տիրող Գերմանիան խորացնում էր ռազմաքաղաքական ու տնտեսական հարաբերությունները Օսմանյան Թուրքիայի հետ (այդ ժամանակ նույնիսկ յուրատեսակ «սև հումոր» կար. ասում էին՝ Վիլհելմ II-ը մահմեդականություն է ընդունել), մյուս կողմից՝ դա անհանդուրժելի էր Պարսկաստանում «խրված» Անգլիայի համար: «Անգլո-պարսկական նավթային ընկերության», նույնն է թե՛ սեփական շահերից ելնելով՝ բրիտանական կառավարությունը «Թուրքական նավթային ընկերությանն» ստիպեց վերաբաշխել մասնաբաժինները: Այդ բարդ թնջուկի հարթումը վերապահվեց բրիտանահպատակ Գ.Գյուլբենկյանին: 1913-1914թթ. նա իր բանակցային, դիվանագիտական բացառիկ տաղանդով կարողացավ այնպես անել, որ Թուրքիայի Ազգային բանկի մասնաբաժիններն անցնեն «Անգլո-պարսկական նավթային ընկերությանը», սակայն նվազեց նաև սեփական մասնաբաժինը՝ հասնելով 5%-ի: Այդ տոկոսադրույքը ընդմշտական ամրագրում ստացավ, ինչի հետևանքով էլ նա համաշխարհային բիզնեսի պատմության մեջ մնաց «Պարոն 5%» մականվամբ:

Սկսվեց Առաջին համաշխարհային աղետը, և առայսօր

դժվար է ասել՝ պատերազմը ծագեց նավթի՞ն տիրելու համար, թե՞ նավթը միջոց էր: Իսկ գուցեն թե՛ մեկն էր, թե՛ մյուսը:

1915թ. թուրքերը ցեղասպանության ենթարկեցին 1,5 միլիոն հայերի, 1918թ. թուրքերն ու ադրբեջանցիները հայոց ցեղասպանություն իրականացրին Բաքվում, բայց փլուզվեց նաև Օսմանյան կայսրությունը: Աշխարհի քարտեզի վրա երևան եկան նոր երկրներ, ինչն անխուսափելիորեն հանգեցրեց նաև տնտեսական շահերի վերաբաշխման: 1928-ին Գ.Գյուլբենկյանի մտահղացմամբ «զծագրվեց» նավթային մի նոր քարտեզ՝ հանրահայտ «Կարմիր գիծը», որտեղ նորաստեղծ «Իրաքի նավթային ընկերության» մեջ իրենց մասնաբաժիններն ունեցան «Անգլո-պարսկական նավթային ընկերությունը», «Ռոյալ Դատչ Շելլը», «Ֆրանսիական նավթային ընկերությունը» և ամերիկյան վեց խոշոր նավթային ընկերությունների միակցությունը՝ «Մերձավոր Արևելքի զարգացման կորպորացիան»:

Մենք այս ամենը շարադրեցինք ամեննին ոչ ադրբեջանցի զեղծարարին պատասխանելու համար, պարզապես ցանկանում էինք հպանցիկ ցույց տալ, թե ինչպիսի մեծություն, հեղինակություն էր Գ.Գյուլբենկյանը նավթաշխարհում:

Սակայն կա մեկ այլ կարևոր հանգամանք: Լինելով մեր ժողովրդի ամենաազգանվեր գերդաստաններից մեկի ժառանգորդը՝ Գ.Գյուլբենկյանը չէր կարող գերծ մնալ հայոց գործերից: Եվ դա, առաջին հերթին, արտահայտվում էր բարերարությամբ: 1906-ին նա Կ. Պոլսի Սբ. Փրկչյան ազգային հիվանդանոցում կառուցել է իր անունը կրող վիրաբուժարանը, հինգ տարի շարունակ 500-ական օսմանյան ոսկի է հատկացրել Կեսարիայի որբերին: 1920-1940թթ. օժանդակել է Թուրքիայի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Հորդանանի հայկական դպրոցներին ու բուժական հաստատություններին, նպաստել Իրաքի ու Լիբանանի բազմաթիվ հայկական եկեղեցիների կառուցմանը: 1922-ին, ի հիշատակ հոր, Լոնդոնում կառուցել է Սբ. Սարգիս եկեղեցին, 1929-ին Երուսաղեմի հայոց պատրիարքարանի տարածքում կառուցել է Դուրյան մա-

տենադարանը, նորոգել Սբ. Գերեզմանի եկեղեցին և պատրիարքարանին նվիրել անտիկ իրերի իր աշխարհահռչակ հավաքածուի հայկական հին արվեստի նմուշների մեծ մասը: Սբ. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան վերանորոգման համար հատկացրել է 400 հազար դոլար: Բարերարությունների այս ցանկը խիստ մոտավոր է ու թերի, որովհետև Գ. Գյուլբենկյանը շատ բան ստիպված էր անել գաղտնի, միջնորդների անունով: Քանզի համաշխարհային բիզնեսի արքա նորին մեծություն նավթը սարսափելի չի սիրում ազգային պատկանելություն:

Գալուստ Գյուլբենկյանը «գոհ» գնաց թուրքերի և կոմունիստների խարդավանքին, հերթական անգամ վերջիններիս շահերը համընկան, իսկ տուժեց հայը:

Պողոս Նուբարի մահից հետո 1930թ. Գ.Գյուլբենկյանն ընտրվեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) նախագահ, այսինքն՝ սփյուռքահայության հիմնական պահապանի ու պատվարի դեկավար: Հունահայ 30 հազար գաղթականներ գտնվում էին ծայրաստիճան անմխիթար վիճակում, ըստ պաշտոնական տվյալների, նրանց 30%-ը գործազուրկ էր, անոթի և անօթևան: Ձգտելով այդ տարաբախտներին փրկել՝ Գյուլբենկյանը գաղափար հղացավ նրանց վերաբնակեցնել Միլիայում և աշխատանք տրամադրել Մոսուլ-Բաղդադից մինչև Տրիպոլի ու Հայֆա ձգվող նավթային խողովակաշարի շինարարությունում: Այդ նպատակով նա կառուցեց յոթ գյուղակ, ուր հազիվ կտեղավորվեր 2-2,5 հազար գաղթական: Եվ ի՞նչ... Թուրքիան միջազգային մակարդակի վայնասուն բարձրացրեց՝ օգտագործելով թե՛ պետական-դիվանագիտական, թե՛ քարոզչական լծակները, թե՛ հատուկ ծառայություններին: Գյուլբենկյանին մեղադրում էին այն բանում, թե, իբր, սահմանի մոտ ստեղծում է «հայկական օջախ»՝ հարմար պահի Թուրքիա ներխուժում իրականացնելու համար: Գաղթականները պետք է ներխուժեին Թուրքիա... Այս հրեշավոր կեղծիքը, սադրանքը կլիներ պարզապես ծիծաղելի, եթե չունենար աղետաբեր հետևանքներ:

Թուրքիային ձայնակցեց... ՀԽՍՀ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Խանջյանը: 1931թ. հոկտեմբերի 14-ին նա հանդես եկավ մի զեկուցմամբ, որտեղ «հայկական օջախի» ստեղծումը որակեց որպես իմպերիալիստական ինտերվենցիայի պատվար ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի դեմ: Այս զազրախոսությամբ սկիզբ դրվեց հակազյուլբենկյանական մի ամբողջ քարոզարշավի: Սփյուռքից Հայաստան հղված բազմաթիվ դիմումներ, այցելություններ մնացին անարձագանք. Խանջյանը դիրքորոշումը չփոխեց (թերևս, չէր էլ կարող. պատվիրատուն թույլ չէր տա): Եվ խիստ վիրավորված, խոցված Գյուլբենկյանը վճռեց թողնել ՀԲԸՄ նախագահի պաշտոնն ու 1932թ. ապրիլին հրաժարական տվեց¹:

Գյուլբենկյանը 1953թ. իր ողջ ունեցվածքն ու նավթատոկոսները կտակեց Պորտուգալիային: Պիրենեյան թերակղզու այս երկիրը տեր կանգնեց կտակին՝ 1956թ. ընդունելով կառավարական հատուկ որոշում, և ստեղծվեց հռչակավոր «Գալուստ Գյուլբենկյան» պորտուգալական հիմնադրամը: Այդ գիտական, կրթական, մշակութային հաստատությունից, որն այսօր աշխարհի նմանատիպ վեց լավագույն կառույցներից մեկն է, օգտվում են ավելի քան 70 երկրներ, այդ թվում և Հայաստանը:

Այս ամենի մասին չգիտե՞ր Մուլեյմանովը: Դա մեզ չի էլ հետաքրքրում, մեզ համար պարզ է նրա նպատակը՝ Գ.Գյուլբենկյանի նման մեծ մարդուն ներկայացնել Թուրքիայի դավաճանի և սիրախաղով զբաղվողի տեսքով:

Սակայն Մանաֆն այսքանով չի բավարարվում, նա անդրադառնում է 1905թ. դեպքերին և գրում. *«Այդ տարի, երբ սկսվեցին ցարական իշխանությունների հրահրած հայ-մուսուլմանական (ուշադրություն դարձրեք՝ հայ-մուսուլմանական, այլ ոչ թե՛ հայ-ադրբեջանական - Խ.Դ.) ընդհարումները, Շուշի տանող բոլոր ճանապարհները փակվել էին, և քաղաքի մուսուլմանական բնակչությունը պարենի կարիք ուներ: Շեյխուլիսլամը, մուֆթին ու*

¹ Խնդրի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Կ.Դավլաթյան, Հ.Բ.Ը. Միության նախագահ Գ.Գյուլբենկյանի հրաժարականի շուրջ, Ե., 1996թ.:

դազին ճանապարհվում են Թիֆլիս՝ փոխարքայի մոտ ընդունելության, նրան խնդրում օգնել շուշեցիներին: Վորոնոցով-Դաշկովը հրաժարվում է պատվիրակությանն ընդունել, հայտարարելով, թե մուսուլմաններին այդպես էլ պետք է: Փոխարքայի հակաադրբեջանական տրամադրությունները բորբոքում էր նրա կինը՝ ազգությամբ հայ Լիզա Գրիգորևնան, որի շնորհիվ Թիֆլիսի արդյունաբերության և առևտրի բոլոր առանցքային պաշտոնները տրվել էին հայ գործարարներին:

Այս կապակցությամբ չի կարելի չհիշել մի ծիծաղաշարժ դրվագ:

XX դարասկզբին Բաքու է այցելում հայերի կաթողիկոսը: Դիտում է քաղաքի տեսարժան վայրերը: Նրան հարցնում են, թե ինչպիսի տպավորություններով է մեկնում Բաքվից: Կաթողիկոսը հոգոց քաշելով պատասխանում է, թե անասելի հիասթափված է: Ինքը ենթադրում էր, թե Բաքուն Թիֆլիսի նման հայկական քաղաք է, այնինչ պարզվում է, որ այստեղ տերուտնօրինում են մուսուլմանները: «Այդ դառնությունն ինձ կսպանի», - ավելացնում է կաթողիկոսը¹:

Պարզունակ ադրբեջանցու գեղծարարություն: Գիտե՞ք ինչու չի տալիս կաթողիկոսի անունը, որովհետև Խրիմյան Հայրիկը պատմական դեմք է, և բնական հարց է ծագում՝ Մանաֆ, որտեղի՞ց գիտես, որտե՞ղ է գրված: Բայց դա Մանաֆին պետք էլ չէ, նրա նպատակը պարզապես ցեխ շպրտելն է:

Բայց եթե Վորոնցով-Դաշկովն իմանար, որ իր կինը հայուհի է, գերեզմանում շուտ կգար: Եթե իմանար, թե Թիֆլիսը կնոջ թելադրանքով հայերին է հանձնել, շուտ կգար երկրորդ անգամ: Այն նույն կոմսը, որ 1901թ. Բաքվում 10 դեսյատին նավթատարածք ձեռք գցեց և «Նոբել եղբայրներ» ֆիրմայի միջոցով 1903թ. հիմնեց սեփական բիզնեսը²: Այն նույն փոխարքան, որ 1907թ. Նիկոլայ II-ին հղված գեկույցում հայոց գործունեությունը որակում էր «թշնամական և ակնհայտ աչառու»³:

¹ М. Сулейманов, Дни ..., стр. 81.

² Монополистический капитал ..., стр. 672.

³ Դ. Անանուն, Ռուսահայերի ..., հտ. Գ, էջ 213:

Եթե Սուլեյմանովը ծնվել է 1912թ., ապա հիմա հավանաբար ոչ ևս է (չնայած, բացառված չէ, որ ողջ լինի. ախր, ըստ նախաբանի հեղինակ Թայիրբեկովի՝ ծծկեր տարիքում անասունի արյամբ է կերակրվել): Եթե դա այդպես է, ուրեմն Վորոնցով-Դաշկովը «էն կինքումը» Մանաֆից հաշիվ կպահանջի:

Նորից ենք կրկնում, մեր նպատակը չէ Սուլեյմանովին պատասխանելը (ադրբեջանցի գեղծարարների հետ «մեջլիս» մտնելը ժամանակի անհիմաստ վատնում է), մենք ցանկանում ենք նրան օգտագործելով ճշմարտությունն ասել մեր ազգակիցներին: Այդ պատճառով Մանաֆի մտքի մի «փայլատակման» էլ անդրադառնանք և վերջացնենք:

Նավթային գործի «գիտակը», «գիտնական-դասախոսը» գրում է. *«Մանթաշնը Բաքվի նավթից հարյուրավոր միլիոն ռուբլու եկամուտ էր ստանում, չնայած քառորդ դարի ընթացքում Բաքվում ոչ մի քիչ թե շատ աչքի ընկնող շենք չկառուցեց: Դրա փոխարեն հանքերում կառուցեց գորանոցներ, որոնք բանտից ավելի չարագույժ տեսք ունեին: Հեղափոխական իրադարձությունների ժամանակ նա փախավ արտասահման, իսկ 20 թվականին, հույսը կտրելով երբևէ Բաքու վերադառնալուց, Սուրախանի, Մաբունչիի ու Բիրի-Հեյրաթի նավթահանքերը 7 միլիոն ֆրանկով վաճառեց Դետերդինգին»¹:*

Այն, որ հայր ու որդի Մանթաշյանցների մասին պատկերացում չունի (Ալ.Մանթաշյանցը վախճանվել է 1911-ին և 20 թվին չէր կարող փախչել արտասահման), զարմանալի բան չկա, նրա նպատակն ուրիշ է:

Սուլեյմանովը խոսում է 7 մլն ֆրանկի մասին, իսկ Ա.Տոլստոյը նշում էր 19 մլն թիվը, ո՞ւմ հավատալ. ոչ մեկին, երկուսն էլ ստում են:

Մանաֆը ճիշտ էր ասում՝ Ալ.Մանթաշյանցը Բաքվում ոչ մի շենք չի կառուցել և այդպես վարվել է, թերևս, Աստծո թելադրանքով, այլապես մյուս հայերի կառուցած բազմաթիվ շինություն-

¹ М.Сулейманов, Дни ..., стр. 152.

ների նման ադրբեջանցիները դա էլ կսեփականացնեն: Ինչպես նույն Ալ.Մանթաշյանցի՝ Թիֆլիսի Առևտրային բանկի Բաքվի մասնաճյուղի շենքը, որը դարձավ «Մանկական աշխարհ» հանրախանութ, Մարդասիրականի գրադարանը՝ Հանրապետական հանրային գրադարան, Մայիլյանի թատրոնը՝ Օպերայի և բալետի թատրոն, Առևտրային ուսումնարանը՝ Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտ, Ղուկասյան եղբայրների «Կասպից ընկերակցության» շենքը՝ Ռ.Մուստաֆանի անվան կերպարվեստի թանգարան, Գ.Թումայանի և Ս.Մալխասյանի «Մետրոպոլ» հյուրանոցը՝ Նիզամու թանգարան...

Բայց ի՞նչ նկատի ունի «գորանոց» ասելով. իհարկե, նավթագործարանի շենքը: Եկեք ծանոթանանք մի փաստաթղթի: Քանի որ Սուլեյմանովն իր գրքում ներբողներ է հյուսում Թադիևի հասցեին, տեսնենք, թե վերջինիս ֆաբրիկայի (նավթարդյունաբերությունից դուրս էր եկել և հիմնել տեքստիլ ֆաբրիկա) մասին ինչ էր գրված ՌՄԴԲԿ Կովկասի միության Բաքվի կազմակերպության Սպիտակ քաղաքի շրջանային կոմիտեի 1904թ. սեպտեմբերի 7-ի թուղթիկում. *«Թադիևի ֆաբրիկա: Այստեղ իսկական բանտ է կամ, ավելի ճիշտ, բանվորական կալանատուն: Այստեղ ամեն ինչ սեփական է՝ սեփական ուստիկանություն, սեփական կամայականություն, սեփական օրենքներ:*

Այստեղ ողջ-ողջ թաղված բանվորներն ու բանվորուհիները զրկված են ֆաբրիկայից դուրս գալու հնարավորությունից ոչ միայն առանց «ինժեների», այսպես կոչված՝ կառավարչի, այլև նույնիսկ դոնապանի, պահակի թույլտվության: Միայն տեղացի ուստիկաններին է մուտքը թույլատրված, անգամ՝ գիշերը, եթե նրանք, հարբած, ցանկանում են «զվարճանալ օրիորդների» հետ: Աշխատավարձն այնքան ցածր է, հատկապես՝ բանվորուհիներին, որ նրանք ստիպված են պոռնկությամբ փող վաստակել, ինչին վարչակազմը, բնականաբար, չի խոչընդոտում:

Այստեղ սովորական բաներ են նաև բռունցքի միջոցով հաշվեհարդար տեսնելը և այլ կոպտությունները»¹:

¹ Монополистический капитал ..., стр. 315. Ռուս. թարգ. հեղ.:

Սա աղբբեջանական ժողովրդի պատմության միակ քիչ թե շատ արժեք ներկայացնող կապիտալիստի անձի բնութագիրն է: Պատշար Թաղիևի, որը Սարգսյան եղբայրների շնորհիվ մարդամեջ մտավ, նրա, որի ներկայությամբ ու լուռ համաձայնությամբ իր ազգակիցները մորթեցին իր գործընկերների ազգակիցներին:

Սուլեյմանովի գիրքը հեղեղված է Թաղիևի և տասներորդական կարգի աղբբեջանցի կապիտալիստների հասցեին ուղղված փառաբանություններով: Գրում է, թե ինչպես Թաղիևի փողերով ուսանած ընկեր Նարիմանովը ոչ միայն նրան ձեռք չտվեց, չնեղացրեց, այլև նրան թողեց Մարդակյանում գտնվող շքեղ առանձնատունը: Առաջին սերնդի հայ կոմունիստ պետական գործիչներից ո՞ր մեկն այդպես վարվեց ազգակից կապիտալիստների հետ...

1903թ. կրոնուսույց Ախունդ-Յուսուֆ Թալիֆզադեն Թաղիևի փողերով մի քերականություն հրատարակեց և գրքի սկզբում գրեց.

«Բոլոր տերերի տեր, ընտրեալներից ընտրեալ, փառքի արեգակ, գթութեան աղբիւր, ողորմութեան ճառագայթ, խելքի ծով, գանձարան մեծահոգութեան, աննման տեր Հաջի Ձէյնալ-Աբդին Թաղիեւի բարձրագոյն հրամանով: Հէնց որ ես, այս ոչնչագոյն ծառայս, Ախունդ-Բուսուֆ Թալիֆզադէս, ազգային ուսումնարաններում կրօնուսույցի պաշտօն ստացայ, սկսեցի հետնել ողորմած աղայի, այդ բարձրեալ և ամենակարող տերի, ընտրեալ բոլոր հաջիներից՝ Հաջի Ձէյնալ-Աբդին Թաղիեւի գործունէութեանը: Ես ապշած էի մնացել, ընկճւած նրա փայլից, ինչպէս յաղթահարւում է գիշերային թիթեռը անուշահոտ մումից, և ահա ես շշմուած՝ անդադար գլխազլոր եմ լինում հիացման յորձանքում և թափառում դիւթականութեան անապատում... Նրա առատագոյն տուրքը, ինչպէս զարնանային հեղեղ, անվերջ թափւում է անխտիր՝ բոլորի - և հարուստների ու խեղճերի, և փոքրերի ու մեծերի գլխին...»: Ապա խոսելով Թաղիևի հիմնած տեքստիլ գործարանի մասին, Թալիֆզադեն բացականչեց. «Կցանկանայի ունենալ մի բերան՝ որի բացւածքը երկնակամարի պէս լայն լինէր, որպէսզի այդ զօրեղ բերանով միայն կարողանայի գովք անել մեր երկնային

հրեշտակապետին, գործարան հիմնողին»¹:

Որ հայ մտավորականն իրեն նման ինքնաստորացում, ինքնառնջացում թույլ կտար: Իսկական հայ մտավորականը մտածում է, որ իսկական դրամատերը պարտավոր է իրեն աջակցել և հարկ չի համարում անգամ երախտիքի խոսք ասել: Բայց Ալ.Շիրվանզադեն Ալ.Մանթաշյանցի մահվան առթիվ գրեց. «Մույն կորուստը, որ այսօր կրում է հայ ժողովուրդը, անփոխարինելի է: Գումարների ահագին քանակությունը չէր, որ առատաձեռնորեն զոհում էր նա բարեգործություն կոչված սրբազան տաճարին, որ երկրային տաճարների թագուհին է: Միրտը՝ ահա այն, որ կատարում էր միակ դերը և վեհ դերը Մանթաշյանցի բարերարությունների մեջ: Նա տալիս էր առանց հետին հաշիվների, սին փառամոլության, տալիս էր, որովհետև այդպես էր թելադրում նրա զգայուն հոգին: Նրա բարերարությունը կրում էր բուն քրիստոնեության դրոշմ, որ աջ ձեռքը տալիս՝ ձախը չիմանա: Դա նրա համեստությունն էր, որ այնքա՛ն հազվագյուտ է ներկայիս:

...Ազգին է մնում միայն իր խորին երախտագիտությամբ գնահատել այսպիսի սիրտը: Եվ նա անշուշտ կգնահատե ու շատ բարձր կգնահատե իր ապագա պատմության մեջ»²:

Ի վերջո, ինչո՞ւ մենք այսքան տեղ հատկացրինք և անդրադարձանք Մ.Սուլեյմանովի գրքին: Միայն մեկ պատճառով. այդ հորինվածքը լույս է տեսել 1990 թվականին, շարվածքի է հանձնվել 20.12.1989թ., տպագրվել է 19.09.1990թ.: Այսինքն, Սումգայիթում արդեն իրականացրել էին հայոց մորթը և համոզվել, որ սպանդի առաջին երեք օրերը «օրինականորեն» պատկանում են իրենց, քանզի խորհրդային զինված ուժերը չէին միջամտել և, Դ.Անանունի խոսքերով, ջարդը թույլ էին տվել «*մինչև հոգնածություն և ուժերի սպառում*»: Տպագրվել է այն ժամանակ, երբ արդեն այրել էին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, իսկ 1990-ի հունվարին սպանություններով Բաքվից վռնդել հայությանը: Այն ժամա-

¹ «Մշակ», թ. 33, 1903թ.:

² «Հորիզոն», թ. 82, 1911թ.:

նակ, երբ նախապատրաստում էին Լեոնային Ղարաբաղի բնաջնջումը, երբ «մակընթացությանը հաջորդել էր տեղատվությունը» և նոր, լայնածավալ եղեռնագործության համար անհրաժեշտ էր «ուժերի ու միջոցների **հավաքում**»: Այդ նպատակին պետք է ծառայեին Սուլեյմանովի և նրա նմանների գրվածքները: Ի՞նչ էր քարոզում ներքին գործածության համար նախատեսված «Անցած օրեր...» զեղծարարությունը. հայերը դավաճաններ են, անբարոյականներ, ադրբեջանցու արյուն ծծող մանր տիգեր, որոնց պետք է ջնջել, վերացնել, վոնդել: Զեղծարարությունը նոր ցեղասպանության հող էր նախապատրաստում:

ԽՍՀՄ ղեկավարության և Ադրբեջանական ԽՍՀ շահերը դեռ մեկ անգամ էլ պիտի համընկնեին, ու խորհրդային զինուժը պիտի իրականացներ «Կուլցո» գործողությունը, բռնազավթեր Դաշտային Ղարաբաղը և նվիրաբերեր ադրբեջանցիներին: Դեռ պիտի պատերազմ սկսեին Արցախի դեմ և հարձակվեին Հայաստանի սահմանների վրա: Դեռ պետք է «Գրադ» կայանքներով ուժրակոծեին և ինչպես 1918 թվականին՝ իլեին անմեղ ծերերի, կանանց ու երեխաների կյանքը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ընթերցողն, անշուշտ, հիշում է, որ 1918թ. դեկտեմբերին Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կողմից Բաքվում ստեղծվեց «Դաշնակից տերությունների վերստուգիչ հանձնաժողով»: Այն իր բնույթով պաշտոնական էր, միջազգային, ինտերնացիոնալ, և կազմի մեջ ընդգրկված էին ընդամենը 7 հայեր: Հանձնաժողովը Բաքվի բնակչությանն առաջարկեց ներկայացնել ցուցակ-նախահաշիվներ՝ նյութական փոխհատուցում կատարելու նպատակով: Ապա սկսեց այդ ցուցակների իսկությունը ստուգել, 1919թ. ապրիլին վերջացրեց ու հրապարակեց ամփոփիչ տվյալները: *Օրինական վճարման ենթակա ճանաչվեց. հայերին՝ 453 մլն 184.126 ռուբլի, ռուսներին և այլ ազգերի ներկայացուցիչներին՝ 48 մլն 824.531 ռ., վրացիներին՝ 3 մլն 995.049ռ., մուսուլմաններին՝ 2 մլն 226.822 ռ., հիմնարկ-ձեռնարկություններին՝ 83 մլն 871.114ռ.:* Ընդ որում, յուրաքանչյուր ցուցակատիրոջ տրամադրվեց համապատասխան չեկ:

Ո՞վ պետք է վճարեր այդ գումարները: Ըստ հանձնաժողովի՝ Թուրքիան: ՀՀ Ազգային արխիվում պահպանվում է բառի բուն իմաստով, թանկարժեք մի փաստաթուղթ (\$ 200, ց. 1, գ. 39, թ. 50). դա Վրաստանում ՀՀ գործերի հավատարմատար Ա. Ջամալյանի 1918թ. նոյեմբերի 29-ի հեռագիրն է, որով նա Հայաստանի արտաքին գործերի նախարարին հղել է գեներալ Թոմսոնի՝ նոյեմբերի 21-ին Նուրի փաշային ուղղված հետևյալ հեռագրի տեքստը. *«Բաքու ժամանելուն պես զեկույցներ են ստացվել օսմանյան զինվորների կողմից թալանի և ունեցվածքին հասցված վնասների մասին: Բաքվում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների ներկայացուցիչներից կազմվել է հանձնա-*

ժողով՝ ապացուցված վնասների ընդհանուր արժեքի գնահատումը հետաքննելու համար: Քանի որ ապագա գումարը պետք է փակվի Թուրքիայի հաշվին, Ձեզ գրում եմ, որպեսզի հնարավորություն ունենաք վերադարձնելու ունեցվածքը: Հայտնում եմ Ձեզ, որ անհրաժեշտություն ծագելու դեպքում կձևավորվեն այլ հանձնաժողովներ՝ բողոքները քննարկելու համար: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է Ձեզ և Ձեր զենեքալներին տեղեկացնել սույն մտադրության մասին»¹:

Ո՞րն է այս փաստաթղթի արժեքը: 1919թ. հայոց Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը հայ և օտարազգի մասնագետներից կազմված մի հանձնախումբ ուղարկեց Թուրքիա, որի նպատակն էր պարզել ցեղասպանության հետևանքով արևմտահայության կրած նյութական վնասի չափը: Երկարատև և մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո հանձնախումբը միաձայն հանգեց այն եզրակացության, որ հայությունից Թուրքիայի յուրացրած նյութական ունեցվածքի արժեքը կազմում է 3 մլրդ 350 մլն դոլար²: Այն, որ երբ նյութական փոխհատուցման ժամանակը վրա հասնի (իսկ այդ ժամանակը վաղ թե ուշ անպայման գալու է) Թուրքիան կվիճարկի այս թվի իսկությունը՝ կասկած չունենա: Զուտ այն բանի համար, որ Պ. Նուբարն է հանձնախումբը կազմել:

1918թ. Բաքվի հայոց ցեղասպանության պարագայում իրավիճակը միանգամայն այլ է. հանձնաժողովն ստեղծել էին դաշնակից պետությունների ներկայացուցիչները, զենեքալ Թոմսոնն ուղղակի մատնացույց է արել պատասխանատվություն կրողին, և 1 ռուբլու ճշգրտությամբ հրապարակվել են փոխհատուցման ենթակա գումարների չափերը:

Սակայն այստեղ առկա է քաղաքական ենթատեքստ ունեցող մի մոտեցում. դաշնակից պետությունները և հատկապես Անգլիան փոխհատուցման պատասխանատու էին ճանաչում Թուրքիային, որովհետև իրենց պետք էր Բաքվի նավթը: Այնինչ

¹Նշվ. աշխ., էջ 152: Ռուս. թարգ. հեղ.:

²Ե.Խաթանասեան, Հայոց թիւր, Բոստոն, 1965թ., էջ 22:

հավասարաչափ պատասխանատվություն պետք է կրեր Ադրբեջանի թուրքաստեղծ Հանրապետությունը, որը Բաքուն հռչակել էր մայրաքաղաք, ուներ կառավարություն, մեջլիս-խորհրդարան և որի տարածքում կատարվել էր ցեղասպանությունն ու յուրացվել հայերի ունեցվածքը: Սա իրավական հիմքերից մեկն է:

Կա նաև երկրորդ իրավական հիմնավորումը: 1991թ. հոկտեմբերի 18-ին նախագահ Ա.Մութալիբովի ստորագրությամբ ընդունվել է «Ադրբեջանական Հանրապետության սահմանադրական ակտը Ադրբեջանական Հանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին»: Այդ ակտի նախաբանում կան տիպիկ ադրբեջանական այսպիսի պոռոտախոսություններ.

«1918 թվականի մայիսի 28-ին Ադրբեջանի Ազգային խորհուրդն ընդունեց Անկախության մասին հռչակագիր, դրանով հանդերձ վերականգնելով ադրբեջանական ժողովրդի պետականության բազմադարյա ավանդույթները (ընդգծ. մերն է - Խ.Դ.):

...ՌԽՖՍՀ-ը... օկուպացրեց ինքնիշխան Ադրբեջանական Հանրապետության տարածքը, բռնի կերպով տապալեց օրինականորեն ընտրված (ընդգծ. մերն է - Խ.Դ.) իշխանության մարմինները և վերջ դրեց ադրբեջանական ժողովրդի մեծաքանակ զոհերի գնով ձեռք բերած անկախությանը»:

Բանից պարզվում է, որ ադրբեջանական ժողովուրդը ոչ միայն գոյություն է ունեցել դարեր շարունակ, այլև ունեցել է «պետականության բազմադարյա ավանդույթներ»: Բանից պարզվում է, որ ունեցել են «օրինականորեն ընտրված» իշխանության մարմիններ: Ե՞րբ է արվել նման ընտրություն, երբ Հայոց ազգային խորհուրդը հրաժարվեց պատգամավորներ գործուղել մեջլիս՝ իրավացիորեն պատճառաբանելով, որ չի ցանկանում մասնակցել և դրանով հանդերձ օրինականացնել ցեղասպանների գազանությունները:

Բայց՝ քարն իրենց գլուխը, ինձ հետաքրքրում է այդ սահմանադրական ակտի հոդվածներից մեկը, որն ունի այսպիսի տեքստ.

«Հոդված 2.

Ադրբեջանական Հանրապետությունը հանդիսանում է 1918 թվականի մայիսի 28-ից մինչև 1920 թվականի ապրիլի 28-ը գոյատևած Ադրբեջանական Հանրապետության ժառանգորդը»¹:

Այս հոդվածը ադրբեջանցու բերանից երբևէ դուրս թռած ամենաճշմարտացի բառերն են: Ներկայիս Ադրբեջանն անկեղծորեն, առանց այլևայլության ընդունում է, որ ինքը ցեղասպանների, թալանչիների, բռնացողների ու բռնաբարոդների ժառանգորդն է: Մրանով թե՛ մենք՝ հայերս, թե՛ օտարերկրացիները պետք է իմանան, թե ում հետ գործ ունեն:

Այս հոդվածով Ադրբեջանն ընդունում է հայերի փաստարկներից ևս մեկը, ըստ որի Լեռնային Ղարաբաղը երևի չի եղել իր կազմում, որովհետև Արցախն Ադրբեջանին բռնակցվել է 1921 թվականին:

Այս հոդվածով, ի վերջո, ժառանգորդն ստանձնում է իր նախնիների գործած ցեղասպանության ողջ պատասխանատվությունը:

Ես այնքան միամիտ չեմ, որ մտածեմ, թե վաղն ևեթ Ադրբեջանը կընդունի ցեղասպանությունը, բայց եթե նրա հետ անիմաստ է բարոյական արժեքների մասին խոսել՝ իր իսկ «թերարժեքության» պատճառով, ապա պարտավոր է նախ, ֆինանսապես փոխհատուցել:

Ես կատարել եմ մի հաշվարկ, ընդ որում՝ ոչ խիստ մասնագիտական, թվերը կլորացնելով հոգուտ ադրբեջանցիների, ինչի արդյունքներն էլ ուզում եմ ստորև ներկայացնել:

Հաշվարկ կատարելու համար, նախ, հարկ էր որոշել ռուբլու արտարժույթային համարժեքը, որովհետև Ռուսաստանում մոլեգնող քաղաքացիական պատերազմը, քայքայված տնտեսությունը հանգեցրել էին վիթխարի արժեզրկման, բացի այդ, երկրում ծնվող ու մեռնող շուրջ 200 «հանրապետություններից» գրեթե յուրաքանչյուրը սեփական դրամական միավորն էր թողարկում: Ինձ չհա-

¹ Այս ակտից արված բոլոր թարգ. հեղ.: «Ժառանգորդ» բառը ռուսերեն՝ «преемница»:

ջողվեց պարզել 1918 թվականին ռուբլու և ֆունտ ստերլինգի, ֆրանկի, մարկի կամ դոլարի փոխարժեքները:* Այդժամ հիմք ընդունեցի Ստեփան Լիանոսյանի գործողությունը. ընթերցողն, անշուշտ, հիշում է, որ 1919թ. աշնանը նա Անգլիական բանկից ստացավ 400.000 ֆունտ ստերլինգի ապահովված վճարման երաշխիք և 1:10 հարաբերակցությամբ թողարկեց Հյուսիսարևմտյան Հանրապետության 4 մլն ռուբլի: Եթե նկատի ունենանք, որ 1919թ. ռուբլու արժեզրկումն ավելի մեծ էր, քան 1918-ին, ապա ավելի քան ընդունելի է նույն հարաբերակցությունը կիրառել նաև օրինականորեն վճարման ենթակա ճանաչված փոխհատուցման գումարների հանդեպ:

Այդ գումարները նվազեցնելով 10 անգամ և վերածելով ֆունտ ստերլինգի՝ ստանում ենք հետևյալ թվերը. հայերին պետք է վճարվեր 45 մլն 318.412 ֆունտ ստերլինգ, ռուսներին և այլ ազգերի ներկայացուցիչներին՝ 4 մլն 882.453, վրացիներին՝ 399.504, մուսուլմաններին՝ 222.682, հավաքական սեփականատեր հիմնարկ-ձեռնարկություններին՝ 8 մլն 387.111:

Ադրբեջանական կառավարության հետ թուրքական գործը Բաքու է մտել և տեղի ադրբեջանցիների հետ թալանն ու ավարառությունն սկսել 1918թ. սեպտեմբերի 15-ից. հաշվարկի մեկնակետ ընդունել էմ նոյեմբերի 1-ը:

Կա ևս մեկ կարևոր պահ. ժամանակի համաշխարհային բանկային պրակտիկայում գոյություն ունեւ հետևյալ սկզբունքը՝ եթե չկային պայմանագրային հարաբերություններով ամրագրված որոշակի տոկոսադրույքներ, ապա նվազագույն դրույք էր համարվում 5%-ը: (Ես ունեմ սույնը հաստատող բազմաթիվ տվյալներ):

Եվ այսպես, 1991թ. հոկտեմբերի 18-ին Ադրբեջանը սահմանադրական ակտով իրեն հռչակել է 1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. ապրիլի 28-ը գոյատևած Ադրբեջանի Հանրապետության ժառանգորդ, հետևաբար ստանձնել է նաև ֆինանսական փոխհատուցում կատարելու պարտականությունը:

Ժամանակահատվածը, որի համար Ադրբեջանը պիտի վճարի, ընդգրկում է 1918թ. նոյեմբեր, դեկտեմբեր ամիսները, 1919թ. ամբողջությամբ, 1920թ. առաջին չորս ամիսները, 1991թ. վերջին երեք ամիսները, 1992-2006 թվականները: Յուրաքանչյուր տարվա և ամիսների վրա հաշվելով բանկային 5% դրույքաչափը, ստացել եմ հետևյալ պատկերը: *Ադրբեջանը ներկայումս պարտք է հայերին՝ 102 մլն 674.461 ֆունտ ստերլինգ, ռուսներին և այլ ազգերի ներկայացուցիչներին (գերմանացիներ, ավստրիացիներ, հրեաներ, լեհեր, չեխեր, ֆրանսիացիներ, լատվիացիներ և այլք)՝ 11 մլն 062.275, վրացիներին՝ 905.159, մուսուլմաններին (ադրբեջանցիներ, պարսիկներ, լեզգիներ և այլք)՝ 504.529, հիմնարկ-ձեռնարկություններին՝ 19 մլն 002.855:*

Ընդ որում, պետք է ընդգծեմ, որ հավաքական սեփականատերերի մեջ ես ազգային պատկանելության տարբերակում չեմ դրել (օրինակ, միայն Մարդասիրական ընկերության ճանաչված նյութական վնասների գումարը 308.777ռ. 50 կոպեկ էր), այնինչ դրանց զգալի մասը ինձ հայտնի է, և պատրաստ եմ տվյալները տրամադրել այս գործին հետամուտ պատկան մարմնին:

Այսպիսով, ներկայիս *Ադրբեջանը՝* Ադրբեջանի առաջին Հանրապետության ժառանգորդը, 1918թ. Բաքվում սպանված կամ չսպանված, բայց թալանված բնակիչների ժառանգորդներին *պարտք է 134 մլն 149.279 ֆունտ ստերլինգ:*

Սակայն անգլիացի գեներալ Թոմսոնն իր պատմական հեռագրով ուղղակի մատնացույց էր անում մեղավորին և պարտապան էր ճանաչում Թուրքիային:

Ես կատարել եմ ևս մի հաշվարկ՝ նույն սկզբունքներով: Սակայն, ի տարբերություն Ադրբեջանի, Թուրքիայի պարտքի գումարի ձևավորման ժամանակահատվածն ընդգրկում է 1918թ. վերջին երեք ամիսները և 1919-2006 թվականները: Վերստուգիչ հանձնաժողովի կողմից Թուրքիայի պաշտոնական պարտքը ճանաչվել է 59 մլն 210.165 ֆունտ ստերլինգ: Այս գումարին ամեն տարի ավելացրեք բանկային 5% դրույք, և կստացվի, որ *ներկայումս*

Թուրքիայի նյութական փոխհատուցման գումարը կազմում է 4 միլիարդ 552 միլիոն 032.960 ֆունտ ստերլինգ, որից հայերի մասնաբաժինն է 3 միլիարդ 518 միլիոն 847.403 ֆունտ ստերլինգ:

Ի նչ եմ առաջարկում: Հույս ունենալ, թե Թուրքիան և Ադրբեջանը առանց ստիպելու կրնդունեն իրենց պատմական մեղսագործությունը, առաջինը՝ 1915թ. Արևմտյան Հայաստանում 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը, առաջինը և երկրորդը՝ 1918թ. Բաքվում իրականացրած հայոց ցեղասպանությունը, անհուսալի գործ է: Որովհետև ցեղասպանությունների ճանաչումը բարոյական կատեգորիա է, իսկ այդ երկրներն ապացուցել են, որ իրենք «բարոյապես թերաբժեք» են: Նրանց հետ պետք է խոսել իրավաբանության լեզվով, հարկ է միջազգային համապատասխան ատյաններում իրավական հետապնդման գործընթաց սկսել՝ Բաքվում կատարվածի ֆինանսական փոխհատուցումը ստանալու ուղղությամբ:

Թուրքիան և Ադրբեջանը որքան ուզում են թող չճանաչեն հայոց ցեղասպանությունը, բայց ինչպե՞ս պիտի հրաժարվեն նյութական փոխհատուցումից, երբ առկա են իրավական բոլոր հիմքերը:

Անգլիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները, ի տարբերություն Ֆրանսիայի, կարող են չճանաչել Հայոց ցեղասպանությունը, բայց ինչպե՞ս պիտի չընդունեն իրենց իսկ նախաձեռնությամբ իրենց իսկ ստեղծած հանձնաժողովի որոշման հավաստիությունը...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էջ 7 - Դրանցից մեկը պահպանվել է մինչև մեր օրերը և հանդիսանում է Բաքվի պատմամշակութային արժեք:

Էջ 7 - 1 փուլը = 16,2 կգ:

Էջ 8 - Դավիթ Անանուն (իսկական ազգանունը՝ Տեր-Միքայելյան, 1879թ., Ղարաբաղ - 1942թ., Աստրախան) - տնտեսագետ, պատմաբան, հասարակական-քաղաքական գործիչ: Նախնական կրթությունն ստացել է Գանձակում, ապա զբաղվել է ինքնակրթությամբ: Հարել է հնչակյաններին, դաշնակցականներին, 1905-ից՝ Սոցիալ-դեմոկրատական հայկական բանվորական կուսակցությանը (ՄԴՀԲԿ), դարձել վերջինիս գաղափարախոսներից: 1920-1926թթ.՝ Երևանի հեղափոխության թանգարանի տնօրեն:

Էջ 12 - Վ.Ս.Կոկորև (1817-1889) - 1857թ. բարոն Ն.Ե.Տորնաուի, Կասպից ծովով ու Վոլգայով նավարկություն իրականացնող «Կավկազի Մերկուրի» խոշորագույն բաժնետիրական ընկերության վարչության նախագահ Ն.Ա.Նովոսելսկու հետ հիմնել է «Անդրկասպյան առևտրական ընկերությունը», որը հետագայում վերանվանվել է «Բաքվի նավթային ընկերություն»: 1870թ. Պ.Ի.Գուբոնինի հետ հիմնադրել է Վոլգա-Կամյան առևտրային բաժնետիրական բանկը: Որոշ աղբյուրներով, Կոկորևը Բաքվում կերոսինի գործարանը հիմնել է 1858թ., այլ աղբյուրներով՝ 1859-ին:

Էջ 12 - Բուն Բաքու բնակավայրը կոչվում էր «Մպիտակ քաղաք», իսկ նավթարդյունահանման հատվածը՝ «Սև քաղաք», որը բաղկացած էր Սուրախան, Բալախան, Ռոման, Բիբի-Հեյբաթ (Շիխովո) և այլ նավթատեղամասերից:

Էջ 13 - 1 դեսյատինը = 1,092 հա:

Էջ 18 - Նոբելներ: Էմանուել Ն. (1801-1872), ստորջրյա ականների գյուտարար, Պետերբուրգում հիմնել է մեխանիկական գործարան: Ալֆրեդ Էմանուելի Ն. (1833-1896), Նոբելյան մրցանակների հիմնադիր, դինամի-

տի (1867) և Բալիստիտի (1888) գյուտարար: Լյուդվիգ Էմանուելի Ն. (1831-1888), հաստոցների կոնստրուկտոր: Էմանուել Լյուդվիգի Ն. (1859-1932), եղբայրների՝ Գուստավի և Էմիլի հետ Բաքվում հիմնել է «Նոբել եղբայրների ընկերակցություն» ֆիրման: Մինչև 1917թ. բոլշևիկյան հեղափոխությունը գլխավորել է ընտանիքի բոլոր ձեռնարկությունները Ռուսաստանում, բնակություն է հաստատել Շվեդիայում:

«Նոբել եղբայրներ» նավթարդյունաբերական և առևտրային ընկերությունը Բաքվի ամենախոշոր և արդիական ձեռնարկությունն էր: Ֆիրմայի նախնական բաժնետիրական կապիտալը կազմել է 3 մլն ռ., 1882-ին՝ 10 մլն, 1884-ին՝ 15 մլն: 1884թ. բոլոր հիմնական կապիտալների համախառն գումարը կազմել է 21,7 մլն ռ.: Ընկերությանն է պատկանել նավթարդյունահանման և Ռուսաստանի ներքին շուկայում նավթամթերքների իրացման առաջնությունը: Ամբողջ նավթարդյունաբերության բացարձակ մենատեր դառնալ չի հաջողվել Ալ.Մանթաշյանցի և այլ հայ ձեռնարկատերերի հակազդեցության պատճառով:

Էջ 19 - «Կասպից-սևծովյան նավթարդյունաբերական և առևտրային ընկերությունը» (*Каспийско-Черноморское нефтепромышленное и торговое общество*) ծագել է «Բաթումի նավթարդյունաբերական և առևտրային ընկերության» (ԲՆԻՏՕ) հենքի վրա: Վերջինս 1883թ. հիմնել էին Բաքու-Թիֆլիս երկաթգծի կառուցողներ, ճարտարագետներ Ա.Բունզեն և Ս.Պալաշկովսկին: Սակայն հենց սկզբից ԲՆԻՏՕ-ն ֆինանսական միջոցների սուր պակաս է զգացել. աջակցության խնդրանքով դիմումները ռուսական կառավարությանը և ռուս կապիտալիստներին՝ մնացել են անարձագանք: Ձեռնարկության ֆինանսական դրությունն այնքան էր խարխիվել, որ բաժնետոմսերը ստիպված գրավադրվել են բանկերին, այդ թվում և՛ «Ռոտշիլդ եղբայրներին»: 1885թ. ԲՆԻՏՕ-ն վերանվանվել է «Կասպից-սևծովյան ընկերություն», որի կապիտալը կազմում էր 6 մլն ռ.: 1886թ. Ռոտշիլդները ձեռք են բերել ընկերության ստուգիչ փաթեթը: Հետագայում նրանք հիմնել են նաև «Մագուր» ընկերությունը: Ռոտշիլդները Բաթումով Բաքվի նավթի արտահանման առաջատարներ էին, սակայն բացարձակ մենատերեր դառնալ չի հաջողվել Ալ. Մանթաշյանցի և այլ հայ ձեռնարկատերերի հակազդեցության պատճառով:

Էջ 19 - Սամվել Հովհաննեսի Բաղիրյանը Բաքվի «Սբ. Գրիգոր Լուսավորչի անվան հայոց մարդասիրական ընկերության» վարչության նախագահն էր (1879-1882), Բաքվի Մարիինսկայա իգական գիմնազիայի պատվավոր հոգաբարձու, հայկական արական երկդասյա դպրոցի հոգաբարձական խորհրդի անդամ (ինչպես և Հ.Մադաթյանը): 1886թ. Բաքու այցելած ականավոր գիտնական Դ.Մենդելեևը նրա մասին գրել է. «Բաղիրյանը շատ բարեխիղճ հայ է»:

Էջ 20 - «Բաքվի նավթարդյունաբերողների համագումարների» (ԲՆՀ) (*Съезды бакинских нефтепромышленников*) իրավասության ներքո են գտնվել նավթարդյունաբերության կազմակերպման, կանոնակարգման, նավթահանքերում տեխնիկական վերահսկողության իրականացման, նավթամթերքներն արտահանելու համար երկաթուղային վագոն-ցիստերնների բաշխման և այլ կարևորության հարցեր: ԲՆՀ-ն ուներ զգալի ֆինանսական միջոցներ (Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 3 մլն ռ.), որոնք տրամադրում էր բանվորների կարիքները հոգալուն, նրանց առողջապահական սպասարկմանը, ուսումնառությանը, կացարաններով ապահովելուն՝ դրանով հանդերձ «Սև քաղաքում» ստանձնելով քաղաքային և հողային ինքնակառավարման գործառույթներ: Համագումարները կայանում էին կանոնավորապես, տարեկան առնվազն մեկ անգամ: ԲՆՀ խորհրդի անդամները մասնակցում էին զանազան միջոցառային խորհրդակցությունների, հանձնաժողովների նիստերի՝ կառավարության առջև պաշտպանելով նավթարդյունաբերողների շահերը: ԲՆՀ գրեթե ամբողջ աշխատակազմը հայեր էին: ԲՆՀ-ն կանոնավոր կերպով հրատարակում էր «Нефтяное дело» երկշաբաթյա հանդեսը, տարեկան «Обзоры бакинской нефтяной промышленности», համագումարների սղագրական հաշվետվությունները՝ «Труды съездов нефтепромышленников в г.Баку» և այլ պարբերականներ, և գրեթե բոլորի խմբագիրները հայեր էին:

Էջ 25 - «Ստանդարտ օյլ» (*Standart Oil Co*) - ԱՄՆ նավթային մենատիրական ընկերություն, որ 1870թ. հիմնել է Ջոն Ռոկֆելերը: 1870-ական թթ. վերջերին ընկերությունն իր ձեռքն է վերցրել նավթագտիչ ձեռնարկությունները, նավթամուղերը, վերահսկողություն է սահմանել երկաթուղային փոխադրումների նկատմամբ և տիրել հյուսիսամերիկյան վերա-

մշակված նավթի իրացման 90-95%-ին: 1882թ. ընկերությունը վերակազմավորվել է տրեստի՝ 70 մլն դոլար կապիտալով, որից 46 մլն դոլարը պատկանում էր 9 վստահված անձանց՝ Ջ.Ռոկֆելերի գլխավորությամբ:

Էջ 27 - 1938թ. Լ.Բերիայի հրամանով քանդվեց և հողին հավասարեցվեց Թիֆլիսի Վանքի (Խոջիվանքի) հայկական գերեզմանատան զգալի մասը, ուր գտնվում էին բազմաթիվ ականավոր մարդկանց (այդ թվում՝ Մ.Արամյանցի և Ալ.Մանթաշյանցի) գերեզմանները:

Էջ 28 - 1 սաժենը = 2,1336 մետրի:

Էջ 28 - 1 վերստը = 2,1336 կիլոմետրի:

Էջ 30 - Ալ.Մանթաշյանցը ձեռք էր բերել «Ա.Ծատուրյան և այլք» ֆիրմայի՝ Ա.Ծատուրյանին և Գ.Առափելյանին պատկանող բաժնեմասերը: Մակայն դա չի նշանակում, թե վերջիններս նավթարդյունաբերությունից դուրս էին եկել. իրենց բաժնեմասերի դիմաց ստացած գումարներով նրանք հիմնել էին նոր բիզնես:

Էջ 30 - Ազուլեցի Մկրտիչ Քալանթարյանի օրինակը հայոց տնտեսական տաղանդի դրսևորման լավագույն նմուշներից է: Պատանի տարիքում՝ 1875-ին, գալով Բաքու՝ որպես գործակատար աշխատանքի է անցնում մի հայ վաճառականի խանութում՝ տարեկան 150ռ. ռոճիկով: Ապա զբաղվում է նավթարդյունաբերությամբ և բնատուր ձիրքի, աներևակայելի աշխատասիրության շնորհիվ հասնում աներկբա հաջողությունների: 1906թ., հայ-ադրբեջանական ընդհարումներից հետո, տեղափոխվում է Թիֆլիս և սկսում աստիճանաբար վաճառել Բաքվի իր նավթարդյունաբերական ձեռնարկությունները: Երբ 1912թ. վերջնականապես հեռանում է բիզնեսից՝ մի քանի միլիոն ռուբլու տեր էր:

Էջ 31 - Ս.Մ.Շիբանը կտորեղենի արտադրության մոսկովյան խոշոր ֆաբրիկանտ էր: 1878թ. նա այցելել էր Բաքու և հիմնել ծծմբաթթվի արտադրության մի փոքրիկ ձեռնարկություն:

Էջ 31 - Ալեքսանդր Հովհաննեսի Հախվերդյան (*Александр Иванович Ахвердов*) - ռուսացած հայ, որը ոչ մի առնչություն չի ունեցել հայկականության և հայ իրականության հետ: Երգվյալ ատենակալ, մայոր, ազնվական, 1880-ական թթ. եղել է Ստավրոպոլի գավառի ազնվականության առաջնորդ, հաշտարար դատավորների համաժողովի նախագահ, Ստավրոպոլի նահանգի բանտերի խնամակալական կոմիտեի անդամ: Թերեքի կազակական զորքերին պատկանող հողերում հայտնաբերել է նավթաբլուրներ, 1896թ. հիմնել «Ա.Հ.Հախվերդյան և ընկ.» (*«А.И.Ахвердов и К°»*) ֆիրման և դարձել Գրոզնու նավթարդյունաբերության բացարձակ առաջատարը՝ արտադրելով ամբողջ նավթի շուրջ 50%-ը: Ընկերության բաժնետոմսերը գտնվում էին 28 մլն ֆրանկ դրամագլխով բելգիական *Societe Amonyme des Petroles de Groznu* ֆիրմայի ձեռքում:

Էջ 33 - Ալ.Մանթաշյանցն ուներ 4 որդի՝ Հովհաննես, Լևոն, Հովսեփ, Գևորգ և 4 դուստր՝ Աննա, Նադեժդա, Վարվարա, Թամարա:

Էջ 41 - Բնդունեզիան XVIIդ. - 1949թ. հանդիսացել է Հոլանդիայի գաղութը և կոչվել է Նիդերլանդական Հնդկաստան:

Էջ 53 - Այս գումարի մասին պատկերացում կազմելու համար ասենք, որ 1904թ. Բաքվում բացվեց Կիսլովոդսկի շքեղ ռեստորաններից մեկի մասնաձյուղը, որտեղ կարելի էր 1 ռուբլով ճաշակել չորս խորտիկ:

Էջ 55 - 1 ֆունտը = 400 գրամի:

Էջ 59 - Ի՞նչ է նշանակում՝ ֆինանսավորել-պահել: Բաքվի բոլոր ուսումնական հաստատությունները ղեկավարում էին հոգաբարձական խորհուրդները, որոնց կազմի մեջ մտնող կապիտալիստների դրամական կանոնավոր նվիրատվությունների շնորհիվ էլ հիմնականում գոյատևում էին կրթօջախները: Տեքստում հիշատակված բոլոր հաստատությունների հոգաբարձական խորհուրդների նախագահներ կամ անդամներ էին հայ դրամատերերը: (Մենք ունենք «Ազգային կապիտալ և կրթություն» անտիպ մի աշխատություն, որի «Աղբբեջան» գլխում ամեն ինչ մանրամասն նշված է):

Էջ 60 - Կրասիլնիկյանները Շուշիից էին եկել և դարձել Բաքվի ամենանշանավոր հայ գերդաստաններից մեկը: Ըստ մեզ, նրանց ազգանունը Ներկարարյան էր, որը հեշտ արտաբերելու համար թարգմանել էին ռուսերեն:

Էջ 61 - Չճշտված տեղեկությունների համաձայն, օպերային թատրոնի կառուցման պատճառը հանդիսացել է 1,5 մլն ռուբլու գրագը՝ Մայիլյանի և Թադիևի միջև: Մայիլյանը խոստացել է մեկ տարում ավարտել շինարարությունը, Թադիևը չի հավատացել: Թատրոնը կառուցվել է 8 ամսում, և Մայիլյանը շահել է գրագը:

Էջ 73 - Մենք ունենք երկու անտիպ աշխատանք՝ «Եկեղեցանպաստ վաճառականներ» և «Հայոց կտակներ», որտեղ ամեն ինչ ավելի հիմնավոր է ներկայացված:

Էջ 83 - Գոյություն ունի հանրահայտ տեսություն առ այն, թե որ ուժի կողմից են հորինվել ու ներդրվել պանիսլամիզմը և պանթյուրքիզմը: Մենք հարկ չենք համարում դրան անդրադառնալ, համարելով, որ դա մեր գրքի բուն նյութից դուրս է:

Էջ 89 - Մեկ այլ հեղինակ՝ «Սոուչաստնիկի» նավթարդյունաբերական ֆիրմայի տնօրեն-կառավարիչ Բոգդան Դոլուխանյանը, «САНКТ-ПЕТЕРБУРГСКИЕ ВЕДОМОСТИ» թերթում այլ թվեր է ներկայացրել. սպանված հայ՝ 205, վիրավորված՝ 121, սպանված աղբբեջանցի՝ 111, վիրավորված՝ 128: Սպանված հայերից 7-ը կին էին, 20-ը՝ երեխա (մինչև 14 տարեկան), 13-ը՝ ձեր (55 տարեկանից բարձր): Սպանված աղբբեջանցիներից 2-ը կին էին, որոնցից մեկը գոհվել էր ռուս զինվորի գնդակից:

Էջ 93 - Ուշագրավ է, որ ՀՅԴ-ին պաշտպանեցին խոշոր կապիտալի ներկայացուցիչները, այն դասը, որը նաև Դաշնակցության թիրախն էր: 1902թ. դեկտեմբերի 15-ին Մոսկվայում սպանվեց «Ժամհարյան եղբայրներ» նշանավոր բանկի համատեր Իսահակ Ժամհարյանը, 1903թ. ապրիլի 22-ին Բաքվում՝ «Ալ.Մանթաշյանց և ընկ.» ֆիրմայի վարիչ, ճարտարագետ Միքայել Քալանթարյանը, նույն թվականի օգոստոսի 18-ին Թիֆլիսում մահափորձ կատարվեց ականավոր ծխախոտարդյունաբերող,

կայսերական արքունիքի մատակարար Նիկողայոս Բոզարջյանցի նկատմամբ, 1904թ. հունիսի 10-ին Բաքվում սպանվեց նավթարդյունաբերող Հարություն Ադամյանը և այլն: Բաքվի նահանգապետի մոտ Դաշնակցությանը պաշտպանելը վկայում էր, որ հայ կապիտալիստները ազգային շահը վեր էին դասում դասակարգային հակասություններից:

Էջ 94 - Թիֆլիսահայոց ինքնապաշտպանությունը կազմակերպել ու գլխավորել է դաշնակցական Գարեգին Հարությունի Փաստրմաճյանը, նույնիսկ՝ Արմեն Գարոն (1872, Կարին - 1923, ժնն), ինչի շնորհիվ ադրբեջանցիները գլխովին ջախջախվել են: Արմեն Գարոն՝ խմբի գլուխ անցած, 1896թ. օգոստոսի 14-ին գրավել է Կ.Պոլսի «Օսմանյան բանկը», 1920թ. նշանակվել է ՀՀ դեսպան ԱՄՆ-ում:

Էջ 99 - Մենք ունենք «Հայերը և Թիֆլիսը» անտիպ աշխատություն, որտեղ ասվածն ապացուցել ենք:

Էջ 99 - Արամայիս Հարությունի Երզնկյան (1879-1938) - 1898թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան ճեմարանը, նույն թվականին դարձել ՌՄԴԲԿ անդամ: 1903-1920թթ. հարել է մենշևիզմին, մասնակցել ՌՄԴԲԿ V համագումարին (1907): 1916թ. ընտրվել է Թիֆլիսի քաղաքային դումայի պատգամավոր, 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո՝ բանվորական խորհրդի, ապա Անդրկովկասյան սեյմի անդամ: 1920-1930թթ.՝ ՀԽՍՀ հողժողովում, 1931-1933թթ.՝ Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ: Ստալինյան բռնաճնշումների զոհ, մահացել է բանտում:

Էջ 105 - Գեներալի մասին սուղ տվյալները ժողովել ենք մեծ դժվարությամբ: Ափսոսում ենք, որ զանազան հնարավորությունների բացակայության պատճառով ավելին անել չենք կարողացել:

Էջ 119 - Լազար Ֆյոդորովիչ Բիչերախով (1882-1934-ից հետո) - Թերեքի կազակական զորքի գնդապետ, Առաջին աշխարհամարտի մասնակից: 1918թ. սկզբին Թերեքի կազակների ջոկատի գլուխն անցած՝ գտնվել է Պարսկաստանում, հունիսի 27-ին Էնզելիում պայմանագիր է ստորագրել անգլիացի զեներալ Լ.Դենստերվիլի հետ՝ համատեղ գործողություններ ծավալելու վերաբերյալ: Հուլիսի 1-ին ասի է իջել Բաքվից 35 կմ

հեռավորության վրա, համաձայնություն կայացրել Բաքվի Ժողովուրդ-
հի հետ և ցանկություն հայտնելով համագործակցել խորհրդային իշխա-
նության հետ՝ իր ջոկատով մտել կոմունայի զինված ուժերի կազմի մեջ:
Խորհրդային իշխանության տապալումից հետո, 1918թ. օգոստոսից եղել
է «Ցենտրոկասսայան դիկտատուրայի» գորքերի գլխավոր հրամանատա-
րը, պարգևատրվել է Մեծ Բրիտանիայի 2 բարձրագույն շքանշաններով,
արժանացել է անգլիական բանակի գեներալի կոչման: Գրավել է Դեր-
բենտը, Պետրովսկ (Մախաչկալա) նավահանգիստը, կապ է հաստատել
Կոլչակի ու Դենիկինի հետ, ստեղծել է «Կովկասյան-կասսայան դաշնակ-
ցային կառավարությունը»: 1918թ. նոյեմբերին իր գորքով Պետրովսկ
նավահանգստից տեղափոխվել և հաստատվել է Բաքվում, որտեղ 1919թ.
սկզբին անգլիացիները կազմալուծել են նրա զորամիավորումը: Հետա-
զայում մեկնել է Մեծ Բրիտանիա:
Լ.Բիչերախովը 1919թ. փետրվարի սկզբին 175.000ռ. է նվիրաբերել
հոգուտ Բաքվի հայ փախստականների:

Էջ 120 - Մեզ չի հաջողվել պարզել, թե ՀՅԴ-ից ովքեր են եղել «Ցենտրո-
կասսայան դիկտատուրայի» կազմում:

Էջ 125 - Հայության զանգվածային կոտորածները կազմակերպելու և
իրականացնելու համար վրիժառու Արամ Երկանյանը 1920թ. հուլիսի
19-ին Թիֆլիսում գնդակահարեց Խան-Խոյսկուն:

Էջ 134 - 1921թ. հունիսի 19-ին Միսաք Թորլագյանը Կ.Պոլսում գնդակա-
հարեց այդ սաղիստին: Հայ վրիժառուն ձերբակալվեց, սակայն բրիտա-
նական դատարանն արդարացրեց նրան:

Էջ 150 - Վրացիներին առանձին անդրադառնալը պայմանավորված էր
Բ.Իշխանյանի՝ Վրաստանում իշխանության գլուխ անցած մենշևիկ-
ների, սոցիալ-դեմոկրատների նկատմամբ խիստ քննադատական վերա-
բերմունքով:

Էջ 158 - Մենք գիտենք: 1918թ. սեպտեմբերի 22-ին թուրքերը 765 հայ
ռազմագերի Բաքվից տարել են Ալյաթ կայարան: Այստեղ աշխատեցրել
են երկաթգծի շինարարության վրա, յուրաքանչյուրին օրական սովել են

ծովի ջրով թխված 100 գրամ հաց: Ամենօրյա գազանությունների, սարսափելի ծեծուջարդի հետևանքով 2,5 ամսում մահացել է 465 մարդ: Մյուսներին գնացքով տարել են Քյուրդամիր. ճանապարհին մահացել է 20 հոգի, որոնց դիակներն ընթացքի ժամանակ վագոններից դուրս են նետել: Ողջ մնացածներին Գանձակում հանձնել են Հայոց ազգային խորհրդին:

Էջ 163 - Դիզակը, Վարանդը, Խաչենը, Ջիվանշիրը ներկայիս ԼՂՀ Հադրութի, Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջաններն են:

Էջ 174 - Չնայած այս մարդու հայրանունը ռուսական աղբյուրներում նշվում էր *Сергеевич (Степан Сергеевич Тагианосов)*, բայց կարծում ենք, որ նրա հոր անունն իրականում Սուքիաս էր, որովհետև 1850-ական թթ. Սուքիաս Ստեփանի Թաղիանոսյանը հանդիսանում էր Սբ. Էջմիածնի Մյունհոդոսի ատենադպրի օգնականը: Բացի այդ, 1917թ. Բաքվում լույս տեսնող «Գործ» պարբերականի խմբագրակազմի անդամ էր Երվանդ Թաղիանոսյանը, որը, հավանաբար, մեր գրքի հերոսի եղբայրն էր:

Էջ 177 - ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Վ.Խոջաբեկյանը տողերիս հեղինակին պատմել է, թե ինչպես են իր աշխատությունից անխնա ջնջել Բ.Իշխանյանի վերաբերյալ որևէ հիշատակում:

Էջ 178 - Դժբախտաբար, չկարողացանք հայթայթել 1919թ. Ռևելում (Տալլին) լույս ընծայված էստոնական «*Waba Maa*» և ռուսական «*Свободная Россия*» թերթերի հավաքածուները: Անհասու է նաև 1925-1940թթ. Փարիզում հրատարակված «*Возрождение*» թերթը: Բայց, միևնույն է, մեր որոնումները շարունակելու ենք:

Էջ 179 - Նիկոլայ Նիկոլանիչ Յուդենիչ (1862-1933) - ցարական բանակի զեներալ (1915), 1915-1916թթ. Կովկասյան բանակի հրամանատար, 1917-ից՝ Կովկասյան ռազմաճակատի գործերի գլխավոր հրամանատար: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տարագրվել է Ֆինլանդիա:

Էջ 180 - Մարշը մի քանի տարի եղել էր Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին առընթեր անգլիական ռազմական առաքելության կցորդը:

Այս փաստը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Լիանոսյանը, Յուդենիչը և Մարշը միմյանց անձնապես ճանաչում էին Թիֆլիսից:

Էջ 194 - Մարիինսկայան հետազայում վերանվանվել է Կորգանովի, Տորգովայան՝ Նիզամու: Հիմա ինչպես են կոչվում՝ չգիտենք:

Էջ 214 - Իմ ինդրանքով «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը նեղություն կրեց ու դիմեց Ռուսաստանի Կենտրոնական բանկին և Անգլիական բանկին: Առաջինը հարկ չհամարեց պատասխանել, իսկ երկրորդը խուսազրություն ուղարկեց: Չէի կարծում, թե փոխարժեքների վերաբերյալ տվյալները «գաղտնի» են...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ռ., Թումանյան Բ., Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Անանիա Շիրակացի, Ե., 1958թ.:
2. Ալաօյաճեան Ա., Պատմություն հայ Կեսարիոյ, Կահիրե, 1937թ.:
3. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հտ. Ա, Թիֆլիս, 1916թ.:
4. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հտ. Բ, Էջմիածին, 1922թ.:
5. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918), հտ. Գ, Վենետիկ, 1926թ.:
6. «Արօր»-ի օրացոյց 1894թ., Բաքու, 1893թ.:
7. Բաբայան Լ., Հակոբյան Վ., Հակոբ Մանանդյան, Ե., 1974թ.:
8. Գալստեանց Ա., Նկարագրութիւն հանդիսի Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան քսան և հինգ ամեայ յոբելեանի, Մոսկվա, 1891թ.:
9. Գալստեանց Ա., Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան քսան և հինգ ամեայ յոբելեանի, Մոսկվա, 1891թ.:
10. Գալուստ Սարգիս Կիւլպէնկեան. մարդը և իր գործը, Լիսաբոն, 1999թ.:
11. Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում և Բագուի անկումը, Բաքու, 1919թ.:
12. Դադայան Խ., 10 կապիտալիստ, Ե., 2003թ.:
13. Դադայան Խ., Հայեր և բանկեր, Ե., 2005թ.:
14. Դադայան Խ., «Հայկական ծխախոտ» («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12 հուլիսի, 2003թ.):
15. Դալլաքյան Կ., Հ.Բ.Ը. Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի շուրջ, Ե., 1996թ.:
16. Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920-1922թթ.), Ե., 1967թ.:
17. Երիցեան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք, մասն Ա, Թիֆլիս, 1895թ.:
18. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը - 1915, Կ. Պոլիս, 1915թ.:
19. Թորոսեան Գ., Սուրբ Յովհաննէս-Մկրտիչ Փարիզի Մայր տաճարը, Փարիզ, 1994թ.:

20. Թովիչեան Ե., Լոյս պատկերագրող օրացոյց հանդէս 1904թ., Թիֆլիս, 1903թ.:
21. Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920թ.:
22. Իշխանեան Բ., Վիճակագրական ուսումնասիրությունն անդրկովկասեան ժողովուրդների, Բաքու, 1919թ.:
23. Խաթանասեան Ե., Հայոց թիւը, Բոստոն, 1965թ.:
24. Կարապետյան Ս., Թիֆլիսի քաղաքագլուխները, Ե., 2003թ.:
25. Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2004թ.:
26. Հայ սփյուռք. հանրագիտարան, Ե., 2003թ.:
27. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2003թ.:
28. «Հորիզոն», թ. 82, 1911թ.:
29. ՀՄՀ, հտ. 2, Ե., 1976թ.:
30. ՀՄՀ, հտ. 7, Ե., 1981թ.:
31. «Մշակ», թ. 33, 1903թ.:
32. Սարուխան Ա., Աղեքսանդր Մանթաշեանց մեծ վաճառականն ու բարեգործը: Հիշողություններ իր մահուան 20-ամեակի առթիւ, Վիեննա, 1931թ.:
33. Սմբատեանց Ս., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի և միւս վանօրէից և ուխտատեղեաց, ևս և քաղաքացն և գիւղօրէից որք ի Շամախայ թեմի, Թիֆլիս, 1896թ.:
34. Ստեփանյան Հ., Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695-1955), Ե., 1957թ.:
35. Ստեփանյան Ս., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում (XIXդ. վերջ - XXդ. սկիզբ), Ե., 1992թ.:
36. Վարշամեանց Ս., Հաշի կամ համառոտ նկատողություն Մարդասիրական ընկերութեան, Բաքու, 1873թ.:
37. Ֆրանսահայ տարեգիրք-1927, Բ տարի, Փարիզ, 1926թ.:
38. Баку и его окрестности, Тифлис, 1891г.
39. Благотворительные учреждения России, СПб, 1912г.
40. Весь Кавказ, Баку, 1914г.
41. Всеподданнейшая записка, содержащая главнейшие выводы отчета о произведенной в 1905 году, по Высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии, СПб., 1905г.

42. Всероссийская промышленно-художественная выставка 1882г. в Москве. Список экспонатов, удостоенных похвальных грамот, М., 1882г.
43. Гевенян С., Мой Тифлис, Эчмиадзин, 2002г.
44. Горн В., Гражданская война в Северо-Западной России (Юденич под Петроградом. Из белых мемуаров), Л., 1927г.
45. Горн В., Гражданская война на северо-западе России (Деникин, Врангель, Юденич. Мемуары), М.-Л., 1927г.
46. Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия, М., 1987г.
47. Гулишамбаров Ст., Очерк развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района (Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880г.).
48. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919г.
49. Ежегодник Баку и его район - 1912, Баку, 1912г.
50. Зив В., Иностраные капиталы в русской нефтяной промышленности, Пгр., 1916г.
51. Зубов П., Картина Кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель, ч. первая, СПб., 1834г.
52. "Кавказский запрос", СПб., 1908г.
53. Кавказский календарь на 1852г., Тифлис, 1851г.
54. Кавказский календарь на 1854г., Тифлис, 1853г.
55. Кавказский календарь на 1856г., Тифлис, 1855г.
56. Кавказский календарь на 1863г., Тифлис, 1862г.
57. Кавказский календарь на 1874г., Тифлис, 1873г.
58. Кавказский календарь на 1878г., Тифлис, 1877г.
59. Кавказский календарь на 1882г., Тифлис, 1881г.
60. Кавказский календарь на 1884г., Тифлис, 1883г.
61. Кавказский календарь на 1895г., Тифлис, 1894г.
62. Кавказский календарь на 1901г., Тифлис, 1900г.
63. Кавказский календарь на 1908г., Тифлис, 1907г.
64. Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914г.
65. Кавказский календарь на 1917г., Тифлис, 1916г.
66. Калустянц А., Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского Человеколюбивого Общества во имя Св. Григория

- Просветителя Армении с 1864 по 1896г., Баку, 1896г.
67. Лукомский А., Деникин и Антанта (Деникин, Врангель, Юденич. Мемуары), М.-Л., 1927г.
 68. Макаров А., Закавказье в торговом отношении, М., 1884г.
 69. Миллер Б., Об армянских надписях в Болгарах и Казани, М., 1919г.
 70. Монополистический капитал в нефтяной промышленности России (1883-1914). Документы и материалы, М.-Л., 1961г.
 71. Обзор Бакинской нефтяной промышленности за два года национализации 1920-1922гг., (б.м.и г.).
 72. Обзор Бакинской нефтяной промышленности за 1896г., Баку, 1897г.
 73. Обзор Бакинской нефтяной промышленности за 1904г., т. I, Баку, 1905г.
 74. Обзор Бакинской нефтяной промышленности за 1907г., т. I, Баку, 1908г.
 75. Обзор Бакинской нефтяной промышленности за 1913г., т. I, Баку, 1914г.
 76. Обзор Бакинской нефтяной промышленности и сведения о нефтяной промышленности в Америке за 1894г., Баку, 1895г.
 77. Отчет о деятельности Армянского Человеколюбивого общества во имя Св. Григория Просветителя за 1914 год, Баку, 1916г.
 78. Русские биржевые ценности 1914-15гг., Пгр., 1915г.
 79. Сборник сведений о Кавказе, т. II, Тифлис, 1872г.
 80. Сборник сведений о Кавказе, т. V, Тифлис, 1879г.
 81. Сборник сведений о Кавказе, т. VI, Тифлис, 1880г.
 82. Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880г.
 83. Сборник статистических сведений о русской и американской нефтяной промышленности, Баку, 1890г.
 84. Советская историческая энциклопедия, т. 8, М., 1965г.
 85. Списки населенных мест Российской Империи по Кавказскому краю. Бакинская губерния, Тифлис, 1870г.
 86. Сулейманов М., Дни минувшие..., Баку, 1990г.
 87. Толстой А., Эмигранты, М., 1982г.
 88. Устав нефтепромышленного и торгового общества "А.И. Манташев и К⁰", СПб., 1899г.
 89. Устав нефтепромышленного и торгового товарищества "Братьев Мирзоевых и К⁰", Тифлис, 1901г.
 90. Фарманов И., Записки о фирме "Наследники Г.С. Лианозова", Астрахань, 1914г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխարեն	3
Վասն Բաքվի նավթի	6
Վասն այն ամենի, ինչն առնչություն չունի նավթի հետ	47
Վասն Բաքվի հայոց եության	65
Վասն հակահայկականության և հայի արյան համտեսության	75
Վասն բաքվահայոց ցեղասպանության	103
Վասն բաքվահայոց սովերների	170
Վասն զեղծարարության	186
Եզրահանգումներ	210
Ծանոթագրություններ	217
Օգտագործված գրականության ցանկ	227

Խաչատուր Դադայան

ՀԱՅԵՐԸ ԵՎ ԲԱՔՈՒՆ (1850-ական թթ. - 1920թ.)

Տեխնիկական խմբագիր՝ Խ.Քարառուղլանյան
Շարվածքի պատասխանատու՝ Լ.Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսետ, ֆորմատը՝ 60X84 1/16:
Տպարանակը՝ 400: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: